

ԷԶՄԻԱԾԻՆ



Թ
2007



ԿԳ ՏԱՐԻ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

Ս Է Վ տ Ե մ ք Ե ր
2007

ՀՐԱՄԱՆԱԻ

S. S. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈԿՏՈՐ ՌՈՌԻԱՆ ՎԻԼՅԱՄՍԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մեպտեմբերի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց Անգլիկան Եկեղեցու պետ, Քենթրբերիի Արքեպիսկոպոս դոկտոր Ռոուան Վիլյամսը:

Ուշ երեկոյան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռի միաբանության հետ դիմավորեց Քենթրբերիի Արքեպիսկոպոսին և նրան ուղեկից շքախմբին: Միաձուլեց Տաճարի զանգերի դողանջների ներքո եկեղեցականաց թափորն ուղղվեց դեպի Մայր Տաճար, ուր Իջման Սուրբ Սեդանի առջև, հոգևորականների սաղմոսերգությունից հետո, Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Քենթրբերիի Արքեպիսկոպոսը համատեղ աղոթք կատարեցին:

Ապա «Էջ Միածինն ի Հօրե» շարականի երգեցողության ներքո թափորն ուղղվեց դեպի Վեհարան: Վեհարանի Գահասրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն և երկու Հովվապետերի խոսքերի փոխանակում:

Հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության, պաշտոնեության, ինչպես նաև Հայ Եկեղեցու հավատացյալների Հայոց Հայրապետը ողջունեց Նորին Սրբազնության պաշտոնական այցելությունը Հայաստան և Ամենայն Հայոց հոգևոր կենտրոն: Նորին Սրբությունը գոհունակությամբ վերհիշեց եղբայրական հյուրընկալության անմոռաց պահերը, որ ապրել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ թագավորություն պաշտոնական այցի ժամանակ, և Լույսի երեկոյան արարողությունը Անգլիկան Եկեղեցու հոգևոր կենտրոն Քենթրբերիի Մայր Տաճարում:

«...Ձեր այցելության օրերին Մենք առիթը կունենանք միասնաբար աղոթելու և խորհելու Քրիստոնեական Եկեղեցիների համագործակցության, սիրո և միության մասին և ավելի ամրապնդելու Հայ և Անգլիկան Եկեղեցիների միջև գոյություն ունեցող բարեկամական կապերը:

Ամենակալ Տերը կրկին անգամ օրհնում է Մեր եղբայրությունն այսօր, Քրիստոսի սիրո այդ լույսով կրկին ջերմացնում Մեր հոգիները՝ լույս, որ այս անգամ վառվում է Հայ ժողովրդի 1700-ամյա դարձը խորհրդանշող Լուսավորչի Անմար Կանթեղից», - ասաց Վեհափառ Հայրապետն իր խոսքում:

Նորին Սրբությունն այնուհետև նշեց, որ հոգեմտավոր հարուստ ժառանգություն ունեցող մեր Եկեղեցիները բազմաթիվ մարտահրավերներ են դիմագրավում հովվական կյանքում, միջեկեղեցական և միջկրոնական հարաբերություններում: *«Կանգնած ենք արդիականության Եկեղեցուն հուզող բազմաթիվ մշակութային, հասարակական, տնտեսական և քաղաքական խնդիրների առջև, որոնք կարիք ունեն միասնական ջանքերով համատեղ լուծման: Վստահ ենք, որ Ձերդ Սրբազնության այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին մի նոր խթան կհանդիսանա վերոհիշյալ մարտահրավերները դիմագրավելու ճանապարհին մեր երկու Եկեղեցիների համար», -* ընդգծեց Հայոց Հովվապետը:

«Մենք մեծ ուրախությամբ ենք ժամանել այս սրբավայր, որը շատ երկար էինք փափագում այցելել: Մենք գիտենք, որ սա Հայոց Եկեղեցու սիրտն ու ծննդավայրն է, աղբյուրն է այս ժողովրդի քրիստոնեական կյանքի», - ասաց Քենթրբերիի Արքեպիս-

կոպոսը՝ անդրադառնալով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հիմնադրման պատմությանը, Սուրբ Գրիգորի տեսիլքին, դարերի ընթացքին քրիստոնեական վկայությանն ու ժողովրդի քաջարի մարտիրոսությանը: «Սա այն ժողովուրդն է, որ կրկին ու կրկին կոչված էր կրելու Քրիստոսի խաչը: Եվ մենք, հավաքվելով այստեղ, պատվում ենք այդ վկայությունը և գոհություն ենք հայտնում Հայր Աստծուն Քրիստոսի շնորհների համար, որ հայտնվեցին այս Եկեղեցու և ազգի կյանքում», - նշեց Ռոմուան Արքեպիսկոպոսն իր խոսքում: Նա անդրադարձավ նաև երկու Եկեղեցիների միջև առկա երկար տարիների բարեկամությանը, վերհիշեց շուրջ հարյուր տարի առաջ, Հայոց ցեղասպանության և հալածանքների տարիներին, Ռենդել Դեյվիդսոն արքեպիսկոպոսի կողմից գործադրված ճիգ ու ջանքերը:

Նորին Սրբազնությունը հիշեց Ամենայն Հայոց Հայրապետի այցը Անգլիայի Թագավորություն և Մայր Տաճարում խոսված քարոզը: Անգլիկան Եկեղեցու պետն իր ուրախությունը հայտնեց նաև Անգլիայում հայ եկեղեցականների վերջին շրջանում շարունակական դարձած ուսումնառության առիթով: Վերջում նա վերստին շնորհակալություն հայտնեց եղբայրական հրավերի և ջերմ ընդունելության համար՝ փոխանցելով Նորին Սրբությանը Անգլիկան Եկեղեցու հավատացյալների ողջույներն ու աղոթքները:

Սեպտեմբերի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Օայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մեծ Բրիտանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը: Պատարագի սրբազան արարողությանը ներկա գտնվեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Մայր Աթոռ ժամանած Քենթրբերիի Արքեպիսկոպոս դոկտոր Ռոմուան Վիլյամսը և նրան ուղեկից անգլիկան հոգևորականները, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Գործադիր կոմիտեի անդամները՝ գլխավորությամբ ԵՀԽ Գլխավոր քարտուղար դոկտոր Սամուել Կոբիայի և ԵՀԽ ատենապետ դոկտոր Վոլտեր Ալթմանի:

Հընթացս Ս. Պատարագի երկու Հովվապետերն իրենց պատգամը հղեցին ներկա գտնվող հոգևորականներին և հավատացյալ ժողովրդին: Ողջույնի իր խոսքում Ամենայն Հայոց Հայրապետը Մայր Տաճարում ներկա հավատացյալ հայորդիներին և աշխարհի տարբեր երկրներից ժամանած բազում ուխտավորներին ներկայացրեց Անգլիկան Եկեղեցու պետին և վերստին ուրախություն հայտնեց նրա այցի առիթով:

«Անգլիկան Եկեղեցու հետ Հայ Եկեղեցու հարաբերությունները երկու հարյուր տարիների պատմություն ունեն: Այդ հարաբերություններն իրենց ուրույն տեղն են զբաղեցնում Հայ Եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների պատմության էջերում: 19-րդ դարում էր՝ Հայ ժողովրդի համար պատմական դժվար ժամանակաշրջանում, երբ Մեր երջանկահիշատակ նախորդների և Քենթրբերիի Արքեպիսկոպոսների նամակագրությամբ, Սուրբ Երկրում՝ Երուսաղեմում, Մեր Եկեղեցիների ներկայացուցիչների միջև հարաբերությունների մշակմամբ հիմք դրվեցին Մեր պատմական կապերին: Աղոթքով ենք հիշում Մեր երանաշնորհ հայրերից Կոնստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ներսես արքեպս. Վարժապետյանի, Ամենայն Հայոց Կաթողիկոսներ Մկրտիչ Ա Խրիմյանի, Քենթրբերիի Արքեպիսկոպոսներ Նորին Սրբազնություն դոկ. Թամպել Թեյթի և դոկ. Թովմաս Դևիդսոնի անունները, որոնք կանգնած են ակունքներում Մեր հարաբերությունների: Ձեռքբերումների հարուստ պատմություն է բաժանում Մեզ պատմական այս շրջանից», - ասաց Հայոց Հայրապետը՝ նշելով, որ Եկեղեցիների միջև առկա սիրո համագործակցությունն ավելի է

ամրապնդվել Հայոց Հայրապետների և Քենթրբերիի Արքեպիսկոպոսների փոխադարձ այցելություններով, համատեղ համաձայնագրերի կնքմամբ՝ նոր հեռանկարներ բացելով համագործակցության ցանկալի ուղում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհություն հայտնեց Տիրոջը, որ երկու Եկեղեցիների հարաբերություններն ի սկզբանե հիմնված են եղել միմյանց ճանաչելու և ընդունելու, փոխադարձ հարգանքի և վստահության սկզբունքների վրա: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու ներկա գործունեությանը՝ նշելով նաև. «Հայրապետիս հոգին բերկրանքով է լցված, քանզի միայնակ չենք առաքելության Մեր ճանապարհին: Տիրոջ շնորհներով շարունակում ենք աստվածահաճո բարի գործեր կատարել քույր Եկեղեցիների հետ՝ պսակելով դրանք բարեկամության նորանոր ձեռքբերումներով և չանտեսելով արդիականության այն բոլոր մարտահրավերները, որոնք ծառացել են մեր Եկեղեցիների առջև: Գիտակցում ենք, որ երկխոսությամբ սկսված Մեր ուղին տակավին ճանապարհունի հարթելու Տիրոջով, գորավիզ կանգնելով միմյանց դժվարության պահին, միմյանց հետ կիսելով Մեր հարուստ և հնամենի հոգևոր փորձառությունն ու մտքի համընդհանուր ժառանգությունը»:

Վեհափառ Հայրապետը խոսեց նաև միջեկեղեցական հարաբերությունների զարգացման հեռանկարի մասին. «Հայ Եկեղեցին տեսիլքով է նայում Եկեղեցիների միջև հարաբերությունների զարգացմանը՝ ավելի զարկ տալու համատեղ կրթական և փոխանակման ծրագրերին, գործակցելու և Մեր համատեղ ձայնը բարձրացնելու ի խնդիր խաղաղության, մարդկային կյանքի բարօրության, մարդու իրավունքների պաշտպանության, արդարության և փոխադարձ հարգանքի հաստատման՝ ըմբռնումով մոտենալով մեր տարբերություններին և հարատև աղոթական ջանքերով նպաստելու երկխոսությանն ու վստահության հաստատմանը: Այս առումով կարևորում ենք 2001 թ. Անգլիկան Հաղորդության և Արևելյան Եկեղեցիների միջև սկսված երկխոսությունը, որի առաջին հանդիպումը, նվիրված Քրիստոսաբանական երկկողմ ըմբռնումներին, հաջողությամբ նշանավորվեց այստեղ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցած հանդիպմամբ: Մենք ջատագովում ենք այս երկխոսության կայուն շարունակությունը և լիահույս ենք, որ այն է՛լ ավելի կսերճեցնի մեր Եկեղեցիներն ու ժողովուրդներին ի փառս մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի»:

Նորին Սրբությունը ողջունեց նաև ներկայությունը ԵՀՄ Գլխավոր քարտուղար Վեր. դոկտոր Սամուել Կոբիայի՝ նրա այցը լավ առիթ նկատելով ծանոթանալու Հայոց Եկեղեցուն, հինավուրց հայ մշակույթին, երկրին ու ժողովրդին:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսին և համայն Հայ Եկեղեցուն ու ժողովրդին իր սրտի խոսքն ուղղեց Քենթրբերիի Արքեպիսկոպոս դոկտոր Ռոուան Վիլյամսը: Անգլիկան Եկեղեցու հովվապետը նշեց, որ իրենք երկար են սպասել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ուխտի գալու հնարավորությանը և մեծ ուրախություն ու բերկրանք են ապրում՝ Մայր Աթոռում միասնաբար ներկա գտնվելով Ս. Պատարագին: Նորին Սրբազնություն Ռոուան Վիլյամսն ամենաջերմ զգացումներով հիշեց Հայոց Հայրապետի այցը Մեծ Բրիտանիա և վստահություն հայտնեց երկու Եկեղեցիների միջև առկա բարեկամական հարաբերությունների ու երկխոսությունների շարունակական ընթացքի և դրանց առավել սերտացման վերաբերյալ: Մեջբերում անելով հընթացս Ս. Պատարագի կատարված ընթերցումից, ուր Պողոս Առաքյալը Քրիստոսի և Եկեղեցու միությունը նմանեցնում է Փեսայի և Հարսի միությանը, Քենթրբերիի Արքեպիսկոպոսն ի մասնավորի ասաց. «Այսօրվա Ավետարանի ըն-

թերցվածի մեջ մենք լսեցինք. «Ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի»: Եկեղեցին միացած է Քրիստոսին, ինչպես Հարսը՝ Փեսային: Դա նշանակում է, որ Հիսուս Քրիստոս խոստացել է հավերժ հավատարիմ լինել Իր Եկեղեցուն: Դարեր շարունակ քրիստոնյա հայ ժողովուրդը գիտակցել է Հիսուս Քրիստոսի հավատարմությունը Եկեղեցուն: Հայ ժողովուրդն Աստծո այդ ներկայությունն ու հավատարմությունը տեսել է անգամ հալածանքների ու Մեծ Եղեռնի ժամանակ: Եվ հայերի հավատարմությունն առ Աստված և առ Եկեղեցին հաստատագրումն ու առհավատյան են սուրբգրային այս խոսքի. «Ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի»: Մենք երջանիկ ենք՝ տեսնելով հավատարիմ վկայությունը ձեր Եկեղեցու և ժողովրդի: Դա մեզ հիշեցնում է նաև մեկ այլ ճշմարտության մասին՝ Քրիստոսի և Եկեղեցու միությունը թելադրում է, որ մենք, որպես քրիստոնյաներ, պարտավոր ենք հավատարիմ լինել միմյանց նկատմամբ: Մկրտությամբ Քրիստոս մեզ կապում է թե՛ Իր և թե՛ մեզ միմյանց հետ, ուստի մենք պարտավոր ենք, որպես քրիստոնյաներ, մեկս մյուսի նկատմամբ եղբայրասիրության մեջ լինել: Մենք հուսով ենք և նաև վստահ ենք, որ մեր Եկեղեցիների միջև առկա սերն ու եղբայրությունը նշան կլինի ամբողջ աշխարհի համար»:

Հավարտ իր խոսքի Անգլիկան Եկեղեցու Հովվապետը երախտագիտություն արտահայտեց ընդունելության համար. «Ձերդ Սրբություն, քույրեր և եղբայրներ, մենք խորապես գգացված ենք Ձեր հյուրընկալությամբ: Մենք խոստանում ենք հավատարիմ մնալ Քրիստոսին, որ մեզ կոչել է, և ձեզ բոլորիդ, որպես քույրեր և եղբայրներ: Թող Աստված շենացնի Իր Եկեղեցին, որպեսզի Իր փառքը տեսանելի լինի ողջ աշխարհում: Եվ այս սուրբ վայրում, ուր Միածին Որդին երկիր իջավ, և ուր մենք վերանորոգում ենք մեր տեսիլքը, աղոթում ենք, որ Միածին Որդին Իր հետ երկինք բարձրացնի մեզ: Մեր Տիրոջ և Իր ժողովրդի ներկայությամբ ես նորից արտահայտում եմ երախտագիտությունս և ամենայն բարիք և օրհնություն եմ մաղթում Ձերդ Սրբությանն ու ձեր ողջ ժողովրդին»:

Հավարտ սրբազան արարողության Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պատրոսյանը ներկայացրեց պաշտոնական այցով Հայաստանում գտնվող ԵՀԽ Գլխավոր քարտուղար դոկտոր Սամուել Կոբիային՝ նշելով, որ սեպտեմբերի 23-28-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարավելու է ԵՀԽ Գործադիր կոմիտեի հերթական ժողովը: Այնուհետև իր սրտի խոսքը ներկաներին փոխանցեց դոկտոր Սամուել Կոբիան:

Պատարագի սրբազան արարողությունից հետո երկու հովվապետերը և պատվարժան հյուրերը եկեղեցականաց հանդիսավոր թափոռով ուղղվեցին դեպի Վեհարան:

Սեպտեմբերի 23-ին Անգլիկան Եկեղեցու հովվապետը այցելեց նաև Նորքի Հայրոցյաց տուն:

Սեպտեմբերի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Քենթրբերիի Արքեպիսկոպոս դոկտոր Ռոուան Վիլյամսը երկու Եկեղեցիների հոգևորականների ուղեկցությամբ այցելեցին Երևանի Ս. Երրորդություն եկեղեցի: Հովվապետերին Ս. Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Եսայի քահանա Արթենյանը ներկայացրեց եկեղեցուն կից գործող կիրակնօրյա դպրոցի համակարգչային լսարանի աշխատանքներին: Հատուկ ուշադրության արժանացավ խուլ և համրերի հետ դասընթացների ծրագիրը, բարձրաստիճան այցելուներին ներկայացվեց Ժեստերի լեզվի առաջին անգամ հայերեն տպագրված հո-

գևոր բառարանը և Հայ Եկեղեցու Սրբազան Պատարագի ժեստերով բացատրություններով հանդերձ լազերային տեսասկավառակը:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Քենթրբերիի Արքեպիսկոպոսը այցելեցին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցի, ապա եղան Ս. Կաթողիկե և Զորավոր Ս. Աստվածածնի եկեղեցիներում:

Նույն օրը Վեհափառ Հայրապետն ու Անգլիկան Եկեղեցու պետն այցելեցին ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ: ՀՀ Արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանի, Քրեակատարողական վարչության պետ, արդարադատության գեներալ-մայոր Աշոտ Մարտիրոսյանի և «Աբովյան» ՔԿՀ պետ, գնդապետ Էդիկ Հովհաննիսյանի ուղեկցությամբ երկու Եկեղեցիների պետերը շրջեցին քրեակատարողական հիմնարկում, ծանոթացան ազատազրկվածների կեցության պայմաններին:

Հայոց Հայրապետն ու Քենթրբերիի Արքեպիսկոպոսը հանդիպում ունեցան նաև կալանավայրերում հոգևոր ծառայություն իրականացնող մի շարք հոգևորականների հետ, քննարկեցին նրանց կողմից դատապարտյալներին մատուցվող հոգեխնամության ձևերը:

Նորին Սրբությունն ու Նորին Սրբազնությունը հանդիպեցին նաև ազատազրկվածների հետ, ունեցան առանձնազրույցներ: Հատուկ ուշադրություն ընծայվեց նաև բանտարկյալ անչափահասներին: Բարձրաստիճան եկեղեցականներն այցելեցին անչափահասների դասարաններ, ուր զրուցեցին երիտասարդների հետ: Վեհափառ Հայրապետը հորդորեց նրանց, որպեսզի նոր ճանապարհ ընտրեն իրենց կյանքի համար և, դուրս գալով քրեակատարողական հիմնարկից, նոր գիտակցությամբ, նոր ոգով ու աշխարհընկալմամբ դառնան մեր երկրի արժանավոր քաղաքացիներ: Քենթրբերիի Արքեպիսկոպոսն իր հերթին իր օրհնությունը բերեց անչափահասներին:

Սեպտեմբերի 24-ին Քենթրբերիի Արքեպիսկոպոս դոկտոր Ռոուան Վիլյամսը երկու Եկեղեցիների հոգևորականների ուղեկցությամբ այցելեց Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց:

Վազգենյան Հոգևոր Դպրանոցի սաները դիմավորեցին Անգլիկան Եկեղեցու պետին «Հրաշափառ» շարականի երգեցողությամբ: Այնուհետև դպրանոցի տեսուչ Տ. Մկրտիչ վարդապետ Պողոսյանը ուղեկցեց հյուրերին դպրանոցի հիմնական մասնաշենքի հարկաբաժիններով և ներկայացրեց դպրանոցի հիմնադրման պատմությունը: Դպրանոցին ծանոթանալուց հետո հանդիսությունների դահլիճում դր Ռոուան Վիլյամսին ու նրան ուղեկից հոգևորականներին ողջունեց Տ. Մկրտիչ վարդապետ Պողոսյանը: «Ձեր այցը այս ճեմարան վկայում է Հայ և Անգլիկան Եկեղեցիների միջև առկա հարաբերությունների որակի մասին: Մեզ համար Ձեր այցը ոչ միայն պատմական ձևավորված հարաբերությունների պատմություն է, այլև արտահայտությունն է այն ոգու, որ, ես կարծում եմ, հատուկ է երկու Եկեղեցիներին», - ասաց Հայր Սուրբը՝ վերստին ուրախություն հայտնելով Քենթրբերիի Արքեպիսկոպոսի այցի համար Սևանի դպրանոց:

Այնուհետև դպրանոցի սաները ներկայացրեցին մի քանի շարականների կատարումներ:

Վերջում Արքեպիսկոպոս Ռոուան Վիլյամսը իր մտորումները փոխանցեց ճեմարանի սաներին: Իր խոսքում նա մասնավորապես ասաց. «Ուրախ ենք ձեզ հետ լինել: Հրաշալի երգեցողություն էր: ...Աստվածաբանությունը նման չէ այլ առարկա-

ների: Աստվածաբանությունը ներառում է մեր հոգին, սիրտը և մարմինը՝ ամենը միասին: Աստվածաբանությունը սերտում ենք ոչ միայն գրքերից, այլև միմյանցից և Եկեղեցու ծառայությունից: Միասին ապրելն ու աղոթելը մաս է կազմում աստվածաբանական մեր կրթության»: Հովվապետը երիտասարդների հետ իր մտածումները կիսեց հոգևորականի կոչման և դժվարին ծառայության մասին, հորդորեց ունկնդիր լինել Աստծո կանչին և կարողանալ միշտ սովորել իրենց շրջապատող հոգևորական և աշխարհական եղբայրներից:

Հանդիպումից հետո Քենթրբերիի Արքեպիսկոպոսը պատվիրակության ուղեկցությամբ եղավ նաև Սևանի թերակղզու Ս. Առաքելոց վանքում:

Սեպտեմբերի 25-ին ավարտվեց Քենթրբերիի Արքեպիսկոպոս ղոկտոր Ռոուան Վիլյամսի պաշտոնական այցելությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի:

Մինչ Անգլիկան Եկեղեցու պատվիրակության մեկնումը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Քենթրբերիի Արքեպիսկոպոս ղոկտոր Ռոուան Վիլյամսը Մայր Աթոռի միաբանների ուղեկցությամբ Վեհաբանից առաջնորդվեցին դեպի Մայր Տաճար, ուր Իջման Սուրբ Սեղանի առջև կատարվեց աղոթքի և հրաժեշտի արարողություն:

«Գոհություն ենք հայտնում Ամենակալին անցնող հիշարժան չորս օրերի համար, որ վայելեցինք միասին՝ ամրագրելով Մեր եղբայրական սերը և հարստացնելով Մեր հարաբերությունների պատմությունը:

Ձերդ Սրբազնության այցելության օրերին Մենք առիթն ունեցանք նաև Մեր մտահոգությունը կիսելու Քրիստոսի Սուրբ Եկեղեցու և ժամանակակից մարդու առջև ծառացած մարտահրավերների շուրջ: ...Մենք, որպես հոգևոր առաջնորդներ, մտահոգված ենք աշխարհում խաղաղությունը վտանգող երեքուն կացությամբ: Մեզ հուզում են աճող աշխարհայնությունն ու դրա հետևանքները համընդհանուր քրիստոնեական կյանքում: Մեր ուշադրության կենտրոնում են կրոնական ծայրահեղականության և պատերազմի գոհ դարձած կիներ ու երեխան, հարուստ ու բարգավաճ երկրներում ապրող, բայց ժամանակակից կյանքի արատավոր երևույթների թելադրմամբ քրիստոնեական արժեքներից հեռացած պատանին: Մտահոգ ենք, քանի որ ժամանակակից կյանքի մարտահրավերներին դեմ հանդիման Քրիստոնեական Եկեղեցիների համագործակցության մեջ տակավին ամբողջությամբ չի ամրապնդվել մրցակցության փոխարեն սիրո հրամայականներով առաջնորդվելու եղբայրության ոգին:

Հրամայական է Մեզ համար երիտասարդ սերնդի քրիստոնեական դաստիարակությունն ու Ավետարանի պատգամներից բխող բարոյական արժեքների տարածումը, գիտության ձեռքբերումներով զինված և Քրիստոսի Եկեղեցու հոգևոր հարուստ ժառանգությանը հավատարիմ հոգևորական նոր սերունդների պատրաստությունը, միմյանց ավանդությունների ուսումնասիրությունն ու փոխադարձ շփումների խթանումը», - ասաց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը կարևոր նկատեց, որ Եկեղեցիները գործեն համատեղ և իրենց ընդհանուր ձայնը բարձրացնեն՝ բացառելու ցավն ու տառապանքը մարդկային կյանքում:

Ապա ներկաներին իր խոսքն ուղղեց Քենթրբերիի Արքեպիսկոպոսը: Նորին Սրբազնությունը ներկայացրեց իր տպավորությունները հայ ժողովրդի խորը հավատի և Աստծո հանդեպ հավատարմության մասին: «Հայաստանում ամենուրեք մենք տեսանք քարերի վրա փորագրված խաչքարեր, ինչը վկայում է, որ Տիրոջ

խաչն իրապես խորը դրոշմված է ողջ հայ ժողովրդի սրտում: Դա վկայում է, թե որքան մեծ է Աստծո նկատմամբ սերը հայ ժողովրդի կյանքում», - ասաց Արքեպիսկոպոսը: Իր խոսքում նա նշեց, որ Եկեղեցիները մեկմեկու կարիքն ունեն և պետք է միասին աղոթեն, վկայեն, միմյանցից սովորեն ու համագործակցեն:

Նա իր շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբությանը ջերմ հյուրընկալության և երկու Եկեղեցիների միջև առկա սերտ հարաբերությունների համար:

Սեպտեմբերի 25-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Քենթրբերիի Արքեպիսկոպոս դոկտոր Ռոուան Վիլյամսի ու նրան ուղեկից անգլիկան հոգևորականների, ԵՀԽ Գլխավոր քարտուղար դոկտոր Սամուել Կոբիայի, ԵՀԽ ատենապետ դոկտոր Վոլթեր Ալթմանի և ԵՀԽ Գործադիր կոմիտեի անդամների հետ այցելեց Հայոց Ցեղասպանության հուշահամալիր:

Նորին Սրբությանն ու բարձրաստիճան հյուրերին Ծիծեռնակաբերդում դիմավորեց ՀՀ ԳԱ Ցեղասպանության ինստիտուտ-թանգարանի տնօրեն Հայկ Դեմոյանը: Երկու հովվապետերն ու ԵՀԽ նախագահն իրենց ուղեկիցների հետ շրջեցին Ցեղասպանության ինստիտուտ-թանգարանում, ապա ծաղկեպսակներ զետեղեցին Մեծ Եղեռնի զոհերի հուշահամալիրում:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների հետ կատարեց Հոգեհանգստայան արարողություն: Հավարտ արարողության ի հանգստություն և ի խաղաղություն Ցեղասպանության զոհերի հոգիների աղոթք բարձրացրեցին նաև Անգլիկան Եկեղեցու հովվապետը և ԵՀԽ ատենապետ Վեր. Վոլթեր Ալթմանը:

Արարողությունից հետո Քենթրբերիի Արքեպիսկոպոսը ծառ տնկեց Ցեղասպանության թանգարանի հարևանությամբ:

Նույն օրը երկու Եկեղեցիների պետերը եղան Ս. Գեղարդավանքում, ծանոթացան վանքի պատմությանը: Գեղարդավանքում հոգևոր երգերի կատարումներով հանդես եկավ վանքի երգչախումբը:

*ՄԱՅՐ ԱԹՐԱՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 25-ի երեկոյան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհաբանում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Անգլիկան Եկեղեցու պետ Քենթրբերիի Արքեպիսկոպոս դոկտոր Ռոուան Վիլյամսը ստորագրեցին հետևյալ հայտարարությունը:

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի

և Քենթրբերիի Արքեպիսկոպոս

Նորին Սրբազնություն դոկտոր Ռոուան Վիլյամս

**Արքեպիսկոպոսի՝ Հայաստանյայց Եկեղեցի կատարած այցի
ավարտին**

(22-25 սեպտեմբերի 2007 թ.)

Քենթրբերիի Արքեպիսկոպոս Նորին Սրբազնություն դոկտոր Ռոուան Վիլյամսը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով 2007 թ. սեպտեմբերի 22-25-ը, պաշտոնական այցելություն տվեց Հայաստանյայց Եկեղեցուն: Արքեպիսկոպոսին ուղեկցում էին Եվրոպայում Ջիբրալթարի եպիսկոպոս և Անգլիկան Հաղորդության-Արևելյան Ուղղափառ միացյալ միջազգային հանձնաժողովի համանախագահ Ջեֆֆրի Ռաուելը և Սալիսբերի եպիսկոպոս Դեյվիդ Ստանքլիֆը: Այս այցը հաջորդեց Նորին Սրբություն Գարեգին Բ-ի 2004 թվականին Անգլիկան Եկեղեցուն տված պաշտոնական այցին: Այս փոխադարձ այցերը հնարավորություն ընձեռեցին ճանաչելու երկու Եկեղեցիների կյանքի և առաքելության առանձնահատկությունները իրենց պատմական և ժամանակակից ենթատեքստերում:

Այցի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Քենթրբերիի Արքեպիսկոպոսը ստորագրեցին հետևյալ համատեղ հայտարարությունը.

«Մենք ուրախ ենք, որ Անգլիկան Եկեղեցի (2004 թ.) և Հայաստանյայց Եկեղեցի (2007 թ.) կատարած փոխադարձ պաշտոնական այցերի առիթով մենք յուրաքանչյուրս, իբրև եղբայրներ, մասնակցել ենք մեր Եկեղեցիների Սուրբ Պատարագներին և ժամանակ ենք անցկացրել մեր եղբայր եպիսկոպոսների, հոգևոր հայրերի և հավատացյալ ժողովրդի հետ աղոթքի և աստվածաշնորհի մեջ: Ներկայիս այցը սքանչելի հնարավորություն էր՝ որոշ չափով ծանոթանալու Հայաստանյայց Եկեղեցու կյանքի լրությամբ: Վանքեր և ճեմարաններ այցելելուց բացի մենք միասին անձնապես տեսանք Եկեղեցու հովվական ծառայության օրինակներ հայ հասարակության ամենից կարիքավորների շրջանակներում, ներառյալ երիտասարդությանը, որ Եկեղեցու կողմից կազմակերպված Հայորդյաց տներում ուսանում և ստանում է նոր հմտություններ, ինչպես նաև «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում իրենց ազատազրկման ժամանակահատվածն անցկացնողներին, ուր հոգևոր հովիվները հոգում են ազատազրկվածների հոգևոր կարիքները: Մենք ոգեշնչվեցինք՝ տեսնելով

քաղաքի արագ զարգացող թաղամասերում կառուցված նոր եկեղեցիները՝ մեր երկու եկեղեցիների նոր կյանքի ակնհայտ նշանը:

Մենք քննարկումներ ունեցանք ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանի, ինչպես նաև ՀՀ Արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանի հետ:

Հավատում ենք, որ մեր եկեղեցիների և մեր հասարակությունների բարօրության համար չափազանց կարևոր է եկեղեցի-պետություն փոխադարձ հարգալից և արդյունավետ հարաբերությունների շարունակ զարգացումը: Եկեղեցին մշտապես պետք է Աստծո անպայմանավոր սիրո նշանը լինի Իր ժողովրդի մեջ: Աշխարհում Աստծո Խոսքի տարածման և ուսուցման մեջ մենք պետք է լինենք լի սիրով, ճշմարտությամբ և աներկյուղ՝ մշտապես ճանապարհներ գտնելով անկեղծ և բաց խոսելու սիրո ոգով մեր բոլոր եղբայրների ու քույրերի և պետական ու հանրային իշխանությունների հետ մեր երկու երկրներում:

Մենք խորը զգացում ապրեցինք՝ մասնակցելով ամենուր տեղի ունեցած Ցեղասպանության գոհերի հիշատակին նվիրված աղոթքին: Երևանում՝ Հայոց Ցեղասպանության հուշահամալիրում, ուր մեզ միացան նաև եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Գործադիր կոմիտեի մեր եղբայրներն ու քույրերը:

Միասին անկացրած օրհնյալ այս ժամանակահատվածի ավարտին մենք խորին երախտագիտությամբ հաստատում ենք Բարձրյալ Աստծո առատ օրհնության մասին, որը բխում է Անգլիկան Հաղորդության և Հայ եկեղեցու երկար ու սերտ հարաբերություններից:

Մենք ողջունում ենք Անգլիկան Հաղորդության-Արևելյան Ուղղափառ միացյալ միջազգային հանձնաժողովի ստեղծումը 2001 թվականին: 2002 թվականին Սուրբ Էջմիածնում իր առաջին հանդիպման ժամանակ հանձնաժողովի կողմից ձեռք բերված Քրիստոսաբանական համաձայնությունը վկայում է Արևելյան Ուղղափառ եկեղեցիների ընտանիքի և Անգլիկան Հաղորդության միջև շարունակվող աստվածաբանական երկխոսության կարևորության մասին:

Մենք ցավ ենք հայտնում այս երկխոսության ժամանակավոր դադարեցման համար և մեր սրտերում ապագայի հանդեպ մեծ հույսերով ակնկալում ենք, որ Հանձնաժողովի աշխատանքները շուտափույթ կվերսկսեն:

Մենք գոհություն ենք մատուցում Աստծուն մեր և մեր երկու եկեղեցիների միջև առկա բարեկամության մեծ պարզևի համար և աղոթում, որ այս բարեկամության պտուղները տեսանելի դառնան մեր եկեղեցիների անդամների կյանքում և վկայեն մեր հանդեպ ունեցած՝ Հիսուս Քրիստոսի միջոցով Աստծո սիրո մասին»:

ԵՀԽ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ԵՎ ԵՀԽ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 23-28-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվելու է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Գործադիր կոմիտեի հերթական ժողովը: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ԵՀԽ Գործադիր կոմիտեի կազմում ներկայացնում է ԱՄՆ հայոց Արևելյան թեմի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու և ԱՄՆ Եկեղեցիների Ազգային Խորհրդի նախագահ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը:

Սեպտեմբերի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց իր հրավերով Հայաստան ժամանած Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Գլխավոր քարտուղար դր Սամուել Կոբիային: Նորին Սրբությունը ողջունեց դր Կոբիայի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին և ուրախություն հայտնեց Մայր Աթոռում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Գործադիր կոմիտեի հերթական ժողովի գումարման առիթով: *«Մենք ուրախ ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն իր կարևոր ավանդն է բերում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հիմնական ձգտումներին, որոնք են Եկեղեցիների եղբայրությունը և Եկեղեցիների համագործակցությունը: Մենք ուրախ ենք, որ այսօր մեր Եկեղեցին առավել չափով ներկայություն ունի Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում՝ նրա տարբեր կառույցներում և մարմիններում և իր աշխույժ, եռանդուն մասնակցությունն է բերում նրանց աշխատանքներին»*, -ասաց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունն ասաց, որ դր Կոբիայի և ԵՀԽ Գործադիր կոմիտեի ներկայությունը Հայաստանում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նաև իր դրական ներգործությունը և արձագանքը կգտնի մեր ժողովրդի զավակների հոգիներում, և ժողովուրդն առավել պիտի ծանոթանա և ճանաչի այն աշխատանքները, որ իրականացնում է Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը:

Անդրադառնալով Եկեղեցիների առաքելությանը 21-րդ դարում՝ Գարեգին Բ Հայրապետը նշեց, որ համատեղ ջանքերով միայն Եկեղեցիները կարող են հաղթահարել մարդկության առջև ծառացած մարտահրավերները:

«Սա իմ առաջին այցն է Հայաստան, և կարծում եմ՝ այն շատ հատկանշական է: Իրապես, հաճելի է լինել այստեղ և միանալ Ձեզ Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա տոնակատարության շրջանակում: Մեզ համար սա պարզապես այցելություն չէ, այլ՝ ուխտագնացություն, որովհետև մեզ և ԵՀԽ-ի համար Հայաստանը և հայ ժողովուրդը շատ առանձնահատուկ տեղ ունեն», - ասաց դր Կոբիան՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը հյուրընկալության համար: ԵՀԽ Գլխավոր քարտուղարը շնորհակալություն հայտնեց նաև Վեհափառ Հայրապետին այն կարևոր նպաստի համար, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին բերում է մասնավորապես ԵՀԽ-ին և Էկումենիկ շարժմանն ընդ-

հանրապետ՝ մեծապես արժեվորելով այն, որ Հայ Եկեղեցու եկեղեցականներն ու բարեպաշտ զավակները իրենց ներդրումն են ունենում ԵՀԽ-ի տարբեր կառույցներում և հանձնախմբերում:

Դր. Կոբիան ներկայացրեց նաև առաջիկա ժողովին քննարկվելիք հարցերը, հանգամանորեն անդրադարձավ ԵՀԽ-ի ծրագրերին և նպատակներին՝ ընդառաջ ԵՀԽ-ի 100-ամյակի հոբելյանին՝ վստահություն հայտնելով, որ անցկացնելով Գործադիր կոմիտեի ժողովը Հայաստանում՝ իրենք առավել կներշնչվեն այն սպասավորությամբ, որ Հայոց Եկեղեցին այսօր բերում է իր ժողովրդի կյանքում:

Իր հերթին ԵՀԽ փոխատենապետ Սասսիմայի միտրոպոլիտ Գեննադիոսը (Տիեզերական պատրիարքություն) Ամենայն Հայոց Հայրապետին փոխանցեց Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա-ի եղբայրական ողջույններն ու բարեմաղթանքները և անդրադարձավ 1962 թվականից ի վեր և մասնավորաբար Նորին Սրբության գահակալության շրջանին Հայ Եկեղեցու ներգրավվածությանը ԵՀԽ-ի ծրագրերում:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Ս. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու և ԱՄՆ Եկեղեցիների Ազգային Խորհրդի նախագահ Ս. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը, Մեծ Բրիտանիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը, Մայր Աթոռի միաբաններ:

Նույն օրը ԵՀԽ Գլխավոր քարտուղարը Մայր Աթոռի միաբանների ուղեկցությամբ այցելեց նաև Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե վանքեր:

Սեպտեմբերի 22-ին Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Գլխավոր քարտուղար դր Սամուել Կոբիան շարունակեց իր այցելություններն ու հանդիպումները Հայաստանում:

Առավոտյան դր Կոբիան Մեծ Բրիտանիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կրտսեր միաբանների ուղեկցությամբ եղավ Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, ուր իր խոնարհումը բերեց եկեղեցում ամպհովանու ներքո ամփոփված Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքներին: ԵՀԽ Գլխավոր քարտուղարը շրջեց եկեղեցում, ծանոթացավ սուրբ տաճարի սպասավորների ծառայությանը:

Ապա պաշտոնական պատվիրակությունն այցելեց Երևանի Սուրբ Երրորդություն եկեղեցի: Եկեղեցու հոգևոր հովիվ Ս. Եսայի քահանա Արթենյանը դր Կոբիային ներկայացրեց եկեղեցու շուրջ կազմավորված համայնքի և կիրակնօրյա դպրոցի գործունեությունը:

Այնուհետև դր Սամուել Կոբիան և նրա ուղեկիցները մեկնեցին Արագածոտնի թեմ և Օշականի եկեղեցում իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմին: Օշականում պատվավոր հյուրին ողջունեց առաջնորդական տեղապահ Ս. Թորգոմ վարդապետ Տոնիկյանը, ապա եկեղեցու կամարների ներքո կատարվեց միասնական աղոթք: Աղոթքից հետո հյուրերը զրուցեցին նաև եկեղեցի

ուխտի եկած մանուկների հետ: Օշականում ԵՀԽ Գլխավոր քարտուղարն այցելեց նաև Եկեղեցու հարևանությամբ գործող Դպրատուն:

Օրվա վերջում Վեր. դր Սամուել Կոբիան Մայր Աթոռում հանդիպում ունեցավ Հայաստանում գործող Էկումենիկ կազմակերպությունների՝ ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի, Էկումենիկ եկեղեցական փոխատվական հիմնադրամի և այլ կառույցների ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում Կլոր Սեղանի տնօրեն դր Կարեն Նազարյանը Գլխավոր քարտուղարին և գործադիր կոմիտեի անդամներին ներկայացրեց Հայաստանյան Կլոր Սեղանի գործունեությունը և, ի մասնավորի, տարածաշրջանում խաղաղության վերահաստատմանն ուղղված ծրագիրը:

Սեպտեմբերի 24-ին Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Գլխավոր քարտուղար դր Սամուել Կոբիան ԵՀԽ Գործադիր կոմիտեի անդամ Ս. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանի ուղեկցությամբ այցելեց ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ, հանդիպում ունեցավ դասախոսական կազմի և ուսանողության հետ:

Նույն օրը ԵՀԽ Գլխավոր քարտուղարը ԵՀԽ Գործադիր վարչության հետ եղավ Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում: Դպրանոցում պատվարժան հյուրերին ողջունեց Դպրանոցի տեսուչ Ս. Մկրտիչ վարդապետ Պողոսյանը: Դպրանոցի սաները հանդես եկան հոգևոր և ազգային երգերի ու ասմունքի հայտագրով: Վազգենյան Հոգևոր Դպրանոցում հնչեցրած իր խոսքում դր Սամուել Կոբիան ներկայացրեց ԵՀԽ գործունեությունը և մեծապես կարևորեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դերը Էկումենիկ գործընթացներում:

Ապա ԵՀԽ Գլխավոր քարտուղարն ու նրա գլխավորած պատվիրակությունը մեկնեցին Ծաղկաձոր, ուր ծանոթացան Կեչառիսի վանական համալիրին:

Սեպտեմբերի 26-ին Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Գործադիր կոմիտեի անդամներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Ս. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանի և ԵՀԽ գործադիր կոմիտեի անդամ Ս. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանի:

Գործադիր կոմիտեի անունից Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնեց Վիգեն Սրբազանը՝ կոմիտեի ժողովը Մայր Աթոռում անցկացնելու հնարավորությունն ընձեռելու համար:

Հանդիպման ընթացքին իրենց շնորհակալական զգացումներն ու տպավորությունները արտահայտեցին նաև ԵՀԽ ատենապետ Վոլթեր Ալթմանը և ԵՀԽ Գլխավոր քարտուղար Սամուել Կոբիան: «Այս օրերին մենք վկան դարձանք այն ամենի, որ դուք անում եք Հայոց Եկեղեցու և հայ ժողովրդի համար: Տեսանք հարուստ ժառանգությունը ձեր Եկեղեցու...», - նշեց դր Ալթմանն իր խոսքում: Իր հերթին ԵՀԽ Գլխավոր քարտուղարը ասաց. «Պատիվ է մեզ համար այստեղ գտնվել... Մենք շնորհակալ ենք այն Եկեղեցիներին, ովքեր հրավիրում են մեզ իրենց մոտ հանդիպումներ անցկացնելու»:

Ապա օրհնության և գնահատանքի իր խոսքը ներկաներին ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը: *«Մեզ համար իրապես ուրախություն է, որ ԵՀԽ Գործադիր կոմիտեն իր ժողովն անցկացնում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Այսպիսի շփումները մենք ընկալում ենք որպես օրհնություն: Ձեր ներկայությունը ոչ միայն լավ առիթ է, որ դուք ճանաչեք հայ ժողովրդին և Հայոց Եկեղեցին, այլև, որ մեր ժողովուրդը հաղորդ դառնա Եկեղեցիների Հանաջխարհային Խորհրդի առաքելությանն ու գործունեությանը»*, - ասաց Գարեգին Բ Հայրապետը: Նորին Սրբությունն անդրադարձավ նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ներկայիս գործունեությանը, Եկեղեցու առջև ծառացած մարտահրավերներին և ուրվագծեց Եկեղեցու հոգևոր սպասավորության հիմնական ոլորտները: *«Հայ ժողովուրդը փարված է քրիստոնեական իր հավատին: Եվ մենք լավատես ենք մեր Եկեղեցու վաղվա օրվա նկատմամբ»*, - նշեց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը նաև գոհունակություն հայտնեց քույր Եկեղեցիների և միջեկեղեցական կազմակերպությունների հետ կապերի առավել զորացման համար՝ նշելով, որ Հայ Եկեղեցին ակտիվ մասնակցություն է բերում միջեկեղեցական հարաբերություններին և լավագույնս ներկայացված է ԵՀԽ կառույցներում և համանման մյուս կազմակերպություններում:

Հայոց Հովվապետը գնահատանքով արձանագրեց, որ Հայ Եկեղեցին մեծապես օգտվել է այդ համագործակցությունից և ԵՀԽ-ն մշտապես սիրով և պատրաստակամությամբ արձագանքել է իր առջև Հայ Եկեղեցու կողմից բարձրացրած բոլոր խնդիրներին, ինչպես օրինակ՝ Հայոց Ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը, սոսկալի երկրաշարժի օրերին եղբայրական օգնությունը և Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց ԵՀԽ-ին շարունակել իր առաքելությունը, որպեսզի ժողովուրդներ և Եկեղեցիներ սիրո և համագործակցության ոգով կարելին ի սպաս դնեն՝ նպաստելու մարդկության խաղաղ և ապահով կյանքին:

Նույն օրը ԵՀԽ Գործադիր կոմիտեի մի քանի անդամներ, առաջնորդությամբ ԵՀԽ ատենապետ Վոլթեր Ալթմանի և ԵՀԽ Գլխավոր քարտուղար Սամուել Կոբիալի, եղան Հայոց Ցեղասպանության հուշահամալիրում, ուր, Ցեղասպանության թանգարանի հարևանությամբ, ԵՀԽ ատենապետը և ԵՀԽ Գլխավոր քարտուղարը եղևին տնկեցին ի հիշատակ Հայոց Ցեղասպանության զոհերի:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 21-ին, Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առիթով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիելի Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանների, կատարվեց գոհաբանական մաղթանք Հայաստանի Հանրապետության համար:

Իջման Սուրբ Սեդանի առջև մեծաշուք հանդեսով հոգևորականաց դասը աղոթք վերառաքեց առ Աստված Հայաստան աշխարհի համար: «...Արդ մենք ամենքս խոնարհվում ենք Քո առջև, Տեր Աստված մեր, և հայցում Քո ամենառատ ողորմությունից, որպեսզի պահես ու պահպանես Հանրապետությունը Հայաստան աշխարհի խաղաղության, բարօրության և անսասանության մեջ: ...Օրհնի՛ր բոլորին, որ Հանրապետության իշխանության ներքո են՝ եկեղեցականներին ու աշխարհականներին, մեծերին ու փոքրերին, տղամարդկանց ու կանանց և ողջ Քո հավատացյալ ժողովրդին՝ պահելով նրանց Քո Ս. Աջի հովանու ներքո», - ասվում է Հայրապետական աղոթքում, որ Նորին Սրբությունը ծնրադիր ընթերցեց մաղթանքի ընթացքին:

Ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը շնորհավորեց արարողությանը ներկա միաբաններին ու հավատացյալներին պանծալի տոնի առիթով: «Փառք ենք վերառաքում առ Աստված, որ Տերը մեր կյանքում իրականություն դարձրեց մեր ժողովրդի դարավոր երազը: Այսօր Հայաստանյայց Առաքելական սուրբ եկեղեցիներում Հանրապետական մաղթանք է կատարվում՝ հայցով, որ Տերն անվրդով ու խաղաղ պահի Հայոց աշխարհը և մշտական, շարունակական բարգավաճման ու առաջընթացի մեջ:

...Թանկ ձեռք բերվեց ազատությունն ու անկախությունը մեր ժողովրդի, և մենք պիտի գիտնանք այդ արժեքը, այդ ձեռքբերումն արժեվորել, պիտի գիտնանք գուրգուրանքով ու փայփայանքով պահպանել, սիրով ու նվիրումով փարվել հայրենական մեր կյանքին և մեր ազնիվ աշխատանքով, մեր արդար քրտինքով կերտել մեր երազի Հայրենիքը՝ բարօրություն ապահովելով մեր ժողովրդին ի Հայաստան, Արցախ և ի Սփյուռք», - ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԸ
ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում կրթության ասպարեզի սպասավորներին, ուսանողներին, աշակերտներին՝ Գիտելիքի, գրի և դպրության տոնի և ուսումնական նոր տարվա վերաբացման առիթով:

Այսօր ողջունի խոսքերով, ուրախ սրտերով վերստին բացվում են ուսումնական հաստատությունների դռները: Սկսվում է նոր ուսումնական տարին՝ նոր տեսիլքներով, երազներով ու հույսերով: Մեր աղոթքն է, որ այն լինի եռանդով և ջանասիրությամբ լեցուն ու արգասաբեր:

Գիտության և կրթության լույսով պիտի կերտենք մեր երկրի և ազգի նոր կյանքը և առաջընթացը: Երիտասարդ սերնդի ազգային ոգով կրթությունը և հայրենի սրբազան արժեքներով դաստիարակությունն է գրավականը մեր ժողովրդի գոյության հարատևության:

Միբելի զավակներ, կրթության ճամփան դժվարին է, բայց օրհնյալ և շնորհապարզ: Այն երջանիկ ու ստեղծարար կյանքի ուղին պիտի հարթի ձեզ՝ դեպի ապագայի լուսավոր հորիզոններ:

Բարի ընթացք ձեզ 2007-2008 ուսումնական տարում:

Թող Հիսուս Քրիստոսի աստվածային ամենառատ սերն ու շնորհները միշտ ձեզ հետ լինեն. Ամեն:

Ս. Էջմիածին,

1 սեպտեմբերի 2007 թ.

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐ-
ՎԱ ԱՌԻԹՈՎ**

Համայն մեր ժողովրդին ի Հայաստան, Արցախ և ի Սփյուռք ողջուն ենք հղում և օրհնություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից և շնորհավորում Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա առիթով:

Այսօր մենք տոնում ենք Հայոց պետականության վերականգնման պանծալի հաղթանակը, որը ձեռք է բերվել սերունդների մաքառումի և զոհողության գնով: Անցնող հարյուրամյակում, հակառակ բազում արհավիրքների ու ծանր կորուստների, մեր ժողովուրդը արիաբար պայքարեց ազատության համար և, ապավինած Աստծուն, հուսաց անկախության այս նվիրական առավոտը, որը հույսի նոր շողեր է սփռում աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքի վրա:


Մենք հավատում ենք, որ մեր ժողովուրդը պիտի շարունակի կերտել իր շեն ու բարօր, երջանիկ կյանքը՝ ամուր պահելով անկախ պետականության իր նվաճումները և ընթանալով դեպի նոր հաղթանակներ:

Օրհնություն և լույս հանուն Հայոց պետականության ազատ նոր կյանքի իրենց անձերը նվիրաբերած քաջարի մեր զավակների հոգիներին:

Աղոթում ենք առ Տերն ամենայնի, որպեսզի Իր օրհնության ներքո խաղաղ բարգավաճում և առաջընթաց շնորհի Հայրենի մեր պետությանը և արդյունավորի ի սեր Հայրենյաց մեր ժողովրդի բոլոր ջանքերը:

Շնորհ, սէր և խաղաղություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ և ընդ ամենեսեան. Ամէն:

Ս. Էջմիածին,
21 սեպտեմբերի 2007 թ.



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿՆ
«Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ
ԱԶԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԱՐԵԳԻՆ Բ. ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԳ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵԼԵՑԻՈՅ
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒԴԻԿԵ ԷԶՄԻԱՇՆԻ**

**ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆՑ
ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱԴԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ,
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ
ՀԱՄԱՅՆ ՀԱԻԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ**

Փրկչի եւ մեր Տիրոջ Իջման Սուրբ Սեղանի առջեւ գոհութեան աղօթքով ու մաղթանքով գալիս ենք ծանուցելու, որ ընդառաջ Հայրապետական Մեր հրաւերին՝ մեր Սուրբ Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին երկար տարիներ զօրակից մի խումբ բարերարների ազնիւ յանձնառութեամբ 2005 թուականին Ամերիկայի Միացեալ Նահանգներում հաստատուել է «Սուրբ Էջմիածնի բարեկամներ» հիմնադրամը, որպէսզի մշտական նեցուկ եւ ապաւինութիւն դառնայ համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռին:

Փառք Երկնաւորին, որ ականատես եւք Սուրբ Էջմիածնի առաքելութեանը զօրավիգ լինելու այսպիսի վկայութեան՝ որդիական անաղարտ սիրոյ ու հաւատարմութեան: Այս նուիրումով տասնեօթ դար մեր ժողովուրդը պահպանեց Սուրբ Էջմիածինը՝ Թաքոր լեռը հայ հոգու, համայն հայ կեանքի պայծառակերպութեան, Սինայ լեռը հայոց, որտեղից Միածնի Էջքով Աստուած խօսեց մեր ժողովրդի հետ: Աստուծոյ հետ

հայոց ուխտի խորհրդով Սուրբ Էջմիածինը եղաւ մեր ժողովրդի հոգեւոր կեանքի ակունքը, որն ինչպէս շարականագիրն է ասում՝ ճանաչեցինք շտեմարան ու բաշխող աստուածային շնորհների եւ դասանեցինք մայր, ծնող ու դաստիարակ հայոց եկեղեցիներին: Մեր պատմութեան դժուարին ճանապարհներին Սուրբ Էջմիածինը առաջնորդեց, մէկ ու ամբողջական պահպանեց մեր ժողովրդին: Երբ Հայրենիքում հալածեալ եղանք, երբ տարագիր եղանք օտար ափերում, Փրկչի Իջման նուիրագործուած Խորանից հայոց հոգիներին միշտ շողաց փրկութեան լոյսը եւ յոյս ու զօրութիւն պարգեւեց ապրելու եւ վերածնունդի:

Արդ, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, հրաւեր ու յորդոր ենք ուղղում ձեզ ի Հայաստան եւ ի Սփիւռս՝ ձեր նուիրատուութիւններով զօրավիգ լինելու նորահաստատ հիմնադրամին: Ձեր աջակցութեամբ պիտի կառուցուեն նոր եկեղեցիներ եւ յառնեն խոնարհուած սրբատեղիներ, որոնք դեռեւս բազմաթիւ են Հայրենիքում եւ երբեմնի հայաշատ, բայց ժամանակի ընթացքում այլեւս տկարացած գաղթավայրերում: Հոգեւոր կրթական հաստատութիւնները ծառայութեան պիտի ճամփեն առատ հունձք եկեղեցականների, ովքեր մեր Եկեղեցու թեմերում պիտի համալրեն հոգեւոր սպասաւորների շարքերը: Պիտի վերակազմակերպուեն եկեղեցական ծխական համայնքները Հայրենիքում եւ Սփիւռքի նոր ձեւաւորուող հաստատութիւններում: Կեանք պիտի առնեն մշակութային, կրթական ծրագրեր, հրատարակութիւններ եւ ամեն ջանք պիտի առատանայ, որպէսզի անմար մնան մեր ժողովրդի կեանքում հաւատն ու յոյսը, եւ միշտ ապրեն մեր հայրերի աւանդները, ոգին ու նուիրումը: Լինենք անվարան հետեւորդները մեր հայրերի, ովքեր Աստուծոյ կոչին հաւատարիմ հաստատեցին ու պահպանեցին Սուրբ Էջմիածինը:

Հայցում ենք առ Աստուած, որ օրինի արդար յիշատակը Սուրբ Էջմիածինը նորագողների ու բարեգարդողների, դարերի մէջ Սուրբ Էջմիածնի համար անդուլ տքնողների: Այլեւ օրինի իրենց ընտանեօք հանդերձ Սուրբ Էջմիածնի բարերարներին, Մայր Աթոռի պայծառութեանը ջանք ու նուիրում բերողներին:

Թող բազմաշնորհ ու ամենախնամ օրհնութիւնը Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու միշտ եւ յանապազ ձեզ հետ լինի եւ Սուրբ Էջմիածնի անմար լոյսի մէջ պահպանի ազգս հայոց զօրացեալ հաւատով ու հայրենեաց սիրով՝ լինելու միշտ ժառանգութիւն անկորուստ ու պտղաբեր:

Շնորհ, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեւեան: Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 28 Սեպտեմբերի
Յամի Տեառն 2007 եւ ի թուին Հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 435

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԿՐԵԿԸՐԻ ԷՔԻԶՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾԻՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԿՐԵԿԸՐԻ ԷՔԻԶԵԱՆ,
ՈՐ Ի ՄԷՅՆԹ ՓԻԹԸՊՈՒՐԿ, ԱՄՆ**

Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Յարգարժան պրն Էքիզեան,

Անկեղծ գոհունակութիւն է Մեզ համար ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանից բարի վկայութիւններ լսել հաւատաւոր հայորդոյ եկեղեցանպաստ արգասաւոր գործունէութեան մասին, որն արժանիօրէն սէր ու յարգանք է բերել Ձեզ Արեւելեան թեմում:

Մեր ժողովրդին առաւելագոյնս ծառայելու եւ միասնական պահպանելու, հայորդեաց ազգային եւ եկեղեցական կեանքի շէնութեանն ու պայծառութեանը աւանդ բերելու ազնիւ նուիրումով Դուք մեծագումար նուիրատուութեամբ Ձեր մասնակցութիւնը բերեցիք Սուրբ Յակոբ եկեղեցու կառուցման գործում: Մեզ համար մեծ ուրախութիւն է, որ ԱՄՆ հայոց Արեւելեան թեմ Հովուապետական Մեր այցի օրերին պիտի կատարենք նորակառոյց եկեղեցու օծման արարողութիւնը, եւ Միացեալ Նահանգներում եւս մէկ հայկական եկեղեցի իր շնորհաբաշխ դռները պիտի բացի հայորդեաց առջեւ: Ձեր բերած ջանքերն ու սրտաբուխ գոհողութիւնները՝ ի նպաստ Սուրբ Յակոբ եկեղեցու կառուցման, անգնահատելի ծառայութիւն են մեր ժողովրդին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն, որով Դուք մշտապէս պիտի արժանանաք համայն հայութեան երախտագէտ բարեմաղթանքներին:

Գոհունակութեամբ ենք անդրադառնում նաեւ հայրենաշինութեան նուիրական առաքելութեանը բերած Ձեր մասնակցութեանը: Անդամակցելով «Հայաստանի Մանուկների հիմնադրամի» Տնօրէնների մարմնին, Դուք կարելուք աւանդ էք բերում վերագարթօնքի շնչով ապրող Հայրենի մեր Երկրի բարգաւաճմանը եւ հայրենաբնակ Մեր զաւակների առջեւ ծառացած դժուարութիւնների յաղթահարմանը:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին եւ սիրով ընդառաջ թեմակալ ձեր առաջնորդի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ լինէք միշտ եռանդուն ու կորովաշատ եւ շարունակէք Ձեր գնահատելի ծառայութիւնը բերել մեր Մայր Եկեղեցուն եւ հաւատաւոր ժողովրդին:

Թող ընտանեկան Ձեր յարկը շնորհընկալը լինի Բարձրեալի շնորհների եւ ամենախնամ օրհնութեան:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեանդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 26-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 427

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՃԵՐԸՐՏ ԳԱՖԵՍՏՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾԻՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՃԵՐԸՐՏ ԳԱՖԵՍՏՅԱՆ,
ՈՐ Ի ՄԻՆԻՍՈԹԱ, ԱՄՆ**

Մեծարգոյ պրն Գաֆէսճեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Մենք անձնապէս ճանաչում ենք Ձեզ եւ բարեպատեհ առիթներ ենք ունեցել հանդիպելու նուիրեալ հայորդուդ ու զգալու ազգասիրութեան եւ հայրենասիրութեան Ձեր ազնիւ ոգին: Քաջածանօթ ենք նաեւ Ձեր գովարժան գործունէութեանը՝ յանուն հայ ժողովրդի բարօրութեան եւ Մայր Հայրենիքի բարգաւաճման, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգաց օրհնեալ երկրում բարի նախաձեռնութիւնների արգասաւորման: Յատկապէս Հայրենի մեր Երկրի անկախացումից ի վեր Դուք գործուն մասնակցութիւն էք բերում Հայաստանին եւ Արցախին զօրակցելու ծրագրերին՝ աստուածահաճոյ բարեգործութիւններով սատար լինելով հայրենակերտումի նուիրական առաքելութեանը:

Այսօր Ձեր կողմից հիմնադրուած Գաֆէսճեան հիմնադրամը մեր ազգային կեանքում գովարժան սպասաւորութեամբ մեծապէս աջակից է հայանպաստ ծառայութիւն իրականացնող հայկական տարբեր կազմակերպութիւններին եւ հայրենաշէն գործոց նոր ուղիներ է հարթում ազգօգուտ ձեռնարկների իրագործման համար ազնիւ նուիրաբերութիւններով եւ անհրաժեշտ միջոցների ներդրմամբ:

Դուք գովելի յանձնառութիւններով սատար էք նաեւ ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի կարեւոր առաքելութեանը, նախանձախնդիր՝ թեմի նորոգ բարգաւաճմանն ու շէնութեանը: Մասնաւորապէս գոհունակութիւն է Մեզ համար անդրադառնալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների բարձրագոյն կրթութեան կարեւոր գործին գնահատարժան Ձեր աջակցութեանը, որի շնորհիւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու երիտասարդ հոգեւորականներ այսօր իրենց ուսումն են շարունակում Սէյնթ Փոլ Մինիսոթայի Սէյնթ Թովմաս Համալսարանի մէջ՝ առաջիկային ազգօգուտ ծառայութիւն բերելու հայոց ազգային-եկեղեցական կեանքի օրհնեալ անդաստանում:

Յարգարժան պրն Գաֆէսճեան, բարձր գնահատելով Ձեր ազնիւ ծառայութիւններն ու վաստակը եւ ընդառաջելով ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Տիրոջ ամենառատ շնորհները Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ մաղթելով կենաց քաջառողջութիւն եւ առաքինազարդ գործոց յարանոր յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 26-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 430

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՎՐԵԺ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎՐԵԺ ՄԱՐԿՈՍԵԱՆ,
ՈՐ ՅԵՐԵՒԱՆ**

Միրելի պրն Մարկոսեան,

Այսօր ուրախ առիթն ունենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհաբանի նուիրական այս յարկի ներքոյ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանքը բերել Ձեզ՝ ազգանուէր ու եկեղեցաշէն Ձեր արդիւնաւոր ծառայութեանց համար:

Երկար տարիներ ճանաչում ենք հաւատաւոր հայորդուդ եւ քաջածանօթ ենք Ձեր զօրեղ հաւատքին, զոհողութեան պատրաստականութեանը, մեր Հայրենիքի կեանքին բերած Ձեր վաստակին: Հասարակական կեանքում հասնելով յաջողութիւնների, Դուք գնահատելի ծառայութիւններ էք մատուցում մեր ժողովրդին՝ սատարելով հայրդեաց բարօրութեանն ուղղուած տարբեր ծրագրերին: Գոհութիւն ենք մատուցում առ Աստուած, որ ազգանուէր ու հայրենասէր ոգին զօրեղ է հայորդեաց սրտերում՝ առաջնորդելով բարի իրագործումներին:

Որդիական ջերմ սիրով Դուք նախանձախնդիր էք նաեւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու շէնութեանն ու պայծառութեանը: Շարունակելով մեր Եկեղեցուն օգտակար լինելու պայծառ աւանդները, որոնք դարերով խնամուել ու պահպանուել են մեր ժողովրդի հոգում, Դուք հաւատաւոր ու ազնիւ ոգով ստանձնեցիք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վազգէնեան մուտքի կառուցման հովանաւորութիւնը, որով առաւել բարեզարդուեց ու գեղեցկացաւ Մայրավանքի շրջակայքը: Մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութիւնները արդիւնաշատ են նաեւ Սուրբ Էջմիածնի հրատարակչական առաքելութեանը «Տիգրան Մեծ» տպարանի բերած կարեւոր աջակցութեամբ: Յիշաւի, Ձեր ընտանիքի անունն այլեւս անբաժան է Սուրբ Էջմիածնի պատմութիւնից եւ մշտապէս աղօթքով ու բարեմաղթանքներով պիտի յիշուի երախտագէտ հայորդեաց կողմից:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Ամենակալ Աստծուց, որ Իր հանապազ օրհնութեան ներքոյ պահի ու պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յաջողու-

թիւներ պարզեւելով բարի ու հայրենասնուէր բոլոր իրագործումներում:

Թող ընտանեկան Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնատուր բիւր բարիքների եւ Աստուծոյ առատ ողորմութեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 29-ն Սեպտեմբերի
Յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 433

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐՓԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ «Ս.
ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱԶՆԻԻ ՏԻԿԻՆ ԱՐՓԻՆԷ ՄԱՐԳԱՐԵԱՆ,
ՈՐ Ի ԼԻՈՆ, ՖՐԱՆՍԻԱ**

Հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Մեծագնիւ Տիկին Մարգարեան,

Գոհունակութեամբ ենք անդրադառնում, որ Ձեր կեանքը Տիրոջ ամենախնամ օրհնութեամբ իմաստաւորել էք մեր ազգին ու Եկեղեցուն մատուցած մեծարժէք ծառայութիւններով: Իբրեւ բարեպաշտ զաւակ աստուածասէր մեր ժողովրդի, Դուք տասնեակ տարիներ սիրով ներդնում էք Ձեր ջանքերը, հետամուտ լինելով, որ մեր Եկեղեցու հովանու ներքոյ միշտ շէն ու պայծառ մնայ հայորդեաց համայնքային կեանքը, զօրաւոր լինի նրանց եկեղեցասէր ոգին, անկուն՝ ազգային ինքնութիւնը պահպանելու նախանձախնդրութիւնը:

Ձեր եւ Ձեր ամուսնու գործուն ծառայութիւնների եւ կատարած ազնիւ նուիրաբերութեան շնորհիւ տարիներ առաջ կառուցուեց Լիոնի ամենօրեայ Վարժարանի շէնքը՝ հնարաւորութիւն ընձեռելով բարուօր պայմաններում կազմակերպել հայ մանուկների հայեցի կրթութիւնն ու դաստիարակութիւնը: Համայնքային կեանքում Ձեր ընտանիքի մատուցած ծառայութիւնների բարի արգասիքները արժանացրել են Ձեզ հայորդեաց անկեղծ սիրուն ու երախտագիտութեանը:

Համայն հայութեան սրբութիւն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ, ընդառաջ Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Այս ուրախ առիթով Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը հաւնապազ զօրավիզ ու աջակից լինի Ձեզ՝ պարգեւելով քաջատոյջ արեւշատութիւն եւ ազգօգուտ ու եկեղեցանուէր գործոց մշտանորոգ յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 18-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 426

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԹԵՔԵՅԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ
ԱՌԻԹՈՎ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾԻՆ
ԱՆԴԱՄՍ ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ**

Թեքեան Մշակութային Միութեան հիմնադրման վաթսուներորդ տարեդարձի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Միութեան բոլոր անդամներին:

Թեքեան Մշակութային Միութեան գործունէութիւնն առատ է բարի արդիւնքներով եւ իրապէս արժանի դրուատանքի: Հիմնադրուելով Բէյրութում, այսօր Միութիւնը մասնաճիւղեր ունի Սփիւռքի գրեթէ բոլոր համայնքներում՝ իր շուրջ միաւորելով նախանձախնդիր եւ ծառայանուէր հայորդիների: Վեց տասնամեակ շարունակ Թեքեան Մշակութային Միութիւնը բազմաբնոյթ գործունէութեամբ ու ազգանպաստ գովարժան ծառայութեամբ աշխոյժով է լցնում հայ համայնքների կեանքը եւ բարեպաշտ հայորդիների հոգիներում զօրեղ պահում ազգային գիտակցութիւնը, հայրենասիրութիւնն ու եկեղեցասիրութիւնը, կապուածութիւնը մեր մշակոյթին, հայրենական արժեքներին:

Գոհունակութեամբ ենք անդրադառնում նաեւ Հայրենիքում Թեքեան Մշակութային Միութեան գործունէութեանը: Հայրենի մեր Երկրում անկախութեան վերականգնման առաջին տարիներից Միութիւնը կարեւոր մասնակցութիւն է բերում Հայաստանի կրթական եւ մշակութային կեանքի վերագարթօնքին՝ բարի արդիւնքներ մատուցելով հայրենաբնակ մեր ժողովրդին:

Սիրելի անդամներ Թեքեան Մշակութային Միութեան,

Վաթսունամեայ յոբելեանի առիթով բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր բարձր գնահատանքը: Մեր յորդորն է, որ մշտապէս հաստատուն մնաք առ Հայրենին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին Ձեր սիրոյ մէջ եւ անսպառ եռանդով Ձեր կարելին ի սպաս դնէք Հայրենիքի պետականաշինութեան եւ զօրացման նուիրական գործին:

Առ Աստուած աղօթքով հայցում ենք, որ Բարձրեալ Տէրը միշտ շէն ու պայծառ պահի Թեքեան Մշակութային Միութիւնը եւ գործոց յաջողութիւններն ու ամենայն բարիք պարգեւի նրա բոլոր նուիրեալների բարի գործերի եւ ձեռնարկումների իրականացման ճանապարհին:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 24-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 783

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ
«ԺԱՄԱՆԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ «ԺԱՄԱՆԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻՆ,
ՈՐ Ի ՍՏԱՍԲՈՒԼ, ԹՈՒՐԹԻԱ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում եւ Մեր շնորհաւորանքներն ու Հայրապետական օրհնութիւնն ենք բերում «Ժամանակ» թերթի խմբագիր Արա Գոչունեանին, խմբագրական կազմին, բոլոր աշխատակիցներին ու ընթերցողներին եւ շնորհաւորում պարբերականի հրատարակման 100-ամեայ յոբելեանի առիթով:

Պոլսահայ համայնքը իր պատմութիւնը զարդարել է ազգօգուտ եւ եկեղեցանուէր բազմաթիւ իրագործումներով: Նախընթաց դարերի ընթացքին պատմական Կ. Պոլիս քաղաքում հիմնադրուել են բազմաթիւ եկեղեցիներ, Ազգային կրթօջախներ ու հաստատութիւններ՝ կոչուած միաւորելու մեր ժողովրդի զաւակներին եւ նրանց հայացքները ուղղելու դէպի հայրենական մեր աւանդները:

Բարձրեալն Աստուծոյ օրհնութեան ներքոյ հայորդեաց ջանքերը պսակուել են յաջողութեամբ, եւ մեր ժողովրդի զաւակները շարունակում են արթուն պահել իրենց ազգային եւ հոգեւոր կեանքը՝ խարսխուած քրիստոնէական մեր սուրբ հաւատի անխախտ վեմի վրա, ինչին Մենք գոհունակութեամբ ականատես դարձանք Պատրիարքութիւն կատարած Հովուապետական Մեր այցելութեան ընթացքին:

Պոլսահայության ազգային, հոգեւոր եւ մշակութային կեանքի պայծառութեան մէջ, անտարակոյս, գովութեան արժանի վաստակ ունի նաեւ «Ժամանակ» օրաթերթը: Մէկ դար շարունակ օրաթերթը, իր կոչմանը հաւատարիմ, մեր ժողովրդի զաւակներին հաղորդ է դարձնում հայ կեանքում տեղի ունեցող կարեւոր իրադարձութիւններին՝ հայութեան մէջ խթանելով ու զօրացնելով ազգային ոգին եւ ծառայելով հայապահպանութեան նուիրական գործին: «Ժամանակ» օրաթերթի միջոցով իրենց խօսքը մեր ժողովրդին են հասցրել մեր մշակոյթի նշանաւոր այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Գրիգոր Զոհրապը, Երուանդ Օտեանը, Վահան Թէքէեանը, Արշակ Չոպանեանը, Զահրատը եւ այլօք: Այսօր «Ժամանակ» օրաթերթը հարիւրամեայ իր պերճախօս պատմութեամբ իր ուրոյն տեղն ունի ոչ միայն Թուրքիոյ, այլեւ համայն Սփիւռքի հայ պարբերական մամուլի մէջ:

Մասնաւոր գոհունակութիւն է Մեզ համար անդրադառնալ, որ «Ժամանակ»-ը մշտապէս առանձնակի կարեւորութիւն է ընծայել հայորդեաց հոգեւոր կեանքի կազմակերպմանը եւ իր յօդուածներով քաջալերել մեր ժողովրդի զաւակներին անխախտ պահել հաւատարմութիւնը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ հոգեւոր մեր նուիրական կենտրոն Սուրբ Էջմիածնի նկատմամբ:

Մեծարգոյ խմբագիր «Ժամանակ» օրաթերթի՝ Տիար Արա Գոչունեան, սիրելի աշխատակիցներ, Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Մեր սէրն ու բարեմաղթանքները: Թող Բարձրեալն Աստուած հանապազ օգնական ու աջակից լինի Ձեզ եւ պարգեւի քաջառողջ ու երջանիկ կեանք:

քի բազում օրեր՝ նուիրեալ աշխատանքով արժանաւոր մասնակցութիւն բերելու ազգային եւ հոգեւոր մեր կեանքի առաջընթացին: Հայրական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք յղում նաեւ «Ժամանակ» օրաթերթի բոլոր ընթերցողներին: Սիրելիներ, հանապազ փարուած մնացէք հայրենական մեր սրբութիւններին, աստուածահաճոյ ու առաքինի գործերով Ձեր գովելի ներդրումը բերէք Թուրքիոյ հայ համայնքի եւ համայն հայութեան բարօրութեանն ու բարգաւաճմանը:

Թող Տիրոջ օրհնութեան ներքոյ «Ժամանակ» օրաթերթը ազգաշահ իր առաքելութեամբ յարատեւի մեր ժողովրդի կեանքում:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ամենեսեանդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 28-ն Սեպտեմբերի
Յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 786

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով սեպտեմբեր ամսին

«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրվել է.
Ենովք Պալիկյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել են.
Ժակլին Դշխունյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Վարդան Դուկասյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Մոնա Գալօղլանյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Վարուժան Ոսկանյան (Ռումինիայի հայոց թեմ)
Գևորգ սարկավազ Փոխանյան (Ֆրանսիայի հայոց թեմ)
Հայազատ Օհանյան (Ֆրանսիայի հայոց թեմ)
Հանրի Սիրանյան (Ֆրանսիայի հայոց թեմ)
Կարպիս Պապիկյան (Ֆրանսիայի հայոց թեմ)

Օրհնության գիր է տրվել.

Եզնիկ քահանա Կյուզեյան (Բրազիլիայի հայոց թեմ)
Զարեհ քահանա Զարգարյան (Կանադայի հայոց թեմ)
Վարդավառ քահանա Գասպարյան (Ֆրանսիայի հայոց թեմ)
Կարո Արմեն (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Ռոպեր Ժամկոչյան (Ֆրանսիայի հայոց թեմ)
Արթո Տեր-Մինասյան (Ֆրանսիայի հայոց թեմ)
Անահիտ Պահատուրյան (Ֆրանսիայի հայոց թեմ)
Անահիտ Նազարյան (Ֆրանսիայի հայոց թեմ)
Ժանին Ազյան (Ֆրանսիայի հայոց թեմ)
Էմմա Տոնիկյան (Ֆրանսիայի հայոց թեմ)
Մադլեն Բասմաճյան (Ֆրանսիայի հայոց թեմ)
Հիլտա Մամաս (Ֆրանսիայի հայոց թեմ)
Հարավային Ռուսաստանի թեմական ժողովին
«Արաքս» երգչախմբին (Արգենտինայի հայոց թեմ)
Հայկական ռադիոժամին (Արգենտինայի հայոց թեմ)
«Ս. Գրիգոր Լուսավորիչ» երգչախմբին (Արգենտինայի հայոց թեմ)
Ուրֆայի վերածնունդ մշակութային միությանը (Հալեպ, Սիրիա)

Լանջախաչ կրելու իրավունք է տրվել.

Արթուն քահանա Խալաթյան (Իրաքի հայոց թեմ)
Մակար քահանա Տերտերյան (Հարավային Ռուսաստանի հայոց թեմ)
Գյուտ քահանա Ղահրամանյան (Հարավային Ռուսաստանի հայոց թեմ)
Հարություն քահանա Բայադյան (Հարավային Ռուսաստանի հայոց թեմ)

Ծաղկյա փիլոն կրելու իրավունք է տրվել.

Շնորհք քահանա Դեմիրճյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Ավագության պատիվ է տրվել.

Սարգիս քահանա Պետոյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ԱՐՎԵԼ Տ. ԵՓՐԵՄ ԱԲԵՂԱ ՍԱՐԳՍՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի սեպտեմբերի 1-ի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Եփրեմ աբեղա Սարգսյանը՝ դրսևորած անհնազանդ ընթացքի համար:

Կարգալույծ արված հոգևորականը դասվում է աշխարհականների շարքը և այսուհետ կկոչվի ավագանի անունով՝ Հարություն Սարգսյան:

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ Տ. ԱՐՇԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՆՈՍՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի սեպտեմբերի 22-ին Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Արշեն վարդապետ Սանոսյանը:

Հայրապետական վճռի կայացման համար հիմք է ծառայել Արշեն վարդապետի դիմումագիրը:

Կարգալույծ հռչակված վարդապետը այսուհետ կդասվի աշխարհականների շարքը և կկոչվի ավագանի անունով՝ Տիգրան Սանոսյան:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ մի շարք եկեղեցականներ ծառայության են կոչվել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարբեր թեմերում:

Հոգեշնորհ Տ. Միքայել աբեղա Գևորգյանը ծառայության է նշանակվել Սյունիքի փոխառաջնորդությունում (Տաթևի վանք) առաջնորդական փոխանորդի իշխանության ներքո: Արժանապատիվ Տ. Մարտիրոս քահանա Հակոբյանը և Տ. Հրաչ քահանա Սարգսյանը ծառայության են կոչվել ԱՄՆ հայոց Արևելյան թեմում թեմակալ առաջնորդի իշխանության ներքո: Տ. Մուշեղ քահանա Խաչատրյանը հովվության է կոչվել Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմում թեմակալ առաջնորդի իշխանության ներքո: Արժանապատիվ Տ. Թադևոս քահանա Տեր-Մկրտչյանը կծառայի Վիրահայոց թեմում:

Հայրապետական տնօրինությամբ Բաբեշնորի Սամվել սրկ. Հարությունյանը ծառայության է նշանակվել Սյունիքի փոխառաջնորդությունում առաջնորդական փոխանորդի իշխանության ներքո:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՏԵՍՈՒՉ Է ՆՇԱՆԱԿՎԵԼ Տ. ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռի միաբան Տ. Գրիգոր աբեղա Խաչատրյանը նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հայորդյաց տների հոգևոր տեսուչ:

Հայր Գրիգորը վերջերս է վերադարձել Մայր Աթոռ Ֆրանսիայից, ուր համալրել է իր ուսումը Փարիզի Կաթոլիկ Համալսարանի «Սոցիոլոգիայի և էկոնոմիկայի գիտություններ» ֆակուլտետում՝ ստանալով մագիստրոսի աստիճան:

Տ. ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

(ավագանի անունը՝ Հրայր)

Ծնվել է 1974 թվականին Սևան քաղաքում:

1981-1991 թթ. սովորել և ավարտել է տեղի Մեսրոպ Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցը:

1991 թվականին ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1998 թվականին, ավարտելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, ծառայության է անցել Գեղարքունյաց թեմում:

1998 թվականի օգոստոսի 16-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա Արքեպիսկոպոս Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1998 թվականի դեկտեմբերի 1-ից ծառայության է նշանակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ:

2000 թվականի հոկտեմբերի 28-ին պաշտպանել է «Պետրոս Արքեպիսկոպոս Բերդույանի «Տարեկան քարոզներ. Մեծ պահքի շրջան» թեմայով ավարտաճառը:

2000 թվականի նոյեմբերի 5-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2002-2007 թթ. ուսումը կատարելագործելու նպատակով ուսանել է Փարիզի Կաթոլիկ Համալսարանի (INSTITUT CATHOLIQUE DE PARIS) «Սոցիոլոգիայի և էկոնոմիկայի գիտություններ» («FACULTE DE SCIENCES SOCIALES ET ECONOMIQUE») բաժնում՝ միաժամանակ ստանձնելով Շավիլի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովվի պարտականությունները:

2007 թվականի փետրվարի 17-ին Ֆրանսիայի նորակազմ թեմի պատգամավորական անդրանիկ ժողովի կողմից ընտրվել է Թեմական խորհրդի անդամ, իսկ փետրվար 24-ի Թեմական խորհուրդի անդրանիկ նիստի ժամանակ՝ Թեմական խորհրդի Դիվանի քարտուղար:

«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆ ՎՐԵԺ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ

Սեպտեմբերի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհաբանի հանդիսությունների դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան հանձնեց «Տիգրան Մեծ» հրատարակչության տնօրեն Վրեժ Մարկոսյանին՝ բարձր գնահատելով նրա ազգօգուտ ու եկեղեցաշեն արդյունաշատ վաստակը:

Շքանշանի հանձնման հանդիսությունը բացվեց Ս. Պարույր քահանա Ավետիսյանի ողջույնի խոսքով: Այնուհետև «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանը ներկայացրեց մեծարյալի կյանքի ուղին և արդյունաշատ վաստակը:

Ապա «Էջ Միածինն ի Հօրե» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը և ընթերցվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Ս. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի կողմից:

Հայրապետական Կոնդակում ի մասնավորի ասվում է. *«... Շարունակելով մեր Եկեղեցուն օգտակար լինելու պայծառ ավանդները, որոնք դարերով խնամվել ու պահպանվել են մեր ժողովրդի հոգում, Դուք հավատավոր ու ազնիվ ոգով ստանձնեցիք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վազգենյան մուտքի կառուցման հովանավորությունը, որով առավել բարեգարդվեց ու գեղեցկացավ Մայրավանքի շրջակայքը: Մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայությունները արդյունաշատ են նաև Սուրբ Էջմիածնի հրատարակչական առաքելությանը «Տիգրան Մեծ» տպարանի բերած կարևոր աջակցությամբ: Հիրավի, Ձեր ընտանիքի անունն այլևս անբաժան է Սուրբ Էջմիածնի պատմությունից և մշտապես աղոթքով ու բարեմաղթանքներով պիտի հիշվի երախտագետ հայորդյաց կողմից»* (տե՛ս էջ 25):

Կոնդակի ընթերցումից հետո Նորին Սրբությունը մեծարյալի կուրծքը զարդարեց Հայ Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

Շքանշանի հանձնումից հետո երախտագիտության խոսք ասաց տիար Վրեժ Մարկոսյանը՝ խորին շնորհակալություն հայտնելով ընծայված մեծ պատվի համար:

Հանդիսությունը փակվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության խոսքով: Վեհափառ Հայրապետը, անդրադառնալով մեծարյալի արժանիքներին և Եկեղեցուն ու ազգին բերած ծառայություններին, գոհունակությամբ արձանագրեց. *«Բարեգործությունը հոգեկերտվածք է: Շատ անձեր կարող են ունենալ նյութական հարստություն, բայց բարեգործ լինելու համար պետք է ունենալ սեր, անվերապահ սեր Ազգի, Հայրենիքի և Եկեղեցու նկատմամբ: Այդ սիրով է հատկանշված անունը տիար Վրեժ Մարկոսյանի»:*

Հանդիսության ընթացքում հայ և եվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններով ելույթ ունեցավ Մայր Տաճարի երգչախումբը՝ ղեկավարությամբ Ռուբեն Շարբաթյանի:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՔԱՐՈՉԽՈՍԱԿԱՆ

Տ. ԴԱՎԻԹ ԱՔԵՂԱ ՔԱՐԱՄՅԱՆԻ ՔԱՐՈՁԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(2 սեպտեմբերի 2007 թ.)

Սիրելի քույրեր և եղբայրներ,

Բնաբան անգամ այսօր խոսքիս չեմ ընտրել, քանզի քարոզ չէ, որ ուզում եմ խոսել, այլ օրվա խորհրդի շուրջ մտածումներս ձեզ հետ կիսել:

Հերթական կիրակին է այսօր, պարզ մի կիրակի, ու այս Սուրբ Տունը դարձյալ հոծ բազմությամբ է հեղեղվել, հարազատ դեմքեր, որ իրենց գրեթե ամենօրյա ներկայությամբ կարծես այս տաճարի անբաժան մասնիկն են դարձել, նաև ուրիշներ, որ թեև բազմիցս այստեղ այցի են եկել, բայց խրձով մոմ վառելուց ու ինքնագոհ անտարբերությամբ շուրջիններին նայելուց այն կողմ երբեք չեն էլ անցել, ու նաև մարդիկ, որ այսօր առաջին անգամ են այս հարկի ներքո հայտնվել ու հասկանալ ջանացող թափառող հայացքներն այս ու այն կողմ հառել:

Սովորության ուժով են քայլերդ քեզ այստեղ բերել, պարզապես այս առավոտ ուրիշ անելիք չունենալն է այստեղ գտնվելուդ պատճառը, թե՞ Էջմիածինը տեսնելու տարիներով փայփայած երագդ ես այսօր կյանքի կոչել: Սակայն բացատրություն չէ, որ փնտրում եմ այս պահին, այլ ուզում եմ, որ մոռանանք սակավ-ինչ մեր՝ այստեղ գտնվելու դրդապատճառն ու զգանք մի պարզ ճշմարտություն. մենք Աստծո Տանն ենք, Ս. Պատարագ է մատուցվում, իսկ օրը մեզ փոխանցելիք իր ուրույն խորհուրդն ունի, որն այս անգամ ամփոփված է հացի բազմացման հրաշքի՝ Մարկոս ավետարանչի պատումում:

Ունկնդիր եղանք, թե ինչպես Հիսուս հրաշագործ իր զորությամբ բազմացնում է հինգ նկանակն ու երկու ձկները և կերակրում ամբողջ օրն Իրեն ունկնդրող քաղցած մարդկանց մի սովար բազմության: Սակայն մարդկանց քաղցը հազեցնելու պարզ նպատակով չէ, որ հրաշագործեց մեր Տերը, այլ՝ մարդկային մեր իմացության առջև մի նոր ճշմարտություն բացելու համար: Ասելու, թե «Գնացե՛ք, աշխատե՛ք ոչ թե կորստյան ենթակա կերակրի համար, այլ այն կերակրի, որը մնում է հավիտենական կյանքի համար...» (Հովհ. Զ ((, ու միտքն իր բարձրակետին հասցնելով՝ պիտի հայտարարեր. «Ես եմ հացն կենաց» (Հովհ. Զ ((:

Սիրելիք, մեր կյանքն, իր ամբողջության մեջ դիտված, կարծես թե կերակուրի խելահեղ մի փնտրտուք է դարձրել: Կերակուր նախ՝ մեր ֆիզիկական գոյությունն ապահովելու և ապա՝ մեր հոգեմտավոր ու զգայական քաղցն ու ծարավը հազեցնելու համար: Անվերջ տքնում ու սպառում ենք, սակայն երբեք չենք հազեցնում, քանզի կերակուրն այդ առժամյա գոհացում է միայն ապահովում: Այդ է պատճառը, որ կերակուրին ի խնդիր մեր վազքը երբեք կանգ չի առնում: Ու այս վազքի իրարանցումի և խառնաշփոթի մեջ Տիրոջ ձայնը հազիվ թե լսելի է լինում. «Ես եմ կենաց հացը, ով դեպի Ինձ գա, քաղց չի զգա, և ով Ինձ հավատա, երբեք չի ծարավի» (Հովհ. Զ ((: Հասու եղե՞լ են երբևէ քեզ խոսքերն այս, թե՞ դու էլ առաքյալների պես տրտնջացել ես հոգնած. «Խիստ է այդ խոսքը. ո՞վ կարող է այն լսել» (Հովհ. Զ ((: Բսկապես, հոգնած ես, սիրելիս, ու տառապանք կա հայացքիդ մեջ. երևի նորից եկել ես Աստծուն ցավդ պատմելու ու մի քիչ էլ օգնություն խնդրելու: Սակայն մտքովդ երբեք չի՞ անցել, որ Աստված միայն ցավդ լսելու ու ցանկություններդ կատարելու մեջ չի վերջանում: Սուրբ հարկն այս, սիրելիս, սգավորների, դժբախտների ու հուսահատների հավաքատեղի չէ միայն: Աստված նախ և առաջ սեր է, ու եկեղեցին այս՝ այդ սիրով Աստ-

ծուն ու միմյանց կապված մարդկանց հաղորդություն, սեր, որ մեզ միևնույն մարմնի անդամները լինելու շնորհով է կապում: Արդյո՞ք քեզ Քրիստոսի մարմնի, այս մեծ ընտանիքի անդամն ես համարում, թե՞ մարմնից կտրված ձեռքի հոգեբանությամբ, հոգսերդ ու ակնկալիքներդ հոգումդ պահած, կողքինիդ անհաղորդ, ներաշխարհիդ մեկ անկյունն ես թաքնվել: Չէ՛, սիրելիս, մի՞թե մինչև հիմա դեռ չհասկացար, որ անհաղորդ միայնությամբ ապրել՝ մեղքի թագավորության քաղաքացի լինել է նշանակում, քանզի մեղք ու միայնություն, մեղք ու բաժանում, մեղք ու անտարբերություն գրեթե նույն իրողությունն են բնորոշում:

Իսկ Աստծո Որդին մարդեղացավ, մեզ նման մարդ դարձավ, որ մեղքով բաժանվածը դարձյալ միացնի, որ քո անհաղորդ գոյությունն իմաստավորի ու աստվածային սիրո թելերով քեզ շուրջիններիդ կապի, այնպես ամուր ու իրական, որ երբ եղբայրդ սայթաքի, նրա ցավից քո դեմքը ծամածովի...

Գուցե չափազանցված ու վերացական թվացին ոմանց այս խոսքերը, բայց մի՞թե վերացական է Ս. Պատարագին մեր մասնակցությունը, մի՞թե մտացածին՝ Քրիստոսի Կենդանարար Մարմնի և Արյան ճաշակումը: Միանշանակ՝ ո՛չ: Եվ անսուտ են նաև դարերով հնչել խոսքերը Նրա. «Ով ուտում է Իմ մարմինը և ըմպում Իմ արյունը, կրնակվի Իմ մեջ, և Ես՝ նրա մեջ» (Հովհ. 6 ((: Իսկ ինչպե՞ս կարող է Քրիստոսի մեջ բնակվող ու Քրիստոսի տաճար դարձածն այսօր ամուլ մենությամբ ու ծառից պոկված տերևի պես ապրել:

Քրիստոսով ապրողն իր մեջ կյանքի անսպառ աղբյուր ունի, խնդության ու մշտամնա ոգևորության կրակով է նրա արյունը եռում, սիրո հուրն է նրա հոգում անկեղ վառվում: Իսկ գիտե՞ք՝ ինչ կարող է անել աստվածային այդ սիրով կրակված հոգին, կա՞րարդյոք մարդկային մի արգելք, որ այդ սիրով միաբան մարդկանց ընթացքը խաթարի...

Ուրեմն, դուրս գանք կրիայի մեր պատյանից, քանդենք մեղքի քարերով մեր միջև բարձրացած պատն ու միմյանց հոգիներն իրար կապող Քրիստոսի կենսատու Արյամբ շաղախված կամուրջներ կառուցենք: Հակառակ դեպքում մեր մատուցած Պատարագները գեղեցիկ ու հուզառատ երգեցողության ժամեր կդառնան, ու եկեղեցիները մեր՝ արվեստի տներ: Քանզի Պատարագն իր ողջ իմաստով «Հաղորդություն» բառի մեջ է ամբողջանում, բարձրակետվում Մեր Տիրոջ Մարմնի և Արյան ճաշակմամբ, որ որպես կենդանության դեղ ու միության շաղախ՝ աննվազ լիությամբ մեզ է բաշխվում, որ, որպես ճշմարիտ կերակուր, «...իջնում է երկնքից և կյանք տալիս աշխարհին» (Հովհ. 6 33):

Ուրեմն, Կենաց Հացի ճաշակումն ու Կենդանության Բաժակի արբումն այսօր թող մեր մեջ վերածնի նոր մարդուն, որպեսզի նոր կյանքով լցված՝ «հեռու վանենք մեզանից հին մարդուն իր նախկին կենցաղով» (Եփես. Դ 22) և Տիրոջ խաղաղությունը մեր սրտերում առած՝ «նույն բանը խորհենք, նույն սերն ունենանք մեր մեջ և լիենք միաշունչ ու միախորհուրդ» (Փիլիպ. Բ 2). Ամեն:

Տ. ՄԵՍՐՈՊ ԱԲԵՂԱ ՊԱՐԱՄՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(9 սեպտեմբերի 2007 թ.)

«Եփեսոս, որ է՝ քաղաքի»:

(Մարկ. է 34)

Սիրելի հավաքացյալ ժողովուրդ,

Այս խորհրդավոր բառերն ինչնցին քիչ առաջ ճաշու Ավետարանի ընթերցման ժամանակ սրբաբար այս խորանից, որով մեր Տեր Հիսուս Քրիստոս Գալիլիայի ծովեզրին կապարեց մի երաշք՝ բժշկելով խուլ ու խամր մի մարդու և հասարակեց ավետարներ մարգարեությունը, թե «Աստված բնավ չի ցանկանում մեղավորի մահը, այլ նրա դառնալը չար ճանապարհից և ապրելը» (Եզեկ. ԼԳ 11):

Սուրբ Մարկոս Ավետարանիչը կրկին մեր աչքերի առաջ պարկեցրում է Իսրայելի փանկորոսայալ ոչխարների փրկությանը նախանձախնդիր բարի և քաջ Հովվի հարազար կերպարը, Ով թողնելով իր ինեսուն և ինը առողջ գառներին՝ գնում է այն մեկ կորուստյալ և հիվանդ գառան երկից:

Դուքս ելնելով Տյուրափի և Սիդոնի տաճարներից, պարմում է Ավետարանիչը, Հիսուս եկավ Գալիլիայի ծովեզրը, Դեկապոլսի տաճարներից ներս: Նրա առաջ բերեցին խուլ ու խամր մի մարդու և աղաչեցին, որ իր ձեռքը դնի նրա վրա և բժշկի: Թերևս բերող մարդիկ անդամալույծի հարազարները կամ հարևաններն էին, ովքեր լսել էին և հավատում էին, որ Հիսուս միայն մեկ խոսքով կարող է բժշկել հիվանդին, հարություն տալ մեռյալին: Իրապես, այդ վիճակի մեջ խուլ ու խամր մարդը կարիքն ուներ քաջալերանքի, կարիքն ուներ շրթունքների, որպեսզի իր համար բարեխոսեն: Հիսուս փնտրելով, որ մեծ իրարանցում կա ամբոխի մեջ, և որ խուլ ու խամր մարդը ևս շփոթված է, նրան ամբոխից մի կողմ տարավ: Հիսուս երբեք իր բժշկություններով և երաշքներով մարդկային փառք չէր փնտրում այս աշխարհում: Այս իր քայլով Նա մարդկանց հուշում էր, թե այս կյանքում բաներ կան, որ կարարվում են առանձնության մեջ, որ մի հսկայական աշխարհանք կարելի է կարարել առանց աղմուկի, գաղտնի, Աստված փառքի համար:

Հիսուս նախ Իր մարմնը դրեց մարդու ականջներին և ապա բռնեց նրա լեզվից, նայեց նրկինք և հառաչեց: Խուլ ու խամր մարդն, իբրև վկա այս խորհրդավոր հայացքի և հառաչանքի, անմիջապես հասկացավ, որ իր բժշկությունը պիտի զար նրկնքից, Աստված, ամբողջովին փառքեր մարդկային օգնությունից, և որ աստվածային օգնությունը գալիս է ի պատասխան հառաչանքի, մարդկանց խոնարհի և խանդավառ աղոթքի: Հասկացավ, որ խոնելուց առաջ պետք է մարդ կարողանա լսել, իմաստուն բաներ ասելուց առաջ՝ սովորի ունկնդրել: Շաղր հաճախ ի ձնե խուլերն ընդհանրապես խամր են, քանի որ նրանք չեն սովորել խոսել և մեծացել են ու հասակ առել այնպիսի մի աշխարհում, ուր ո՛չ բառ կա և ո՛չ էլ ձայն:

«Եւ ասաց Յիսուս՝ *Եփեսացիք*, որ նշանակում է՝ բացուիր: Եւ իսկոյն նրա խողովոյնը բացուեց, եւ լեզուի կապանքներն ընկան, եւ խօսում էր ուղիւր»: Իսկ ամբողջ զարմացած բացակացում էր. «Սա ամէն ինչ լաւ արեց, որովհետեւ խուլերին լսել էր արդէն եւ համբերին՝ խօսել»:

Միքելինը, այս հրաշքը ավելին է, քան մի բժշկություն, ավելին՝ բան պարմության մի դրվագ: Մեզ՝ Հրիստոսյաններիս համար այն հոգևոր կյանքի հրավեր է, մի ամբողջական ծրագիր:

Ներքեներ միասին հոգևոր կյանքի այս հրավերին բայլ առ բայլ:

Խոյլ ու համր մարդու կերպարի միջից Ավետարանը պարկեցում է մեզանից յուրաքանչյուրին, մարդ արարածի բնական վիճակը մեղքի և անկման հետևանքների փակ: Մեղքի պարճառով բաժանվել ենք Աստուծոց, օտարվել նրա կյանքից, ինչպես ասում է Պողոս Առաքյալը (Եփես. Դ 18), մեր բանականությունը մթազնել է և մեր բոլոր ունակությունները դարձել են անպիտան բարիք գործելու համար: Մեղքը մեզ դարձրել է խուլ՝ Աստծո ձայնի հանդեպ, այդպիսով և համր՝ անկարող հասկանալու և արտահայտելու մեր կարիքները: Մեր հոգևոր խալությունը մեզ դարձնում է համր և անբարբառ՝ Աստծո առաջ աղոթելիս: Աստծո խոսքը չսելու պարճառով չենք կարողանում այլևս բառեր գրկել՝ Նրա հետ կամ Նրա մասին խոսելու համար:

Աստված ցանկանում է մեզ ձերբագաղել այն ամենից, ինչը մեր կյանքում մեզ դարձնում է հոգևորապես խուլ ու համր. «Բազալեովեցեք և մի վախեցեք: Ահա ձեր Աստվածը...: Այն ժամանակ պիտի բացվեն կույրերի աչքերը և խուլների ականջները: Համբի բերանը կաղաղակի ուրախությունից»,- գրում է մարգարեն (Եսայի ԼԵ 4-7):

Աստված բժշկում է, սակայն երբ խնդրում ես, Աստված ողորմում է, եթե աղորմում ես: Հիսուս բժշկեց խուլ ու համր մարդուն, որովհետև իրեն խնդրեցին: Այնպես էլ մենք, միքելինը, կարիքն ունենք բարեխոսության, աղոթքի մեկ մյուսի համար, ինչպես նաև սրբերի բարեխոսական աղոթքի: Եթե Տիրոջ առաջ բերենք մեր հիվանդ ընկերոջը, բարեկամին, հարազատին և խնդրենք բժշկություն հավաքով, ապա Աստված պիտի լսի մեր ձայնը:

Մարդ-Աստված հարաբերությունը նման է Հայր-Որդի հարաբերության, և երբեմն Իր սիրո մեջ Աստված ցանկանում է լինել մեզ հետ միայնակ: Ինչպես որ Հիսուս խուլ ու համրին բժշկելու համար նրան դուրս բերեց ամբոխի միջից, առանձնացավ, այնպես էլ մենք հոգևոր կյանքում կարիքն ունենք առանձնության, Աստծո հետ անձնական հարաբերության, միասին լինելու՝ հեռու աշխարհային աղմուկից: Ժամանակակից աստվածաբաններից մեկն ասում է, թե Աստծո ձայնը շատ դժվար ենք լսում մեծ քաղաքներում, որովհետև աղմուկ շատ ենք հանում:

Արդյո՞ք ասել էք նրանության այն պահը, երբ Աստված, ցանկանալով մեզ գրավել դեպ իրեն, փարել է անապար, խոսելու համար մեր սրտերին (Օվսե Բ 14)՝ վերադին պարգևելու Իր հետ կենդանի հաղորդակցության շնորհը: Այդ առանձնության, լուծության մեջ, ուր լսելի է միայն աղոթքի մրմուռը և սիրո հառաչանքը, Աստված լսում է մեր աղաչանքի ձայնը և հոգու հառաչանքը ու պարզում երկար սպասված բժշկությունը:

Բացելով մեր լսելիքը՝ Հիսուս հրավիրում է մեզ ունկնդիր լինելու Աստծո կենդանարար ձայնին, Ավետարանի ազարարար պարզամիտ, լսելու նաև մեզ շրջապատող կարիքավորների, աղքատների ու հիվանդների ձայնը, ովքեր վշտի ծանրությունից աղաղակում են այսօր:

Բացելով մեր խոսելիքը՝ Հիսուս հրավիրում է մեզ աղոթքի, վկայության ու փառաբանության, երգելու համար Տիրոջ փառաբանությունը և վկայություն փառաբանության մասին:

Միրելիներ, այսօրվա խորհրդի յուսի ներքո, աստվածային հրավերն է մեզ յուրաքանչյուրիս, որպեսզի առանձնականք մեր հոգու խորքում, փակենք մեր հոգու դռներն ու պատուհանները և առանձնական գրույցի բովանդակները Աստվածին մեր խաղ ու համար էության համար բժշկության աղոթքով մեր հայացքները երկինք հառած: Աստված լսում է մեր աղաչանքը «յամենայն ժամ» և մեզ պիտի ազարի մեր փկարություններից ու վշտերից: Մեր այս 21-րդ դարում լինենք Հիսուսի իրավ աշակերտները՝ առանց փարիքային խորության, այսինքն՝ մարդիկ, ովքեր պիտի հավատարեով և սիրով աղոթեն իրենց բարեկամի, հարազատի, մերձավորի, ինչու չէ՝ նաև անձանքի հոգու բժշկության համար, որպեսզի համայն մարդկությունը աստվածային բժշկություն արացած և ունկնդիր Աստված ձայնին իր սրբի խորքից «հրեշտակային երգակցությամբ» փառաբանի ամենազոր Աստվածն և վկայություն փառաբանության անսահման սիրտ մասին՝ ասելով. «Ապուստամսն ինչ լա արեց, որովհետև խուլներին լսել է փառաբանել և համարել խոսել»:

Թող այսօրվա Ավետարանը լինի բժշկություն մեր խուլացած ականջներին և համարացած լեզվին:

Թող մեր Տիրոջ՝ Հիսուս Բրիստոսի մեկ հրահանգը մեզ բացի և դարձնի ընկալունակ Իր խոսքին և հրապոստ փառաբանությանն ու վկայությանը:

Միրելի հավատացյալներ, եկեք աղոթենք միասնաբար յուսանողի Եղիշն Դուրյան Պատրիարքի աղոթք-բանաստեղծության այս հոգեթով բառերով.

ՏԷՐ

Դիր մէջն ականջիս ծայրերն մարներով՝

Լուս ու ծամածուտ խորը այդ բաղին,

Ու հոն թալացած խօսքերդ ու խորհուրդ

Յախփենական շրջմամբ մը խըլտլին.

Ըսէ՛ Եփփաթա,

Որ խուլ էութիւնս Քեզ լսել փութայ:

Մօտեցի՜ր լեզուիս, դուրս քաշէ ցամաք

Խեցի մը դարձած կտորն այդ միսին,

Բոցի մ'անոր մէջ դնելու փենչն ու սլաք՝

Ջոր մունջ ժխտումներու վաղուց կորուսին,

Ըսէ՛ Եփփաթա,

Որ համր էութիւնս Քեզ օրհնել փութայ:

ԱՄԵՆ

**Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՄԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ
Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ
(16 սեպտեմբերի 2007 թ.)**

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի Իւր յաշխարհ, թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ Նովաւ»:

«Ոչ թէ Աստուած առաքեց Իր Որդուն աշխարհ, որպեսզի դատապարտի, դատի աշխարհին, այլ առաքեց, որպեսզի աշխարհը Նրանով փրկություն ձեռք բերի»:

(Յովհ. Գ 17)

Ահա այսպիսի խոսքերով է դիմում Քրիստոս Իրեն շրջապատողներին, Իր շուրջը հավաքված մարդկանց՝ բացահայտելով Իր առաքելության, Իր մարդկության բուն նպատակը: Այսպես է դիմում, և այս հատվածը ընթերցվեց այս Սուրբ Խորանից՝ հանձնվելով մեզ որպես խորհրդածության նյութ: Քրիստոս եկել էր մարդկանց փրկության համար, չէր եկել դատապարտության համար: Նա եկել էր մի իշխանությամբ, Պողոս առաքյալի խոսքերի համաձայն՝ կառուցելու, նորոգելու և ոչ թե քանդելու և կործանելու: Եվ նրանք, ովքեր որ Քրիստոսի հանդեպ դուռ էին փակում, արեգակի լույսի հանդեպ պատուհան էին փակում, այլևս պետք չունեին դատապարտվելու Քրիստոսի կողմից, կարիք չկար, որպեսզի Աստված դատապարտեր նրանց վերստին, որովհետև լույսի և խավարի ընտրության մեջ ընտրելով խավարը՝ նրանք արդեն իսկ դատապարտված են: Խավարը մեծագույն դատապարտությունն է նրանց, և Աստված չէ, որ նրանց պիտի դատապարտություն կարդա:

Խաչվերացի կիրակին է այսօր, սիրելի քույրեր և եղբայրներ: Խաչվերացի կիրակիի ավետարանական ընթերցվածը սակայն այսօր ոչ մի ձևով անդրադարձ չի կատարում խաչին, հակառակ որ Քրիստոս Իր քարոզության ընթացքին, առաքյալներն իրենց առաքելության ընթացքին բազում անգամներ անդրադարձումներ կատարեցին խաչին և խաչի խորհրդին: Մեր իմաստուն հայրերի տնօրինությամբ սակայն այսօրվա ավետարանական դրվագը գալիս է մեզ խորհրդածության մղելու, որ խաչը և Քրիստոս նույնական են: Քրիստոս Իր ամբողջ երկրավոր կյանքի ընթացքում եղավ խաչակիր, Իր կյանքը և խաչակրությունը համարժեք երևույթներ դարձան: Եվ ահա այդ պատճառով է, որ մեր հայրերի տնօրինությամբ խորհրդածության նյութ է դարձել ավետարանական այն դրվագը, որը խոսում է Իր առաքելության բուն նպատակի մասին. «Ես չեկա դատապարտելու, Ես եկա, որպեսզի աշխարհը փրկություն ունենա»:

Գիտենք, որ խաչը դատապարտության գործիք էր, գիտենք, որ խաչը չարչարանքի գործիք էր, անարգ մի գործիք մինչ Քրիստոս, որով չարչարվում էին, որով մահվան էին դատապարտվում այն անձերը, ովքեր որ խիստ հանցագործություններ, պատժելի և դատապարտելի գործեր էին կատարում: Սակայն Քրիստոսի Խաչելությամբ և Հրաշափառ Հարությամբ խաչի իմաստը ամբողջովին իմաստափոխվեց շրջափոխվեց: Այն չարչարանքի և մահվան գործիք լինելուց վերափոխվեց հաղթանակի, փրկության խորհրդանիշի:

Քրիստոնյաների մեծ մասը կրում է խաչը, ոմանք իրենց պարանոցին, ոմանք հագուստների վրա, կրծքներին կամ թիկունքներին, և հաճախ առիթ չեն ունենում անդրադառնալու, թե խաչի բուն էությունը, նշանակությունը, խորհուրդը ինչ է: Մեր Եկեղեցու՝ խաչի հանդեպ հարգությունը, պաշտամունքի աստիճան հասնող հարգանքը վերստին մեզ անդրադառնալ է տալիս, թե ինչու համար է այսպիսի կարևոր, այսպիսի ակնածալից վերաբերմունք խաչի նկատմամբ, որը թերևս վերապահված է միայն Աստծուն: Դրա պատճառը, սիրելի քույրեր և եղբայրներ, այն է, որ մենք խաչը նույնացրել ենք Աստծու հետ, խաչը նույնացրել ենք Տիրոջ առաքելության հետ, խաչի մեջ տեսել ենք Քրիստոսի առաքելության շարունակությունը, խաչի մեջ տեսել ենք այն հաստատությունը, որը կոչված է Քրիստոսի երկրավոր կյանքի ավարտից հետո շարունակել Իր առաքելությունը երկրի վրա: Եկեղեցու խորհրդանիշն ենք տեսնում մենք խաչի մեջ: Եվ ահա խաչի հանդեպ այս վերաբերմունքով է պայմանավորված, որ մեր Եկեղեցին տոնակատարում է մի քանի տոներ՝ նվիրված խաչին, որոնցից ամենից կարևորը, ամենից կարկառունը, Խաչվերացի տոնն է, մեր ժողովրդական լեզվով ասած՝ Մբխեչը:

Այս տոներից յուրաքանչյուրի ընթացքում մենք անդրադառնում ենք, թե խաչը ինչպիսի գորություն, ինչպիսի կենսատու ուժ է պարգևում մեզ ամենքիս: Յուրաքանչյուրին եթե հարցնենք, թե ինչ է նշանակում խաչը իր կյանքում, վստահաբար մի պատասխան կտա: Յուրաքանչյուրի համար խաչը մի կենսատու գորություն է, սակայն ամենից ավելի և ամենից առաջ խաչը փրկագործության գործիքն է, փրկագործության նշանն է: Խաչով մենք փրկվեցինք, սակայն խաչը ունի նաև այլ բովանդակային ծալքեր ևս, որն ազատության խորհրդանիշն է:

Հիշեցեք, թե Քրիստոս Իր երկրային կյանքի ընթացքին երբ բարձրացավ Գողգոթայի բարձունքը՝ հաղթանակով պսակելու Իր առաքելությունը, հարություն առնելու Գողգոթայի բարձունքից, ինչպես ազատագրվեց մահվան տագնապից: Հիշեցեք, թե ինչպես Գեթսեմանիի պարտեզում արյուն-քրտինք թափելով Նա դիմում էր Հորը. «Հայր, հեռացրու Ինձնից այդ բաժակը, հեռու տար Ինձնից այդ բաժակը, որպեսզի չլինի, որ այսպիսի դառնությամբ և զրկանքներով մահ ճաշակեմ»: Եվ սակայն ադոքթի մեջ նա սփոփանք գտավ, ազատվեց մահվան տագնապից և հիրավի ինչպես մեծերից մեկն է ասում, թե մահվան տագնապը է՛լ ավելի սոսկալի է, շատ ավելի տանջող է, քան ինքը՝ բուն մահը: Եվ նա, ով պատրաստ է հաղթահարելու մահվան տագնապը, նաև կճաշակի հաղթանակի քաղցրությունը: Մահվան տագնապը այսպես իրենց վրայից թոթափեցին մեր հայրերը, այդպես թոթափեցին Վարդանանց քաջերը, երբ Ավարայրի ճակատամարտի նախօրյակին ամենքը մասնակցություն ունեցան Սրբազան Պատարագին, ամենքը հաղորդվեցին Տիրոջ Մարմնին և Արյանը, իրենց վրայից թոթափեցին մահվան սոսկումը, տագնապը և ընթացան դեպի հաղթանակ, դեպի ազատագրություն: Եվ, հիրավի, նա, ով պատրաստ չէ մեռնելու, նա չի կարող ճաշակել հաղթանակի քաղցրությունը: Նա, ով չի ցանկանում մահա-

նալ, մեռնել հանուն ազատության, նա չի ճաշակի ազատության քաղցրությունը: Այդպիսի պատրաստակամությամբ, վճռականությամբ ընթացան Արցախյան հերոսամարտի մեր քաջամարտիկները, մեր ազատամարտիկները, ովքեր իրենց վրայից թոթափեցին մահվան տագնապը, մահվան սոսկումը և ընթացան դեպի խաչը: Եվ ահա խաչի խորհուրդը այդ պայքարի ոգին, այդ հաղթանակի ոգին է, որ ներշնչում է առաջին հերթին մեզ, առաջին հերթին այդ հաղթանակին հասնելու ձգտումն է, որ ներշնչում է մեզ:

Ավետարանում մեր Տեր Հիսուս Քրիստոսի կողմից ասված մի շատ գեղեցիկ արտահայտություն կա, որ խաչի մասին խորհրդածություններ կատարելիս մշտապես առնչակցվում է խաչի գաղափարի հետ: Երբ Քրիստոս խոսում է երկնքի արքայության մասին, «Բռունք հափշտակեցեն զարքայութիւնն երկնից» (Երկնքի արքայությունը կարող են նվաճել, գրավել հաստատակամները, վճռականները), եթե կուգեք՝ ժողովրդային լեզվով զոռքաները, նրանք, ովքեր պատրաստ են հանուն երկնքի արքայության զոհելու այն ամենը, ինչը որ իրենց կապում է երկրավոր այս կյանքի հետ: Նրանք պատրաստ են զոհելու իրենց նյութական բարեկեցությունը, պատրաստ են զոհելու, նույնիսկ թողնելու իրենց հարազատներին, պատրաստ են ուրանալու իրենց անձը, ինչպես որ Քրիստոս պատվիրում է. «Թողեք ձեր հարազատներին, ուրացեք նույնիսկ ձեր անձը, ձեր ուսերը ազատ կացուցեք, որպեսզի Իմ խաչը այնտեղ տեղ ունենա»: Եվ իրապես Քրիստոսին ծառայելու համար պետք է թոթափել, պետք է հրաժարվել երկրավոր հոգսերից, պետք է հրաժարվել այն կապանքներից, այն որոգայթներից, որոնցով մենք շաղկապված ենք մեզ շրջապատող աշխարհի հետ, երկրավոր, աշխարհային հաճույքների հետ: Եվ միայն այդ ժամանակ մեր ուսերը ազատ կլինեն բառնալու համար Տիրոջ Խաչը: Մեր կոնակը ազատ կլինի, պատրաստ կլինի վերցնելու այդ խաչը, որը Քրիստոսի խոսքերով ծանր է, շատ ծանր է, բայց նաև քաղցր է:

Միբելի քույրեր և եղբայրներ, ցանկանում եմ վերստին միասին խաչակնքենք, մեր մեջ զգանք Քրիստոսի զորությունը, մեր մեջ զգանք Տիրոջ ուժը, այն կարողությունը, որ մեզ շնորհեց Իր խաչով, և հետայսու խաչը մեզ վրա կրելուց առաջ խաչը ապրենք, խաչը մեր սրտերի վրա կրենք ավելի, քան մեր պարանոցներին, և աղոթենք միասնաբար Տիրոջը. «Քրիստոս Աստված, երբ որ Դու գաս Քո փառքով, լուսեղեն ամպերի մեջ, այնժամ մենք, տեսնելով Քո Խաչը, թող երբեք չամաչենք, երբեք գլխիկոր չներկայանանք Քեզ, Քո Խաչի զորությամբ, բաց ճակատով, հպարտորեն ընդառաջ ելնենք Քեզ, փարվենք Քեզ որպես Քո հոտի զավակները և ունենանք այն փրկությունը, որ պատրաստեցիր աշխարհի համար, մեզ համար այժմ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԿՈԶԵՌ

ԽՐԱՏ ՅՈԳԷՇԱՀ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՈԶԵՌ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ՝

Արար Աստուած զմարդն հոգի եւ մարմին եւ զարդարեաց զնա ի նմանութիւն Իւր. զմիտքն հոգոյն աչք արար, եւ զաչքն՝ մարմնոյն ճրագ, մարմնոյն աչաւք զերեւելի յաշխարհիս գեղեցկութիւն տեսանէ եւ վայելէ եւ զԱստուած արհնէ, եւ հոգոյն աչաւքն զԱստուծոյ հրամանքն տեսանէ, որ լոյս է եւ զհոգին լուսաւորէ:

Զի՞նչ յաշխարհիս բարի կա, որ մարդն վայելէ. Դ (չորս) իրք է. կամ գոյն է, որ աչաւքն տեսանէ, կամ ձայնէ, որ ականջն լսէ, կամ համ է, որ բերանն առնու, ապա՝ զպինտն եւ զկակուղն, ձեռաւքն իմանայ զծանրն ու զթեթեւն: Այս դ(չորս) իրացս ի գատ իրք չի՝ կա՞. իսկ անուշահոտն, յայս մեղու՞¹ պիտանի, զոր քթովն իմանան: Այնպէս մարմինն զինչ քաղաք մի պարսպով եւ Ե (հինգ) դուռն ի վերայ. մին՝ քիթն է, մին բերանն է, մին ձեռքն է, յամենայն չար եւ բարի այս Ե (հինգ) դուռս մտանեն եւ ելանեն: Հոգին բնակիչ է այս քաղաքիս, մարդոյն բարի գործին գանձէ, միտքն՝ դատաւոր եւ այս գանձիս պահնորդ զխիղճմտութեան մարտիրոսութիւն պահանջիմք:

Քան զամենայն իմիք խնամատար լեր հոգւոյ, եւ առաքինութեան ընթացումն առանց վաստակոց պատրաստի:

Ամենայն որ այսրէն է ապականացու են, իսկ հոգին անմահ է, այսուհետեւ պարտ է խնամել անմահին քան ապականացուի:

Պատրաստեա զքեզ առ ի տրտմականսն յուսով, եւ շնորհեսցես զաւելիսն արդեանցն:

Մի՛ խնդրէր յԱստուծոյ զհեշտականսն, այլ զաւգտակարսն, զի զայն խնդիրսն ոչ տա որ ապականի:

Մի՛ մեղադրէր աղքատութեան, քանզի անսքաղ աւրինաց զնահատակն պատրաստէ:

Մի՛ ուրախանար ընդ մեծութիւնս, քանզի որ վասն սորա հոգսն է, մեկնէ զմեզ յԱստուծոյ, թեպէտ եւ ոչ կամիցիմք զայնոսիկ:

Մերձ է վախճան, որ ոք հեղգա, պատրաստէ զնա ի հարուածս, ըստ արդար դատաստանին:

Ոչ են հեռի հունձք, ոչ հեռի է դատաւորն. զագարակ հոգւոյն սրբեսցուք այսուհետեւ յունայնացեալ կամք, զմեղս ծածկեալ ի հարց:

Քան ի մարդկանէ ի հրեշտակաց պատկառէ, քանզի բազումք են զմեաւք եւ յամենայն զազիր գործոց անջատեն զմեզ:

Հոգս կալցուք զդատաւորին կշռոց եւ զամենայն որ ինչ անարգ է յաշխարհական մախաղէ ի բաց հանցես:

Զրկումն արհամարիէ զպարապումն եւ զհանգիստ եւ փութացիր գործել զոր ինչ խնդրելոցն է ի քէն:

Ի միտ առ հանապազ զանհաստատուն աշխարհիս զվարս եւ ոչ ինչ որ ի սոցանէ է զբաղեցուցանել կարէ զքեզ:

Առ ժամանակ է պայծառութիւնք աշխարհիս, մի՛ գուարճացուցէ զքեզ, քանզի գործիք են որսալով զմարդիկ որպէս զձկունս:

Մի՛ խնդրէր փորձութիւնս, իսկ եթէ եկեացէ, ցոյց ի նա գաւրութիւնս քո:

Մի՛ անտես առնէր զաղքատ արտասուելս, զի մի՛ անտես լինիցին աղաւթից քոց արտասուք:

Հանճարութիւն գանձէ ընդիր մարդկան, իսկ միադէմ գոլով միայն ընդ միայնուոյ հանճարի բնակիլ ընդ սրբեալսն:

Հանդերձ է առաքինութիւն Աստուծոյ. զսա ազիր եւ լինիս զգեցուցող այնմ որ գտիեզերն ամենայն զգեցուցանէ*:

Որ ինչ յերկրիս է, ի ձեռս գողոց մատնի. յերկինս գանձէ, զի այն ի ձեռս կապտողաց ոչ անկանի:

Հրաժարել պարտ է ի փափկութենէ, զի ձգէ ի գործ, յորում հեծումն լինի յետ սթափելոյն:

Ի խորհրդականաց աշխարհիս գարշեա, որ ապականեն զմարմինն եւ զհոգին պղծեն:

Ոչ երկրի բարութիւնք առանց աշխատութեան ժողովին. արդ, որ ես ջանալոյ յերկնայնոցն վրիպեցիս:

Կամիս զառաքինութիւն առանց ջանալոյ գործել՝ ի միտ առ զջանն, եթէ ժամանակեայ է, իսկ վարձքն՝ յաւիտենականք:

Որք յապիրատ ցանկութիւնսն մոլեալ են զվայելչութիւնս դուզնաքեա եւ զտանջանացն յերկարութիւն իմացին:

Որոյ վարքն աղտեղի են անասնական յիրաւի իցէ եւ հոգին, եւ զգալ պարտ է որպէս բանաւոր յանձնէ կամաւք զրկեալ:

Ջամենայն երկրաւորաց իրս համարեա յապականութիւն, իսկ զառաքինութիւնսն՝ անապական:

Պղերզ լեր, որքան սնափառ զքեզ ձգեն յարգելեալսն, եւ խնամատար լեր առաքինութեան, քանզի սա ի ձեռն հանճարոյ զքեզ հրեշտակ կացուցանէ:

Որովայնի ժուժկալ եւ լեզուոյ, զի մի՛ գուցէ միոյն ծառայ լինիցիս, իսկ միւսովն՝ հրով այրիս, որպէս անմտաբար:

Սիրեայ զԱստուած, իսկ առաւել քան զնա ընդանեաց, մի՛ վշտակցեր՝ մի գուցէ ընդ նորա բանին գտանիս անարժանիս էր նորա:

Համբերեա նեղութեանց, զի նոքաւք պատրաստին ճգնաւորացն պսակքն ի Քրիստոսէ:

Երանի որ սուզ առնու վասն մեղաց, իսկ որ առնէ զչարն թշուառական է, քանզի Քրիստոսի ժառանգորդ է որ վշտանայն, իսկ որ առնէ զչարն ժառանգորդ է սատանայի:

Բարիոք է հաց պահոց, քանզի ի խմորոյ անտի ցանկութեանց մեկնեալ է:

Սուրբ է տաճար աղաւթից, քանզի ձգի առ ինքն զսրբութեանցն Տէր:

Մի՛ կարծեր զարդարութիւն առաքինութեանցն հարեւանցի գործով, քանզի առանց նորա ամենայն գործք պէտք էն:

Եթէ սերմանես աղքատաց՝ զքոյսն սերմանես, քանզի որ յաւտարացն է քան գործմն դառնագոյն է:

Կոյր է ողորմածն եթէ ոչ իցէ յիրաւանցն ժողովեալ եւ արդարութեամբ գործեալ զերկիր:

Ակն կալ հանապազ մահու, բայց մի՛ երկնչիր, քանզի ճշմարիտ նկարագիր են հանճարս երկոքին սոքա:

Ձեռողացոյ զառաքինութիւն ոչ զի պատուեսցիս, այլ զի աւգտեսցին տեսողքն:

Պարտ է ասել զբարիոքն, եւ որք ոչն գործեն զբարիոքն, որպէսզի սկսանիցին զբարին գործել եւ ի բանից իւրեանց ուղղեալք:

Եթէ յերկինս բաղձաս մտանել՝ մի՛ ինչ լիցի քեզ յերկրի, քանզի ոչ տա թոյլ սա ի վեր ելանել ըմբռնել զքեզ:

Մի՛ կամիր մեծատուն լինել յաղքատսիրութեան պատճառս, քանզի ի գոյից անտի ողորմել արինաղբէ Աստուած արդարոց:

Եթէ բաժակ ցուրտ ողորմի գթածողին, որքան արդեաւք փոխադարձ եղիցի, որ զամենայն գոյսն իւր ետ աղքատաց:

Մայրք առաքինութեան են սրբութիւն եւ վշտակցութիւն. յերկոցունց այսուիւտեւ մի՛ պեղարգանար զինաւորել Քրիստոսի, քանզի վշտակցութեան գործարանն է, որ վասն մեր մարմնացան, մարդկան պատրաստեաց զայս:

Մի՛ ասեր՝ հատուցից թշնամոյն, քանզի դատաւոր արդար ունիս յերկինս յԱստուած:

Մի՛ կամիր մեծատուն լինել եւ մի՛ փափկութեան ըղձանար, եւ մի՛ փառաւորել ի յերկրիս, քանզի ապականութեանց աշխարհիս չարեաց են վարք, իսկ մեք ոչ լիցուք ապականելիք:

Ձմեռեալ մի՛ սգար, զի հասարակաց է ճանապարհն, իսկ որ հասանէ յարդարն՝ երանելի է:

Ձմեռուցեալսն սգացիր, եւ մի՛ զաղքատացեալսն, քանզի սա պսակի, իսկ նա տանջի:

Ծիծաղէ զանուի(՞) կենցաղոյս, զի յանարգս հոլովի, եւ զգուշացիր ի խորխորատէ անտի, յորում հոլովի, որ ի նմա քնովն են ծանրացեալք:

Խաւսեաց ընդ Աստուծոյ բազում ինչ եւ ընդ մարդկան՝ սակաւ, բայց խորհելով զարեւնսն ուղղեսցես զերկոսին առ Աստուած:

Աւագան բարի հոգւոց արատաւոր է, այլ յետ աղաւթելոյն յիշէ, եթէ ընդէ՞ր արտասուեցեր:

Ձիզաւրս աշխարհիս մի՛ երաներ, քանզի հզաւրք զաւրութեամբ դատեսցին, ուստի զդատաւորն որ անաչառ ունիցին:

Պարտ է վաստակել, որք յԱդամայ իսկ զվաստակոյն արինաւք զփոխադարձն շնորհել:

Հարկ է ժառանգաց Եւայի տրտմել, այլ յորժամ զտրտմութիւն գոհութեամբ ըն-

դունիմք յարհնություն մեզ լինին անեծքն, որ յԱրարչէն մերմէ:

Իբրեւ ճրագ զմիտս քո առ գործն ստացիր, քանզի սա յայտնէ քեզ, որ ինչ բարին է, եւ որ ինչ ապիրատն գործեցեր:

Ջանձինս դատեսցուք եւ դատաւորն հաճեալ լինի, քանզի ուրախ լինի որպէս բարերար տեսանելով զմեղաւորն ցրուեալ զմեղսն:

Որ ինչ աղտեղի գործեմք ապաշխարութեան արտասուաւք լուսացուք, քանզի զպատկերն սուրբ ընդունելոց եմք, յառաջ քան զյանդիմանելով մերոց անձանց խոստովանութեամբ բժշկեսցուք, որպէս շահեսցուք դեղաւք զտանջանսն:

Որպէս կապեալք դժուարաւ գնան, սոյնպէս զընթացս առաքինութեան, որք պատաղեալ են յաշխարհիս սէր:

Պարտ է զմեղս ատել, քանզի այսպէս յորոգայթէ վաղվադակի ելցէ, թէ եւ սողոսկեաց ոք ի նա:

Որ ոք ոչ ատէ զմեղս՝ ընդ մեղաւորս դատի ի Տեառնէ, թէպէտ եւ մեղս ոչ գործէ:

Ի վերայ մեղաւորի մեղուցելոյ հառաչէ, որպէսզի եւ զանձո սգասցես, քանզի ամենեքեան մեղաց պարտաւոր եմք:

Յիշեցոյ սիրելոյ քո մեղուցելոյ զերկիւղ դատաստանին, քանզի բուժան(՞) հասարակաց է դեղն խորհելոյն զայսոսիկ:

Ասել ինչ կամ գործել նկատելով հոգ տար, որ յետ սակաւ միոյ տալոց եւ պատասխանի, եւ զգաստանաս* յերկիւղէ անտի ուղղելով զիրսն:

Ի մեղաց տանջանաց երկիր, եւ յամաւորոյ անտի սարսեա, քանզի անբաւ չար են:

Հանդերձեալ բարեացն գեղեցկութիւնք անբաւ են, իսկ արդիս հովանի եւ ծախ եւ պղպճակք:

Մի՛ սերմաներ չարիս, քանզի հունձք մերձեալ են եւ հուրն զերկրագործս փշոցն ընդունի:

Վարք աշխարհիս կեղծաւորք եւ ազահք եւ ցանկասէրք են, այլ փոքր մի՛ ներեալ եւ տեսանիցես զխոտն առ ոտն կոխեալ:

Ամենայն գործք չարք սպառազինեն զսատանայ, իսկ նորա սպառազինեալ մարտնչի ընդ այնոսիկ, որք սպառազինեցին զնա:

Կամիս գտկարութիւն թշնամոյն՝ զմեղս ի բաց կոճոպէ եւ մերկացեալ նորա ի թեւոցն, որպէս ճնճղուկ կատակի:

Վա՛յ ամբարշտին. յորժամ ամենեքեան լուսաւորին նա միայն խաւարի:

Վա՛յ հայհոյչին. քանզի կապի լեզուն, եւ պատասխանի դատաւորին ոչ կարէ տալ:

Վա՛յ անաւրինին. քանզի առ դատաւոր խիստ եւ արդար արէնադիր երթալոց է:

Վա՛յ ազահին, զի մեծութիւն նորա թողու զնա, եւ հուրն անշէջ ընդունի զնա:

Վա՛յ հեղգոյն, զի խնդրեսցէ զժամանակն, զոր ծուլութեամբ նորա որոշեաց:

Վա՛յ ամբարհաւաճին, յորժամ մտանէ ի գերեզմանն ուսանի զինքն թէ ով իցէ:

Վա՛յ պոռնկասիրին, զի աղտեղացուցանէ զպատմութեանն զհարսնական եւ զարքունեան հարսանեացն ամաւորով մտանէ ի տանջանսն:

Վա՛յ բազմպատողին եւ ընդ նմին արբեցողին. ընդ սպանողս եւ ընդ պոռնիկս դա-

տասցին:

Վա՛յ փափկացողին^{**}, զի առժամանակեայ է, եւ որպէս զուարակ ի զենումն պարարի:

Վա՛յ կեղծաւորին. հովին ուրասցի զնա եւ դատաւորն գայլ համարի զնա հաւտին:

Վա՛յ յաչաղկոտին, զի մահացաւ ընդ բարիսն, որ նմա պատրաստեաց արդարադատն:

Վա՛յ բարկացողին, որ ոչ ունի զհամեմատութիւն բարւոյ, զի վրէժխնդիր է դատաւորին:

Վա՛յ ռխակալին եւ անողորմին, զի անհաշտ եւ անողորմ դատի հանդիպի:

Երանի որ զնան զնեղ ճանապարհն, քանզի պսակազգեստ եւ սուրբ մտանէ յերկինս:

Երանի որ եթող զամենայն ցանկութիւնս, քանզի դողան մարտնչել ընդ նմա դէքն:

Երանի որ հոգով սուրբ է եւ առաքինութեամբ անկեղծաւոր, քանզի դատելոց է զաշխարհ եւ ոչ զինքն դատի ընդ աշխարհի:

Երանի որ բարձր է վարութեւ խոնարհ է մտաւք, քանզի նմանող է Քրիստոսի եւ նստակից է Նորա:

Երանելի է անձն, յորոյ ի լեզուէ արւէնք ոչ անջատեն, քանզի ի սմանէ Աստուած ոչ մեկնի:

Երանի է որ բազմաց բարի առնէ, քանզի բազում ջատագովս ունի ի դատաստանին:

Երանի է որ ոչ խառնաբնդորէ զառաքինութիւնս, քանզի հեծանոց դատաւորին ոչ կատակի:

Երանի որ յարդարէ զգործս իւր յառաջ քան զբորբոքել հնոցին, որով ամենայն փորձի:

Երանի որ ի հանդերձեալսն ճեպի, քանզի սա զապականութիւն խոտէ եւ ձգի ի կեանսն:

Երանի որ ցրուէ զչարիս խոստովանութեամբ եւ ժողովել բարիս առաքինութեամբ եւ սրբութեամբ սրբոյն առաջի կացցէ:

Եւ զլուխ բանիս. Անձն, մի՛ պղերգանար, զի յետ աստեացս զկշիռն ընդունելոց ես ի Տեառնէ, որում փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

*Հրատարակության պատրաստեց
Հ. Քյոսէյանը*

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿՈԼՈՄԵՆՍԿԻ ՄԻՏՐՈՂՈԼԻՏ ՄԱԿԱՐ

ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

Մկրտության խորհրդի տեղը մյուս խորհուրդների շարքում. Մկրտություն հասկացությունը և նրա տարբեր անվանումները

Ա. Ուղղափառ Եկեղեցու յոթ խորհուրդների շարքում մկրտությունը զբաղեցնում է առաջին տեղը, քանզի այն մարդկության համար *դուռ է դեպի Եկեղեցի*. ըստ Փրկչի խոսքի՝ «Եթե մեկը ջրից և Հոգուց չծնվի, չի կարող Աստծո արքայություն մտնել», այսինքն՝ երանության թագավորություն, և ապա՝ փառքի թագավորություն (Հովհ. Գ 5), և, հետևաբար, դուռ է մյուս խորհուրդների համար, որոնք պահպանվում և օրինականորեն կատարվում են միայն Եկեղեցում: Այդ պատճառով այս խորհուրդը մարդկանց միշտ ավանդվել և մինչև հիմա էլ ավանդվում է մյուս խորհուրդներից առաջ, և նա, ով դեռ չի արժանացել մկրտության, երբեք չէր կարող և չի կարող մասնակից լինել եկեղեցական այլ խորհրդի:

Բ. «Մկրտություն» ասելով հասկացվում է այն խորհուրդը, որի ժամանակ մեղավոր մարդը, նախաձեռնողներից ժառանգած մեղքով ծնված, նորից ծնվում է «ջրից և Հոգուց» (Հովհ. Գ 5), կամ, պարզապես, այնպիսի մի խորհուրդ, որի ժամանակ երախա դարձած մեղավորը, Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով երեք անգամ ջուրն ընկղմվելիս Աստծո օրհնությամբ մաքրվում է ամեն տեսակ մեղքերից և դառնում է նոր մարդ՝ արդարացված և լուսավորված: Այսպիսով, Աստծո վերին օգնությունը, որ մինչև հիմա մեղավորին միայն Քրիստոսի նկատմամբ հավատին էր կանչում և նրա մեջ հավատ էր արթնացնում, այստեղ առաջին անգամ խորհրդավորապես հեղվում է մարդու հենց էության վրա և ամբողջությամբ նրան մաքրում, սրբում, վերստեղծում:

Գ. Դրան համապատասխան՝ մկրտության խորհուրդը հնուց ի վեր անվանվել է տարբեր անուններով: Այսպես.

ա. Ըստ իր տեսանելի կողմի՝ անվանվել է բաղնիք կամ ավազան, սուրբ ակունք, երբեմն էլ ուղղակի՝ ջուր.

բ. Ըստ իր անտեսանելի գործողությունների և խորհրդանիշների՝ լուսավորություն, երանելի պարզև, վերածնունդ, Քրիստոսադրոշմ, քրիստոնեական դրոշմ, հավատ դրոշմ.

գ. Առաջինը և երկրորդը միասին՝ խորհրդավոր ավազան, փրկության ավազան, քավության և իմացության ավազան, վերստին ծննդյան և վերածնության ավազան (Տիտ. Գ 5), կյանքի ավազան, հավիտենական կյանքի ջուր, աստվածային ակունք, ջրի խորհուրդ, նոր ծննդյան խորհուրդ և այսպես շարունակ:

Մկրտության խորհրդի աստվածային սահմանումը (Աստծո կողմից սահմանված լինելը)

Մկրտության խորհրդի աստվածային հաստատումն անտարակույս է: Այս ճշմարտության հաստատման համար չմատնանշենք Հովհաննեսի մկրտությունը, թեպետև այն երկնքից էր (Մարկ. ԺԱ 30), որովհետև Հովհաննեսի մկրտությունը միայն Քրիստոսի մկրտության նախատիպն էր (Մատթ. Գ 11, Մարկ. Ա 8, Ղուկ. Գ 16), սուկ նախապատրաստում էր, ընդ որում միայն հրեաներին, Մեսիային և Նրա թագավորությունն ընդունելուն (Մատթ. Գ 1-2, Ղուկ. Ա 16, Գ 3), միայն ապաշխարության մկրտություն էր (Մարկ. Ա 4, Գործք ԺԹ 4) և չէր վերաճնում Սուրբ Հոգու շնորհով, այնպես որ Հովհաննու մկրտությամբ մկրտվածները հետագայում պետք է մկրտվեին նաև Քրիստոսի մկրտությամբ (Գործք ԺԹ 2-6): Չենք մատնանշի նաև հենց Քրիստոս Փրկչի մկրտությունը Հովհաննեսից, թեպետ Տերը (Հիսուս) այստեղ, ինչպես Ս. Հովհան Ոսկեբերանն է ասում, «հրեական մկրտություն կատարելով՝ բացեց նաև նորկտակարանյան Եկեղեցու մկրտության դռները», չնայած Հորդանանի հոսանքի մեջ Իր իջմամբ Նա սրբագործեց ջրերի բնությունը ողջ մարդկության սրբագործման համար, և չնայած այստեղ արդեն տեսնում ենք, որ մկրտյալ Հիսուսի վրա իջավ Սուրբ Հոգին, այնպես, ինչպես Նրա վերաճնող շնորհն ի վերուստ իջնում է յուրաքանչյուր հավատացյալի վրա Քրիստոնեության (մկրտության) խորհրդի միջոցով: Վերջապես, չենք մատնանշի այն մկրտությունը, որ կատարում էին Տեր Հիսուսի աշակերտները դեռևս Նրա երկրային կյանքի ընթացքում, որովհետև դա էլ, ինչպես նշում է Ս. Հովհան Ոսկեբերանը Հովհաննեսի մկրտությունից ոչնչով առավել չէր. կատարվում էր Հովհաննեսի մկրտության հետ միաժամանակ և ոչ թե Հովհաննեսի մկրտությունն իրենով (առաքելականով) էր փոխարինվում (Հովհ. Դ 1-2), վերաբերում էր միայն հրեաներին (Հովհ. Գ 22-23): Հետևաբար, Հովհաննեսի մկրտության նման, ապաշխարության միջոցով նրանց միայն նախապատրաստում էր հայտնված Մեսիայի ընդունմանը և Նրա երանելի թագավորության մեջ մտնելուն (Մատթ. Ժ 7):

Այս ամենը միայն Քրիստոնեական մկրտության խորհրդի մասին կանխասացություն էր, դրա նախատիպերը և, ասես, նախասահմանումը:

Իրականում Տերը հաստատեց մկրտության խորհուրդն արդեն Իր հարությամբ, երբ փրկագնելով մեզ Իր անգին արյամբ և դրանով ձեռք բերելով հավատացյալներին Սուրբ Հոգու շնորհները բաշխելու իրավունքը (Հովհ. Է 39, Բ Պետրոս Ա 3, Ա Կոր. Ա 4), հանդիսավորությամբ ասաց Իր աշակերտներին. «Ինձ է տրված ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա. ինչպես Հայրն ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացե՛ք, ուրեմն, աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Ուսուցանե՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի: Եվ ահա ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը» (Մատթ. ԺԸ 18 - 20). «Ով հավատա և մկրտվի, պիտի փրկվի, և ով չհավատա, պիտի դատապարտվի» (Մարկ. ԺԶ 16): Այսպես արդեն մկրտությունը հանդես է գալիս որպես Խորհուրդ բոլոր մարդկանց և ոչ միայն հրեաների համար, որպես մշտապես՝ մինչև ժամանակների վախճանը հաստատված, ոչ թե ժամանակավոր, այլ որպես անհրաժեշտ պայման հավիտենական փրկության համար, ոչ թե պատրաստելու միայն Մեսիայի երանավետ թագավորությունը:

Այդ ժամանակվանից սկսած Սուրբ Առաքյալները հենց որ զգեստավորվեցին վե-

րին գործությամբ (Ղուկ. ԻԴ 49), սկսեցին մկրտության խորհուրդը կատարել և մաքրել, խորհրդի մեջ վերաճնել հավատացյալներին Սուրբ Հոգու շնորհով. «Ապաշխարեցե՛ք,- ասաց Ս. Պետրոս Առաքյալը հենց նույն օրը հրեաներին, որ լսում էին իր քարոզը,- և ձեզանից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և պիտի ընդունեք Սուրբ Հոգու պարգևը» (Գործք Բ 38): Եվ, իրոք, հենց այդ ժամանակ մկրտվեց և Քրիստոսի Եկեղեցուն ավելացավ մոտ 3000 (մարդ) (Գործք Բ 41): Շուտով Ս. Փիլիպպոսը մկրտեց ներքինուն (Գործք Ը 38), Ս. Պետրոսը՝ Կոռնելիոս հարյուրապետին՝ ընտանիքի և ուրիշների հետ (Գործք Ժ 47-48), Ս. Պողոսը՝ Լիդիային (Գործք ԺԶ 15), բանտապետին՝ իր ընտանիքով (Գործք ԺԶ 33), Կրիսպոսին՝ իր ամբողջ տնով, և կորնթացիներից շատերին (Գործք ԺԸ 8), մի քանի աշակերտների՝ Եփեսոսում, որ նախօրոք Հովհաննեսի մկրտությամբ էին մկրտվել (Գործք ԺԹ 1-5) և այլն: Սուրբ Եկեղեցին մկրտության խորհուրդն ընդունեց սուրբ առաքյալներից և այն ժամանակվանից կատարել ու կատարում է այդ խորհուրդը բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են դառնալ նրա զավակները և Եկեղեցով հասնել հավիտենական փրկության:

Քրիստոնեական մկրտության խորհրդի հաստատումը և Հովհաննեսի մկրտությամբ ունեցած հարաբերությունը նրա հետ այսպես էին դիտում նախնի ուսուցիչներն ու Սուրբ Եկեղեցու հայրերը: Բերենք մի քանի բնորոշ օրինակներ.

Տերտուլիանոս. «Գործք Առաքելոցում գտնում ենք, որ Հովհաննեսի մկրտությամբ մկրտվածները Սուրբ Հոգին չընդունեցին, նույնիսկ Նրա մասին չէին լսել (Գործք ԺԹ)... Դա ապաշխարության մկրտություն էր, ասես նախասկիզբ էր՝ ի Քրիստոս լինելիք թողության և սրբացման: Քանի որ եթե Հովհաննեսը քարոզում էր ապաշխարության մկրտություն՝ մեղքերի թողության համար, նկատի էր առնվում ապագա թողությունը, որովհետև ապաշխարությունը նախորդում է, իսկ թողությունը՝ հաջորդում, և հենց դա էր նշանակում ճանապարհի պատրաստելը... Հիսուսի աշակերտները մկրտում էին որպես սպասավորներ, ինչպես Հովհաննես Կարապետը և հենց Հովհաննեսի մկրտությամբ և ոչ թե ուրիշ (մկրտությամբ), քանի որ ուրիշ մկրտություն չկա, բացի հետագայում Քրիստոսի հաստատած մկրտությունը, որն այն ժամանակ չէր կարող աշակերտների կողմից կատարվել, որովհետև չէր ամբողջացել Տիրոջ փառքը, չարչարանքների ու հարության միջոցով չէր հաստատվել մկրտության ավագանի ուժը: Մինչ Տիրոջ չարչարանքներն ու հարությունը, փրկության համար միայն մեկ հավատ կար: Բայց երբ այդ հավատը մեծացավ Նրա ծննդյան, չարչարանքների, հարության հավատով, այն ժամանակ պարզևեց խորհրդի ամբողջությունը, մկրտության կնիքը, ինչպես հավատի զգեստը, որն առաջ մերկ էր և ուժ չուներ առանց իր օրենքի: Իսկ այժմ մկրտության (ընկղմելու) օրենքն է տրված, ձևը՝ նշանակված. «Գնացե՛ք,- ասաց Տերը,- աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, մկրտեցե՛ք նրանց Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթ. ԻԸ 19): Այս օրենքի մասին կատարված սահմանումը՝ «Եթե մեկը ջրից և Հոգուց չծնվի, չի կարող Աստծո արքայություն մտնել» (Հովհ. Գ 5), պարտադիր էր համարում հավատքը մկրտության անհրաժեշտության նկատմամբ: Այն ժամանակվանից բոլոր հավատացյալները մկրտվում են»:

Սուրբ Բարսեղ Մեծ. «Հովհաննեսը քարոզում էր ապաշխարության մկրտու-

յուն, և նրան ընդառաջ էր գալիս ամբողջ Հրեաստանը: Աստված քարոզում էր որ-դեգրման մկրտություն, և Նրա վրա հույսը դրածներից ո՞վ չի ենթարկվի: Այն մկրտությունը սկզբնավորող էր, իսկ սա՝ ավարտին հասցնող, այն՝ մեղքից հեռացնում է, իսկ սա՝ Աստծուն է դառնում»:

Սուրբ Գրիգոր Աստվածաբան. «Մովսեսը մկրտում էր, բայց ոչ ջրում, այլ ամենից առաջ ամպի և ծովի մեջ (հմմտ. Ա Կորնթ. Ժ 1), և սա ուներ նախատիպային իմաստ, ինչպես որ հենց Պողոսն էր ըմբռնում:

Ծովով նախապատկերվում էր ջուրը, ամպով՝ Հոգին, մանանայով՝ կենաց հացը, ըմպելիքով՝ Աստվածային ըմպելիքը: Մկրտում էր նաև Հովհաննեսը, արդեն ոչ թե հրեական ձևով, որովհետև ոչ միայն ջրով էր մկրտում, այլև ապաշխարության համար (Մատթ. Գ 11), բայց և այնպես ոչ կատարյալ հոգևոր (մկրտությամբ), որովհետև չի հավելում՝ «և Հոգով»: Մկրտում է և Հիսուս, բայց Հոգով. սրա մեջ է կատարելությունը:

Սուրբ Հովհաննես Ոսկեբերան. «Ինչո՞ւ,- կհարցնես,- Տերն Ինքը չմկրտեց: Դեռ սկզբում Հովհաննեսն ասել էր. «Նա ձեզ կմկրտի Սուրբ Հոգով և հրով» (Մատթ. Գ 11): Բայց Հոգին նա դեռ չէր տալիս, այդ պատճառով էլ չէր մկրտում: Իսկ մկրտում էին միայն աշակերտները՝ ցանկանալով շատերին հրապուրել և բերել փրկության ուսմունքին... Իսկ եթե մեկը հարցնի՝ ին՞չ առավելություն ուներ Քրիստոսի աշակերտների մկրտությունը Հովհաննեսի մկրտությունից, մենք կասենք՝ ոչ մի, քանի որ թե՛ այս, թե՛ այն մկրտությունը հավասարապես առանց Հոգու շնորհի էր և մկրտելու պատճառը երկուսինն էլ նույնն էր՝ առաջնորդել մկրտվողներին դեպի Քրիստոս: «Ինչ որ եղավ Զատիկի հետ, նույնը կատարվում է և մկրտության հետ, քանի որ այնտեղ Հիսուս Քրիստոս, կատարելով թե՛ այս, թե՛ այն Զատիկը, մեկը իր լրումին հասած համարեց, իսկ մյուսը՝ սկզբնավորեց. այնպես էլ այստեղ կատարելով հրեական մկրտությունը՝ նաև նորկտակարանային Եկեղեցու մկրտության դռները բացեց: Ինչպես այնտեղ մեկ ընթրիքի ընթացքում, այնպես էլ այստեղ մեկ գետում և՛ ստվերը գծեց, և՛ ճշմարտությունն էլ ներկայացրեց: Որովհետև միայն այս մկրտությունն ունի Սուրբ Հոգու շնորհը, իսկ Հովհաննեսի մկրտությունն այս պարզևր չունի: Հենց այս պատճառով ոչ մի բան տեղի չունեցավ ուրիշ մարդկանց մկրտության ժամանակ, այն տեղի ունեցավ միայն Նրա հետ, ով կարող էր տալ այս պարզևր, որպեսզի դու, բացի վերևում ասվածից, հասկանաս նաև այն, որ ոչ թե մկրտվողի մաքրությունը, այլ Մկրտվողի զորությունը կատարեց այս: Այդ ժամանակ երկինքն էլ բացվեց, Սուրբ Հոգին էլ իջավ»:

Սուրբ Կյուրեղ Ալեքսանդրացի. «Ինչպես Մովսեսի օրենքը եղավ որպես որոշ պատրաստություն ապագա բարիքների և հոգևոր աստվածապաշտության համար՝ ներառելով ծածկյալ ճշմարտությունը, այնպես էլ Հովհաննեսի մկրտությունը, Քրիստոսի մկրտության համեմատ, իր մեջ նախապատրաստող ուժն էր պարունակում»:

Այսպիսի ուսմունք են շարադրում Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացին, Սուրբ Աթանասը, Օգոստինոս Երանելին, Հերոնիմոս Երանելին, Սուրբ Հովհաննես Դամասկացին և ուրիշներ:

Մկրտության խորհրդի տեսանելի կողմը

Մկրտության խորհրդի տեսանելի կողմը (որը բոլոր հանգամանքներով արտահայտված է այդ խորհրդի ծիսակարգի մեջ) կազմում է ջրի մեջ մկրտվողի եռակի ընկղմումը՝ «մկրտվում է Աստծո ծառան Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» բաների արտասանությամբ: Այստեղ, մասնավորապես զատվում են.

ա. Խորհրդի նյութը՝ ջուրը.

բ. Մկրտության խորհրդի ժամանակ կատարվող գործողությունը՝ մկրտվողի երեք անգամ ջրում ընկղմումը.

գ. Բառերը, որ արտասանվում են այդ գործողության ժամանակ:

Ա. Մկրտության խորհրդի նյութը պիտի լինի ջուրը՝ մաքուր, բնական, քանի որ այդ նյութը մատնանշեց ինքը՝ Փրկիչը՝ ասելով. «Եթե մեկը ջրից ու Հոգուց չծնվի, չի կարող Աստծո արքայությունը մտնել» (Հովհ. Գ 5): Ջրում մկրտում էին սուրբ առաքյալները «իրենց հետևողներին»: Գործք Առաքելոցը վկայում է Սուրբ Փիլիպպոսի և ներքինու մասին. «Հասան մի ջրի մոտ և ներքինին ասաց. «Ահա՛ ջուր, ի՞նչն է ինձ արգելում մկրտվել»... Եվ հրամայեց կառքը կանգնեցնել. երկուսով ջուրն իջան՝ և՛ Փիլիպպոսը, և՛ ներքինին: Եվ Փիլիպպոսը մկրտեց նրան (Գործք Ը 36, 38): Հավասարապես և Սուրբ Պետրոսը, երբ նրա խոսքը լսող հեթանոսների վրա հանկարծ իջավ Սուրբ Հոգին, ասաց. «Ո՛վ կարող է արգելել, որ ջրով մկրտվեն սրանք, որոնք ևս Սուրբ Հոգին ընդունեցին, ինչպես և մենք: Եվ հրամայեց նրանց մկրտվել հանուն Հիսուս Քրիստոսի (Գործք Ժ 47-48): Ինչպես երևում է Եկեղեցու հովիվների և ուսուցիչների բազմաթիվ վկայություններից, Սուրբ Եկեղեցին էլ միշտ ջրով է մկրտությունը կատարել. Օրինակ՝

ա. *Սուրբ Հուստինոս*. «Ով համոզվի և հավատա, որ մեր ուսմունքը և խոսքերը ճշմարիտ են, և ով խոստանա, որ կարող է ապրել այդ ձևով, նրանց սովորեցնում են, որպեսզի նրանք աղոթքով և պահքով Աստծուց խնդրեն նախկին մեղքերի թողություն, մենք էլ նրանց հետ աղոթում ենք և պահք պահում: Հետո մենք նրանց տանում ենք այնտեղ, ուր ջուր կա, և վերածնվում են նրանք նույն ձևով, որով մենք ինքներս վերածնվեցինք, այսինքն՝ նրանք այն ժամանակ լվացվում են ջրով բոլորի՝ Հոր ու Տեր Աստծու և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու անունով»:

բ. *Սուրբ Կյուրենդ Երուսաղեմացի*. «Ինչպես որ մարդը կազմված է հոգուց և մարմնից, մաքրումն էլ պետք է լինի կրկնակի՝ անմարմին՝ հոգու համար, և մարմնական՝ մարմնի համար: Ջուրը մաքրում է մարմինը, իսկ Հոգին դրոշմում է հոգին, որպեսզի մենք Աստծուն մոտենանք ցողված սրտով և մաքուր ջրով լցված մարմնով»:

գ. *Սուրբ Գրիգոր Աստվածաբան*. «Քանի որ մենք կազմված ենք երկու բնությունից, այսինքն՝ հոգուց և մարմնից, տեսանելիի ու անտեսանելիի բնությունից, մաքրումն էլ է կրկնակի. այսինքն՝ ջրով և Հոգով. մեկն ընդունվում է տեսանելի և մարմնապես, իսկ մյուսը միևնույն ժամանակ կատարում է ոչ մարմնավոր և անտեսանելի, մեկը պատկերավոր է, իսկ մյուսը՝ իրական և մինչև խորքը մաքրող»:

դ. *Սուրբ Բարսեղ Մեծ*. «Քանի որ մկրտության մեջ առաջադրված են երկու նպա-

տակ՝ կործանել մեղավոր մարմինը, որպեսզի այն չբերի մահվան պտուղներ, այլ Հոգով վերակենդանանա և սրբության պտուղ ունենա: Այս դեպքում ջուրն իրենից ներկայացնում է մահը, որ մարմինն իր մեջ ընդունում է ինչպես դազադ, իսկ Հոգին հաղորդում է կենդանարար ուժ՝ մեր հոգիները մեղսավոր մեռելությունից նորոգելով նախասկզբնական կյանքի»:

ե. *Օգոստինոս Երանելի*. «Ի՞նչ է Քրիստոսի մկրտությունը՝ ջրի ավազան՝ բառերի արտասանությամբ: Հանի՛ր ջուրը՝ մկրտությունը չկա, հանի՛ր բառերը՝ մկրտությունը չկա»:

զ. *Սուրբ Հովհաննես Դամասկացի*. «Նա (Աստված) մեզ պատվիրեց վերածնել ջրով և Հոգով՝ ջրի վրա Սուրբ Հոգու ներգործության ժամանակ, աղոթքով և Սուրբ Հոգուն կանչելով: Քանի որ մարդը բաղկացած է երկու մասից՝ հոգուց և մարմնից, Տերն էլ մեզ տվեց կրկնակի մաքրագործում, այսինքն՝ ջրով և Հոգով: Հոգով, որպեսզի նորոգի մեր մեջ (Աստծո) պատկերն ու նմանությունը, ջրով, որպեսզի Հոգու վերին օգնությամբ մաքրի մարմինը մեղքից և ազատի ապականությունից: Ջուրն այստեղ մահվան խորհրդանիշն է, իսկ Հոգին տալիս է կյանքի երաշխիք:

Այս պատճառով արդարացի չեն և նրանք, որ մերժում են մկրտության խորհրդի մեջ ցանկացած նյութ, և նրանք, որ Լյութերին հետևելով՝ մկրտության համար որպես պիտանի նյութ են ընդունում ոչ միայն ջուրը, այլև ցանկացած հեղուկ:

Բ. Մկրտությունը պիտի կատարվի ջրի մեջ մկրտվողի եռակի ընկղմամբ: Եռակի ընկղմում՝ ըստ սուրբ առաքյալների կանոնի և Եկեղեցու հին հայրերի ուսմունքի՝ Ամենասուրբ Երրորդության Երեք Անձերի անունով, ինչպես և ի հիշատակ Հիսուս Քրիստոսի մահվան, թաղման և հարության: Եվ Եկեղեցին վավերական չէր ճանաչում Եվնոմեականների և ուրիշ հերետիկոսների մկրտությունը, որոնք մկրտում էին մեկ ընկղմամբ: Ընկղմամբ՝ որովհետև.

ա. Ընկղմամբ է մկրտվել Ինքը՝ Քրիստոս՝ Հովհաննեսից (Մատթ. Գ 16, հմմտ. Մարկ. Ա 5, Հովհ. Գ 23):

բ. Ընկղմամբ էին մկրտում սուրբ առաքյալները (Գործք Ը 37-38):

գ. Մկրտությունն Աստվածաշնչում ներկայացվում է որպես համաշխարհային ջրհեղեղի ճիշտ նմանությունը: Սուրբ Պետրոսի խոսքերով՝ այժմ էլ մկրտությունը մեզ է ապրեցնում (Պետրոս Գ 19-21) ավազանի ջրով, որով Աստված մաքրում է մեզ (Եփես. Ե 26, Տիտ. Գ 5), և ինչպես գերեզմանով, որով մենք թաղվում ենք Քրիստոսի մահվան մեջ (Հռոմ. Զ 4, հմմ. Կող. Բ 12), բոլոր այսպիսի անվանումները, որոնց միայն այն ժամանակ կհամապատասխանի այս խորհուրդը, երբ որ կատարվի ընկղման միջոցով: Եվ վերջապես.

դ. Ընկղմամբ էր, նույնիսկ ամենաալախոհների խոստովանությամբ, կատարվում այս խորհուրդը Հին Եկեղեցում, ինչպես անվիճելիորեն վկայում են Սուրբ Դիոնիսիոս Արիսպագացին, Տերտուլիանոսը, Բարսեղ Մեծը, Գրիգոր Նյուսացին և ուրիշներ:

Ինչ վերաբերում է ցողմանն ու հեղմանը, ինչպես սովորաբար հիմա կատարվում է մկրտությունն Արևմտյան Եկեղեցում, հնում խորհրդի կատարման այդ ձևը թույլատրվում էր միայն բացառության կարգով, ծայրահեղ դեպքերում, առավելաբար ծանր՝ անկողնային հիվանդների համար, որոնց չէր կարելի ընկղմամբ

մկրտել: Եվ ուշագրավ է, որ նույնիսկ Գ դարում մկրտության այդ ձևը ոմանց կողմից ենթարկվում էր հակաճառության, այնպես որ Սուրբ Կիպրիանոսը տարակուսանքները վերացնելու համար հատուկ գրեց, որ մկրտության խորհուրդն իր գործությունը չի կորցնում նույնիսկ այս ձևով կատարվելու դեպքում: Հենց այդ պատճառով էլ Ուղղափառ Եկեղեցին թեև մինչև այժմ մկրտության ժամանակ թույլատրում է նաև ցողումը կամ հեղումը, որպես խորհրդի գործությունը ունեցող, բայց թույլատրում է միայն ծայրահեղ դեպքերում՝ որպես ընդհանուր կարգից բացառություն:

Գ. Մկրտությունը պետք է կատարված լինի Ամենասուրբ Երրորդության անունով՝ «Աստծո ծառան մկրտվում է... Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» բառերի արտասանությամբ: Քանի որ «Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» պատվիրեց «բոլոր ազգերին» մկրտել Ինքը՝ Փրկիչը (Մատթ. ԻԸ 19): Եվ արդյունքում այսքան հստակ ու որոշակի պատվիրանի շնորհիվ է, որ այսպես և ոչ թե մեկ ուրիշ ձևով է միշտ մկրտություն կատարել Սուրբ Եկեղեցին իր հիմնադրման հենց սկզբից: Այդ մասին վկայում են.

ա. «Առաքելական կանոնները». «Եթե մեկը՝ եպիսկոպոս կամ քահանա, մկրտի ոչ Տիրոջ սահմանմամբ՝ Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով, թող կարգալուծ արվի» (Կանոն 49):

բ. *Սուրբ Հուստինոս Վկան և Տերտուլիանոսը*, որոնց խոսքերը մենք վերևում արդեն բերեցինք:

գ. *Որոգիներս*. «Փրկության մկրտությունը պետք է կատարվի ոչ այլ կերպ, եթե ոչ՝ հանուն Ամենաբարձրյալ Երրորդության, այսինքն՝ Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունների արտասանությամբ»:

դ. *Սուրբ Կիպրիանոս*. «Ինքը՝ Քրիստոս, պատվիրեց մկրտել ամբողջ Երրորդության անունով՝ միասին (միաժամանակ)»:

ե. *Սուրբ Աթանաս*. «Ով Երրորդությունից ինչ-որ բան անջատում է և մկրտվում է միայն Հոր կամ միայն Որդու անունով կամ Հոր և Որդու անունով՝ առանց Հոգու, նա ոչինչ չի ստանում..., քանի որ ամբողջականացումը Երրորդությամբ է»:

զ. *Սուրբ Բարսեղ Մեծ*. «Հավատն ու մկրտությունը փրկության երկու միջոցներ են՝ միմյանց ազգակից և անբաժանելի, քանի որ հավատն ամբողջացվում է մկրտությամբ, իսկ մկրտությունը հիմնավորվում է հավատով, թե՛ մեկը, թե՛ մյուսն իրականանում են միևնույն անունով: Ինչպես որ հավատում ենք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն, այնպես էլ մկրտվում ենք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Եվ ինչպես նախորդում է փրկության առաջնորդող խոստովանությունը, այնպես էլ հաջորդում է մկրտությունը՝ իրենով կնքելով մեր համաձայնությունը խոստովանության համար»:

Դ. Վկայում են նաև Գրիգոր Նյուսացին, Սուրբ Ամբրոսիոսը, Սուրբ Կյուրել Ալեքսանդրացին, Հերոնիմոս Երանելին, Օգոստինոս Երանելին և ուրիշներ: Սուրբ Գրքի այն տեղերի մասին, որոնց մեջ հիշատակվում է «Քրիստոսով» մկրտությունը (Ա Կորնթ. Ա 2, 13), կամ «Հիսուս Քրիստոսի անունով» (Գործք Բ 38, Ը 16, Ժ 48, ԺԹ 5), պետք է նկատել, որ այդ հատվածները, Եկեղեցու ուսուցիչների մեկնությամբ, բոլորովին էլ ցույց չեն տալիս, թե իբրև մկրտությունը երբևէ կատարվել է կամ կարող

է կատարվել առանց Սուրբ Երրորդության հիշատակության: Քանի որ՝

ա. «Քրիստոսով մկրտվել» արտահայտությունը նշանակում է միայն մկրտվել այն մկրտությամբ, որ հաստատել է Հիսուս Քրիստոս, և ոչ թե Հովհաննեսի կամ ուրիշ մեկի, այլ քրիստոնեական (մկրտությամբ)՝ Սուրբ Երրորդության անունով: «Հիսուս Քրիստոսով մկրտվել,- ասում է Սուրբ Եվլոգիոս Ալեքսանդրացին,- նշանակում է մկրտվել Հիսուս Քրիստոսի պատվիրանով և ավանդությամբ, այսինքն՝ Հորով, Որդով և Սուրբ Հոգով»: Եվ, իրապես, Գործք Առաքելոցում նշվում է, որ Հովհաննեսի մկրտությամբ մկրտվածներից և Սուրբ Հոգու պատգամները չընդունածներից ոմանք հետո մկրտվել են, որպեսզի արժանանային այդ պարգևներին՝ «Հիսուս Քրիստոսի անունով» (Գործք ԺԹ 4-5), ինչը, ակնհայտ է, կարելի է հասկանալ այսպես. մկրտվեցին Քրիստոնեական մկրտությամբ:

բ. «Մկրտվել Հիսուս Քրիստոսի անունով» արտահայտությունը ոչ միայն չի ժխտում, այլև ընդհակառակը, ենթադրում է նաև Հոր և Սուրբ Հոգու անունը, որն Ամենասուրբ Երրորդության բոլոր անձերի համար, Իրենց էության և Աստվածության տեսանկյունից մեկ է և անբաժանելի: «Որևէ մեկին,- գրում է Սուրբ Բարսեղ Մեծը,- թող չշփոթեցնի այն, որ Առաքյալը հիշատակելով մկրտության մասին, հաճախ լռում է Հոր և Սուրբ Հոգու անվան մասին, և ոչ ոք չպետք է եզրակացնի, որ անուններ տալը չպետք է պահել»: Ասված է. «Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք» (Գաղ. Գ 27), և ապա՝ «Մենք բոլորս, որ մկրտվեցինք Հիսուս Քրիստոսով, Նրա մահով է, որ մկրտվեցինք» (Հռոմ Զ 3): Դա այն պատճառով է, որ Քրիստոսի անունը տալն ամեն ինչի խոստովանությունն է: Այն մատնանշում է թե՛ օծող Աստծուն, թե՛ օծվող Որդուն և թե՛ Հոգու օծությունը, ինչպես սովորեցնում է մեզ Սուրբ Պետրոսը (Գործք Ժ 38): Կամ ինչպես հասկանում է Եկեղեցու մեկ այլ հին ուսուցիչ. «Պահպանելով Քրիստոսի հավատի իսկությունը և իմանալով, որ Երրորդության անունը մեկ է, նա (Սուրբ Պետրոս Առաքյալը) արդար վարվեց նաև այն դեպքում, երբ ասաց. «Երկնքի տակ չկա մարդկանց տրված այլ անուն, որով կարելի լինի, որ մենք փրկվենք», բացի Քրիստոսի անունից (Գործք Դ 12), (արդար վարվեց) նաև այն դեպքում, երբ, սովորեցնելով մկրտվել Հիսուս Քրիստոսի անունով, մկրտում էր Հոր և Որդու և Սուրբ Հոգու միասնական անունով, քանի որ Երրորդության մեջ, որտեղ ըստ բնության ամբողջական միասնություն է, չկա անվան որևէ բնութենական տարբերություն: Հրաշալի են նաև Սուրբ Հովհան Դամասկացու խոսքերը. «Թեպետև Աստվածային Առաքյալն ասում է, որ մենք Քրիստոսի մահվան մեջ ենք մկրտվում (Հռոմ Զ 5), բայց դրանից չի հետևում, որ այդպիսին պիտի լինի բանաձևումը մկրտության ժամանակ, այլ ցանկանում է ցույց տալ, որ մկրտությունը Քրիստոսի մահվան խորհրդանիշն է, քանի որ մկրտության մեջ եռակի ընկղմումը նշանակում է գերեզմանում Տիրոջ երեքօրյա մնալը: Իսկ Քրիստոսով մկրտվելը նշանակում է մկրտվել՝ հավատալով Նրան, բայց Քրիստոսին հավատալ հնարավոր չէ առանց Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն դավանելու, քանի որ Քրիստոս կենդանի Աստծո Որդին է՝ օծված Հոր կողմից Սուրբ Հոգով... Ինչպիսին պիտի լինեն կոչման խոսքերը, Ինքը Տերը սովորեցրեց Իր աշակերտներին՝ ասելով. «Մկրտեք նրանց Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթ. ԻԸ 19):

Մկրտություն կատարելով ըստ Փրկչի հստակ պատվիրանի՝ Հոր և Որդու և

Սուրբ Հոգու անունով, Սուրբ Եկեղեցին միշտ դատապարտել է նրանց, ովքեր աստվածատուր այդ կարգից շեղվում էին, ինչպես.

ա. Անանուն հերետիկոսներին, որոնք մկրտում էին երեք Հայրերի կամ երեք Որդիների կամ երեք Մխիթարիչների անունով.

բ. Շատ գնոստիկների ու եվնոմեականների՝ Քրիստոսի մահվան մեջ մկրտված.

գ. Մարկոսյանականներին, որոնք մկրտում էին ամեն ինչի անտեսանելի Հոր անվամբ, ամեն ինչի մոր՝ ճշմարտության, Քրիստոսի, որ իջավ Հիսուսի վրա, որպեսզի միանա Նրա հետ ու Նրա հետ հրաշքներ և քավություն կատարի.

դ. Եվնոմեականների, որ մկրտում էին Արարչի կամ անստեղծ Աստծո և արարված Որդու և Հոգու՝ օծողի՝ Որդու միջոցով ստեղծվածի և նրան ենթակայի անունով:

Մկրտության խորհրդի անտեսանելի ներգործությունը և նրա (խորհրդի) անկրկնելիությունը

Ա. Բայց միննույն ժամանակ, երբ երախան տեսանելիորեն ընկղմվում է մկրտության ջրերի մեջ՝ «Տիրոջ ծառան մկրտվում է ... Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» բառերի արտասանությամբ, Տիրոջ օգնությունն անտեսանելի ազդում է մկրտվողի ամբողջ էության վրա և.

Ա. Վերածնունդ է նրան կամ վերստեղծում, ինչպես նախավկայեց Ինքը՝ Քրիստոս Փրկիչը՝ Նիկոդեմոսի հետ զրույցի մեջ. «Հիսուս պատասխանեց և ասաց նրան. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթե մեկը վերստին չծնվի, չի կարող Աստծո արքայությունը տեսնել»: Նիկոդեմոսը նրան ասաց. «Ինչպե՞ս կարող է ծնվել մի մարդ, որ ծեր է. միթե կարելի՞ է իր մոր որովայնը կրկին անգամ մտնել ու ծնվել»: Հիսուս պատասխան տվեց և ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթե մեկը ջրից ու Հոգուց չծնվի, չի կարող Աստծո արքայությունը մտնել. որովհետև մարմնից ծնվածը մարմին է, Հոգուց ծնվածը՝ հոգի» (Հովհ Գ 3 - 6): Այդ պատճառով էլ Սուրբ Պողոսը մկրտությունն անվանում է «վերստին ծննդյան ավագան» (Տիտ. Գ 5):

Բ. Մաքրում է ամեն տեսակ մեղքից, արդարացնում ու սրբացնում: Դա երևում է.

ա. Տիրոջ՝ Նիկոդեմոսի հետ այն նույն զրույցից, որտեղ հստակ արտահայտվում է, որ ինչպես մկրտությունից առաջ մենք լինում ենք «մարմին»՝ լինելով մարմնից ծնված, այսինքն՝ հենց մեր ծնողներից ունենում ենք ժառանգած մեղսավոր անմաքրություն, որ խանգարում է մեզ մտնել Աստծո արքայությունը, ճիշտ այդպես էլ մկրտության խորհրդի մեջ. ծնվելով Հոգուց՝ մենք դառնում ենք «հոգի», այսինքն մաքրվում ենք նախածնողների մեղքից կամ մարմնական անմաքրությունից, որի արդյունքում էլ մտնում ենք Աստծո արքայություն.

բ. Սուրբ Պետրոս Առաքյալի խոսքերից. «Ապաշխարեցե՛ք և ձեզանից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար» (Գործք Բ 38), «Մկրտությունն էլ ապրեցնում է ձեզ ոչ թե մարմնի կեղտը հեռացնելու համար, այլ որպես մաքուր խղճով հանձնառություն առ Աստված» (Ա Պետ. Գ 21):

գ. Վերջապես, Սուրբ Պողոս Առաքյալի վկայությունից. «Քրիստոս սիրեց Եկեղեցին և իր անձը մատնեց նրա համար, որ սրբացնի ավագանի մաքրությամբ՝ խոսքով, որպեսզի նա իր առաջ փառավոր կերպով կանգնեցնի Եկեղեցին, որ ոչ մի արատ կամ աղտեղություն կամ նման բաներից ոչինչ չունենա, այլ լինի սուրբ և անարատ» (Եփես. Ե 25 - 27), որտեղ «ավագանի մաքրությամբ՝ խոսքով», այսինքն՝ հայտնի խոսքերի արտասանությամբ անվանվում է հենց մկրտության խորհուրդը։ Եվ մի ուրիշ վկայությունից. «Եվ դուք, գոնե ոմանք, այդպիսիք (մեղավորներ) էիք. բայց լվացվեցիք, մաքրվեցիք, արդարացվեցիք մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով և մեր Աստծո հոգով» (Ա Կոր. Զ 11)։ Այսպիսով, մկրտությունը ոչնչացնում է բոլոր մեղքերը. մանուկների մեջ՝ աղամականը, իսկ մեծերի մեջ՝ ն՝ աղամականը, ն՝ կամայականը, և՝ վերադարձնում է մարդուն այն սրբակեցությունը, որ նա ուներ անմեղության մեջ։

Բ. Դարձնում է Աստծո զավակ և Քրիստոսի մարմնի՝ Եկեղեցու անդամ. «Բոլորդ էլ, -ասում է քրիստոնյաներին Սուրբ Առաքյալը, - Աստծո որդիներ եք հավատով ի Հիսուս Քրիստոս։ Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք...որովհետև դուք ամենքդ մեկ եք ի Հիսուս Քրիստոս» (Գաղ. Գ 26, 27, 28)։ Եվ մի ուրիշ տեղում էլ. «Քանզի մեկ հոգով մեկ մարմին լինելու համար մկրտվեցինք մենք ամենքս՝ թե՛ հրեաներ, թե՛ հեթանոսներ, թե՛ ծառաներ, թե՛ ազատներ, և բոլորս էլ այդ մեկ Հոգին խմեցինք» (Ա Կոր. ԺԲ 13. հմմ. Գործք Բ 41, Հռոմ. Զ 3 - 5)։

Գ. Փրկում է մեղքի համար հավիտենական պատիժներից և դարձնում է հավիտենական կյանքի ժառանգորդներ։ «Ով հավատա, - ասում է Փրկիչը, - և մկրտվի, պիտի փրկվի, և ով չհավատա, պիտի դատապարտվի» (Մարկ. ԺԶ 16)։ «Ոչ այն արդարության գործերի համար, որ մենք արեցինք, այլ իր ողորմության համաձայն փրկեց մեզ վերստին ծննդյան ավագանի միջոցով (այսինքն մկրտությամբ) և նորոգությամբ Սուրբ Հոգու, որ Աստված թափեց մեզ վրա առատությամբ մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի միջոցով, որպեսզի Նրա շնորհով արդարացված ժառանգներ լինենք հավիտենական կյանքի հույսով» (Տիմ. Գ 5-7, հմմ. Ա Պետր. Գ 21)։

Շնորհի բոլոր այս գործողությունները մկրտության խորհրդի մեջ միմյանցից անբաժանելի են։ Վերաճնելով մարդուն՝ այն դրանով իսկ մաքրում է ամեն տեսակ մեղքերից, արդարացնում և սրբացնում։ Մաքրելով մեղքերից՝ հենց դրանով փրկում է մեղքերի համար հավիտենական պատիժներից։ Իսկ արդարացնելով Աստծո առաջ և սրբացնելով՝ հենց դրանով դարձնում է Աստծո զավակ, Քրիստոսի մարմնի անդամ և հավիտենական կյանքի ժառանգորդ։

Ճիշտ այդ ձևով մկրտության խորհրդի անտեսանելի գործողությունների մասին ուսուցանում են Սուրբ Հայրերը և Եկեղեցու ուսուցիչները.

Սուրբ Բառնաբաս. «Մկրտությունն ավանդվում է հանուն մեղքերի թողության։ Մենք ջուրն ենք մտնում ծանրացած մեղքերով և անմաքրությամբ, իսկ դուրս ենք գալիս՝ սրտում երկյուղ և հույս պտղաբերելով»։

Սուրբ Հուստինոս. «Պիտի ձգտեմ, որ դուք ճանաչեք, թե ի՞նչ ճանապարհով կարող եք հասնել մեղքերի թողության և ստանալ ավետյաց բարիքները ժառանգելու հույսը։ Սրան հասնելու այլ ճանապարհ չկա, բացի այն ճանապարհից, որ ճանաչելով Քրիստոսին և մկրտությամբ լվացվելով հանուն մեղքերի թողության, հետո

սկսեք ապրել անմեղությամբ»:

Կդեմես Ալեքսանդրացի. «Ընկղմված լինելով (ջրի մեջ)՝ մենք լուսավորվում ենք, լուսավորվելով՝ որդեգրվում ենք Աստծուն, որդեգրվելով՝ դառնում ենք կատարյալ, և դրա միջոցով՝ անմահ. «Ես ասացի,- ասում է,- բոլորդ էլ որդիներ եք Բարձրյալի» (Սաղմ. ԶԱ 6): Այս գործողությունը հավասարապես անվանվում է շնորհ, լուսավորություն և ավագան. ավագան, որի միջոցով մենք լվացվում ենք մեղքերից, շնորհ, որով մեզ թողնվում են մեր մեղքերի պատիժները, լուսավորություն, որով մենք նախում ենք սուրբ և փրկարար լույսին, այսինքն՝ հստակ տեսնում ենք Աստվածայինը...»:

Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացի. «Մեծ բան է մկրտությունը: Այն գերյալների փրկությունն է, մեղքերի թողությունը, մեղքերի մահը, հոգու վերածնունդը, լուսավոր զգեստը, սուրբ, անխորտակելի կնիքը, երկնքի սանդուղքը, դրախտային միաթարությունը, արքայության բարեխոսությունը, որդեգրության պարգևը»:

Սուրբ Բարսեղ Մեծ. «Մկրտությունը գերյալների փրկությունն է, պարտքերի շնորհումը, մեղքի մահը, հոգու վերածնությունը, լուսավոր զգեստը, անձեռնմխելի կնիքը, երկնքի կառքը, արքայության նախապատրաստումը, որդեգրության ընծայումը»:

Սուրբ Գրիգոր Աստվածաբան. «Մկրտության շնորհն ու ուժը չեն հեղեղում աշխարհը, ինչպես հնում, այլ մաքրում են մեղքն ամեն մարդու մեջ և ամբողջությամբ լվանում ամեն անմաքրություն և պղծություն, որ մտել են ի ծնե... Օժանդակելով առաջին ծննդին (Հոգով մկրտության)՝ հներից մեզ նոր է դարձնում, մարմնականներից, ինչպիսին ենք այժմ՝ Աստվածանման՝ եփելով առանց կրակի և վերստեղծելով առանց քանդելու»: «Մկրտության ավագանը տալիս է գործված և ոչ թե գործվելիք մեղքերի թողություն... Մկրտությունը ջնջելով մեղքերը՝ չի ոչնչացնում վաստակը... Եվ այսպես մկրտվելու ենք, որպեսզի հաղթենք, հաղորդակցվենք մաքրագործող ջրերին, որոնք մաքրում են ավելի լավ, քան մշտիկը, առավել, քան օրենքի արյունը, որոնք ավելի սուրբ են, քան հորթի երինջը, (Եբր. Թ 15), որ ցողում էր պղծվածներին՝ զորություն ուներ միայն ժամանակավորապես մաքրելու մարմինը և ոչ թե կատարելապես ոչնչացնելու մեղքը»:

Սուրբ Հովհան Ոսկեբերան. «Բոլորին մաքրում է մկրտության շնորհը, լինի դա իգացող թե անառակ, կռապաշտ թե մի ուրիշ որևէ մեծ մեղավոր, և թեկուզև իր մեջ պարունակած լինի մարդկային ամեն չարիք, ընկղմվելով մկրտության ավագանը՝ նա դուրս է գալիս Աստվածային ջրից ավելի մաքուր, քան արևի ճառագայթներն են: Դուրս գալով այս ավագանից՝ դառնում է ոչ միայն մաքուր, այլև սուրբ և արդար, քանի որ Առաքյալը պատվիրեց ոչ միայն «լվացվել», այլ նաև «սրբվել և արդարանալ» (Ա Կոր. Զ 11)... Մկրտությունը ոչ թե ուղղակի թողնում է մեզ մեր մեղքերը ու մաքրում անօրենությունից, այլ ասես մենք նորից ենք ծնվում, քանի որ այն (մկրտությունը) նորից է ստեղծում և կազմավորում մեզ»:

Նման մեկնություն կարելի է գտնել Թեոփիլոս Անտիոքացու, Ամբրոսիոսի, Գրիգոր Նյուսացու, Օգոստինոսի, Թեոդորիտի և շատ ուրիշների երկերում:

Բ. Մկրտության խորհրդից հավատացյալների հոգում ծագած այդպիսի գործողությունների արդյունքում Ուղղափառ Եկեղեցին, հետևելով Աստծո խոսքին (Եփես

Դ 6), մեզ սովորեցնում է դավանել «մեկ մկրտություն», մեկ՝ այն իմաստով, որ մկրտությունը յուրաքանչյուր մարդուն տրվում է միայն մեկ անգամ և եթե ճիշտ է կատարվել, ոչ ոքի համար կրկնվել չի կարող, քանի որ այդ խորհուրդը բուն իմաստով «ծնում է» մեզ հոգևոր ծնունդով (Հովհ. Գ 5): Բայց ինչպես բնական կյանքի համար յուրաքանչյուր մարդ կարող է ծնվել միայն մեկ անգամ, ճիշտ այդպես էլ հոգևոր կյանքի համար, ինչպես բնական ծննդի ժամանակ, մեզանից յուրաքանչյուրը բնությունից ստանում է որոշակի տեսք, կերպարանք, որ մեզ հետ ընդմիջտ մնում է, ճիշտ այդպես էլ մեր հոգևոր ծննդի ժամանակ: Մկրտության խորհուրդը յուրաքանչյուրի վրա «անջնջելի» կնիք է դնում, որը մկրտվողի վրա մշտապես մնում է, թեկուզև նա մկրտությունից հետո հազարավոր մեղքեր գործի կամ նույնիսկ հավատքից ուրանա:

Մկրտությամբ յուրաքանչյուր մարդու վրա դրվող այդ անջնջելի կնիքի մասին Առաքելական կանոնների հետ միաբերան խոսում են Եկեղեցու հին ուսուցիչները՝ Հերմեոսը, Կղեմես Ալեքսանդրացին, Կարթագենի Ա Ժողովի (418 թ.) բոլոր մասնակիցները, Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացին, Սուրբ Հովհան Ոսկեբերանը, Հերոնիմոս Երանելին, Օգոստինոս Երանելին և ուրիշներ: Ապա Եկեղեցու հին ուսուցիչները քարոզում էին նաև մկրտության անկրկնելիության մասին: Օրինակի համար ցույց կտանք (հետևյալ) խոսքերը.

Ա. *Տերտուլիանոս*. «Երկրորդ անգամ մկրտվել չի կարելի»:

Բ. *Հովհան Ոսկեբերան*. «Մենք Նրա (Քրիստոսի) մկրտությամբ ի մահ թաղվեցինք, հետևաբար, ինչպես անհնար է, որ Քրիստոս երկրորդ անգամ խաչվի, այնպես էլ անհնար է երկրորդ անգամ մկրտվելը...»:

Գ. *Սուրբ Եփրեմ Ասորի*. «Տերն իր աշակերտներին պատվիրեց, որ միայն մեկ անգամ ջրով մաքրեն մարդկային բնության մեղքերը»:

Դ. *Թեոդորիտ Երանելի*. «Ինչպես մի անգամ Նա ենթարկվեց չարչարանքների, այնպես էլ մենք միայն մեկ անգամ կարող ենք հաղորդակից լինել Նրա չարչարանքներին, իսկ մենք Նրա հետ ենք թաղվում և Նրա հետ հառնում մկրտության միջոցով, հետևաբար չպետք է երկրորդ անգամ մկրտություն ընդունել»:

Ե. *Սուրբ Հովհաննես Դամասկացի*. «Մենք դավանում ենք մեկ մկրտություն՝ հանուն մեղքերի թողության և հավիտենական կյանքի, քանի որ մկրտությունը խորհրդանշում է Տիրոջ մահը, և մենք մկրտության միջոցով թաղվում ենք Տիրոջ հետ, ինչպես ասում է Երանելի Առաքյալը (Հռոմ Զ 4, Կողոս. Բ 12): Այսպիսով, ինչպես Տերը մեկ անգամ մեռավ, այնպես էլ մեկ անգամ պետք է մկրտվել, իսկ մկրտվելն էլ՝ ըստ Տիրոջ խոսքի. «Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթ. ԻԸ 19)՝ սրանով սովորելով դավանել Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն: Եվ այսպես բոլոր նրանք, ովքեր մկրտված լինելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով և սովորած (լինելով) դավանել մեկ Աստծո էություն՝ երեք դեմքով, նորից են մկրտվում, բոլոր այդպիսիները նորից են խաչում Քրիստոսին՝ աստվածային Առաքյալի խոսքերի համաձայն (Եբբ. Զ 4-6):

Այսպիսով բոլորը, նույնիսկ հերետիկոսները կողմից մկրտվածները, եթե միայն ճիշտ՝ Սուրբ Երրորդության անունով են մկրտվել, ըստ Եկեղեցու հին կանոնների, չէին կրկնամկրտվում, երբ վերադառնում էին Ուղղափառ Եկեղեցի, և այժմ էլ չեն

կրկնամկրտվում, այլ միացվել և միացվում են ձեռք դնելով կամ Օծման խորհրդի միջոցով: Մկրտություն կրկին կատարվել և կատարվում է միայն նրանց համար, ովքեր նախքան այդ ոչ ճիշտ՝ ոչ Ամենասուրբ Երրորդության անունով են մկրտվել, ինչպես որ Տերն է սահմանել, և որոնք, հետևաբար, ընդհանրապես այդ խորհրդի շնորհներին չեն արժանացել:

Մկրտության անհրաժեշտությունը բոլորի համար. Մանուկների մկրտություն. Արյամբ մկրտություն

Ա. Դատելով մկրտության խորհրդի շնորհական ներգործությունից՝ բնական է եզրակացնել, որ այն անհրաժեշտ է բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են մաքրվել մեղքերից, դառնալ Աստծո զավակ, հասնել հավիտենական փրկության: Եվ այդ անհրաժեշտությունը՝

ա. Վկայել է ինքը՝ Քրիստոս Փրկիչը, երբ ասել է. «Եթե մեկը ջրից և Հոգուց չձնվի, չի կարող Աստծո արքայություն մտնել» (Հովհ. Գ 5): «Ով հավատա և մկրտվի, պիտի փրկվի, և ով չհավատա, պիտի դատապարտվի» (Մարկ. ԺԶ 16): Բառերն այնքան հստակ ու որոշակի են, որ չեն պահանջում ոչ մի բացատրություն:

բ. Վկայել են Սուրբ Առաքյալները: Սուրբ Պետրոսը, այն բանից հետո, երբ նրա առաջին քարոզը լսողներից շատերը զոջացին իրենց սրտերում և հարցրեցին նրան և մյուս Առաքյալներին. «Ինչ պիտի անենք, եղբայրներ՝ ր», պատասխանեց (Պետրոսը). «Ապաշխարեք, և ձեզանից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և պիտի ընդունեք Սուրբ Հոգու պարգևը» (Գործք Բ 37- 38): Եվ, ընդհանրապես, մկրտությունը համարվում էր այնքան անհրաժեշտ յուրաքանչյուրի համար, որ մկրտվել ուսուցանում էին նույնիսկ նրանց, ովքեր մինչ մկրտությունն արժանացել էին Սուրբ Հոգու պարգևներն ընդունելուն (Գործք Ժ 45-48): Աստծո կողմից կատարված մեր փրկության մեծ գործի մասին խոսելիս Սուրբ Պողոսն ասվում է, թե Քրիստոս «Իր անձը մատնեց Եկեղեցու համար, որ սրբացնի ավագանի մաքրությամբ՝ խոսքով» (Եփես. Ե 25, 26), և որ Նա «փրկեց մեզ վերստին ծննդյան ավագանի միջոցով և ներգործությամբ Սուրբ Հոգու» (Տիմ. Գ 5), այսինքն՝ մկրտության խորհուրդը մեր կողմից ճանաչվում է փրկության համար անհրաժեշտ պայման:

գ. Միահամուռ կերպով ճանաչել և խոստովանել են Սուրբ Հայրերը և Եկեղեցու ուսուցիչները : Բազմաթիվ վկայություններից կմատնանշենք հետևյալ խոսքերը.

Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացի. «Երբ ջուրը մտնես, դա հասարակ ջուր մի պատկերացրու, այլ Սուրբ Հոգու ներգործությունից փրկություն սպասիր, քանի որ առանց մեկի կամ մյուսի դու չես կարող կատարելության հասնել: Այս բանը ոչ թե ես եմ ասում, այլ Տեր Հիսուս Քրիստոս, Ով այս գործում իշխանություն ունի: Նա ասում է. «Եթե մեկը վերստին չձնվի ջրից և Հոգուց, չի կարող Աստծո արքայություն մտնել» (Հովհ. Գ 5) բառերը: Նա, ով մկրտվում է ջրով, բայց չի արժանանում Հոգուն, չունի կատարյալ շնորհ, նա, ով թեկուզև բարի է եղել գործերով, բայց ջրի դրոշմ չի ստացել, չի մտնի երկնքի արքայություն: Ասվածը հանդուգն է, բայց իմը չէ, քանի որ

այդպես սահմանեց Հիսուս: Եվ ահա Սուրբ Գրքում դրա վկայությունը. «Կոռնելիոսն արդար մարդ էր՝ արժանացած հրեշտակային տեսիլքի. նրա աղոթքներն ու ողորմությունը երկնքում Աստծո առաջ հրաշալի պլան էին ներկայացնում: Պետրոսը եկավ, և Հոգին հեղվեց հավատացյալների վրա, և նրանք սկսեցին խոսել ուրիշ լեզուներով և մարգարեանալ. իմիջիպալոց, Սուրբ Գիրքն ասում է, որ այս հոգևոր շնորհները ստանալուց հետո էլ Պետրոսը հրամայեց նրանց մկրտվել Հիսուս Քրիստոսի անունով, որպեսզի հավատով հոգու վերածնունդից հետո, ջրի միջնորդությամբ շնորհներն ընդունի նաև մարմինը»:

Սուրբ Բարսեղ Մեծ. «Ինչո՞ւ ենք մենք քրիստոնյա: Յուրաքանչյուրն էլ կասի՝ ըստ հավատի: Իսկ ի՞նչ ձևով ենք փրկվում: Նրանով, որ վերածնվում ենք հենց մկրտությամբ տրվող շնորհով, քանի որ ուրիշ ինչո՞վ կարող ենք փրկվել»:

Սուրբ Ամբրոսիոս. «Ոչ ոք ուրիշ կերպ չի մտնում երկնային արքայություն, եթե ոչ՝ մկրտության խորհրդով»: «Տեր Հիսուսի խաչին հավատում է նաև երախան, որով և ինքն էլ խաչակնքվում է, բայց եթե նա չմկրտվի Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով, չի կարող մեղքերի թողություն ստանալ և հոգևոր շնորհների պարգևին արժանանալ»:

Գենադի Մասսիլիացի. «Հավատում ենք, որ միայն մկրտվածների համար է բաց փրկության ճանապարհը»:

Բ. Այսպիսով, եթե մկրտությունն անհրաժեշտ է բոլոր մարդկանց համար, որպես Աստծո արքայություն տանող միակ դուռ, այդ խորհուրդը պիտի տրվի ոչ միայն մեծահասակներին, այլև մանուկներին՝ հակառակ մի քանի աղանդների սուտ ուսուցման (անաբապտիստներ և ուրիշներ), քանի որ.

ա. Մանուկներն էլ են ունակ երկնքի արքայության և Սուրբ Հոգով սրբվելու:

«Թու՛յլ տվեք այդ մանուկներին,- ասաց Փրկիչն Իր աշակերտներին,- և մի՛ արգելեք, որ նրանք Ինձ մոտ գան, որովհետև երկնքի արքայությունն այդպիսիներին է» (Մատթ. ԺԹ 14, հմմ ԺԸ 13, Մարկ. Ժ 15, Ղուկ. ԺԸ 15): Եղել են դեպքեր, երբ Աստված սրբում ու լցնում էր մանկանը Սուրբ Հոգով արդեն մոր որովայնում, օրինակ՝ Երեմիային (Երեմիա Ա 5), Հովի. Կարապետին (Ղուկ Ա 15, 41):

բ. Մանուկներն էլ խորթ չեն նախածնողների (ադամական) մեղքին և ուրիշ ձևով չեն կարող մաքրվել նրանից և մտնել Աստծո արքայություն, քան միայն մկրտության միջոցով: Հայտնի է Տիրոջ խոսքը. «Եթե մեկը ջրից ու Հոգուց չծնվի, չի կարող Աստծո արքայություն մտնել, որովհետև մարմնից ծնվածը մարմին է» (Հովի. Գ 5, հմմ. Հռոմ Ե 12, 18):

գ. Հին Կտակարանում թլփատությունը, որի միջոցով իսրայելացիներն ուխտի մեջ մտան Աստծո հետ, Նրա հրամանով կատարվում էր նաև մանուկներին (Օննդ. ԺԷ 12): Բայց հինկտակարանային թլփատությունը մկրտության խորհրդի նախատիպն էր, որի միջոցով մենք ուխտի մեջ ենք մտնում Աստծո հետ Նոր Կտակարանում (Կողոս. Բ 11-12, Գաղ. Գ 26-29): Հետևաբար, եթե Հին Կտակարանում Աստված Ինքը մանուկներին էլ կարող ճանաչեց Իր հետ ուխտի մեջ մտնելուն, ապա ինչո՞ւ նրանց զրկել այդ շնորհից Նոր Կտակարանում:

դ. Սուրբ Առաքյալները երբեմն մկրտում էին ամբողջական ընտանիքներ, օրինակ՝ Լիդիայի «տունը» (Գործք ԺԶ 14-15), Ստեփանոսի «տունը» (Ա Կորնթ. Ա 16) և

մի բանտապետի «ամբողջ տունը» (Գործք ԺԶ 30-39): Բայց ոչ ոք չի կարող պնդել, թե այդ ընտանիքներում եղել են միայն մեծահասակներ, և երեխաներ ու մանուկներ չեն եղել, և ոչ էլ թե երեխաները, եթե եղել են, մնացել են առանց մկրտության: Սուրբ Հայրերը և Եկեղեցու ուսուցիչները թողել են անառարկելի վկայություններ, որ մկրտությունը միշտ կատարվել և պետք է կատարվի նաև երեխաների համար, իսկ ոմանք էլ դա նույնիսկ անվանել են ուղղակի «Առաքելական ավանդություններ»:

Ահա թե ինչպես են ասում, օրինակ.

Սուրբ Իրենիոս. «(Քրիստոս) եկավ Իր միջոցով փրկելու բոլորին. բոլորին՝ նկատի ունեն նրանց, ովքեր նրա միջոցով վերածնվում են Աստծո համար՝ և՛ մանուկներին, և՛ երեխաներին, և՛ պատանիներին, և՛ երիտասարդներին, և՛ ծերերին»:

Որոգիենս. «Եկեղեցին Առաքյալներից ավանդություն է ստացել մկրտություն տալ մանուկներին», «Մանուկները մկրտվում են մեղքերի թողության համար... Քանի որ մկրտության միջոցով մաքրվում են ծննդյան պղծությունները, այդ պատճառով էլ մկրտվում են նաև մանուկները»:

Սուրբ Կիպրիանոս. «Եթե մեծ մեղավորներին ևս, որ նախկինում շատ են մեղանչել Տիրոջ դեմ, երբ հավատում են, տրվում է մեղքերի թողություն, և ոչ մեկի չի մերժվում մկրտությունն ու շնորհը, որքան առավել դա չպետք է արգելել մանկանը, որը հազիվ ծնվելով՝ ոչ մի բանում չի մեղանչել, բացի նրանից, որ սերվելով Ադամի մարմնից՝ ընդունել է հին մահվան վարակը հենց ծնվելու միջոցով, և որը դրանով առավել հարմար կերպով է սկսում մեղքերի թողության ընդունումը, որ նրան ներվում են ոչ սեփական, այլ օտարի մեղքերը: Եվ այդ պատճառով, սիրեցյալ եղբայր, մեր Ժողովի ժամանակ ձևակերպվեց հետևյալ որոշումը. մկրտությունից և շնորհից Աստծո, որ բոլորի նկատմամբ գթասիրտ, բարի, համբերատար է, մենք ոչ ոքի չպետք է հեռացնենք. ինչը պետք է պահել և որին պետք է հետևել բոլորի վերաբերմամբ, այն էլ հատկապես, ենթադրում ենք, նորածին մանուկների նկատմամբ, որոնք արժանի են առավելաբար մեր մասնակցությանն ու Աստծո գթասրտությանը»:

Սուրբ Գրիգոր Աստվածաբան. «Դու մանուկ ունե՞ս: Վնասվածքին զորանալու ժամանակ մի տուր. թող սրբվի մանկական տարիքում և ամենավաղ հասակից նվիրվի Հոգուն: Դու վախենում ես դրոշմից բնական տկարության պատճառով, ինչպես փոքրոգի ու թերահավատ մայր: Սակայն Աննան ծնունդից առաջ էր Սամուելին խոստանում Աստծուն և ծնունդից հետո դաստիարակեց և ընծայեց սրբազան զգեստի համար՝ չերկնչելով մարդկային տկարությունից, այլ՝ Աստծուն հավատալով»:

Կարթագենի Ժողովի (418 թ.) հայրեր. «Ով ժխտում է փոքրերի՝ մոր որովայնից նոր ծնված երեխաների մկրտության անհրաժեշտությունը, կամ ասում է, որ թեև նրանք մկրտվում են մեղքերի թողության համար, բայց նախաճնողական՝ ադամական մեղքից ոչինչ չեն առնում, որ անհրաժեշտ լինեք վերստին ծննդյան լվացմամբ մաքրելուն (որից կհետևեր, որ մեղքերի թողության համար մկրտության կարգը նրանց վրա կիրառվում է ոչ թե իրական, այլ կեղծ նշանակությամբ), նա թող նգովյալ լինի, քանի որ Առաքյալի կողմից նախկինում ասվեց. «Մեկ մարդով մեղքն աշխարհի մտավ և մեղքով էլ՝ մահը, այնպես էլ բոլոր մարդկանց մեջ տարածվեց մահը, որովհետև բոլորն էլ մեղանչեցին» (Հռոմ. Ե 12), պատշաճ է ըմբռնել ոչ այլ կերպ, ե-

թե ոչ՝ այնպես, ինչպես միշտ ընդհանրական Եկեղեցին ամենուրեք սփռված և տարածված, քանի որ, ըստ հավատի այս օրենքի, մանուկներն էլ, իրենք որևէ մեղք գործելու դեռ անկարող, իրոք մկրտվում են մեղքերի թողության համար, որպեսզի վերստին ծննդյան միջոցով նրանց մեջ մաքրվի այն, ինչ որ նրանք փոխ են առել հին ծնունդից» (Կանոն 124):

Օգոստինոս Երանելի. «Դա (մանուկների մկրտությունը) Եկեղեցին միշտ ունեցել է, միշտ պարունակել. դա նա ընդունել է նախնիների հավատից, դրան նա հետևում է միշտ՝ մինչև վերջ»:

Այդպիսի վկայություններ կան Առաքելական կանոններում, Սուրբ Դիոնիսիոս Արիսպագացու, Կղեմես Ալեքսանդրացու, Իսիդոր Պելուսիացու, Ամբրոսիոսի, Հովհան Ոսկեբերանի և այլոց երկերում:

Գ. Այնուամենայնիվ, թեև մկրտությունը բոլոր մարդկանց՝ մանուկների և մեծերի համար անհրաժեշտություն է, բայց լինում են հատուկ դեպքեր, երբ այն, ըստ Ուղղափառ Եկեղեցու դավանանքի, կարող է փոխարինվել մեկ ուրիշ՝ արտակարգ մկրտությամբ՝ «արյան մկրտությամբ» կամ մարտիրոսությամբ: Դա այն ժամանակ է լինում, երբ մեկը, դեռ ջրով և Հոգով մկրտվել չհասցրած, Քրիստոսին հավատալու համար ենթարկվում է հալածանքների. Նրա համար թափում է իր արյունը, ճաշակում մահը և այդ ձևով մկրտվում հենց այն մկրտությամբ, որով մկրտվեց Քրիստոս (Մատթ. Ի 22-23):

Որպեսզի հասկանանք այդ արտակարգ մկրտության ուժը և ներգործությունը, հիշեցնենք.

ա. Փրկչի խոսքը. «Ով որ Ինձ խոստովանի մարդկանց առաջ, Ես էլ կխոստովանեմ նրան Իմ Հոր առաջ, որ երկնքում է» (Մատթ. Ժ 32):

բ. Ուրիշ խոսքեր. «Ով կամենում է ազատել իր անձը, այն պիտի կորցնի, իսկ ով կորցնի իր անձն Ինձ համար և Ավետարանի, պիտի ազատի այն» (Մարկ. Ը 35, հմմտ. Մատթ. Ժ 30, ԺՁ 25), «Երանի նրանց, որ հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ. Ե 10):

գ. Վերջապես, երրորդ խոսքերը. «Իր անհամար մեղքերը կներվեն սրան (մեղավոր կնոջը), որովհետև ուժգին սիրեց» (Ղուկ. Է 47), «Ով Ինձ է սիրում, պիտի սիրվի Իմ Հորից» (Հովհ. ԺԴ 21), «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար: Դուք Իմ բարեկամներն եք, եթե անեք այն, ինչ Ես ձեզ պատվիրել եմ» (Հովհ. ԺԵ 13-14): Իսկ արյամբ մկրտության ժամանակ նահատակներն իրոք դավանում են Քրիստոսին մարդկանց առաջ, Նրա և Ավետարանի համար կործանում են իրենց անձը կամ կյանքը, ճշմարտության համար համբերում են հալածանքներին և վկայում են ամենաառատ և ամենամեծ սերն առ Նա, սեր՝ մահվան աստիճան:

Սուրբ Հայրերը և Եկեղեցու վարդապետները այդպիսի ուժ և կարողություն միաձայն վերագրել են արյան մկրտությանը: Օրինակ.

Սուրբ Գրիգորիանոս. «Թող հայտնի լինի, որ երախաները, (որոնք ենթարկվում են նահատակության), չեն զրկվում մկրտության խորհրդից, քանի որ մկրտվում են արյան փառավորագույն և մեծագույն մկրտությամբ, որի մասին Տերն էլ ասում է, թե Ինքը պիտի այլ մկրտությամբ մկրտվի (Մատթ. Ի 22): Իսկ որ Իր արյամբ մկրտված

և Իր չարչարանքներով սրբված անձինք հասնում են կատարելության և ստանում Աստծո ավետյաց շնորհները, վկայում է նույն Տերն Ավետարանում»:

Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացի. «Ով մկրտություն չի ընդունում, նա փրկություն չունի, բացի մարտիրոսներից, որոնք առանց ջրի (մկրտության) էլ ստանում են երկնքի արքայությունը, քանի որ Փրկիչը, խաչով քավելով տիեզերքը և խոցված լինելով կողից, բխեցրեց այնտեղից արյուն ու ջուր, որպեսզի ոմանք խաղաղության ժամանակ մկրտվեն ջրով, ոմանք էլ հալածանքների ժամանակ մկրտվեն սեփական արյամբ: Մարտիրոսությունն էլ Փրկիչը մկրտություն անվանեց՝ ասելով. «Կարո՞ղ եք խմել այն բաժակը, որ Ես խմելու եմ, կամ մկրտվել այն մկրտությամբ, որով Ես մկրտվելու եմ» (Մարկ. Ժ 38):

Սուրբ Բարսեղ Մեծ. «Ոմանք, բարեպաշտական սխրանքի ժամանակ, իրապես և ոչ թե ընդօրինակաբար, հանուն Քրիստոսի մահն ընդունելով, իրենց փրկության համար արդեն կարիքը չունեին ջուր-խորհրդանիշի՝ մկրտվելով սեփական արյամբ»:

Սուրբ Գրիգոր Աստվածաբան. «Գիտեմ նաև 4-րդ մկրտությունը՝ արյամբ և մարտիրոսությամբ մկրտություն, որով մկրտվեց և ինքը՝ Քրիստոս, որն առավել բարձրահարգ է մյուսներից, որովհետև չի ապականվում նոր անմաքրություններով»:

Չենք բերում Որոգինեսի, Տերտուլիանոսի, Եվսեբեոս Կեսարացու, Ամբրոսիոսի, Հովհան Ոսկեբերանի, Դիդիմոս Ալեքսանդրացու, Օգոստինոսի, Հովհան Դամասկացու և ուրիշների վկայությունները:

Ո՞վ կարող է Մկրտություն կատարել, և ի՞նչ է պահանջվում մկրտվողից

Ա. Մկրտության խորհուրդը կատարելու իշխանությունը, որ սկզբում Փրկչից փոխանցվեց սուրբ առաքյալներին (Մատթ. ԻԸ 19, Մարկ. ԺԶ 16), հնուց Եկեղեցում յուրացվել և յուրացվում է միայն առաքյալների հաջորդների՝ եպիսկոպոսների կողմից, իսկ նրանց միջոցով էլ՝ երեցներին: Դա երևում է.

ա. «Առաքելական կանոններից», որոնցում հիշատակվում է մկրտության խորհուրդը կատարողների մասին՝ ամենուրեք հիշատակելով միայն եպիսկոպոսներին և երեցներին. օրինակ՝ «Եպիսկոպոսը կամ Երեցը եթե վավերական մկրտություն ունեցողին նորից մկրտի, կարգալույծ արվի (Եկեղեցուց)» (Կանոն 47), կամ «Եթե մեկը՝ եպիսկոպոս կամ երեց, մկրտի ոչ ըստ Տիրոջ սահմանման, թող կարգալույծ արվի» (Կանոն 49), և դարձյալ. «Եթե մեկը՝ եպիսկոպոս կամ երեց, երեք ընկղմում չկատարի... թող կարգալույծ արվի» (Կանոն 50)

բ. Առաքելական սահմանադրություն. «Մենք մկրտելու իշխանություն չենք տալիս մյուս կղերականներին, ինչպիսիք են դպիրները, երգեցողները, դռնապանները, սպասավորները, այլ միայն եպիսկոպոսներին և երեցներին, երբ նրանց սարկավագներ են ծառայում»:

գ. Վերջապես՝ Սուրբ Հայրերի և Եկեղեցու ուսուցիչների վկայություններից: Օրինակ.

Սուրբ Բգնատիոս Աստվածագյաց. «Առանց եպիսկոպոսի (այսինքն եպիսկոպո-

սից անկախ՝ առանց նրանից իրավունք ստանալու) չի թույլատրվում ոչ մկրտել, ոչ սիրո ընթրիք կատարել»:

Տերտուլիանոս. «Մկրտություն տալու իրավունք ունի միայն քահանայապետը, որն է եպիսկոպոսը, հետո՝ երեցը՝ սարկավագներով, բայց ոչ առանց եպիսկոպոսի թույլտվության՝ հանուն Եկեղեցու պատվի», և ուրիշներ:

Սարկավագներին երբեմն թույլատրվում է մկրտել ըստ Սուրբ Փիլիպպոս սարկավագի օրինակի (Գործք Զ 5, Ը 12-13, 38), բայց թույլատրվում է միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, երբ եպիսկոպոս կամ երեց չկա:

Տերտուլիանոս. Իսկ հենց սարկավագներին մկրտելու իրավունք երբեմն չէր տրվում. «սարկավագը... չի կատարում մկրտություն», - ասվում է «Առաքելական կանոններում»: «Սարկավագներին, ըստ Եկեղեցու աստիճանակարգության, չի թույլատրվում որևէ խորհուրդ կատարել, այլ միայն ծառայել խորհրդակատարության ժամանակ», - նկատում է նաև *Սուրբ Եպիփանը*:

Ծայրահեղ կարիքի դեպքում մկրտել հավասարապես թույլատրվում է նաև աշխարհականներին (Տերտուլիանոս, Հերոնիմոս), ինչպես որ այժմ էլ թույլատրվում է, և ոչ միայն տղամարդկանց (է թույլատրվում), այլ նաև կանանց: Բայց մնացած բոլոր դեպքերում դա խստիվ արգելվում էր, հատկապես կանանց (Տերտուլիանոս): Եթե կանանց կարելի լիներ մկրտել, - ասում են Եկեղեցու մի քանի վարդապետներ (Եպիփան և այլն), - այդ դեպքում Հիսուս Քրիստոս մկրտություն կընդուներ իր ամենասուրբ Մորից և ոչ թե Հովհաննես Կարապետից: Իսկ կանանց՝ մկրտել թույլատրելու սովորությունը նույնիսկ ոչ կարիքի դեպքում, որ մինչև այժմ գոյություն ունի մեզնից պառակտվածներից ոմանց մոտ, սկզբնապես չարաշահում էր համարվում առաջ եկած մարկիոնական հերձվածում:

Բ. Մկրտության խորհրդին մոտեցող չափահաս մարդկանցից պահանջվում է.

Ա. Հավատ: Այն կարելի է տեսնել հենց Տիրոջ կողմից առաքյալներին տրված պատվիրանից. «Գնացե՛ք, աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, մկրտեցե՛ք նրանց... (Մատթ. ԻԸ 19), «Գնացե՛ք ամբողջ աշխարհով մեկ և քարոզե՛ք Ավետարանը բոլոր մարդկանց: Ով հավատա՛ւ և մկրտվի՛, պիտի՛ փրկվի» (Մարկ. ԺԶ 15-16): Սրանով առաքյալներն առաջին հերթին ձգտում էին մարդկանց ամենուրեք հավատ սովորեցնել (քարոզել) և հետո միայն հավատացողներին էին մկրտում: Այսպես Հոգեգալուստի ժամանակ Սուրբ Պետրոսը հավաքված մարդկանց նախ քարոզեց, և նրանք, «հոժարությամբ ընդունելով նրա խոսքը, մկրտվեցին» (Գործք Բ 41): Այդպես էլ Սամարիայում. «Երբ հավատացին Փիլիպպոսին, որն Աստծո արքայության և Հիսուս Քրիստոսի անվան մասին էր ավետարանում, բոլորը՝ տղամարդիկ և կանայք, մկրտվեցին» (Գործք Ը 12): Այդպես էլ ներքինու դարձի ժամանակ Սուրբ Փիլիպպոսը սկզբից «բացեց իր բերանը և Հիսուսին ավետարանեց նրան», իսկ հետո ասաց. «Եթե քո ամբողջ սրտով հավատում ես, կարելի է (մկրտվել)», և, ըստ ներքինու հավատի խոստովանության, մկրտեց նրան (Գործք Ը 35-38): Նույն այդ ձևով եղավ նաև Կոռնելիոս հարյուրապետի դարձը (Գործք Ժ 34-48), Լիդիայի՝ ամբողջ տնով դարձի (Գործք ԺԶ 14-15), Կրիսպոսի (Գործք ԺԸ 8) և ուրիշների դարձի ժամանակ: Այսպիսով էլ Եկեղեցու երեցները, նրա հիմնադրումից սկսած, յուրաքանչյուրից, որ նախապատրաստվում է մկրտության, ամենից առաջ հավատ էին պահանջում

(Հուստինոս, Հերմես, Հիպպոլիտոս) և այդ նպատակով ջանում էին նախապես նրան սովորեցնել ավետարանական քարոզով, դաստիարակել ճշմարիտ հավատով, փորձել դրանց մեջ և դրանից հետո միայն մկրտել (Կյուրեղ Երուսաղեմացի): Այս պատճառով էլ մինչև այժմ Եկեղեցում, ըստ հին կարգի, այս խորհրդին մոտեցող ցանկացած անձ պարտավոր է բարձրաձայն արտասանել Հավատո Հանգանակը:

Բ. Ապաշխարություն: «Ապաշխարեցեք,- ասում է Սուրբ Պետրոս առաքյալն իր քարոզը լսողներին,- և ձեզանից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և պիտի ընդունեք Սուրբ Հոգու պարգևը» (Գործք Բ 38), «Ապաշխարեցե՛ք և դարձի եկե՛ք՝ ձեր մեղքերը ջնջելու համար» (Գործք Գ 19): Եկեղեցին ևս մկրտության խորհրդին պատրաստվողներից երեցների բերանով ապաշխարություն է պահանջում (Կղեմես Ալեքսանդրացի, Տերտուլիանոս, Կյուրեղ Երուսաղեմացի) և հենց անմիջապես խորհրդի կատարումից առաջ նրանց պատվիրում էր, ինչպես այժմ էլ պատվիրում է, հանդիսավորապես հրաժարվել սատանայից և նրա բոլոր գործերից, այսինքն՝ բոլոր մեղքերից, ախտավորված նախկին ողջ կյանքից:

Իսկ ինչ վերաբերում է մանուկներին, որոնք իրենք դեռ ընդունակ չեն ո՛չ ունենալու, ո՛չ վկայելու իրենց հավատը և ապաշխարելու մկրտությունից առաջ, նրանք մկրտվում են ըստ ծնողների և կնքահոր հավատի, որոնք նրանց անունից արտասանում են թե՛ հավատո խոստովանությունը, թե՛ սատանայից և նրա բոլոր գործերից հրաժարումը՝ Եկեղեցու առաջ միասին պարտավորվելով դաստիարակել մկրտվող երեխաներին հավատով և բարեպաշտությամբ, երբ նրանք հասակ առնեն: Եկեղեցու այս ավանդությունը Սուրբ Դիոնիսիոս Արիսպագացին ծագեցնում է անմիջապես առաքյալներից. «Աստվածային մեր Վարդապետը,- ասում է նա,- հաճեց թույլատրել մկրտություն նաև մանուկներին այն սուրբ պայմանով, որ երեխայի բնական ծնողները նրան հանձնարարեն հավատացյալներից որևէ մեկին, որը նրան լավ կսովորեցնի Աստվածային առարկաները և կհոգա երեխայի մասին որպես հայր՝ ի վերուստ մատնանշված և որպես նրա հավիտենական փրկության պահապան: Հենց այդ մարդուն, երբ նա խոստում տա պատանուն առաջնորդել բարեպաշտական կյանքի, եպիսկոպոսը ստիպում է արտասանել «Հրաժարիմքը» և սուրբ խոստովանությունը»: Մկրտության ժամանակ կնքահոր (դերի) մասին հիշատակում են նաև Տերտուլիանոսը, Օգոստինոսը և ուրիշներ:

*Ռուսերենից թարգմանեց
Չինար Դավթյանը*

ԱՐՄԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԽԱՉԱՏՏՐՅԱՆ

Գեորգյան Հոգևոր Ճեմարանի

(Աստվածաբանական համալսարան)

Ե լսարանի սան

ԴՊՐԱԿԱՆ (SCHOLASTIC) ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԸ

Հայ աստվածաբանության¹ և իմաստասիրության հույժնադարյան անդաստանում իր հանրագիտարանային իմացությամբ, քրիստոնեական փայլուն նկարագրով, անբիծ հավատքով և զարգացվածության բարձր մակարդակով վեր է խոյանում աշխարհալույս վարդապետ, շնորհաշատ րաբունապետ, անհաղթելի իմաստասեր, հմուտ ճարտասան, հանճարեղ մտավորական, եռամեծ սուրբ, անփոխարինելի Հայր Ս. Գրիգոր Տաթևացու առինքնող տիպարը: Անգնահատելի է նրա կատարած ներդրումը և ունեցած բարերար ազդեցությունը հայ եկեղեցական կյանքում թե՛ որպես աստվածաբան, թե՛ որպես իմաստասեր, թե՛ որպես ուսուցիչ և թե՛ որպես մտածող²...

Հայ բազմադարյան մշակույթի, հատկապես միջնադարյան դպրության բնագավառում անուրանալի վաստակ է ունեցել Տաթևի աստվածաբանական դպրոցը³: Գիտաուսումնական այս վիթխարի կայանն իր կրթամշակութային, ազգային-եկեղեցական ջանադիր գործունեությամբ անջնջելի հետք է թողել հայագիտության մեջ:

Խոսելով Ս. Գրիգոր Տաթևացու աշխարհայացքի մասին՝ չենք կարող շրջանցել նրա ուսումնավայր Տաթևի համալսարանը, որը վճռական դեր է խաղացել նրա աշխարհայացքի ձևավորման և գիտական կողմնորոշման գործում: Տաթևյան դպրոցի հիմնադրումն իրավամբ կապվում է Ս. Գրիգոր Տաթևացու ուսուցչի՝ Ս. Հովհան Ռրոտնեցու (1315-1386) անվան հետ: Նա եղել է իր օրերի ամնաազդեցիկ և ճանաչված վարդապետն ու գիտնականը, որին մեծարել են «տիեզերալոյս վարդապետն մեծ»⁴, «լուսաւորիչ Հայկազեան ազգիս»⁵, «րաբունապետն վարդապետաց»⁶ պատվանուններով:

Մատենագրական տվյալների համաձայն՝ Ս. Հովհան Ռրոտնեցին, Գլաձորից հեռանալով, կարճ ժամանակով հաստատվում է հայրենական Ռրոտան գավառում: Այստեղ կազմակերպում է դասընթացներ՝ ի գործ դնելով նախորդիվ ունեցած փորձառությունն ու գիտելիքների հսկա պաշարը: Ստանալով Օրբելյան իշխանական տոհմի անմիջական օգնությունը՝ 1340-ական թթ. իր սաների հետ Ռրոտնեցին տե-

¹ Դպրականության մասին տե՛ս **Արմեն դպիր Խաչատրյան**, Դպրականությունը (scholastica)՝ իբրև կրոնաիմաստասիրություն քրիստոնյա միջնադարում, «Էջմիածին» ամսագիր, 2006, Թ, էջ 73-82:

² Տե՛ս **Արևշատյան Ս.**, Տաթևի փիլիսոփայական դպրոցը և Գրիգոր Տաթևացու աշխարհայացքը, Երևան, 1958: **Թովմայան Ն.**, Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսական հայացքները, Երևան, 1966: **Գրիգորյան Ս.**, Պատմական քերականության հարցեր, Երևան, 2002:

³ Այս մասին հանգամանալից տե՛ս **Պողոսյան Ս.**, Տաթևի համառոտ պատմություն, Երևան, 2007:

⁴ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ **Խաչիկյան Լ.**, Երևան, 1950, էջ 507:

⁵ Անդ, էջ 508:

⁶ Անդ, էջ 520:

ղափոխվում է Տաթևի վանք, որտեղ էլ նախկին վարդապետարանի հիման վրա կյանքի է կոչում Տաթևի մեծահամբավ համալսարանը: Եվ Տաթևն օրավուր հռչակվում էր որպես Սյունյաց աշխարհի բոլոր վանքերի գլուխ: Քիչ օրեր անց Տաթևի դպրոցը մեծ ճանաչում է գտնում, և նրա հանդեպ տածվող հետաքրքրությունը գնալով մեծանում է: Այստեղ հաստատվելով՝ Ս. Հովհան Որոտնեցին տեղի ուսումնաբանը դարձնում է «*մայր դպրոց*», «*կենտրոն ամենայն իմաստնոցի*», «*հրահանգատուր դպրոց*»⁷, որը մեծարվում էր որպես «*երկրորդ Աթենք*»⁸:

1379 թ. նա Տաթևի համալսարանի տնօրինությունը հանձնում է իր քանքարաշատ սաներից Ս. Գրիգոր Տաթևացուն, իսկ ինքը փոխադրվում է Ապրակունյաց վանք՝ միաբարականների դեմ անտեղիտալի պայքար մղելու փուլով: Այսպիսով, մեծ բաբունապետ Ս. Հովհան Որոտնեցու մահից հետո Տաթևի համալսարանի ղեկավարությունն է ստանձնում իր հանճարեղ աշակերտը՝ Ս. Գրիգոր Տաթևացին (1346-1409), որը փայլում էր բացառիկ ընդունակություններով, սրբասեր վարքով, գիտելիքների ահռելի իմացությամբ: Այս միջոցին հեղեղի նման վրա են հասնում լենկթեմուրյան ավերիչ հարձակումները, որոնք ամենուր սփռում են մահ ու կոտորած: Հասկանալի է, որ քաղաքական նման անբարենպաստ պայմաններում անհնար էր Տաթևի ուսումնագիտական կենտրոնի հետագա գործունեությունը: Այդ մղձավանջային օրերին, սակայն, գտնվեց անվեհեր, շրջահայաց, անկոտրում կամքի տեր մեկը, ում հաջողվեց ի մի ամփոփել ցաքուցրիվ եղած ուժերը՝ կազմելով մեկ միասնական բռունցք: Հայ Եկեղեցու այդ օրհնյալ զավակն էր Ս. Հովհան իմաստասեր վարդապետի ջահակիր սան Ս. Գրիգոր Տաթևացին:

Այստեղ կանգ չենք առնի նրա կենսագրական տվյալների վրա, որոնք, այնուամենայնիվ, կարիք ունեն քննախույզ ուսումնասիրության, այլ որովհետև մեր խնդրո առարկան է Տաթևացին՝ իբրև աստվածաբան-իմաստասեր, կանդրադառնանք միայն այս ոլորտներին աղերսվող հարցերին:

Թողնելով ուսումնասիրողների՝ երբեմն հակասական եզրակացությունները՝ գանք-հասնենք Տաթևի իմաստասիրական համալսարանի պատմության մեջ Ս. Գրիգոր Տաթևացու թողած բազմաթյուն ավանդին: Այսպես, 1393 թ. նա բնակություն է հաստատում Տաթևում՝ ժողովելով բազում ուսումնասեր աշակերտներ: Այստեղ հաստատվելու տարվանից մինչև Ս. Գրիգոր Տաթևացու մահը ներհամալսարանական կյանքի ամենափթթուն ժամանակներն են լինում, երբ Հայոց աշխարհի տարբեր ծագերից դեպի Տաթև են ուղևորվում ուսումնաստենչ սաների հոծ բազմություններ:

Տիրող ծանր իրավիճակն ստիպում է Տաթևացուն թողնել դպրոցը և տեղափոխվել Մեծոփա վանք: Նրա հետ են լինում նաև կրթօջախի հարյուրից ավելի սաներ: Մի փոքր ժամանակ այստեղ ապաստանելուց հետո կրկին վերադառնում է Տաթև, որտեղ էլ հայոց «*եօթնալոյս րաբունապետ*», «*երիցս երանեալ վարժապետ*»⁹ Ս. Գրիգոր Տաթևացին առ Աստված է ավանդում իր հոգին: Այսուհետ Տաթևի ուսումնակրթական հաստատությունը բռնում է վայրէջքի ուղին: Ճիշտ է, այն դեռ երկար գոյատևեց, սակայն ոչ այն թափով ու մակարդակով, ինչպիսին առաջ էր: Այսպիսով, «*գիտություններով հարուստ, շեն ու լի միջնադարյան մի համալսարան պատմա-*

⁷ Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 113:

⁸ Ստեփաննոս Օրբելեան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 533:

⁹ Դիվան հայ վիմագրութեան, պրակ Բ, կազմեց՝ Բարխուդարյան Ս., Երևան, 1960, էջ 23-24:

կանոններն կարճ ժամանակամիջոցում դառնում է աղքատիկ, նեղ և անձուկ մի վանական դպրոց, որի դռները փակվում են աշխարհի դիմաց, աշխարհի դռներն էլ՝ նրա առջև»¹⁰: Եվ Տաթևի՝ իր նախատիպը չունեցող կաճառը, օրըստօրե խամրելով, ԺԵ դարի 20-ական թթ. դադարեցրեց իր գործունեությունը:

ԺԴ դարի կեսերին և ԺԵ դարասկզբին Տաթևի համալսարանը՝ կրթամշակութային և ուսումնագիտական տիտանական այդ դարբնոցը, ըստ արժանվույն կազմակերպեց և գլխավորեց աննահանջ պայքարն ընդդեմ միաբարակական շարժման: Այն հայության համար ունեցավ համաժողովրդական նշանակություն, քանզի ջախջախվեցին կրոնական կեղծ դիմակով ծպտված կաթոլիկական հետին նկրտումները, որոնք, ի վերջո, նպատակ ունեին հայության մի ստվար զանգվածի ուծացումը և վերասերման անխուսափելի վտանգը:

Քրիստոնեական միջնադարի աստվածաբան իմաստասերների բույլում իր ինքնատիպությամբ և բազմակողմանի գիտականությամբ հառնում է տիեզերալույս վարդապետ Ս. Գրիգոր Տաթևացին, որն անգնահատելի ներդրում է կատարել հայ աստվածաբանական և իմաստասիրական մտքի բարունակ անդաստանում: Նա միաժամանակ աչքի է ընկնում մանկավարժի, մանրանկարչի, երաժիշտի, լեզվաբանի, բնագետի և, մանավանդ, օրինակելի եկեղեցականի պայծառ նկարագրով: Տաթևացին իր ժամանակի ամենաբեղմնավոր մտածողներից էր, որը շատերին է զարմացրել և դեռ երկար պիտի շարունակի զարմացնել իր իմացական-մտավոր բացառիկ կարողություններով և ուղղափառ վարդապետությամբ: Նա սերունդների սեփականությունն է դարձրել իր գրական անգին ժառանգությունը, որն ադամանդաշարի պես զարդարում է հայ քրիստոնեական մատենագրության բոլոր շերտերը: Նրա առավել ճանաչուն և մեծ ժողովրդականություն վայելող գործերից են «Գիրք Հարցմանց»-ը, «Ամարան» և «Զմեռան» քարոզգրքերը, «Ոսկեփորիկ»-ը, Արիստոտելի, Պորփյուրի, Ս. Դավիթ Անհաղթի երկերի մեկնությունները, Հնգամատյանի, Թագավորաց, Մնացորդաց, Դատավորաց, Սաղմոսաց, Առակաց, Իմաստության, Ժողովողի, Երգ Երգոցի ու աստվածաշնչական այլ գրքերի մեկնողական սքանչելի գոհարները, ինչպես նաև լեզվաբանական, բնագիտական և իմաստասիրական բնույթի զանազան գրվածքները, որոնց մանրակրկիտ լուսաբանումը նոր որակ է հաղորդում հայ աստվածաբանական և իմաստասիրական դպրությանը:

Նրա աշխարհայացքում բավականին ընդարձակ տեղ է զբաղեցնում աստվածաբանությունը, ինչը հասկանալիորեն բնական է քրիստոնեական անանց արժեքներով առաջնորդվող մտավորականի պարագայում: Դպրականների համար առանցքային՝ աստվածաբանության և իմաստասիրության, հավատքի և իմացականության փոխառնչության խնդրում մեծ գիտնականը, ցուցաբերելով յուրահատուկ և միանգամայն ընդունելի մոտեցում, շահեկանորեն զատորոշում է աստվածաբանությունը «արտաքին» գիտություններից: Ըստ նրա՝ աստվածաբանությունն անհունորեն տիրում է հավատքի գործերում և չի դրսևորում ավելորդ հետաքրքրասիրություն գիտության հարցերում: Վերջինս էլ իր հերթին չպետք է միջամտի հավատքի գործերին: Իմաստասիրության առարկան բնությունն է, մինչդեռ հավատքի առարկան աստվածգիտությունն է, իսկ նպատակը՝ աստվածճանաչողությունը. «Աստուած է սկիզբն ամենայն գոյացութեանց, զի ի նմանէ են սկսեալ եւ յառաջ ե-

¹⁰ Գզոյան Ա., Տաթևի համալսարանը, Երևան, 2003, էջ 21:

կեալ ամենայն բնութիւնք արարածոց՝ երեւելեաց եւ աներեւութից»¹¹:

Աստվածաբանության և իմաստասիրության, հավատքի ու բանականության փոխհարաբերության տեսանկյունից եռամեծ վարդապետը նշում է իմացության երկու կերպ՝ «բնական» և «շնորհական»: Եթե առաջինը գործ ունի բնության ու նրա օրենքների հետ, ապա վերջինը բացառապես վերաբերում է հավատին և աստվածային Հայտնութենականությանը: «Բնական» ճանաչողությունը կազմում է Տաթևացու իմաստասիրության ամենաուշագրավ և արժեքավոր մասը:

Դպրական իմաստասերն այս առիթով առաջ է քաշում աշխարհի հնարավոր ճանաչելիության հարցը: Համաձայն տաթևյան իմաստասիրության՝ մարդու բանականությունն ու նրա հինգ զգայարանները¹² լիովին բավարար են աշխարհը ճանաչելու համար: Այսու, «*իմաստուն մտօր թափանց անցանեմք ընդ բնաւ ոլորտս երկնի եւ երկրի եւ ոչ ինչ արտաքոյ մնայ ի լուսոյ իմաստութեան*»¹³: Իմաստասիրությունը մարդուն բնության մեջ շնորհում է ազատություն և ընձեռում հնարավորություն՝ քաղելու ինչպես մարմնավոր, այնպես էլ հոգևոր բարիք: «*Իմաստութեամբ տիրեմք ծովու եւ ցամաքի, եւ բազում բարութիւն հոգւոյ եւ մարմնոյ ի նմանէ ծնանի*»¹⁴:

Անվանի բաբունապետը խոսում է նաև մարդկային բանականության ինքնուրույնության մասին: «*Արդ՝ միտքն անպատկառ եւ աներկիւղ դատաւոր է, զի յԱստուծոյ ոչ երկնչի, վասն զի անձնիշխան է. եւ ի մարդկանէ ոչ ամաչէ, զի ծածուկ է. եւ ոչ առնու կաշառ, զի անկարօտ է*»¹⁵: Այստեղ Տաթևացին ընդգծում է մտքի (բանականության) ինքնիշխանությունը՝ ի տարբերություն «շնորհական» ճանաչողության, ուր միտքն իսպառ մարտիրոսվում է:

Տաթևացին, փաստորեն, աստվածաբանության մեջ, այնուամենայնիվ, որոշակի տեղ հատկացնում է բանականությանը՝ այդպիսով չանտեսելով վերջինիս դերն աստվածաբանական մարզում: Նա գտնում է, որ զգայական անդամները բանականության «գործիք»-ներն են, որոնց անգործության դեպքում չի աշխատում նաև միտքը: Սակայն զգայությունը, մտքի հետ համեմատած, ունի մի շարք թերություններ, քանի որ իր կարողությունները սահմանափակ են, և գործ ունի միայն «*արտաքին*» իրերի հետ. «*Գործ զգայարանացն է զարտաքինս ի ներքս զգար*»¹⁶:

Ձորօրինակ, աչքը տեսնում է լույս ներկան, որի համար խորթ են անցյալն ու ապագան: Այն նկատում է սոսկ մասնավորը, բայց անկարող է գաղափարել ընդհանուրը: Նրան տեսանելի են իրերի քանակն ու որակը, իսկ էությունը վրիպում է նրա տեսադաշտից: Բանականությունը պետք է համարի հենց այս բացթողումները: Սակայն բանականությունն էլ ունի զգայարանների կարիքը, որպեսզի ճանաչելի դարձնի արտաքին աշխարհը: Ավելին, «*հոգի մարդոյն առանց մարմնաւոր օրինա-*

¹¹ Ս. Գրիգոր Տաթևացի, Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, Կ. Պոլիս, 1746, էջ 15:

¹² Ըստ Տաթևացու՝ մարդն ունի հինգ արտաքին և հինգ ներքին զգայարաններ: Արտաքին զգայարաններն են՝ տեսանելիքը, լսելիքը, հոտոտելիքը, ճաշակելիքը և շոշափելիքը: Ներքին զգայարաններն են՝ զգայությունը, երևակայությունը, կարծիքը, տրամախոհությունը և միտքը (Ս. Գրիգոր Տաթևացի, Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 249 (այսուհետ՝ Հարցմանց):

¹³ Ս. Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմերան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 187 (այսուհետ՝ Ձմերան):

¹⁴ Հարցմանց, էջ 178:

¹⁵ Ս. Գրիգոր Տաթևացի, Համառօտ հաւաքումն յԱռակաց գրոցն Սողոմոնի, Պետ. Մատենադարան, ձեռ. հմր 1264, անտիպ, էջ 376: Հմմտ. Դուկ. ԺԸ 2:

¹⁶ Հարցմանց, էջ 179:

կի՝ չկարէ ըմբռնել զիրսն»¹⁷: Իսկ «մարմնաւոր օրինակ»-ի արտածումն առանց զգայության հնարավոր չէ: Ահա թէ ինչու չի կարելի բանականությունն անջատել զգայությունից: Տաթևացին ընդունում է, որ խոսքը հետևում է իրերին, որոնք մեզ են հաղորդվում զգայարանների միջոցով: Բայց նա չի ընդունում, որ բանականության առարկան նույն զգայական իրերն են՝ մեզ տրված վերացարկման (abstractia) միջոցով: Նրա պնդմամբ՝ զգայության և բանականության առարկաներն իրարից տարբերվում են: «Քանզի ներքին մասամբ ի ձեռն զգայութեանց ճանաչէ զերեւելիս, որպէս քար: Եւ կարծեօքն տպաւորէ զնմանութիւնս եւ ի բացեայ, որպէս սպիտակ: Իսկ տրամախոհութեամբ քննէ զիմանալիս, որպէս հրեշտակ: Այլ վերին մասամբ ծայրիս իմացութեան ձկտի յաստուածայինսն՝ հաւատոյն լուսով եւ վկայութեամբ սուրբ գրոց հաստատել: Դարձեալ՝ զգայութեամբ ծանօթանամք որ արտաքոյ քան զմեզ: Եւ խոհեմութեամբ՝ որ ի ներքս ի մեզ: Եւ վերին խոկմամբ՝ որ ի վեր է քան զմեզ՝ ըստ կարողութեան լուսաւորիմք ճառել զանճառէն»¹⁸:

Գոյություն ունի ճանաչողության երեք ճանապարհ՝ հավատքի, իմացականության և զգայականության: Միակ հավաստին և վստահելին հավատքի ճամփան է: Քանզի զգայարանները երբեմն խաբում ու շփոթեցնում են, ինչպես աչքը ծովում արտացոլված լեռը կարող է բեկված տեսնել, կամ ականջին կատվի մլավոցը կարող է մանկան ճիչ հիշեցնել: Նաև մարդու միտքն է հույժ սահմանափակ ու մեղանչական՝ մարմնից կառչած և Աստծուց հեռացած լինելու պատճառով: Մինչ հավատքը երբեք չի սխալվում ու երբեք չի սխալեցնում, այլ անընդհատ հայում է դեպ Աստված...

Ս. Գրիգոր Տաթևացին մերժում է բնածին գաղափարների առկայումը, քանի որ մտքի և հոգու բաղադրույթը ձևավորվում է արտաքին միջավայրի ներգործության շնորհիվ՝ զգայարանների միջոցով. «Հոգի մարդոյն բանական՝ որպէս անգիր պնակիտ է կամ լուացեալ մագաղաթ, որ զինչ գրեն ի վերայ, զայն առնու»¹⁹: Զի «ի բնութենէ բնականապէս մերկ եւ դատարկ եմք յամենայն բարեաց՝ ի մարմնաւորէն եւ ի հոգեւորէն. այլ զամենայն յետոյ ստանամք՝ ... զմարմնոյ պէտն աշխատութեամբ, եւ զհոգւոյն՝ առաքինութեամբ եւ կրթութեամբ»²⁰: Եվ միայն երեք դար հետո Ջոն Լոկն իր, այսպես կոչված, «մաքուր տախտակ»-ի (tabula rasa) տեսությամբ պիտի հաստատի Տաթևացու այս հայտնի միտքը:

Նրա իմացաբանության անկյունաքարը դպրական իմաստասիրության համար դարեր շարունակ վիճաբանության նյութ դարձած ընդհանուրի և մասնավորի փոխառնչակցության հարցն է, ինչը մեծ իմաստասերը լուծում է հոգուտ անվանականության (nominalism): Այսպես, առանձնահատուկը նախորդում է ընդհանուրին՝ հանդիսանալով որևէ իրի կամ երևույթի մասին ընդհանուր հասկացություն կազմելու հիմքը. «Անհատ է՝ մանաւանդ եւ իսկագոյն եւ նախկին գոյացութիւն»²¹:

Իրականում գոյություն ունեն լոկ առանձին, մասնավոր իրերը, քանզի դրանց լրիվությունից է կախված ողջ բնության գոյությունը: Եզակի գոյացությունները գոյություն ունեն անկախ մարդու գիտակցությունից: Իրերի բազմությունն իրական է

¹⁷ Ձմերան, էջ 376:

¹⁸ Հարցմանց, էջ 103:

¹⁹ Ս. Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 454:

²⁰ Անդ, էջ 105:

²¹ Հարցմանց, էջ 550:

այնքանով, որքանով իրական են անհատ գոյացությունները, զի «ամենայն բազմություն ի միակե ժողովի, որպես տեսակ յանհատե, եւ գիծն՝ ի կիտե, եւ բազում թիւք՝ ի միոյն»²²:

Տաթևացին քննադատաբար է խոսում նորալատոնական Պորփյուրի մասին, քանի որ վերջինս խաթարել է առաջին և երկրորդ գոյացությունների փոխհարաբերության խնդրի արիստոտելյան լուծումը²³: Մասնավորն իր մեջ ընդգրկում է ընդհանուրի էական հատկությունները: Ուստի մասնավոր գոյի ճանաչողության ժամանակ մարդու գիտակցականում հետզհետե առաջանում է տվյալ իրի մտածական պատկերը, որն արդեն արտածված է որոշակի առարկայից:

Հանդես գալով անվանականության (նոմինակիստական) դիրքերից՝ Ս. Գրիգոր Տաթևացին ողջամտորեն չի անցնում չափավորության սահմանը: Այսպես, ընդհանուր հասկացություններն իրերի անվանումներն են, որոնք գոյություն ունեն սոսկ մարդու մտքում: Բանականությունն իրերին հաղորդում է անուններ՝ դրանք խմբավորելով ըստ սեռի ու տեսակի: Այլ խոսքով, մասնավորը մարդու մտածողության մեջ պատճառում է ընդհանուր հասկացությունների առաջացումը:

Այսպիսով, քննարկելով ընդհանուր հասկացությունների հետ կապված հարցերի անվանական լուծումները և ուսումնասիրելով Տաթևացու ընկալյալ իմացաբանությունը՝ կարելի է ամբողջական պատկերացում կազմել նրա իմացության տեսության վերաբերյալ:

²² Ս. Գրիգոր Տաթևացի, Տեսութիւն ի բանն մարգարէին, Պետ. Մատենադարան, ձեռ. հմր 1743, անտիպ, էջ 456:

²³ Իրերի առաջացման երևույթը բացատրելու համար Արիստոտելը ներմուծում է նոր հասկացություններ՝ «հնարավորություն» (potencia) և «իրականություն» (energie): Այսու, ամեն մի առաջացում, ըստ նրա, անցում է «հնարավոր» գոյությունից «իրական» գոյության: Արիստոտելի կարծիքով, յուրաքանչյուր իրի առաջացման հիմքում ընկած են չորս պատճառներ՝ նյութ, ձև, շարժում, նպատակ: Քանի որ ձևն ընդգրկում է և՛ շարժում, և՛ նպատակ, ուստի իրերի առաջացման համար հարկավոր են նյութական և ձևական պատճառներ (Մելքյան Զաքարյան, Փիլիսոփայության պատմություն, Երևան, 2000, էջ 74):

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ


ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ,

Պատմական գիտությունների թեկնածու

ՆՈՒՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

«ԱՐՔՈՒՆԻ ՔԱՂԱՔ» ԶԱՐԻՇԱՏԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Վանա լճի հյուսիսային կողմում, Ադի գետի ափին, «Ոսկե բլուր» (քրդերեն՝ Ջեռնակի թեփե) կոչված վայրում (նկ. 1) Չ. Բարնեյն ու Գ. Լավսոնը հայտնաբերեցին մի հին քաղաք, որի միջնաբերդը կառուցված է բարձր բլրի գագաթին, իսկ ստորոտի




ՍԻՅՈՒՆ 1

հարթավայրում՝ ներքին քաղաքը: Բացվել են նախապես մտածված, կանոնավոր հավասարաչափ և փոխադրահայաց հատակագծով տիպային բնակելի տների զանգվածային կառուցապատումով թաղամասեր: Միատիպ քառակուսիների չափերն են 3,50x3,70 մ, արտաքին պատերի լայնությունը՝ 1,40-1,50 մ, իսկ միջնապատերինը՝ 1-1,10 մ: Ուղղագիծ, իրար զուգահեռ կամ ուղղահայաց փողոցների լայնությունը 5 մ է, իսկ գլխավոր փողոցներինը՝ 7 մ: Բացի բնակարանների ցանցից, պահպանվել են նաև քաղաքը շրջափակող պարսպապատի մի հատվածը և միջնաբերդի պարիսպները: Ըստ ուսումնասիրող հեղինակների՝ այն կառուցված է ուրարտական շինարարական արվեստին բնորոշ քառանկյուն զանգվածեղ քարերով: Տեղ-տեղ քարերը շարված են ուղղակի, աստիճանաձև մշակված ժայռի վրա¹: Միա-


¹ Ch. Burney, Urartian Fortresses and Towns in the Van region, Anatolian Studies, VII, 1957, p. 49-50.

տիպ հատակագծով բնակելի թաղամասերը բաղկացած են գրեթե նույն դասավորությամբ երկու խումբ սենյակներից, յուրաքանչյուրում՝ չորս բնակարան (նկ. 2, 3):

Կ. Նիլանդերը², որը հատուկ զբաղվել է տեղանքի ուսումնասիրությամբ, ուշադրություն է դարձրել մշակված ժայռերի վրայի ուղղանկյուն փորված ակոսների



ՍԻ՜՜՜ 2



ՍԻ՜՜՜ 3

(20x30 սմ, խոր.՝ 8-9 սմ) և զանգվածեղ քարերին եղած ծիծեռնակի պոչի նման փոսիկների վրա: Դրանք ծառայել են քարերը ուղղահայաց և հորիզոնական դիրքով, փայտե ներդիրների օգնությամբ իրար հետ ամրացնելու համար: Բլրի ստորոտում տեղավորված քրդական Իշեկլիքեոյ գյուղի բնակարանների պատերի մեջ շարված մեծ քանակությամբ «ծիծեռնակապոչ» կապերի փորվածքներով քարեր կան: Կ.Նիլանդերը ուղղանկյուն և «ծիծեռնակապոչ» կապերով վեմ քարերը համարում է ուրարտական: Գ. Տիրացյանը³ համաձայնվելով ուղղահայաց ամրացման փոսիկների ուրարտական լինելու Կ. Նիլանդերի կարծիքի հետ, գտնում է, սակայն, որ «ծիծեռնակապոչ» ակոսները հելլենիստական շրջանի են:

Կ. Հովհաննիսյանը «Ոսկե բլրի» քաղաքը համարում է ուրարտական, սակայն համեմատում է հետուրարտական դարաշրջանի քաղաքներ Միլեթի, Կնիդոսի, Տիմգադի, Դուրա-Էվրոպոսի և այլ քաղաքների հետ⁴: Նա գտնում է, որ «Ոսկե բլրի» քաղաքը չունի հիշյալ քաղաքներին բնորոշ հասարակական խոշոր հրապարակներ, աշխարհիկ և պաշտամունքային մոնումենտալ և այլ հասարակական կառույցներ իրենց ուղղաձիգ ձևերով և այլն: «Ոսկե բլրի» մոնումենտալ կառույցները, պա-

Ch.Burney, G. Lawson, Measured plans of Urartian Fortresses. *Anatolian Studies*, X, 1960, p. 177-195. Կ. Լ. Հովհաննիսյան, Ուրարտական ճարտարապետությունը, Քաղաքաշինություն, Հայկական ճարտարապետություն, հ. I, Երևան, 1996, էջ 118-121:

² Carl Nylander, Remarks, on the Urartian Akropolis of Zernaki-tepe, *Orientalia Suecana* XIV(1965)-XV(1966), Uppsala, 1966, p. 142-148, Fig. 1,3,5,8,9; Նոյնի, *Uranians in Pasargadae*, Uppsala, 1970, p. 64, note 160.

³ Գ. Ա. Թիրացյան, Новые археологические материалы после урартского времени на территории западной Армении (Турция) и их место в истории древнеармянской культуры, *Древний Восток*, N 2, Ереван, 1976, с. 149-156

⁴ Կ. Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 118-119:

լատները, տաճարները և պարիսպները, ըստ նրա, մյուս ուրարտական քաղաքների նման վեր էին խոյանում կից բլուրների գագաթին իշխելով քաղաքի վրա, ստեղծելով «մեզ արդեն ծանոթ ճարտարապետական ձևերի հակադրամիասնություն»⁵:

Իր նույնատիպ թաղամասերի պատճառով ենթադրվում է, որ այն եղել է գորակայան, որտեղ ապրող զինվորները գտնվում էին պետության խնամքի տակ, այսինքն՝ «Ոսկե բլուրը ուրարտական ռազմաստրատեգիական կենտրոններից մեկն էր»⁶: Ըստ Կ. Հովհաննիսյանի, այն իր հատակագծային հորինվածքով հանդիսանում է հելլենիստական քաղաքաշինության հատակագծման «Հիպոդամյան» սկզբունքների նախատիպը⁷:

Կ. Ղաֆադարյանը գտնում է, որ «Ոսկե բլուրը» ուրարտական այլ հուշարձանների համեմատ շատ տարբեր, խիստ կանոնավոր հավասարաչափ և փոխադրահայաց հատակագծային ցանցով տիպային տներով կառույց է, որի ժամանակը հարկավոր է ճշգրտել⁸:

Այն, որ «Ոսկե բլուրը» եղել է ուրարտական քաղաք, վկայում են միջնաբերդի բազալտե քառանկյուն զանգվածեղ քարերը, որոնք ունեն նույն ձևն ու մշակումը, ինչպես Արգիշտիի խիլիկի և հատկապես դրա արևելյան՝ Արմավիր բլրի ուրարտական պարիսպների քարերը: Իզուր չէ, սակայն, որ ուրարտական ճարտարապետության գիտակ Կ. Հովհաննիսյանը քաղաքի հատակագիծը համեմատում է հելլենիստական քաղաքների հատակագծերի հետ:

Ինչ վերաբերում է ուղղահայաց կապերի ուղղանկյուն փոսիկներին⁹, դրանք ուրարտական այլ հուշարձաններից մեզ հայտնի չեն: Այն բնորոշ է հելլենիստական և մ.թ. առաջին դարերի շինարարական տեխնիկային: Այդպիսի փոսիկներ հանդիպում են Արտաշատի տաճարական կառույցի և 2007 թ. հայտնաբերված առվակոսներով սյուների¹⁰ և Գառնիի տաճարի քարերի վրա: Պարզ է նաև, որ ուրարտական պարիսպների քարերը հելլենիստական շրջանում օգտագործվել են նոր քաղաքի կառուցման ժամանակ և իրար հետ հորիզոնական ամրացվել «ծիծեռնակապուչ» կապերի միջոցով¹¹: «Ծիծեռնակապուչ» կապերով են ամրացված նաև քաղաքի կանոնավոր, նախապես մտածված պլանով կառուցված բնակելի համալիրների անկյունային քարերը: Այդպես են ամրակապված Դարոյնքի¹², հելլենիստական դամբարանի անկյունային կրաքարերը, Արմավիրի¹³ հելլենիստական շրջանի տաճարի և

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, էջ 121:

⁸ Կ. Ղաֆադարյան, Արգիշտիի խիլիկի քաղաքի ճարտարապետությունը, Երևան, 1984, էջ 10:

⁹ Carl Nylander, նշվ. աշխ., նկ. 3:

¹⁰ Ջ. Խաչատրյան, Մոնումենտալ կառույցի մնացորդներ և ուշագրավ ծեսով թաղում Արտաշատից, Պատմաբանասիրական հանդես (ՊԲՀ), 2005, N 2, էջ 225, նկ. 5; Zhores D.Khacharyan, Archaeological Research in Artaxata, Pisa.Roma, 2005, N 7, p. 19-26, fig. 1-10:

¹¹ Carl Nylander, նշվ. աշխ., նկ. 8,9:

¹² С. В. Тер-Аветисян, Курганы Хасан Калы, Известия Кавказского историко-археологического института, Т. VI, Тифлис, 1926, с. 71-88.

¹³ Б. Н. Аракелян, О некоторых результатах археологического изучения древнего Армавира, ՊԲՀ, 1969,

մուտքի հարևանությամբ կառուցված կլոր աշտարակի բազալտե զանգվածեղ քարերը, Արտաշատի¹⁴ տաճարային համալիրի և հենապատի չոր շարվածքով կրաքարերը, Արցախի Տիգրանակերտի միջնաբերդի քարերը և այլն: Այսինքն, «Ոսկե բլրի» ուրարտական քաղաքի վրա հեղինիստական շրջանում կառուցվել է տվյալ ժամանակաշրջանի քաղաքաշինությանը բնորոշ հատակագծով և շինարարական արվեստով նոր քաղաք:

Ե՛վ ուրարտական, և՛ հեղինիստական քաղաքների անուններն անհայտ են: Ս. Տ. Երեմյանը իր «Ուրարտու պետությունը և հարևան երկրները Ն. Ք. VIII-VII դդ.» քարտեզի վրա այդ տարածքում նշում է Արգիշտիունա քաղաքը¹⁵: Ուրարտական սեպագիր արձանագրությունների հաղորդումների հիման վրա նա Ադիովիտ գավառում տեղադրում է նաև Ալի (Ադի)¹⁶ անունով տաճարական պաշտամունքային կենտրոնը¹⁶:

Արգիշտիունա քաղաքի և Ալի տաճարի տեղը քարտեզի վրա նշված են մոտավոր, քանի որ հնագիտական ստուգողական աշխատանքներով չեն հաստատված: Ադիովիտ գավառում հայտնի, Ադի գետի ափին կառուցված, մասամբ պեղված և ուսումնասիրված ուրարտական քաղաքը «Ոսկե բլուր»-ն (Զեռնակի թեփեն) է: Ամենայն հավանականությամբ, վերջինս Արգիշտիունա քաղաքն է և այդտեղ պետք է տեղադրել նաև Ալի անունով տաճարական կենտրոնը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ պաշտամունքային վայրերը չեն փոխվում, Արգիշտիունա-«Ոսկե բլուր» կոչվող քաղաքի սրբավայրը իր գոյությունը շարունակել է նաև հետագայում: Ինչպես, օրինակ՝ Խալդիի դռնից հետագայում դուրս էր գալիս Միհր-Միերը, կամ Արմավիրի ուրարտական տաճարի վրա, մ.թ.ա. 330-ական թվականներին Երվանդի կողմից Հայաստանն անկախ հայտարարելուց հետո կառուցվեց նոր տաճար, այնուհետև՝ քրիստոնեական եկեղեցի և այլն:

Իսկ հեղինիստական ո՞ր քաղաքն է կառուցված Արգիշտիունա-«Ոսկե բլուր» (Զեռնակի թեփեն) ուրարտական քաղաքի վրա: Ս. Տ. Երեմյանի «Հայկական պետությունը Տիգրան Մեծի ժամանակաշրջանում (Ն. Ք. 93-66 թթ.)», Երևան, 1979 թ. և «Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-335 թթ.)», Երևան, 1979, քարտեզներում Վանա լճի հյուսիսային հատվածում Ադիովիտ գավառում, Ադի գետի ափին նշված է Զարիշատ քաղաքը: Այն Արտաշես I-ի (Ն. Ք. 189-160 թթ.) կառուցած ութ քաղաքներից մեկն է, որը իր հոր անունով կոչեց Զարիշատ:

Կարելի է ասել, որ «Ոսկե բլրի» ուրարտական քաղաքի վրա կառուցված հեղինիստական քաղաքը Զարիշատն է: Նախապես մտածված կանոնավոր ցանցով հատակագիծը և շինարարական տեխնիկան համապատասխանում են Զարիշատ քաղաքի կառուցման ժամանակին, Ն. Ք. II դ.: Ուրարտական քաղաքի վրա է կառուցված նաև Արտաշատ մայրաքաղաքը (Ն. Ք. 189-188 թթ.): Ինչ վերաբերում է «Ոսկե

¹⁴ Նշվ.աշխ. 165-166, էջ 5: *Г. А. Тирация*, Культура древней Армении VІв до н. э. - III в н. э., Ереван, 1988, с.82.

¹⁵ *Տ. Խաչատրյան*, Նշվ.աշխ., էջ 225, նկ. 11:

¹⁶ Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Ատլաս, Երևան-Մոսկվա, 1961, էջ 102:

¹⁶ *Ս. Տ. Երեմյան*, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 52:

բլուր»- Ջարիշատ քաղաքի անավարտ կառույց լինելուն¹⁷, դա այդպես չէ: Նրա հավասարաչափ բարձրությամբ պահպանվածությունը ոչինչ չի նշանակում: Երբ հարթավայրային կամ հարթ տարածքում հուշարձանը հողմնահարվում է, բոլոր պատերի պահպանված բարձրությունը նույնն է լինում: Մենք պեղումների ընթացքում (Արմավիր, Արտաշատ և այլն) բազմիցս ակնհայտ էնք եղել նման իրավիճակների:

Ջարիշատին տրվել է «արքունի քաղաքի» կարգավիճակ և Աղիովիտ գավառի արևմտյան մասում քաղաքային տերիտորիա¹⁸: Վերջինս «Աշխարհացոյց»-ում համարվում է Տավրուբերան «աշխարհի» գավառ: «Հայոց թագաւորէ Արտավազդ որդի Տիգրանայ: Սա ժառանգեցուցանէ զեղբարս իւր և զքորս ի գաւառս Աղոյ ովտի և Առբերանոյ, թողլով ի նոսա զմասն արքունի որ ի շէսն այնց գաւառաց, յանդերձ առանձինն մտողացն Հայից և ռոճկաց, ըստ օրինակի ազգականացն որ ի կողմանս Հաշտենից որպէս զի լինել նոցա պարունականագոյն և առաւել թագաւորագն քան զայնս Արշակունիս միայն օրինադրէ ոչ կեալ յԱյրարատ ի բնակութիւնս արքայի»¹⁹: «Յետ Արտաշիսի թագաւորէ Արտաւազդ որդի նորա և հալածէ յԱյրարատոյ գամենայն եղբարս իւր ի գաւառս Աղիովտայ և Առբերանոյ, զի մի բնակեցցեն յԱյրարատ ի կալուածս արքայի. բայց միայն զՏիրան պահէ փոխանորդ իւր, զի որդի ոչ գոյր նորա»²⁰: «Եւ եկեալ առ նա կանխագոյն իւրոյ ազգին Արշակունեաց, որ էին ի կողմանս Հաշտենից՝ ասեն. «ընդարձակեայ մեզ զժառանգութիւնս, զի նեղ է. քանզի բազմացաք յոյժ»: Եւ նա հրամայէ ոմանց ի նոցանէ երթալ ի գաւառն Աղիովտի և Առբերանոյ: Իսկ սոցա առաւել ևս բողոք կալեալ առ արքայի, թէ առաւելագոյն նեղ է մեզ՝ ոչ ինչ ունկնդիր լինի Տիրան. այլ հաստատեալ վճիռն ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունէին՝ հաւասար տրոհել յինքեանս: Ջոր բաժանեալ ըստ մարդաթուի՝ գտաւ պակաս ժառանգութիւն բնակողացն Հաշտենից. վասն որոյ բազումք ի նոցանէ եկին ի գաւառն, Աղիովտի և Առբերանոյ»²¹:

Այս երեք գավառներում պետք է ապրեին Արշակունի սեպուհները՝ Հաշտենքում, Աղիովտում և Առբերանում, որոնք համարվում էին «սեպուհական» (սեպուհական): Ըստ Ս. Երեմյանի՝ Աղիովիտ գավառը կիսվել է և կեսը միացվել է Վասպուրականին²²: Վերջինս Առբերանի գավառի հետ համարվել է Արշակունյաց տան սեպուհական բնակավայր, «սեպու(ր)ական» կամ «Վասպուրական», «Երկիրն սեպուհական գնդին»²³: Բ. Հարությունյանը, սակայն, գտնում է, որ Վասպուրականը Աղիովիտ անունով գավառ չի ունեցել²⁴:

¹⁷ Կ. Լ. Հովհաննիսյան, Քաղաքաշինություն, Ջեռնակի թեփե, էջ 121:

¹⁸ Ս. Տ. Երեմյան, Նշվ. աշխ., էջ 33, 52:

¹⁹ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց (Քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Արեղեանի և Ս. Յարութիւնեանի, Նմանահանութիւն, Լրացումները Ա. Բ. Սարգսյանի, Երևան, 1991, II, 22):

²⁰ Նույն տեղում, II, 61:

²¹ Նույն տեղում, II, 62:

²² Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 33:

²³ Նույն տեղում:

²⁴ Բ. Հ. Հարությունյան, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, Բանբեր Երևանի համալսարանի, 1983, N 3, էջ 112-113: Նույնի՝ Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման

Պետության կայունության, անվտանգության և դավադրություններից զերծ մնալու համար, ընդունված կարգի համաձայն, Այրարատում, մայրաքաղաքում, արքունիքում իրավունք ունենալու ապրել միայն թագաժառանգը, իսկ մյուս արքայազները և հարազատները (սեպուխները) պետք է ապրեին և թաղվեին մայրաքաղաքից հեռու: Վանա լճի հյուսիսային հատվածում՝ Աղի գետի ափին կառուցված Ջարիշատ քաղաքում, Աղիովիտ և Առբերան գավառներում ապրելով՝ նրանք նույնպես գտնվում էին պետական խնամքի ներքո: Երբ Գնելը խախտում է ընդունված կարգը և գնում է Կվաշ ավան՝ իր կուրացած պապի՝ Տիրանի մոտ, պապը նրան է տալիս իր ամբողջ ունեցվածքը և կարգադրում ապրել Կվաշ ավանում, որը գտնվում է Այրարատում: Դա հաղորդում են Արշակին և ասում, որ Գնելն ուզում է սպանել նրան: Արշակը հավատալով Տիրիթին՝ «... նոյն Վարդանին ուղարկում է Գնելի մոտ, թե՛ «ընդէր բնակեցար յԱյրարատ և լուծեր զկարգ հայրենյաց (Քանզի սովորութիւն էր՝ արքայի միայն բնակել յԱյրարատ և միոյ որդւոյ նորա, զոր փոխանորդ թագաւորի պահէին, և այլոց Արշակունեաց բնակել ի գաւառս Հաշտենից և Աղիովտի և Առբերանոյ, հանդերձ ռոճկօք և մտաւք յարքունուստ): Եւ արդ՝ ընտրելի քեզ կամ ընդունել զմահ, կամ զնալ յԱյրարատայ, և արձակել ի քէն զուստերս նախարարացոյ»: Ջայս լուեալ Գնելոյ՝ արար զհրամանս արքայի և զնաց յԱղիովի և յԱռբերանի»²⁵:

Գնելին սպանությունից հետո թաղում են Ջարիշատում: «Իսկ Արշակայ հանդերձ նախարարօքն իջուցեալ ի դաշտն Աղիովտի գդին Գնելոյ թաղեաց յարքունական քաղաքին Ջարիշատի. ի չքմեղս եղեալ՝ կոծ առնէ»²⁶: Հնարավոր է, այդ ավանդույթը գալիս է դեռևս ուրարտական շրջանից, որը շարունակվել է Երվանդունիների, Արտաշեսյանների և Արշակունիների օրոք: Ուստի հնարավոր է, որ վայրի ընտրությունն էլ պատահական չէ: Ավելի հավանական է, սակայն, որ այդ կարգը սահմանվել է Արտաշես I-ի կողմից, որը հայ ժողովրդի քաղաքական ու ռազմական ամենախոշոր գործիչներից մեկն էր: Արտաշեսը վերամիավորեց ոչ միայն հայկական հողերը, այլև անցկացրեց մի շարք կարևոր ռեֆորմներ՝ տնտեսական, վարչաքաղաքական, ռազմական, մշակութային և այլ բնագավառներում և, հնարավոր է նաև, սահմանեց պետական անվտանգությանը վերաբերող այդ կարգը: Որ այդ ավանդույթը Տիգրան Մեծի ժամանակ կար, խոսում է այն փաստը, որ արքունական քաղաքի կարգավիճակ է շնորհվել նաև Արցախի Տիգրանակերտին²⁷:

«Պատմի և այս, թե՛ զկնի այսպիսի իրաց կատարման՝ յուղարկե թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծաւ ամբոխի ի Հայս յաւանն՝ զոր շինեաց յիւր անուն Տիգրան, որ է Տիգրանակերտ, և զգաւառնս զայնոսիկ ի ծառայութիւն նմա հրամայէ: Եւ զոստանն անուանեալ կողմանցն այնոցիկ ազատութիւն ի զարմից սորա ասէ լեալս, իբր թագաւորական զարմս»²⁸: Այս վկայությունը շատ նման է Ջարիշատ քաղաքին,

համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, Երևան, 2001, էջ 239:

²⁵ Մովսէս Խորենացի, III, 22:

²⁶ Նույն տեղում, III, 23:

²⁷ Ժ. Խաչատրյան, Քաղաքաշինությունը Տիգրան II-ի ժամանակ, Արցախի Տիգրանակերտը, «Էջմիածին», Ա, 2006, էջ 51:

²⁸ Մովսէս Խորենացի, I, 30:

քաղաքային տերիտորիային և բնակիչներին տրված կարգավիճակին, այսինքն՝ Տիգրանակերտում նույնպես Տիգրանուհու սերնդից առաջացած ոստան կոչված ազատություն կար²⁹: Գրավոր աղբյուրների սուղ տեղեկությունների և հնագիտական հետախուզական աշխատանքների շնորհիվ Արցախի Տիգրանակերտը տեղորոշվել է Խաչեն գետի աջ ափին, Շախբուլաղի աղբյուրներից դեպի վեր, Վանքասար ձգվող լեռան լանջին՝ հարավից և արևելքից դրան հարող հարթավայրում: Լեռան հարավային կողմում ժայռերը հորիզոնական հարթեցված են, որպեսզի պարսպի քարերը չսահեն (նկ. 4): Երկու դեպքում կիսաշրջան փորվածքներ են արված, որոնք շրջանաձև աշտարակների³⁰ համար են (երկ. 400 մ): Որոշ տեղերում փորված են առվակներ՝ բնակելի հատվածի ջրերի հեռացման համար: Ամրապատի հարթեցված հատվածին կից, ներսի կողմից, որոշ տեղերում ժայռը կտրված է ուղղահայաց և ծառայել է իբրև սենյակի պատ: Ամենայն հավանականությամբ, դրանք կայագործի զինվորների ապրելու և զինամթերք պահելու համար են: Նման նպատակի համար ժայռերի օգտագործումով ավելի մեծ չափերի սենյակներ բացվել են Արտաշատի միջնաբերդ տանող ճանապարհի պարիսպներին կից³¹:

Պեղումներով բացվել է կենտրոնով հարավ-հյուսիս գնացող կոպտատաշ զանգվածեղ (կվատրներով) սպիտակ կրաքարերով, չոր շարվածքով կառուցված հենապատը (նկ. 5), որը բլուրը բաժանում է երկու մասի: Պատը որոշ տեղերում մինչև հիմքը մաքրված չէ: Հիմնականում պահպանվել են առաջին շարքի քարերը, հարավային հատվածում՝ նաև երկրորդ շարքը (բարձր. 1,20 մ, բացված պատի երկ. 33 մ է): Բլրի վերին, հյուսիս-արևմտյան մասում բացվել է միջնաբերդի պարսպի մի հատված, որը շարված է խնամքով մշակված չորս շարք կվատրներով (երկ.՝ 7 մ, լայն.՝ 2,50 մ) և անկյունային շրջանաձև աշտարակը (ընդհանուր երկ.՝ 12 մ): Պարսպապատի արտաքին երկու շարքի քարերը իրար և երկրորդ շարքի քարերի հետ ամրացված են ծիծեռնակապոչ ակոսների մեջ տեղադրված փայտե ներդիրների միջոցով: Աշտարակի արտաքին երեսի քարերը նույնպես իրար հետ ամրացված են ծիծեռնակապոչ կապերով: Ինչպես վերը նշեցինք, շինարարական այս տեխնիկան բնորոշ է հելլենիստական շրջանին (Ն. Ք. III-I դդ.): Արտաքին շարքի քարերն ունեն ռուստիկում մշակում: Այն ձայնակցում է Արմավիրի հելլենիստական տաճարի և Արտաշատի հելլենիստական հարթակի արևելյան չորս շարքից բաղկացած կրաքարերով պատի ծիծեռնակապոչ կապերով շարվածքի հետ (նկ. 6)³²:

Արցախի Տիգրանակերտից հայտնաբերված գունազարդ խեցեղենը մոնոխրում է, ի տարբերություն Այրարատ գավառի, Շիրակի, հարավային և արևմտյան Հայաստանի հելլենիստական պոլիխրոմ խեցեղենի, հյուսիս-արևմտյան Իրանի գունազարդ խեցեղենի նման: Պատրաստված են մանրահատիկ կավից և լավ թրծված են:

²⁹ Ն. Ադոնց, Հայ հին շինականությունը, Երկեր, Ա, Երևան, 2006, էջ 105:

³⁰ Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 5:

³¹ Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանի անտիկ շրջանի պաշտպանական կառույցները, ՊԲՀ, 1997, N 4, էջ. 166:

³² Ժ. Խաչատրյան, Մոնումենտալ կառույցի մնացորդներ, էջ 225, նկ. 3, 6, 7, Zhores D. Khachtryan, նշվ. աշխ., էջ 19-28, Fig. 1-3:

Մակերեսները հիանալի մշակված և փայլեցված են, զարդաձևերը հարուստ չեն: Դրանք բաց ֆոնի վրա կարմիրով արված ժապավենաձև գոտիներ են, համաշխարհային ծառի (կենաց ծառի) պատկերներ, գոտիների մեջ արված ալիքաձև զարդեր: Կանթերը կտրվածքում կլոր են, դրանք հաճախ հարդարված են կարմիրով արված թեք գծերով (նկ. 7) և այլն:

Զարդաձևերը աղերսվում են վերոհիշյալ հայկական տարածքների հեղինակական խեցեղենի³³, ինչպես նաև Քուրի աջափնյա տարածքների, հատկապես Մինգեչաուրի մ.թ.ա. I դ. կարասային թաղումներից հայտնաբերված գունազարդ խեցեղենի զարդերի հետ³⁴, այսինքն՝ և՛ շինարարական արվեստը և՛ գունազարդ խեցեղենը ժամանակագրական առումով համապատասխանում են Տիգրանակերտի հիմնադրման ժամանակին (Ն. Բ. I դ.):

Արցախի Տիգրանակերտի «արքունի քաղաքի» կարգավիճակը մի անգամ ևս վկայում է, որ կառավարող արքայի հարազատները բնակվելու էին Այրարատ գավառից հեռու: Արարատյան հարթավայրում, բրոնզի և հատկապես ուրարտական շրջանում կառուցված ջրանցքների ցանցի շնորհիվ, զարգացել էր գյուղատնտեսությունը, շրջապատի լեռները հարմար էին անասնապահության համար: Այստեղով էին անցնում հարավից հյուսիս և արևելքից արևմուտք գնացող միջազգային առևտրական գլխավոր ճանապարհները: Ահա թե ինչու հայ թագավորները իրենց մայրաքաղաքները կառուցեցին Արարատյան դաշտում՝ Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Վաղարշապատ, հետագայում՝ Դվին և այլն: Այս առումով ուշագրավ է Ղազար Փարպեցու Այրարատյան դաշտի գեղեցիկ նկարագրությունը. «... հոյակապ, հռչակավոր, երևելի գավառն Այրարատյան, .. դաշտերի լայնատարած ու որսալից, շուրջ բոլորը լեռներ գեղեցկանիստ ու փարթամ ստորոտներով ծածկված, կճղակաբաշխ ու որոճող անասուններով և նրանց հետ էլի ուրիշ բազմատեսակ կենդանիներով լեցուն: Լեռանց բարձր կատարներից ջրեր են հոսում լիովի ոռոգմամբ արբեցնելով դաշտերը, որոնք անթիվ կին ու տղամարդ բնակչությամբ փարթամացած ոստանն են մատակարարում առատ հացով ու գինով, անուշաբույր ու մեղրահամ բանջարեղենով և յուղատու զանազան սերմերով»³⁵: «Եվ ահա այսպիսի

³³ **Ճ. Դ. Խաչատրյան**, Արտաշատ II, Անտիկ դամբարանադաշտեր, Երևան, 1981, տախտ. IX,3, nk. 34, 11, 41,2; **Դ. Ա. Կիրաչյան**, О расписной керамике древней Армении (VI в. до н.э. – III в. н.э.), ՊԲՀ, 1965, N 3, p. 268-280, ՅՈՒՆ. II, III, **Գ. Ս. Տիրացյան**, Արմավիրի պեղումները, «Լրաբեր հաս. գիտ.», 1974, N 12, նկ. 3 բ, **Գ. Ս. Տիրացյան, Բ. Կարապետյան**, Արմավիրի 1981-1982 թթ. պեղումները, N 10, «Լրաբեր հաս. գիտ.», 1983, N 10, նկ. 4, **Գ. Քոչարյան**, Դվինի հեղինակական խեցեղենը, «Լրաբեր հաս. գիտ.», 1974, N 5, նկ. 9,10, **Զ. Խաչատրյան**, Բենիամինի անտիկ դաստակերտի հեղինակական ժամանակաշրջանի ճարտարապետությունը (մաս II), Գիտական աշխատություններ, III, Գյումրի, 2000, տախտ. 1,6; **Ս. Ջ. Նախշբարյան**, Հայաստանի հեղինակական շրջանի գունազարդ խեցեղենի զարդամոտիվները, Մեղմագիր, պատմ. գիտ. թեկնածուի, Երևան, 2003, էջ 9-10, բուսական զարդամոտիվներ և այլն:

³⁴ **Շ. Մ. Գազիև**, Альбом кувшинных погребений, Баку, 1960, с. 19-21, табл. VIII, XI-4, XXV, XXXI; **Խ. Ի. Բաբև**, Искусство Кавказской Албании, Баку, 1976, с. 25, 119-121, рис. 15, 44, 82, 85, 86; Նույնի՝ Художественная керамика Кавказской Албании, IV в. до н.э. - I в. н.э., Баку, 1964, с. 19, 108, рис. 12.

³⁵ **Ղազարայ Փարպեցու** Պատմություն Հայոց, թուղթ առ Վահան Մամիկոնյան, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, 1982, (Աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Բ. Ուրուբաբյան, և

ըղձալի գավառը, չնաշխարհիկ, ամենախնամ արարիչ Աստծո տվյալությամբ ամեն ինչով լցված գավառն Այրարատյան, որ գլուխն է Հայոց աշխարհի, գավառը բարեհամբավ, գավառն ամենալի, որ ինքնին օրինակ է առատաբաշխության, ինչպես Սուրբ Գրքի երկիրը Եգիպտացոց ու դրախտն Աստծո, և Արշակունի թագավորների բնակավայր ոստանը Վաղարշապատ...» և այլն³⁶:

Այսպիսով, «Ոսկե բլուր-Զարիշատ»-ը ոչ թե Ուրարտուի վերջին շրջանի քաղաքն է, և իր կանոնավոր հատակագծով, որպես քաղաքաշինական սկզբունք, համընդհանուր ճարտարապետության մեջ իր հետագա փուլերն ունի (դրանք «հիպոդամյան» մեթոդով կառուցված քաղաքներն են)³⁷, այլ վերջիններս են օրինակ հանդիսացել և Զարիշատն է այդ սկզբունքներով կառուցված քաղաք: Այն «...կանոնավոր հավասարաչափ և փոխուղղահայաց հատակագծային ցանցով տեղադրված տիպարային բնակելի տների զանգվածային կառուցապատումն է»³⁸:

Բնական է, որ «արքունի քաղաքը» պետք է նման հատակագիծ ունենար, որպեսզի բոլոր սեպուհներն էլ նույն պայմաններն ունենային: Պատահական չէ Տիրանին՝ սեպուհների բողոքի մասին վերոհիշյալ վկայությունը իրենց պայմանների նեղվածքի առթիվ: Նախապես մտածված միասնական, ընդհանուր հատակագծով է կառուցված նաև Արտաշատ մայրաքաղաքը: Զարիշատով է անցնում Տիգրանակերտ-Արտաշատ, հարավից հյուսիս տանող միջազգային տարանցիկ առևտրական ճանապարհը, որի շնորհիվ շուտով այն դարձավ խոշոր վաճառաշահ քաղաք: 369 թ. Շապուհի կողմից Հայաստանի քաղաքների ավերածության և բնակչության գերեվարության առթիվ խոսելիս, Փավստոս Բուզանդը նշում է նաև Զարիշատ մեծ քաղաքի մասին. «Առնուին և զքաղաքն մեծ Զարիշատ՝ որ էր ի գաւառին յԱդոյիովտի»³⁹:

7):

³⁶ Նույն տեղում, I, 8:³⁷ Կ. Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 121:³⁸ C. A. Burney and G. R. J. Lawson. Measured plans, p. 185-188; Կ. Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 10:³⁹ Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց (բնագիրը Բ. Պատկանյանի), Երևան, 1987, IV, 55:

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

Ո՞Վ Է ՏԵԿՈՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱԶԱՐԱՊԵՏ ՄԱՆԱՆԸ

Տեկորի տաճարի շինարարական արձանագրությունը մեր վիմագրական հուշարձանների շարքում առանձնանում է բազում ինքնատիպություններով. բովանդակությամբ և պատմական անձանց հիշատակությամբ այն հնագույն հայերեն վիմագիր գրառումներից է (եթե ոչ՝ ամենահինը)՝ օժտված հնագրական որոշակի առանձնահատկությամբ (մանավանդ Ա գրի գրությամբ), տողերի հաջորդականությամբ (վարից վեր), բարբառայնության ակնհայտ դրսևորումներով, որոշ անունների ու նրանց պաշտոնների անսովորությամբ և այլն:

Այս պարագաները, բնականաբար, մասնագետների շրջանում հիմք պետք է դառնային իրարամերժ վերծանության ու իմաստավորման՝ փորագրման ժամանակից սկսած մինչև հիշատակվող անձանց ինքնության խնդիրը: Վիմագրի ուսումնասիրության պատմությունը առանձնանում է իրենց հմտությամբ հայագիտությանը հայտնի մի քանի հեղինակությունների անուններով (Ղ. Ալիշան, Գ. Հովսեփյան, Միաբան, Ն. Մառ, Կ. Ղաֆադարյան և ուրիշներ):

Շինարարական այս վավերագրի ավարտում վերծանության, պատմա-բանասիրական ընդգրկուն քննության ու ռուսերեն հստակ թարգմանության պատիվը պատկանում է ակադ. Նիկողայոս Մառին: Նրա «К датировке ктиторской надписи Текорского храма» հոդվածը («Христ. Восток», т. III, II гд., 1915, стр. 56-71, լուսանկար՝ Ադ. I-II) ամփոփեց վերծանության հետ եղած բոլոր խնդիրները, սակայն մեկնաբանությունների հարցում Ն. Մառը շարունակեց իր իսկ հայտնած այն կարծիքը պաշտպանել, թե վաղմիջնադարյան վիմագիր հուշարձաններին հատուկ չպետք է լինեն դասական գրաբարի քերականական ու ոճական նորմերից շեղումներ, բարբառայնություններ, փակագրություններ, ոչ կանոնիկ հապավումներ և այլն, իսկ քանի որ այդպիսիք կան Տեկորի վիմագրում, ուրեմն այն հետագա (գուցե և XI դարի) ընդօրինակություն է:

Կրկնում ենք՝ Ն. Մառը կասկածի չէր ենթարկում արձանագրության շինարարական բովանդակությունը, բայց նրանում եղած ամեն մի շեղում կամ այլազանություն բացատրում էր ուշ ընդօրինակում լինելով: Մեր առաջիկա քննարկելիքը պարզ դարձնելու համար բերենք արձանագրության նրա ընթերցումը. «Սահակ Կամսարական շինեաց զայս վկայարան /սրբոյ Սարգսի/ յիւր բարեխաւսութիւն և բոլոր ազգին, և ամուսնի, և որդեկաց, և սիրելեաց, և աղբերացն իւրոց/։ Եւ հիմնարկեցաւ տեղիս ի ձեռն Յոհանու Հայոց կաթողիկոսութեան և Յոհանու Արշարունեաց ե/պիսկոպոսի և Տայրոնի՝ Տեկորոյ վանաց երիցու, և Մանանայ հազարապետի, Ու-

րանայ Հոռոմի որ շ[...]:

Տասնամյակներ անց Տեկորի տաճարի շինարարական արձանագրության բովանդակային և հնագրական քննությանն անդրադարձավ պրոֆ. Կ. Ղաֆադարյանը (ՊԲՀ, 1962, N 2, էջ 39-54): Նա Ն. Մառի վերծանության մեջ կատարել է երկու սրբագրություն. երկրորդ տողում «ազգին» փոխարեն կարդում է «ազգիս», որ միանգամայն արդարացվում է նույն Ն. Մառի հրատարակած լուսանկարով (գրի երկրորդ ստեղծը հասնում է առաջինի բարձրությանը, մինչդեռ «Ն» գրի դեպքում վիմագրում այն կիսատող է հասնում): Ինչ վերաբերում է «աղբերացն իւրոց»-ի բացակայությանը Կ. Ղաֆադարյանի տեքստում, ապա նա գանգ է առել այդ ընթերցմանը վերաբերող Ն. Մառի հատուկ բացատրությունը. երկրորդ տողը «սիրելեաց» բառից հետո վերջանում է հստակ կարդացվող «ԵԻ» շաղկապով, որը հաջորդ տողի սկզբի «ԵԻ»-ի հետ կապ չունի: Կ. Ղաֆադարյանը նրանից հետո անավարտություն իմաստավորող բազմակետ է դնում, մինչդեռ Ն. Մառը զգուշացրել է, թե «աղբերացն իւրոցը» թույլ ձևով քերծած է (խազված) նույն գրչությամբ՝ գուցե նախապես դեղագիր լինելով: Ինչ վերաբերում է Կ. Ղաֆադարյանի՝ տողասկզբներին և տողավերջերին գործածած կախման կետերին, ապա դրանք արդարացված չեն, բացի վերջին տողի ավարտի «շ...»-ից, որ նախորդն արդեն արձանագրել է՝ անկյունավոր փակագծի գործածելով:

Այսպիսով՝ Ն. Մառի վերծանությունը կատարյալ է, բացառությամբ դիմորոշ հորի (Ն Ս Ս) մեկ սրբագրության: Այդ չի նշանակում սակայն, թե արձանագրության մեկնաբանության հետ կապված Կ. Ղաֆադարյանի վերարձարծումները նկատառելի չեն. նրանք կարևոր են ինչպես հնագրական-ժամանակագրական, այնպես էլ ճարտարապետական բնութագրության առումով, մանավանդ Թ. Թորամանյանի գնահատումները վկայակոչելիս:

Կ. Ղաֆադարյանի հոդվածում Ն. Մառի մեկնաբանություններից առավել կտրուկ առարկություն հարուցածը արձանագրության «հազարապետ» եզրի «տնտես» (ՖՄՏՎՏՎ) թարգմանությունն է: «Ն. Մառի կարծիքով, - գրում է նա, - հազարապետը եկեղեցու տնտեսն է և ոչ թե Հայոց հազարապետը, որովհետև նրա անունը գրված է վաներեցից հետո: Այդ տեսակետն անընդունելի է, որովհետև վանքի տնտեսը երբեք հազարապետ չի կոչվել» (էջ 44):

Տարիներ առաջ պրոֆ. Կ. Ղաֆադարյանի «Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության» հոդվածների ժողովածուն խմբագրելիս (լույս տեսավ գիտնականի ծննդյան հարյուրամյակի օրերին, 2007 թ.) տողերիս հեղինակը այս կապակցությամբ ծանոթագրել է. «Մերժումը վերապահելի է, քանի որ Գր. Բակուրյանի «Սահմանքում» հունարեն «տնտեսի» դիմաց առկա է «տանուտեր», իսկ վրացերեն բնագրում ունենք «ոստիկան»: Ուրեմն վարչական տերմինի իմաստափոխությունը անկարելի չէ» (նշվ. աշխ., էջ 110): Այժմ պիտի մասնավորեցնենք, որ Ն. Մառի կռահումն ու թարգմանությունը միանգամայն ճիշտ են և արդարացի: Պրոֆ. Ն. Ադունցը ժամանակին անցողակի դիտարկել է (Армения в эпоху...стр. 446), որ Նոր Կտակաբանում (Ա Կորնթ. Դ 1) «հազարապետը» համապատասխանում է հուն. ο, κοινωφ-

ին, իսկ այլ դեպքում (Մարկ. 9 21)՝ չիլ...արժոք- ին:

Ճիշտ է՝ II դարի կեսերին գրված Էջմիածնի հունարեն արձանագրության չիլ...արժոք-ը ևս գորապետ է (Xðèñð. Bî ñðî ê, III, 244), սակայն այստեղ անակնկալ չկա, քանի որ ՆՀԲ (II, էջ 2-3) արդեն գիտե «հազարապետի» παρχος, π...τροποφ, ο, κονόμοφ նշանակությունները և առ այդ վկայակոչություն է կատարում: Ինչպես երևում է, Ն. Մառը ստուգել է «տնտես» իմաստով գործածությունը և ըստ այնմ եզրակացրել, որ Տեկորի արձանագրության մեջ «վանաց երեց»-ից հետո հիշատակվողը Հայոց հազարապետը չի կարող լինել, այլ՝ վանաց տնտեսը: Եվ, հիրավի, Ս. Գրքում ունենք «հազարապետ տանն իւրոյ» (Ծն. ԽԳ 16), «եւ կոչեաց Աքաաբ գԱբդիոս՝ զհազարապետ իւր» (Գ Թագ., ԺԸ 3), «եւ եկին առ նա Եղիակիմ որդի Քեղեկեայ հազարապետ» (Դ Թագ. ԺԸ 18), «Եւ ելին առ նա Եղիակիմ Քեղեկայ, որ հազարապետ էր» (Ես. ԼԶ 3) «...Իբրև զպաշտօնեայս Քրիստոսի և հազարապետ խորհրդոցն Աստուծոյ» (Ա Կորնթ. Դ 1):

Հունարեն Աստվածաշնչի ο, κονόμοφ- ի դիմաց հայերենում 11 անգամ «հազարապետ» է և 6 անգամ «տնտես» (Ղուկ. ԺԲ 42, ԺԶ 1, 2, 3, 8, Տիտ. Ա 7): Ինչ վերաբերում է π...τροποι-ին, այն հունարենում գործածված է երեք անգամ (Բ Մակ. ԺԱ 1, ԺԳ 2, ԺԴ 2) և բոլորն էլ վերաբերում են «տնտես»-ին:

Համոզվելու համար, թե «հազարապետի» «տնտես» համապատասխանությունը սոսկ Ս. Գրքի թարգմանությամբ չի վկայվում, այլև գործածական է եղել կենդանի առօրյայում և ոչ միայն մեզանում, կարելի է դիմել Մցխեթի պեղումներից 1996 թ. հայտնաբերված II դարի վերջի կամ III դարի սկզբի հունարեն նվիրատվական արձանագրության մեջ գործածված նույն π...τροποφ եզրի նշանակությանը: Քանի որ Հայաստանի պատմության համար ևս կարևորություն ներկայացնող այդ վիմագիրը հայագիտությանը մինչև օրս անձանոթ է մնացել, ստորև անհրաժեշտ ենք համարում այն բերել ամբողջությամբ.

[...θυσιατρ̃ δ βασιλ̃σωφ] εΑρμεν...αφ Οὐλογ̃Εισου γυνακ̃ δ βασιλ̃σωφ εΙβ» ρων μεγ̃Ε λου εΑμα̃ζεσπου εΑναγρ̃Ενηφ Θ τροφε̃Υφ κα̃ εεπ...τροποφ ειδ...ω δυν̃Εμει τ̃Θ βαλαν̃ε<ον ε αφισ̃ρωσεν.¹

Թարգմանություն. [...] Հայոց [թագավոր] Վաղարշի [դուստր ... ին], իսկ Վիրքի մեծ թագավոր Համագասպի տիկնոջը Անագրանեսը՝ դաստիարակն (դայակ) ու տնտեսը, սեփական արդյամբ [կառուցած] բաղնիք նվիրեց:

Վրացագետները, իբրև կանոն, π...τροποφ—Á §εζοσ—μοZPσαρι՝ են թարգմանում (այն վկայված է Ս. Գրոց վրացական խմբագրությամբ), որ համապատասխանում է «վերակացու»-ին, «տնտեսին»:

Ի դեպ, Կ. Ղաֆադարյանի դրույթին վերաբերող մեր վերապահության մեջ մատնացուցված «տանուտեր» եզրի «տնտես» (նաև «ոստիկան») իմաստավորումը կարելի է հաստատված գտնել Ս. Գրքի ասորական խմբագրության մեջ չիլ...արժոք-Շ " ο, κονόμοφ – ի դիմաց zabb bayta (տանուտեր) կարդալով:

¹ Տե՛ս **Թինաթին Ղառիսյիշվիլի**, Վրաստանի հունարեն արձանագրությունների դիվան, պրակ Բ, ԹԲ. 2000, էջ 227-228 (վրաց.):

Այսպիսով՝ Տեկորի հայերեն հնագույն արձանագրության Ն. Մառի վերծանությունն ու եզրերի իմաստավորումը լիովին հիմնավորված են և կարոտ չեն վերանայման: Կ. Ղաֆադարյանը իրավացի է, երբ մերժում է արձանագրության ընդօրինակված լինելու և ընդօրինակությունը XI դարով թվագրելու վարկածը:

Այժմ մի քանի խոսք «վանաց տնտես» Մանանի ինքնության մասին: Բավականաչափ ճիշտ կողմնորոշվելով Մանան հազարապետի «տնտես» լինելու հարցում՝ «Քննություն Հայաստանի IV-XI դարերի շինարարական վիմագրերի» (Երևան, 1977) հեղինակ Ա. Մանուչարյանը տարօրինակ ու անսպասելի ենթադրություն կատարեց նրա ինքնության հարցում: «Մանան անունը գրված է,- կարդում ենք նրա գրքում,- արձանագրության այն մասում, ուր սկսվում է նախ աշխարհիկ, և երկրորդ՝ օտարազգի մարդկանց անունների ցուցակը: Օտարազգի, մասնավորապես պարսիկ տնտեսի առկայությունը Հայաստանի ավատական տիրույթներում, Վարդանանց պատերազմից հետո, 481-484 թվականների ապստամբությանը նախորդող մոտավոր տարիներին շատ բնական է» (էջ 42): Շարունակության մեջ նա փորձում է մանրամասնել իր վարկածը. «...նկատի առնելով նրա անվան ակնհայտ պարսկական ծագումը և այն, որ ժամանակի պատմիչները նրա մասին որևէ հիշատակություն չեն պահպանել, ինչպես նաև այն, որ հայտնի է այդ ժամանակաշրջանի իրանցի հազարապետի իսկական անունը, կարծում ենք, որ Մանանը իրանցի վերակացու էր՝ նշանակված Արշարունյաց կալվածքների վրա» (էջ 43):

Սա կատարելապես անհիմն ենթադրություն է. Հայաստան պաշտոնավարության ուղարկված պարսիկը (իրանցին) անվերապահորեն պարսից դենի հետևորդ պիտի լիներ, իսկ եթե նա դարձի եկած էր, ապա իբրև զրադաշտության ուրացող՝ ենթակա էր նահատակության: Եվ այնուհետև, վանքի տնտեսը այսօրվա «պահեստապետը» չէր, որ կարողանար օտարազգի և օտարադավան լինել: Նրա անունը հիշատակվում է «վանաց երիցի» կողքին, կաթողիկոս ու եպիսկոպոս թվարկող շարքում:

Ամփոփելու համար ասենք, որ արձանագրության փորագրման ժամանակը սահմանվում է ըստ նրանում հիշատակված պատմական անձանց ժամանակագրության, իսկ նրանցից առավել հայտնին կաթողիկոս Հովհան Մանդակունին է: Մանանին պարսիկ համարող Ա. Մանուչարյանը արձանագրության ժամանակ է համարում 478-481 թվականները, որից հետո (Վահանանց ապստամբություն), ըստ նրա, պարսիկը Արշարունյաց կալվածքների վերակացու (հազարապետ) լինել չէր կարող: Սակայն տեսանք, որ Ուրանը պարսիկ չէ, ուստի այդ հիմնավորումն անհիմն է: Մանդակունին հայոց կաթողիկոս է եղել մինչև 502 թ. (ճշտումը կատարել է Հ. Ն. Ալինյանը), ուստի Տեկորի արձանագրության հրապարակման հնարավոր սահմանը պիտի երկարաձգել մինչև այդ թվականը:

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

Ա. ԳՆՈՒՆԻ

Պատմական գիտությունների թեկնածու

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԵՎ ՓՈՂՈՑԻ ԳՈՐԾԱԹՆԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԳՈՐԾԱԹՈՒՅԹՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղաքը, որպես կայուն սոցիո-մշակութային երևույթ, օժտված է այդ կատեգորիան բնորոշող բոլոր հատկանշական գծերով, մասնավորապես նշանակության բաղադրատարրերով, առանց որոնց բոլոր երևույթները կվերածվեին զուտ կենսաբանականի¹:

Նշված սկզբունքը տարածվում է նաև քաղաքը կազմող բաղադրատարրերի՝ մասնավորապես փողոցի վրա: Մարդանց խմբերի կամ համայնքների միջև իրականացվող հաղորդակցությունը հանդիսանում էր և հանդիսանում է տվյալ խմբի կամ համայնքի զարգացման գլխավոր գրավականներից մեկը: Ըստ Բ. Բլուեի՝ ճանապարհների առկայությունը որոշիչ դեր է խաղացել վաղ քաղաքային բնակավայրերի առաջացման գործում²: Այդ իսկ պատճառով պատահական չէ, որ ճանապարհը և փողոցը, կատարելով զանազան գործառնություններ, միևնույն ժամանակ ունենին նաև խորհրդանշական դեր: Հենց այդ՝ խորհրդանշականի և գործառնականի միաձուլումով էլ պայմանավորված է հին աշխարհում ճանապարհի և փողոցի ընկալումը:

Հայկական լեռնաշխարհում դեռևս Ն. Բ. IV-III հազ. բնակավայրերում հաստատագրված են կանոնավոր փողոցներ: Փողոցի դերի և նշանակության մասին են վկայում վերջինիս տեղադրությունը բնակավայրում երկար ժամանակահատվածում: Այսպես, ծայրամասից միջնաբերդ տանող Նորշունթեփեի փողոցը կենտրոնակ է եղել XXIV-XXII շինարարական հորիզոնների ընթացքում, այն ժամանակ, երբ բազմաթիվ մանր փողոցներ բազմիցս փոխել են իրենց տեղադրությունը³: Փողոցի նշանակությունն ընդգծվում էր ոչ միայն դրա ուղղվածությամբ, այլև վերջինիս երկայնքով հիմնված կառույցներով: Այսպես, Յիխիա-Գորա բնակավայրի B2 հորիզոնի N 2 և 3 կացարանները ճակտոնային մասով նայում են փողոցին: Իր հերթին ճանապարհը տանում է դեպի սյունազարդ մուտքով N 1 շինության (ամենայն հավանականությամբ պաշտամունքային կամ հասարակական կառույց)⁴: Ըստ երևույթին, պաշտամունքային նշանակություն ունեին Ամիրանիս-Գորայի ժայռափոր ճանա-

¹ П. Сорокин., Общая социология, В кн.: П. Сорокин, Человек, цивилизация, общество, М., 1991, с. 101.

² B. W. Blouet., Factors influencing the evolution of settlement patterns, In: Man Settlement, Urbanism. Oxford 1972, p. 6-7.

³ A. G. Sagona, The Caucasian region in the Early Bronze Age, Oxford, 1982, P. 1, p. 74.

⁴ 3. Զ. Махарадзе. Поселение Цихиа-гора и проблема переодизации культур эпохи бронзы на территории Грузии. В сб.: Между Европой и Азией. С.-Пб 1996, с. 74.

պարհը, որը, ձգվելով բլրի արևմտյան լանջով, ծիսական կառույցներից մեկի վերևում ավարտվում էր հարթակով⁵:

Մի քանի ժայռափոր արահետներ տանում են դեպի Շիրակի մարզի Գյուլիբուլա գյուղից մոտ 2 կմ արևելք գտնվող բնակավայրը: Հատկանշական է, որ անցողիները տանում էին դեպի սրբատեղի, որն իրենից ներկայացնում էր ժայռի մեջ փորված փոսիկների և առվակների համակարգ: Առանձնապես աչքի է ընկնում ժայռի մեջ փորված լայն անցուղին, որի հատակին փորված էին ակոսներ, ամենայն հավանականությամբ, մարտակառքերի համար: Բնակավայրի տարածքից հավաքված վերգետնյա նյութը բնորոշ է վաղ, ուշ բրոնզե դարերին, ուշ անտիկ ժամանակաշրջանին և միջնադարին⁶:

Հետագա դարաշրջաններում մոնումենտալ ճանապարհների կառուցման ավանդույթը ոչ միայն չի մարում, այլև շարունակում է զարգանալ: Հաստատագրված է սալահատակ քարե ճանապարհ, որը տանում էր դեպի Փարվանա լճի ափին տեղադրված Շառրի կիկլոպյան համալիրը: Համալիրը զբաղեցնում էր երկու բարձունքները: Ճանապարհը սկսվելով մեկից՝ ոլորապտույտներով բարձրանում է դեպի բարձր գագաթը: Ընդ որում ճանապարհին իր երկայնքով ընդգծված է հարթակներով, աստիճաններով, ինչպես նաև մենհիրներով: Նմանատիպ մեկ այլ հուշարձան՝ Աբուլը, տեղադրված է Փարվանայի հակառակ ափին⁷: Ն. Ք. II հազ. երկրորդ կեսով է թվագրվում ՀՀ Արագածոտնի մարզում գտնվող Լազարավան ամրոցը, որտեղ բացված է ուղիղ փողոցների ցանց, ընդ որում փողոցներից մեկն ուներ մոտ 6 մ. լայնություն⁸: Բացառված չէ, որ անցուղիների դեր են կատարել նաև Մեծամորի Մեծ բլրի համալիրի հաստատագրված դարավանդները⁹:

Հին աշխարհում ծիսական կամ նաև նման գործառնությունները փողոցները հազվադեպ չէին: Դրանք սովորական էին Միջագետքի քաղաքների համար: Տաճարին կից երկար ուղղանկյուն բակ պեղված է Ուրուկի Ն. Ք. IV հազ. վերջի շերտերում, ինչպես նաև Մարիի կառավարիչ Զիմրի-Լիմի պալատում: Սրբազան ճանապարհի դասական օրինակ է Նաբուգոդոնոսոր II-ի ժամանակ կառուցված «Արարողությունների ճանապարհը» Բաբելոնում, որ տանում էր Բշտարի դարպասից դեպի Ստորին քաղաք¹⁰: Խեթական պետությունում նմանատիպ նրբանցքներ, միջանցքներ և փողոցներ հաստատագրված են մայրաքաղաք Խաթուսասում¹¹: Ծիսական նպատակներով ճանապարհների օգտագործման մասին վկայություններ ենք գտնում նաև Աստվածաշնչում (Ողբ Գ 9, Եզեկ. Թ 2): Փողոցներում արարողությունների անցկացման ուղղակի հիշատակում է պարունակվում Երեմիայի Ողբում. «Միոնի ճանապարհները սուգ բռնեցին, որովհետև նրա տարեկան տոներին եկողներ չկան» (Ողբ Ա 4): Աստվածաշնչում ճանապարհի սրբագործման մասին է վկայում Երեմիայի մարգարեության հետևյալ դրվագը. «Ձեր ճանապարհներին և ձեր

⁵ **Т. Н. Чубинишвили**. К Древней истории Южного Кавказа, Тбилиси, 1975, с.230.

⁶ Գյուլիբուլաի սրբավայրը հետախուզվել է 1989 թ. Հ. Խաչատրյանի և Հ. Հակոբյանի կողմից:

⁷ **Г. Нариманишвили**, Новые открытия в Триалети и некоторые вопросы функции, происхождения распространения ритуальных дорог. В сб.: Археология, этнология и фольклористика Кавказа, Св. Эчмиадзин, 2003, с. 66.

⁸ Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 1, Ե., 1996, էջ 71:

⁹ **Է. Խանգաղյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան**, Մեծամոր, Ե., 1973, էջ 150:

¹⁰ **С. Ллойд**, Археология Месопотамии, М., 1984, с. 55, 180, 235.

¹¹ **Дж. Маккуин**. Хетты и их современники в Малой Азии, М., 1983, с. 74-77.

գործերին ուղիղ ընթացք տվեք և ականջ դրեք ձեր տեր Աստծո ձայնին» (Եր. ԻԶ 13): Հայտնությունում էլ ասվում է. «Վեցերորդ հրեշտակն իր սկավառակից թափեց մեծ Եփրատ գետի վրա և ցամաքեցին նրա ջրերը, որպեսզի ճանապարհը պատրաստի Արևելքի թագավորին» (Հայտ. ԺԶ 12-13):

Ճանապարհի խորհուրդը կապված էր նաև անդրշիրիմյան կյանքի հետ: Վերջին տարիներին Թռեղքում կատարված հնագիտական պեղումների ընթացքում ի հայտ են եկել սալահատակված ճանապարհներ, որոնք տանում էին դեպի NN III, IV, VI, VIII, XV, XVII, L, թռեղքյան և NN 3,4,6 գուրտակետյան դամբարանները: Թռեղքի նշված համալիրները թվագրվում են Ն. Ք. III հազ. վերջով, իսկ N L դամբարանաբլուրը՝ բեղենյան մշակույթի ժամանակաշրջանով¹²: Դեպի դամբարանաբլուրը տանող մի ճանապարհ էլ երևում է ՀՀ Շիրակի մարզի Հարթաշեն գյուղում¹³:

Ուրարտական ժամանակաշրջանում հաստատագրված են դեպի Ժայռափոր դամբարաններ տանող անցուղիներ¹⁴: Հանդիսավոր երթի համար նախատեսված փողոց հայտնաբերված է նաև Էրեբունիում, ընդ որում փողոցի սկզբում, մուտքի մոտ գտնվում էր շինարարական արձանագրություն¹⁵:

Նշված ավանդույթներն իրենց արտահայտությունը գտան նաև անտիկ դարաշրջանում: Հունական աշխարհում փողոցը կամ ճանապարհը, ամենայն հավանականությամբ, ընկալվում էին որպես ծիսական առումով մաքրագործված տարածք: Այսպես, Էլեվսինից Աթենք տանող ճանապարհը կոչվում էր սրբազան¹⁶: Աթենքի դարպասից դեպի Կերամիկ կոչվող թաղամաս տանում էին երկու սյունազարդ ձեմուղիներ, որոնցից մեկում տեղադրված էին երևելի քաղաքացիների արձանները, իսկ մյուսում աստվածների սրբարանները (կՈՉր. I, II, 4-5): Դեպի Աթենք տանող ճանապարհներից մեկը կոչվում էր Եռոտանի, քանզի ժամանակին այստեղ տեղադրված էր եռոտանի զոհարան (կՈՉր. I, XX, 1): Ճանապարհի՝ ծիսականորեն մաքրագործված վայր ընկալելու մասին են վկայում նաև ճանապարհների երկայնքով անցկացված մրցումների և կառուցված մարզադաշտերի մասին հիշատակությունները (կՈՉր. III, XII, 1, VIII, X, 1, VIII, XII, 3): Միքենեից ոչ հեռու Հերեյոնում (Հերայի սրբազան տարածք) ճանապարհի երկայնքով հոսում էր Էլևտերիոս (Մաքրագործող ջուր) աղբյուրը, որի ջրերը օգտագործում էին քրմուհիները ծեսի ընթացքում (կՈՉր. I, II, 2): Հին Հունաստանում Հերմեսը համարվում էր ճանապարհների տիրակալ, որին նվիրված քառանկյուն կոթողները՝ հերմաները, հաճախ տեղադրվում էին ճանապարհների երկայնքով (կՈՉր. IV, XXIII, 4, VII, XXVII, 1): Նմանատիպ կոթողների ավերումը Ն. Ք. V դ. Աթենքում լուրջ քաղաքական ճգնաժամի պատճառ դարձավ և գնահատվեց որպես պետական հեղաշրջման փորձ¹⁷:

Հին Հունաստանում պահպանվում էր նաև ճանապարհ-անդրշիրիմյան աշխարհի կապը, քանզի ճանապարհների երկայնքով էին տեղադրված հերոսների և առավել

¹² Г. Нариманишвили., նշվ. աշխ., էջ 65:

¹³ Հարթաշենի հնավայրի հետ մեզ ծանոթացրել է Շիրակի երկրագիտական թանգարանի տնօրեն Հ. Խաչատրյանը, ում հեղինակները հայտնում են խորին շնորհակալություն:

¹⁴ Մ. Մելքոնյան, Ուրարտական Ժայռափոր դամբարաններ, Ե., 1993, էջ 23:

¹⁵ С. И. Ходжаш, Н. С. Трухтанова, К. С. Оганесян, Эребуни, М., 1979, с. 11.

¹⁶ Павсаний, Описание Эллады (Այսուհետև՝ Պավսանիոսի աշխատության հղումները՝ տեքստում):

¹⁷ Այդ իրադարձությունների մասին առավել մանրամասն տես՝ Андокид. Речи или история святотатцев. С.-Пб 1996, Фукидид. История. М., 1981 VI, 27

հարգված քաղաքացիների դամբարանները (կՈՉր. I, II, 2, I, XXI, 6, I, XXII, 1, I, XXVI, 3, II, II, 4, VII, II, 6, VIII, XII, 4): Ճամփեզրին էր կանգնեցված Եվրիպիդեսի կենոտաֆը (կՈՉր. I, II, 2): Հատկանշական է, որ Աթենքում՝ Ակրոպոլիսում, գոյություն ուներ հատուկ անցուղի, որը նախատեսված էր զոհաբերության ենթակա կենդանիներին քշելու համար¹⁸:

Ճանապարհների ծիսական դերը առկա է նաև Հայաստանում: Այսպես, թե՛ Մովսես Խորենացին, թե՛ Ագաթանգեղոսը հիշատակում են Արտաշատի ճանապարհին կանգնեցված Տիր-Ապոլոնի տաճարը¹⁹: Գառնիի տաճարը և դեպի այն տանող ճանապարհները գտնվում էին մեկ առանցքի վրա: Փաստորեն, տաճարներում զոհաբանը հանդիսանում էր տաճարական ճանապարհի տրամաբանական ավարտը²⁰:

Այս առումով արժանահիշատակ է Հռոմիկի տաճարական համալիրում գտնված փողոցը: Այն դուրս էր գալիս դեպի տաճարական համալիրի հարավային եզրը՝ քարափը: Փողոցի ողջ երկայնքով տեղադրված էին տարբեր կերտվածքի զոհարաններ: Միանշանակ է, որ այստեղ իրականացվում էին ծիսական բնույթի գործողություններ²¹:

Անտիկ աշխարհում ընդհանրապես և Հին Հունաստանում մասնավորապես քաղաքի կառուցապատումը ենթարկվում էր միասնական հատակագծի: Բոլոր պողոտաները և փողոցները ձգվում էին զուգահեռ և հատվում ուղիղ անկյան տակ: Նույն սկզբունքով՝ հին Արտաշատի փողոցները, բլրին մոտենալով, չէին շեղվում, այլ նույն ուղղությամբ աստիճաններով շարունակվում էին բլուրն ի վեր: Դեռևս Հիպպոդամոս Միլեթացին ընդգծում էր քաղաքի քառանկյուն հորինվածքը, որը պետք է կառուցապատվեր գլխավոր առանցքներով և անկյունագծերով²²: Հիպպոդամոսի տեսակետները իրենց զարգացումը ստացան Արիստոտելի աշխատություններում: Արիստոտելն առաջարկում է զուգորդել հիպպոդամյան եղանակը և փողոցների այնպիսի դասավորվածություն, որը կոժվարեցնի թշնամու կողմնորոշումը քաղաքում: Ըստ Արիստոտելի մեկնաբանների՝ փողոցների ցանցն իրենից ներկայացնում էր իրար զուգահեռ տեղադրված փողոցների համալիր²³: Պետք է նշել, որ փողոցների նմանօրինակ դասավորվածությունը նմանվում է հետագայում հռոմեացիների կողմից կիրառվող ճակատամարտի ժամանակ լեգիոնի տեղադրման կարգին²⁴:

Հայտնությունում նկարագրվող Նոր (Վերին) Երուսաղեմը նույնպես ունի քառանկյուն հատակագիծ. «Մեծ և սուրբ քաղաք Երուսաղեմը, որ իջել էր երկնքից, Աստծո մոտից: Եւ նրա պարիսպները մեծ և բարձր էին, ուներ տասներկու դուռ, տասներկու դռներին՝ տասներկու հրեշտակներ... Արևելյան կողմից՝ երեք դուռ,

¹⁸ И. Т. Кругликова. Античная археология. М., 1984, с. 43

¹⁹ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Խոր.), Տիփսիս, 1913 II, ԽԹ, Ագաթանգեղոս, Հայոց Պատմություն(այսուհետև՝ Ագաթ.), Ե., 1983, III, 778, ՃԸ: Այսուհետև Խորենացու և Ագաթանգեղոսի աշխատությունների հղումները՝ տեքստում:

²⁰ Ա. Ջարյան, Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Ե., 1986, էջ 62:

²¹ А. П. Акопян. Охмийский храмовый комплекс. В сб.: Археология, этнология и фольклористика Кавказа. с. 135, рис. 1.

²² Ա. Ջարյան, նշվ. աշխ., էլ 61:

²³ Аристотель. Политика, Сочинения в четырех томах. т. 4 М., 1984 VII, X, 4-5, տե՛ս նաև VII գրքի հ. 29 ծանոթագրությունը, էջ 771:

²⁴ М. М. Покровский, Военное дело у римлян во времена Цезаря, В кн.: Юлий Цезарь, Записки о галльской войне, С.-Пб.: 1998, с. 295.

հյուսիսային կողմից՝ երեք դուռ, հարավային կողմից՝ երեք դուռ և արևելյան կողմից երեք դուռ... Եւ նա ով խոսում էր իմ հետ իր ձեռքում ոսկե եղեգ ուներ, որպեսզի չափի քաղաքը և նրա դռները, նրա պարիսպները: Եւ քաղաքը քառակուսի էր, որչափ, որ նրա երկարությունն էր, նույնչափ էլ նրա լայնությունը, բարձրությունն էլ՝ նույնը»: (Հայտ ԻԱ-ԻԲ)²⁵: Ի դեպ, Մատենադարանի 8205 ձեռագրում գտնվող գծանկարը, որը պատկերում է Իսրայելի ցեղերի դասավորությունը անապատում Մովսիսական խորանի շուրջ, փաստորեն համապատասխանում է Վերին Երուսաղեմի՝ Հայտնությունում տրված նկարագրությանը²⁶: Քաղաքի միասնական ընկալման մասին խոսում է նաև այն փաստը, որ Մեգարայում դեպի ակրոպոլիս տանող ճանապարհին կանգնեցված էր Հիմնադիր -աստվածներին ձուլված գոհարանը (կՈՉր. I, XLII, 1): Քաղաքի միասնական ընկալումը հաստատագրված է նաև հայ իրականության մեջ: Խորենացին, նկարագրելով Երվանդակերտը, քաղաքի տարբեր հատվածները համեմատում է գեղեցիկ կույսի դիմագծերի հետ (Խոր., II, խբ): Ի դեպ, նույն համեմատությունը կա նաև Աստվածաշնչում՝ Երգ Երգոցում. «Հաճելի էս Երուսաղեմի պես» (Երգ Երգոց Զ 4): Նման նույնացում դիտարկվում է նաև Հայտնությունում (Հայտ ԺԱ 17):

Բնակավայրի միասնական ընկալման և այդ ենթատեքստում ճանապարհի դերի և նշանակության մասին որոշակի պատկերացում է տալիս Հռոմիկի տաճարական համալիրում հայտնաբերված կոթողը: Այն գտնվել է տաճարական համալիրի պեղված հատվածից մոտ 100 մ հյուսիս-արևմուտք և իրենից ներկայացնում է ուղիղ անկյան տակ հատվող ակոսներով առաջացած ուղղանկյուն բարձիկներով զարդարված տուֆե եռակող բրգաձև ժայռաբեկոր²⁷: Սույն հուշարձանը դեռևս միակն է Հայաստանում և դրա մեկնաբանությունը խիստ բարդ է: Հատկանշական է այն փաստը, որ կոթողի վրայի պատկերը նման է պլատոնական՝ 45 աստիճան թեքված խաչի և որոշակի աղերսներ ունի կեռախաչի ինչպես նաև հռոմեական ռազմական ճամբարի հատակագծի հետ²⁸:

Հռոմիկի կոթողը որոշակի նմանություն ունի Հռոմի փողոցներում և խաչմերուկներում (օրինակ՝ Via Emilia) տեղադրվող կոթողների հետ: Սրանց վրա սովորաբար պատկերվում էր խաչ կամ պլատոնյան խաչ²⁹: Նշված պատկերները կարող էին հանդիսանալ հողաչափության գործիք՝ գնոմոնի վերարտադրություն: Ըստ Վիտրուվիոսի՝ գնոմոնը օգտագործվում էր քաղաքի հիմնադրման ժամանակ փողոցների ուղղությունները որոշելիս: Հատկանշական է նաև այն փաստը, որ անկախ նրանից, թե ընդհանուր բնակավայրի հատակագիծը կլոր էր, թե ուղղանկյուն, փողոցները պետք է հատվեին ուղիղ անկյան տակ³⁰:

Հռոմիկի կոթողները կարող էին ունենալ նաև մի այլ՝ խորհրդանշական իմաստ

²⁵ Հարկ է նշել, որ Հայտնությունում չեն հիշատակվում փողոցները, սակայն դարպասների և կենտրոնական հրապարակի տեղադրության նկարագրությունը հուշում է այն միտքը, որ փողոցներն էլ պետք է հատակագծված լինեին կանոնավոր և փոխադրահայաց:

²⁶ Ա. Շ. Մնացականյան, Հայկական զարդարվեստը, Ե., 1955, էջ 423, նկ. 891:

²⁷ Հ. Հակոբյան, Վաղ խաչքարերի մի բնորոշ դասի մոտակա նախատիպերի մասին, Հայոց պատմության և մշակույթի հարցեր, Ա. Մանուկյանի հիշատակին նվիրված գիտաժողով, Ե., 1997, էջ 18-20:

²⁸ М. М. Покровский, նշվ աշխ., էջ 294.

²⁹ J. Rykwert, The Idea of a Town. Princeton, 1988, p. 50-51, fig. 12.

³⁰ Ветрувий, Десять книг об архитектуре. М., 2005, I, VI, 11-13, տես նաև с. 209, Примечание 13 к кн. I. " У. Брей, Д. Трамп. Археологический словарь, М., 1990, с. 70.

և դրված լինել տաճարում: Նմանապես՝ Հռոմի տաճարներում ևս խաչի պատկերով կոթողներ կարող էին տեղադրվել: Այսպես Լամբեսիում պեղված Ասկլեպիոսի տաճարի քարերից մեկին ամրացված էր բրոնզե խաչ, որի խաչաթևերին գրված էին «antiqua» և «postiqua» բառերը³¹:

Հին Հռոմում որպես *templum* կարող էր ընկալվել ոչ միայն ցանկացած պաշտամունքային կառույց, այլև քաղաքը և ռազմական ճամբարը: Հռոմում քաղաքի բաժանումը փողոցներով առանձին թաղամասերի նույնացվում էր *templum*-ի մասերի բաժանման հետ: Քաղաքի սրբազորման ավանդույթը Հռոմում ուներ հին ավանդույթներ: Այսպես, քաղաքը սրբազորված էր դեռևս Էտրուսկյան ավանդույթի համաձայն: Քաղաքի հատակագծման սրբազան սկզբունքներին հարազատ՝ կենտրոնական փողոցները պետք է հատվեին քաղաքի կենտրոնում՝ ստեղծելով յուրատեսակ խաչ, որը պետք է մարմնավորեր կենարար ուժը, սրա աղբյուրն էր քաղաքի կենտրոնում գտնվող պաշտամունքա-վարչարարական կենտրոնը³²: Խաչը դիտվել է նաև որպես երկրի կենտրոն (Ռենե Գենոն): Եվրոպական մոզական շրջանը բաղկացած էր երեք համակենտրոն շրջաններից՝ հատված խաչաձև ծայրերով, միմյանց խաչված երկու տրամագծերից: Ըստ Պլատոնի՝ նման խաչի ձևը ենթադրում էր աստվածային ուժ, և այն օժտված էր առանձնահատուկ մոզական հատկություններով³³:

Քառանկյուն հմայիլի մեջ ներգծված պլատոնյան խաչ հայտնաբերված է նաև Գետաշենում: Քառակուսու մեջ ներգծված կեռիսաչ հայտնի է Մուսիերիից, իսկ շրջանակի մեջ ներգծված խաչ կամ կեռիսաչ՝ Լճաշենից: Խաչ, պլատոնյան խաչ և կեռիսաչ պատկերված է նաև Լճաշենից և Վանաձորից հայտնաբերված կավանոթների, ինչպես նաև Կարմիր Բլուրի գոհարանի ու Լճաշենյան և Կարմիր-բլուրյան ֆալոսների վրա³⁴:

Ախթալայի գոտու վրա պատկերված մարտակառքի անիվները ներկայացնում են համակենտրոն շրջանակների մեջ ներգծված պլատոնյան խաչեր: Այդ պատկերը Հ. Բարայեյանի կողմից մեկնաբանվում է որպես արևի աստվածության պատկեր³⁵: Խաչեր, պլատոնյան խաչեր և կեռիսաչ պատկերված են նաև Վանաձորի «Դիմացի թաղից», ինչպես նաև Էլառի հ. 2 դամբարանից հայտնաբերված մեդալիոնների վրա³⁶: Պլատոնյան խաչ պատկերված է նաև Ղունիբից և Մեծամորից հայտնաբերված ծիսական հացի դրոշմիչների վրա³⁷:

Ուսումնասիրելով Հռոմի կոթողը, կարելի է առաջարկել դրա երկու հավանական բացատրություն: Հռոմի կոթողը կարող էր հանդիսանալ Արևի խորհրդանշական պատկեր կամ, հավանաբար, սրբազան տարածքի (տվյալ դեպքում տաճարական համալիրի) խորհրդանշական հատակագիծ:

³¹ J. Rykwert, նշվ աշխ., էջ 49:

³² А. Наговицын, Мифология и религия этрусков, М., 2000, с. 67-68.

³³ Энциклопедия: Символы, Знаки, Эмблемы (Сост. Э. Багдасарян и др.) М., 2005, с. 34, 247, 252

³⁴ С. А. Есаян, Амулеты, связанные с культом солнца из Армении, Советская Археология 1968 N 2, с. 256-257, рис. 1-2, նույնի՝ Скульптура Древней Армении. Е., 1980, таб. 57 (1,2), Հ. Բարայեյան, Պաշտամունքն ու հավատալիքները ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Ե., 1972, էջ 46:

³⁵ Հ. Բարայեյան, նշվ աշխ., էջ 52:

³⁶ Բ. Խանգաղյան, Էլառ-Դարանի, Ե., 1979, էջ 108-110, նկ. 137, 140, աղ. XXIX:

³⁷ К. Х. Кушнарева, Древнейшие памятники Двина, Е., 1977. с. 58, Բ. Խանգաղյան, Կ. Մկրտչյան, Բ. Պարսամյան, նշվ աշխ., էջ 132:

Բնակավայրերի խորհրդանշական հատակագծի պատկերները հայտնի են դեռևս հնագույն ժամանակներից: Չաթալ Հույուքի նեոլիթյան բնակավայրի VII հորիզոնի սրբավայրում հաստատագրված որմնանկարը պատկերում է քաղաքը և Հասան-դադի ժայթքող հրաբուխը³⁸: Քաղաքի գծանկարային պատկերի մասին հիշատակվում է նաև Աստվածաշնչում. «Դու էլ, մարդու որդի, քեզ համար մի աղյուս առ, այն դիր քո առաջ, դրա վրա կնկարես Երուսաղեմ քաղաքը, շուրջը կհաստատես նրա պաշարումը: Նրա շուրջը մարտական աշտարակներ կշինես և կըրջապատես պատնեշներով, շուրջը բանակներ կկանգնեցնես ու նետաձիգներ կդնես չորս կողմը» (Եզեկ. Դ 1-2): Այս վերջին տողերից պարզ է դառնում, որ տվյալ աղյուսն օգտագործվում էր զուտ ծիսական նպատակներով:

Փողոցի ընկալումը, որպես պաշտամունքային մաքուր վայր շարունակվում էր նաև միջնադարյան շրջանում: Քրիստոնեության մեջ խորհրդանշական իմաստ է ստացել դեպի Գողգոթա տանող ճանապարհը, սակայն ակնհայտ է, որ այն որոշակի խորհրդանշական իմաստ ուներ նաև Երուսաղեմում՝ նկատի ունենալով մահվան դատապարտվածներին այդ ճանապարհով դեպի Գողգոթա տանելը (ըստ Ավետարանի Գանգ կամ Գազաթ) (Մատթ. ԻԷ 32-34, Մարկ. ԺԵ 21-24, Դուկ. ԻԳ 25-31, Հովհ. ԺԹ. 47): Նույն կերպ սրբագործված է նաև ճանապարհը դեպի Երուսաղեմի մուտքը (Մատթ. ԻԱ 1-12, Մարկ. ԺԱ 5-12)³⁹: Պարականոն ավետարաններից մեկում նշվում է, որ սրբազան լվացումների վայրը գտնվում է տաճարի բակից դուրս⁴⁰:

Դեռևս Ագաթանգեղոսը նշում է, որ Ս. Գրիգոր Լուսավորիչը «նոյնպես և ի յելս և մուտս ճանապարհաց և ի փողոցս և ի հրապարակս և ի ճանապարհակիցս պահ և ապաւեն գերկրպագեալն յամենեցունց գնոյն նշան (խաչը) կանգնեցնէր» (Ագաթ. ՃԸ 782): Արցախում՝ Վանքասարի ժայռափոր համալիրում դեպի քարանձավային եկեղեցական համալիր, ինչպես նաև պաշտամունքային, հանգստի հարթակներ ու հանգստարան հասնում էին ժայռափոր աստիճաններ, որոնք սկսվում են լեռան ստորոտից և բեկվելով տանում են դեպի եկեղեցի⁴¹: Հատկանշական է, որ Վանքասարի ժայռափոր համալիրի քարոզման հրապարակի հատակին հայտնաբերված է ներգծված ուղղանկյուն և եռանկյուն գծապատկերներից բաղկացած պատկերաքանդակ: Այն, հավանաբար, ներկայացնում էր տիեզերքի խորհրդանշական կառուցվածքը (մանդալա)⁴²: Վանքասարի պատկերաքանդակի մեկնաբանությունը որպես «մանդալա» չի հակասում Հոդմիկի կոթողի՝ որպես տարածքի կամ բնակավայրի սիմվոլիկ մանրակերտի մեկնաբանությանը⁴³:

³⁸ Дж. Мелларт, Древнейшие цивилизации Ближнего Востока. М., 1982, с. 85, տե՛ս նաև՝ Հ. Հակոբյան, Տաճարի հինարևելյան և անտիկ մոդելը. Գիտելիք, խորհրդանշիչ, հավատալիք և սովորույթ. Միջազգային առաջին գիտաժողովի հոդվածների ժողովածու, Ե., 2006, էջ 9-18:

³⁹ Տե՛ս նաև՝ Ստեփաննոս Միսեցի, Մեկնութիւն չորից անտարանչացն, (այսուհետև՝ Սյունեցի), Ե., 1994, էջ 95 (այսուհետև Ստեփաննոս Սյունեցու աշխատության հղումները՝ տեքստում):

⁴⁰ Pap Oх. 840 В кн.: Апокрифы древних христиан. М., 1989, с. 45.

⁴¹ Հ. Միմոնյան, Հ. Մանամյան, Վանքասարի հուշարձանները, Հուշարձան Գ, Ե., 2005, էջ 189, նկ. 5-6:

⁴² Նույն տեղում, էջ 171, Հ. Միմոնյան, Արցախի և ազատագրված շրջանների 1990-2005 թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները, Հ. Միմոնյան, Հ. Մանամյան, Ա. Գևորգյան, Արցախի և ազատագրված շրջանների 1990-2005 թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները, (ցուցահանդեսի ցանկ), Ե., 2007, էջ 12:

⁴³ Քաղաք-Տիեզերք կապի և այդ ենթատեքստում քաղաքի բաժանման մասին մանրամասն տես՝ Ա. Զարյան, նշվ. աշխ., էջ 146-161: Տե՛ս նաև՝ Հ. Հակոբյան, Տիեզերքի պատկերագրությունը հին Հայաստանում, Մաշտոցյան Զ ընթերցումներ, Օջակյան, 2004, էջ 20:

Դիցարանական աղբյուրներում և Աստվածաշնչում բազմիցս նշվում է, որ աստվածների բնակավայրը քաղաք էր⁴⁴: Երկնային արքայությունը որպես քաղաք էր պատկերում նաև Աստվածաշնչի միջնադարյան մեկնիչ Ստեփանոս Սյունեցին (Սյունեցի, էջ 35): Բացի այդ, Ստեփանոս Սյունեցին իր մեկնություններում ուղղակիորեն հիշատակում է դեպի երկնային թագավորություն և դժոխք տանող ճանապարհները (Սյունեցի, էջ 54): Ինչպես և քաղաքը, փողոցը ևս ունի սիմվոլիկ իմաստ (Ղուկ. ԺԴ 21-22) (Սյունեցի, էջ 123): Ամենայն հավանականությամբ, երկնային արքայության՝ որպես քաղաք ընկալումը մեծապես կախված է տվյալ ժողովրդի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից և ուրբանիզացիայի աստիճանից:

Հողմիկի և Վանքասարի գծապատկերները հաճախ հանդիպում են նաև հայկական մանրանկարներում: Մասնավորապես ներգծված ուղղանկյուններով և զուգահեռ հատվող գծերով զարդարված են Աստվածամոր գահը (1378 թ. Գրիգոր Տաթևացու կողմից ծաղկված 1297 թ. Հովհաննես Եղեգիսցու ձեռագիր՝ Մատենադարանի 7482 ձեռագիր), Ղազարոսի գերեզմանը (1392 թ. ձեռագիր՝ Խիզան, ծաղկող Ռստակես, Մատենադարանի ձեռագիր 7629), Մարկոս ավետարանիչի սեղանի պատվանդանը (1237 թ. ձեռագիր, Գրիգոր գրիչ, Մատենադարանի ձեռ. 7700), Դրախտի դուռը (1268 թ. ավետարան՝ ծաղկող Թորոս Ռոսլին, Մատենադարանի ձեռ. 10675), Հիսուսի գերեզմանը Հարության տեսարանում (1420 թ. ձեռագիր՝ Պսակ ծաղկող, Մատենադարանի ձեռ. 4826), Հիսուսի խաչափայտը (ծաղկող Սարգիս Պիծակ, Երուսաղեմի ձեռ. 1973), Հիսուսի խաչափայտը (1610 թ. ձեռագիր՝ ծաղկող Հակոբ Զուղայեցի Մատենադարանի ձեռ. 7639)⁴⁵: Հետաքրքիր է Մատենադարանի 3722 ձեռագրի լուսանցազարդը, որը պատկերում է ձկնից աճած կենաց ծառ, կենտրոնում ունի երկու ներգծված ուղղանկյունների պատկերը, ընդ որում ուղղանկյունները փաթաթված են կենաց ծառի ճյուղերով: Նույն ձևով (որպես կենաց ծառ) Ա. Մնացականյանը մեկնաբանում է Մատենադարանի 4893 ձեռագրում՝ պատվանդանին դրված սափորի պատկերը: Ընդ որում պատվանդանը զարդարված է ներգծված ուղղանկյուններով: Երկրորդ և երրորդ ուղղանկյունները իրար էին միանում անկյունագծերով, իսկ չորս հատվածներում պատկերված են երկրաչափական սեղանի տեսք ունեցող նշաններ⁴⁶: Ակնհայտ է, որ այստեղ նման նշանները կարող են նշանակել Աստծո արքայությունը քաղաքի պատկերով:

Սակայն, հողմիկյան գծանկարին առավել նման են 1392 թ. Սարգիս Խիզանեցու ծաղկած Ավետարանում (Մատենադարանի ձեռ. 3717) ոտքերի լվացման տեսարանում և 1403 թ. Զաքարիայի կողմից ծաղկած Ավետարանում պատվիրատուի դիմանկարի (Մատենադարանի ձեռ. 4023), 1460 թ. Հովհաննես Խիզանեցու Ավետարանի (Մատենադարանի ձեռ. 7566) պատվիրատուների նկարի մանրանկարի վերին հատվածները⁴⁷: Բացառված չէ, որ տվյալ դեպքում մանրանկարիչն ի նկատի ուներ երկնական արքայությունը:

Հողմիկյան տիպի գծանկարների զուգահեռները պատկերված են ոչ միայն մանրանկարների վերին հատվածում: Նման պատկերով զարդարված է Աստվածածնի

⁴⁴ См. у Э. Н. Темкин, В. Г. Эрман, Мифы древней Индии, М., 1986, с. 262.

⁴⁵ E. Korkhmazian, I. Drampian, H. Hakopian, Armenian miniatures of the 13-th and 14-th Centuries, The Matenadaran collections, Leningrad, 1984, tab. 24, 49, 55, 81, 103, Г. Акопян, Миниатюра Васпуракана XIII-XV вв., Е., 1989, рис. 42, 44, 67, Ա. Գևորգյան, Հայկական մանրանկարչություն, Դիմանկար, Ե., 1982, նկ. 36, 47, 68:

⁴⁶ Ա. Շ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 107, 471, նկ. 278, 968:

⁴⁷ E. Korkhmazian, I. Drampian, H. Hakopian, նշվ. աշխ., նկ. 48, Ա. Գևորգյան, նշվ. աշխ., նկ. 47, 59:

մահվան մահիճը Վերափոխման տեսարանում Զաքարիա գրիչի 1385 թ. ձեռագրում (Մատենադարանի ձեռագիր 4870)⁴⁸: Մարտիրոս ծաղկողի 1461 թ. Ավետարանում (Մատենադարանի ձեռ. 9717) խաչափայտի մոտ պատկերված պատվիրատուները կանգնած են հողմիկյան պատկերաքանդակը հիշեցնող հարթության վրա: Նույն զարդանախշումն ունի Պողոս Առաքյալի և Հիսուսի ոտքերի տակի տապաստը (1435 թ. Մեկնություն Մեծոփականքից՝ Մատենադարանի ձեռ. 1380 և 1649 թ. Հայրապետ ծաղկողի Աստվածաշունչ՝ Մատենադարանի ձեռ. 189)⁴⁹: Հողմիկյան գծանկարն առկա է նաև Աղավնաձորի 1001 թ խճաքարի վրա: Նման զարդանախշով զարդարված է խաչքարի «Գողգոթա» հատվածը⁵⁰: Տվյալ դեպքում կարելի է ենթադրել, որ այստեղ մանրանկարիչն ի նկատի ուներ բնակելի աշխարհը, որի արտացոլումներից է քաղաքը:

Ճանապարհի սրբագործման փաստը երևան է գալիս նաև ժողովրդական բանահյուսությունում: Դրա մասին են վկայում Մասունում Միերի ճանապարհի և Վիշապի ճանապարհի տեղանունները⁵¹: Այսպիսով, հնագիտական, դիցաբանական, գրականագիտական և աստվածաբանական նյութի համադրությունը ցույց է տալիս, որ ճանապարհը և փողոցը, հանդես գալով մի դեպքում որպես առանձին երևույթ, մյուս դեպքում, որպես քաղաք սոցիո-մշակութային երևույթի բաղադրատարր, իրենց մեջ միավորում են խորհրդանշականը և գործառականը: Ընդ որում, ինչպես հին աշխարհում, այնպես էլ ամենայն հավանականությամբ միջնադարում, այս երկու գործառույթներն էլ անբաժան են:

⁴⁸ **Ա. Աթիլյի**, նշվ. աշխ., նկ 32:

⁴⁹ **Ա. Գևորգյան**, նշվ. աշխ., նկ. 53, 60, 71:

⁵⁰ **Լ. Ազարյան**, Հայկական խաչքարերը, Ս. Էջմիածին, 1973, նկ. 18-19:

⁵¹ **Ա. Ղանալանյան**, Ավանդապատում, Ե., 1969, էջ 222, **Վ. Պետոյան**, Մասունի ազգագրությունը, Ե., 1965, էջ 386:

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ

Է-Ի ԼԵԶՎԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԸ
ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Անվան բնույթի ու ծագման հարցերը լեզվափիլիսոփայության մեջ քննարկման նյութ են եղել սկսած հին ժամանակներից մինչև մեր օրերը: Անունը, ըստ Ա. Ֆ. Լոսնի, կազմում է իրականության կենտրոնական [առանցքը], հանդիսանում է յուրաքանչյուր գոյի հիմքը և... բաղադրիչ տարրը (Միլովանովա): Այս առումով առանձնակի ուշադրություն է գրավում աստվածաշնչյան հետևյալ դրվագը: Երբ Աստված Մովսեսին պատվիրում է առաջնորդել Իր ժողովրդին և դուրս բերել Եգիպտոսից, վերջինս ասում է. «Ես կգնամ իսրայելցիների մոտ ու նրանց կասեմ. «Ձեր հայրերի Աստվածն է առաքել ինձ ձեզ մոտ»: Եվ եթե նրանք հարցնեն ինձ, թե ինչ է նրա անունը, ես ի՞նչ պատասխան տամ նրանց»: Աստված ասաց Մովսեսին¹. «Ես այն Աստվածն եմ, որ է»: Եվ ավելացրեց. «Այսպես կասես իսրայելցիներին. «Որ է-ն առաքեց ինձ ձեզ մոտ» (Ելք Գ 13-15):

Ինչո՞ւ է Աստված իրեն անվանում է: Լեզվում բոլոր իրերի, երևույթների գոյության առաջնային պայմանը նրանց է- ազված լինելն է, այդ պատճառով էլ է-ն ամենուր է (հմմտ. Մատթեոս Ժ 29-31), Է-ով է ամեն ինչ արձանագրվում լեզվում: Գոյություն ունենալը հնարավոր է ժխտել, որովհետև գոյությունը առարկայի գոյելու պայմանն է, հետևաբար տվյալ առարկայի չգոյությամբ դադարում է նաև այդ առարկայի գոյությունը: Մինչդեռ Է-ն հնարավոր չէ ժխտել: Երբ Է-ով որևէ բան ժխտվում է, Է-ն չի դադարում գոյություն ունենալուց, այլ նշվում է այս կամ այն առարկայի, երևույթի Է-ազված չլինելու փաստը: Երբ ասվում է, որ առարկան գոյություն չունի, արձանագրվում է տվյալ առարկայի՝ գոյության պայմանի բացակայությունը: Է-ն առարկայի մեջ չէ. առարկան է Է-ի մեջ: Է-ն գոյությունից բարձր է և անկախ: Դա յուրաքանչյուր գոյի լինելիությունն է: Նրանով է ամեն ինչ (հմմտ. Հովհ. Ա 3-4): Այս կարգավիճակը չունի բայերից ոչ մեկը, քանի որ վերջիններս այս կամ այն գործողության անվանումներ են, իսկ «անունը համառոտ սահման է, և սահմանն ընդարձակված անուն»: Այդ պատճառով կարելի է ենթադրել, որ Է-ն աստվածաշնչյան համատեքստում նշված է ոչ թե պարզապես լինել կամ գոյել, այլ ընդհանուր ստորոգման իմաստով, որը «խոսք կազմող գործություն ունի»²: Լեզվաբանական առումով սա այն կաղապարն է, որում իրականացվում է յուրաքանչյուր մասնավոր խոսք:

Երեխան խոսել սովորելու սկզբնական շրջանում չի գործածում ստորոգման բանավոր արտահայտության որոշակի ձևեր: Սակայն նա կարող է դա կատարել հնչերանգի միջոցով: Սա չի նշանակում, որ ստորոգման տեղը առժամանակ գրավել է հնչերանգը: Թե՛ հնչերանգը և թե՛ բանավոր արտահայտության ձևերը ներկայացնում են նույն ստորոգումը: Վերջինս առկա է մարդու մտածողության սաղմնային ձևերում, քանի որ երկրորդ անգամ նույն օբյեկտի ճանաչելը երեխայի կողմից թույլ է տալիս ենթադրել, որ նա արդեն ինչ-որ կերպ գրանցել է իր հիշողությունում տվյալ օբյեկտի գոյությունը: Ստորոգումը զրո ձևությամբ հաճախ հանդես է գալիս նաև խոսակցական լեզվում՝ խոսքի, հուզականության դրսևորման և այլ նպատակ-

¹ Տե՛ս Գրիգոր Տաթևացի, Ոսկեփորիկ, Երևան, 1995, էջ 241:

² Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 368:

ներով: Նման դեպքերում խոսակիցները գիտակցում կամ ենթագիտակցում են, որ դիմացինը կրնալի իրենց զեղչված ստորոգմամբ խոսքը Է-ացված տարբերակով: «Երբ մեկը հանկարծ բացականչում է **անձրև**, կամ **ձյուն** ...[սովորաբար խոսակիցը կամ ունկնդրողը] հասկանում է, թե «անձրևում է» կամ «ձյուն է գալիս»: Գոյականները սրանց մեջ կատարում են բայի դեր»³:

Գ. Բ. Ջահուկյանը, խոսելով նախադասության իմացական և լեզվա-քերականական կաղապարների սահմանների մասին, նշում է, որ «իմացական կաղապարի երկու կամ ավելի անդամներ կարող են արտահայտվել մեկ բառով»⁴: Քերականական առումով Է-ն պարունակում է ստորոգման, գոյության հատկանիշի և ենթակայի հատկանիշների՝ երրորդ դեմքի եզակի թվի գաղափարները: Աստվածաշնչյան համատեքստում ենթական ամբողջությամբ է առկա Է-ում: Հետևաբար Է-ն եռամիություն է (հմմտ. Եսայի ԾԹ 21):

Է-ն բարձր է անգամ այնպիսի համընդհանուր գաղափարներից, ինչպիսիք են տարածությունն ու ժամանակը: Վերջիններիս գոյությունը նույնպես Է-ով է պայմանավորված. դրանք նախ պետք է լինեն, հետո սկսեն կատարել իրենց գործառնությունը (թեպետ տարածությունն ու ժամանակը գործառնությանն առումով նույնպես անկարող են ծավալվել առանց ստորոգման): Է-ն տարածությունից ու ժամանակից դուրս է (հմմտ. Սիրաք ԽԲ 21): «[Է-ն] ցույց է տալիս կայուն, ըստ սկզբի և ավարտի չբնութագրվող... հատկանիշ»:

Այստեղ իրավացիորեն կարելի է կասկածել, որ Է-ն մարդու մտածողությանը հատուկ կաղապար է, ինչպես տարածությունն ու ժամանակը, և որ դժվար թե հնարավոր լինի պնդել Է-ի օբյեկտիվ իրողություն լինելը:

Մարդու մտածողության սահմաններից վեր գոյության մասին ցանկացած գիտական պնդում անհնարին է: Ըստ Կ. Յասպերսի, «Լեզուն սահմանափակ երևույթ է և չի կարող բովանդակել [անսահմանը]» (հմմտ. Պերցն, 16): Սակայն հաճախ խոսելով վերբանական երևույթների մասին՝ մենք մեր մտածողությունը օգտագործում ենք որպես մի աղոտ հայելի (հմմտ. Ա. Կորնթ. ԺԳ 12): Նրանում արտացոլված բովանդակության հաշվին մենք փորձում ենք որոշակի պատկերացում կազմել վերտրամաբանական երևույթների մասին:

Է-ի դեպքում գործը կրկնակի բարդ է: Նախ՝ որովհետև վերջինիս մասին խոսելիս մենք ամեն անգամ դիմում ենք ստորոգմանը: Եվ երկրորդ՝ յուրաքանչյուրիս գոյությունը նույնպես Է-ով է պայմանավորված (հմմտ. Սաղմ. ՂԹ 3): Այդ պատճառով մենք չենք կարողանում Է-ի՝ որպես մտածողությունից վեր գոյություն ունեցող օբյեկտիվ իրողության մասին լիարժեք գիտական դատողություններ անել (հմմտ. Հռոմ. Թ 20-22):

Այն, ինչը կարելի է լեզվափիլիսոփայական առումով պնդել, հետևյալն է. Է-ն մեր մտածողության ճանաչելիության սահմաններում ամենայն ընդգրկող, բացարձակ բնույթ ունեցող էություն է: Մենք չենք կարող որևէ բանի մասին խոսել՝ առանց նախապես ընդունելու, որ տվյալ հասկացությունը, առարկան կամ հատկանիշը գոյություն ունի առնվազն մեր լեզվում: Գոյության հատկանիշն ամրագրված է հատկացալին ստորոգման միջոցով: Հետևաբար ստորոգումը առկա է ոչ միայն բայի, այլև բանի յուրաքանչյուր դրսևորման դեպքում: Է-ն ու բանը մեկ են:

³ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հտ. Դ, գիրք Ա, Երևան, 1959, էջ 3:

⁴ Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 390:

ՎԱԶԳԵՆ Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՎԱՆՑՈՒ «ՔԱՐՈՉԳԻՐՔԻ» ԼԵԶՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արի, Աստուած հարցն մերոց,

Որ ապաւենդ ես նեղելոց...

(Սիմեոն Կաթողիկոս Երևանցի)

1. 18-րդ դ. հայ հոգևոր և մշակութային կյանքը համեմատաբար ավելի տանելի է եղել, քան նյութականն ու քաղաքականը: Հայ Առաքելական Եկեղեցին ավելի տոկուն ջանքեր է գործադրել իր ժողովրդին ըստ ամենայնի ծառայելու և սպասավորելու գործում: Այդ ընթացքում ամենամեծ մտահոգությունը եղել է հավատացյալ ժողովրդի միասնության ապահովումը, որին շաղկապվել են իմացական, կրթական և այլ մակարդակներում իրականանալի ձեռնարկումները:

Այդ դարի զավակ է Սիմեոն Կաթողիկոս Երևանցին (1710-1780 թթ.), որի հոգևոր-իմացական կյանքն անմնացորդ նվիրում է եղել իր ժողովրդին: Ամենայն Հայոց Հայրապետն իր գահակալության տարիներին (1763-1780 թթ.) ոչ միայն ձեռնամուխ է լինում եկեղեցական կազմակերպչական և կառուցողական գործին, այլև ստեղծում է գրական տարբեր բնույթի կարևոր աշխատություններ, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ հայ հոգևոր և ազգանվեր հավատի, ազգաշահ իմացական ներուժի արգասիք: Դրանց թվում, կարծում ենք, իր ուրույն տեղն ունի «Քարոզգիրքը», որը մինչև այժմ ձեռագիր է՝ գրված ժամանակի գրաբարով, խաղացել է իր դերը ժամանակին և այսօր էլ չի կորցրել քարոզխոսական կարևորությունը՝ իր կենսունակությունն ու արդիականությունը¹:

2. Հայոց Հայրապետի կյանքի ու գիտական-աստվածբանական գործունեության շատ հանգամանքներ ու վերջիններիս մանրամասներ եղել են առանձին ուշադրության առարկա Հայ Առաքելական Եկեղեցու և առհասարակ հայ հոգևոր-մշակութային կյանքի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում: Դրանցում համեմատաբար քիչ տեղ է հատկացված բանիբուն մտավորական Հայրապետի գրական ժառանգության վերլուծությանը, մանավանդ եթե նկատի ենք ունենում այդ ժառանգության բանասիրական-լեզվաբանական կողմը²:

Սիմեոն Կաթողիկոս Երևանցու ձեռագիր և տպագիր աշխատությունները գրված են ժամանակի գրաբար հայերենով, ուստի կարևոր աղբյուր են վերջինիս բառապաշարի, քերականական առանձնահատկությունների, առհասարակ մեր գրական լեզվի հին և նոր տարբերակների տիպաբանական բնութագրի տեսակետից:

¹ Կարծում ենք, որ ժամանակն է լույս ընծայելու «Քարոզգիրքը» ոչ միայն գրաբարով, այլև վերջինիս նոր գրական հայերեն թարգմանությամբ:

² Տե՛ս, օրինակ, Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի ի Սիմեոնէ մինչև ցնովհաննէս Ը, գրեալ ի Մսերայ Մսերեանց, Մոսկուայ, 1876, Դիւան Հայոց պատմութեան, գիրք Գ (Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը կենսագրութեամբ եւ յաւելուածովք ու ծանօթագրութիւններով հրատարակեց Գիտքահանայ Աղանեանց), Թիֆլիս, 1894:

Այս նկատառումով էլ, ահա, որոշակի կարևորություն ունի նաև «Քարոզգրքի» լեզուն, հատկապես վերջինիս բառապաշարը:

Լինելով ժամանակի հիմնավոր և լայն կրթություն ստացած, հոգևոր ծառայության մեծ պատրաստություն ունեցած անձնավորություն՝ Սիմեոն Կաթողիկոս Երևանցին լավագույնս տիրապետել է հայոց լեզվի ոչ միայն հին՝ գրաբարյան վիճակի կնճռոտ երևույթներին, այլև իր ժամանակի աշխարհաբարին՝ ընդհանուր գործածական հայերենին: Դա ակնառու է նրա գրեթե բոլոր երկերի մեջ, և դրանց շարքում չի բացառվում «Քարոզգիրքը», որը մեզանում բեմասացական խոսքի նկատելի մի երևույթ է:

Եթե մեր օրերում հնարավորություն ստեղծվի լույս ընծայելու «Քարոզգիրքը» բնագրով, ապա կարող ենք համոզված լինել, որ այն լավագույն գրքերից մեկը կարող է լինել հոգևոր ծառայության կոչված անհատ հոգևոր սպասավորների և առհասարակ մեր հավատացյալ ժողովրդի քրիստոնեական իմացության ու հոգևոր ամրակայման գործում:

Իսկ լեզվի պատմության տեսակետից նկատենք, որ ավելի որոշակի կարող է դառնալ մեր պատկերացումը տվյալ ժամանակի գրական հայերենի վերաբերյալ:

3. Չունենալով հնարավորություն Սիմեոն Կաթողիկոս Երևանցու «Քարոզգրքի», առավել ևս նրա գրական ողջ ժառանգության լեզվին մանրամասն և լայն քննության մեջ անդրադառնալու՝ սույն հոդվածում սահմանափակվելու ենք հիշյալ ձեռագիր երկի բառապաշարի կարևորագույն առանձնահատկությունների վերաբերյալ մի քանի նկատառումներ մատնանշելով, ընդ որում լեզվական ամբողջական ուսումնասիրությունը թողնելով հետագային: Նշենք նաև, որ ժամանակին անդրադարձել ենք հեղինակի երկերից մեկ-երկուսի լեզվի տվյալներին, ընդ որում քաղվածաբար և բավականին սեղմ շարադրանքով՝ կապված 18-րդ դ. հայերենի պատմության ուսումնասիրության, ինչպես նաև նրա «Ջամբո» հանրագիտարանային աշխատության նոր գրական հայերեն թարգմանության և բնագրի՝ ինչ-որ չափով դժվարություն հարուցող տեղիների մեկնաբանման ու ծանոթագրման հետ³:

Այստեղ ևս անդրադառնալու ենք լեզվական այնպիսի առանձնահատկությունների, որոնք հիմնականում վերաբերում են բառապաշարին, մասամբ ձևաբանական որոշ դրսևորումներին, մանավանդ որ դրանք կարևոր չափանիշ են և առանցքային նշանակություն ունեն հայոց լեզվի պատմության տեսակետից: Եվ այդ կարգի առանձնահատկությունների վերաբերյալ խոսք է եղել մեծանուն Հայրապետի «Ջամբո» երկի բառապաշարին նվիրված առանձին աշխատանքի մեջ⁴:

4. «Քարոզգիրքը» ձեռագիր վիճակով բաղկացած է երկու հատորից. առաջինում ընդգրկված են հեղինակի ճառերն ու ներբողյանները, իսկ երկրորդում՝ տարեկան քարոզները:

Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի մեջ կան այնպիսիները, որոնք ամփոփում են այդ աշխատանքները՝ տարբեր գրչություններով, նաև ինքնագիր: Ստորև քննության ենք առնելու «Քարոզգրքի» միայն տարեկան քարոզ-

³ Տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի գործառնությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Երևան, 1990: Սիմեոն Կաթողիկոս Երևանցի, Ջամբո, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Գ. Համբարձումյանի, պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները և քարտեզները Գ. Մ. Բաղայանի, Երևան, 2003:

⁴ Հմմտ. Վ. Գ. Համբարձումյան, Սիմեոն Կաթողիկոս Երևանցու «Ջամբո» երկի բառապաշարը, «Էջմիածին», Ե (մայիս), 2006, էջ 42-54:

ների բառապաշարի նորակազմությունները, որոշ բառերի իմաստային նոր կիրառությունները, ինչպես նաև մի շարք բառերի հնչյունական և ձևային (ձևաբանական) այն տարբերությունները, որոնք տեղ են գտել կա՛մ ժամանակի խոսակցական հայերենի ազդեցությամբ, կա՛մ լատինաբան հայերենի ձևերի՝ արդեն ինքնաբերական կամ տարերային գործածության բերումով:

Կոնկրետ դեպքում հարկ ենք համարում նշելու հետևյալը.

ա) Հիշյալ կարգի լեզվական փաստերը քաղել ենք Մատենադարանի հմր 2314 ձեռագրից և անհրաժեշտության դեպքում բնագրային վկայություններին կից նշում ենք այդ ձեռագրի էջերը: Այնուհետև փաստերը քաղել ենք ընտրողաբար, ոչ թե ամբողջությամբ, ուստի դրանք չեն հավակնում վերջնական կամ սպառիչ լինելու, այլ հիմք են դառնում ավելի ծավալուն աշխատանքի ձեռնամուխ լինելու:

բ) Ձեռագրում բավականին մեծ թվով բառեր գործածված են ժամանակի ընդհանուր գրական նորմայից շեղվող հնչյունական տարբերություններով՝ կապված հատկապես պայթական և շփական բաղաձայնների, որոշ երկհնչյունների, մասամբ նաև ձայնավորների հետ: Ավելացնենք, որ տարբերություններն արդյունք են հայերենի խոսակցական տարբերակի ունեցած ազդեցության: Եվ քանի որ գործ ունենք ձեռագիր աշխատանքի հետ, ուստի այդ ազդեցությունը մնացել է բնական վիճակով, չի ենթարկվել խմբագրման:

գ) Տեղ են գտել նաև լատինաբան հայերենին բնորոշ քերականական ձևեր՝ հատկապես անվանական և բայական կազմությունների մեջ, և դա միանգամայն բնական է եղել, եթե նկատի ունենանք այն, որ Սիմեոն Կաթողիկոս Երևանցին ժամանակին կրթություն է ստացել նաև Կոստանդնուպոլսում գտնվելու տարիներին: Եվ ինչպես ժամանակին անդրադարձել ենք, 18-րդ դ. կեսերին մեզանում դեռևս շարունակվում էր գործածվել 14-րդ դ. սկիզբ առած լատինաբանությունը, որը հաղթահարվեց 18-րդ դ. 80-ական թթ.⁵:

դ) «Քարոզգրքում» հանդիպում են նորակազմ բառեր, որոնք մեծ մասամբ սովորական կամ լայն գործածություն ունեն, իսկ փոքր մասը կազմում են տերմինները կամ տերմինային անվանումները:

Սույն երկի բառապաշարից առանձնացնում ենք հինգ տասնյակից ավելի բառեր, որոնք միայն հարաբերական իմաստով ենք համարում հեղինակային նորակազմություն: Դրանք այդպիսին ենք դիտում հատկապես այն հանգամանքով, որ չենք հանդիպում հին հայերենի ամենաընդարձակ բառարանում՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837): Առանձնացումը բավականին պայմանական է, և այդ պայմանականությունը վաղուց ընդունված է հայոց լեզվի բառապաշարի պատմության մասնագետների շրջանում: Եվ դա այն նկատառումով, որ եթե կամենում ենք ի մի բերել հայերենի ողջ բառապաշարն, այսպես կոչված, դար առ դար, նախ պետք է գրական հուշարձանների տվյալներն ամրագրել կոնկրետ ժամանակի մեջ, որից հետո միայն անդրադառնալ դրանց պատմական բառագիտական քննությանը՝ բացառելով գուցադիպումները, հաստատելով ժամանակային հաջորդականությունը և այլն, որոնք էլ հետագայում կարող են հիմք հանդիսանալ ավելի ծավալուն աշխատանքի համար:

ե) Գրեթե նույնպիսի մոտեցում պետք է հանդես բերել բառերի իմաստային վեր-

⁵ Ավելի մանրամասն տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը 18-րդ դարում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1982, 8, էջ 68-72:

լուծության ժամանակ՝ ելնելով պատմական իմաստաբանության սկզբունքներից, ըստ այդմ իմաստաբանական կարգ սահմանել բառերի բովանդակության պլանի փոփոխությունների հարցում, զարգացման ընթացքի առումով՝ հետևելով ժամանակային գործոնի ընձեռած հնարավորությանը: Էլ չենք խոսում ճյուղային տերմինաբանության, բառակապակցական միավորների, ոճերի ու արտահայտությունների ուսումնասիրման դեպքում նույնպիսի սկզբունքների կիրառման մասին:

Այս տեսակետից «Քարոզգիրքը» ևս տրամադրում է համապատասխան փաստեր, որոնք առհասարակ ունեն մեծ կարևորություն հայոց լեզվի բառապաշարի պատմության ավելի լայն ուսումնասիրության համար:

5. Ժամանակի խոսակցական հայերենի ազդեցությամբ տեղի ունեցած փոփոխություններ կան ձայնավորների, ձայնորդների և բաղաձայնների մեջ, այլ կերպ ասած՝ դրանք լծորդաբար կամ առանձին վերցված հաճախ գործածված են փոխադարձաբար, որոնք և կարելի է ներկայացնել հետևյալ խմբերով.

ա) Բավականին շատ են հանդիպում բառասկզբում *սկ-*, *ստ-* և *շտ-* հնչակապակցություններից առաջ *ը* ձայնավորի գրության դեպքեր, այսինքն՝ արտասանության մեջ եղածն արտահայտել նաև գրությամբ: Օրինակ՝ «Ձի *ըսկիզբն* լինիցի», «*Հստասցուք* զհաւատ նորա և որդի կոչեսցուք», «Ահա *ըստոյզն* երևեցաւ» (էջ 57): Այսպես նաև *յըշտեմարան* (փխ. *ի շտեմարան*, ն.տ.):

Այնուհետև, մեկ-երկու դեպքում *ը* ձայնավորը գործածված է *յ*-ի փոխարեն, այլև իբրև լսվող *ը*, որը գրությամբ է արտահայտված. «Դու յայն կեանս *ըղփացեալ էիր* բարեօք», «քանզի որպէս արեգակն ի գարշ տեղիս ծագելով և լուսաւորելով ինքն ոչ աղտոտի, այլ մնայ պարզ և *ըստակ*, զնոսա լուսաւորելով ոչ յաղթի ի նոցանէ», «Ոչ պարտիս յաղթիլ ի նոցանէ և չարանալ, այլ դու *ըստակ* մնալ և զնոսա ի քեզ դարձուցանել», էջ 80: Այսպես նաև *ոչընչացեալ* (փխ. առանց *ը*-ի՝ *ոչնչացեալ*, ն.տ.) և այլն:

բ) Կան դեպքեր, երբ այս կամ այն ձայնավորի փոխարեն, իբրև ընդհանուր կանոն, գործածված է մեկ այլ ձայնավոր՝ արտասանական բազայի առումով համեմատաբար մոտ տվյալ ձայնավորին: Օրինակ՝ *ամպով* (փխ. *ամպով*, էջ 80), *իւղով* (փխ. *իւղով*, էջ 77), *ծով* (փխ. *ծով*, իմա «Անօրէնք իբրև *ծով* ծփեսցին». ն.տ.), *Մեսրոփայ* (փխ. *Մեսրոպայ*. գործածված մի քանի անգամ) և այլն:

Պատահում է, որ ձայնավոր հնչյուն է բաց թողնվում գրության մեջ, կամ էլ փոխարինում է հետին շարքի միջին բարձրացման ձայնավորն առաջին շարքի նույն բարձրացման ձայնավորին: Օրինակ՝ *րախացուցիչ* (փխ. *ուրախացուցիչ*, էջ 56), «*Բցորեկն*» (փխ. *ցերեկն*) ներգործ է լուսաւորե, և ի գիշերն լռէ». ն.տ.):

գ) Հանդիպում են *յ*-ի բացթողման, *ոյ* ~ *ու* հնչյունափոխության, *յ*-ի հավելման, *ա* ձայնավորի քմայնացման հետևանքով նախահունչ *հ* - ի դրսևորման, *ւ*-ի փոխարեն *վ* շփական շրթնայինի գործածության դեպքեր և այլն: Օրինակ՝ «Արդ *իքաւի*» (փխ. *իքրաւի*) մնայր երկինն անկատար» (ն.տ., էջ 29), *զգուշ մնալ* (փխ. *զգոյշ մնալ*), «Զարդարեաց *զյոզն*» (փխ. *զոզն*) *թոչնօք*» (փխ. *թոչնովք*, էջ 26), «Անուամբ աճեալ, *հառաքինութեամբ*» (փխ. առանց *հ*-ի) բարեպաշտեալ», *ղավաճանեցաւ* (փխ. *ղաւաճանեցաւ*. էջ 204, գործածված բազմիցս) և այլն:

դ) Պայթական և հպաշփական բաղաձայնների դեպքում նկատվող փոփոխություններն ավելի բազմազան են: Նկատելի են շրթնային *բ*, *պ* կամ *փ* բաղաձայնների փոխարինման, *դ*-ի փոխարեն *տ* կամ հակառակն գործածության, հետնալեզվային *գ*, *կ* կամ *ք* բաղաձայնների, այլև *ծ*, *ց*, նաև *ջ*, *չ* հպաշփականների փոխադարձման

դեպքեր և այլն:

Օրինակ՝ *աբստամբեաց, աբստամբութիւն* (փիւ. *ապստամբեաց, ապստամբութիւն*, էջ 297 և այլն), *Ազադանգեղոս* (փիւ. *թ-ով*, էջ 72), *տառնաղի* (փիւ. *դ-ով՝ դառնաղի*, էջ 56), *գոք* (փիւ. *գոգ*, «գիրկը»։ «Եւ եղև մեռանիլ աղքատին և տանիլ հրեշտակաց ի գոքն Աբրահամու»), *այտքիւկ* (փիւ. *այտքիւք*, էջ 81), *ծաղկեցան* (փիւ. *կ-ով*. «Նոքա ի չամանակս գարնան, յորչամ Քրիստոս մերձաւոր գոլով արձակէր զճառագայթս՝ *ծաղկեցան* և փայլեցան»։ էջ 54), *Մեարոփայ* (նաև *օ-ով*, «Երկրորդի լուսարորչին մերոյ սրբոյն *Մեարոփայ*»), *ցացնուլ* (փիւ. *ծ-ով*. «Եւ վերջապէս ի *ցացնուլ* բարկութեան Աստուծոյ»։ էջ 37), *յառաջածան* (փիւ. *ց-ով*. «Իսկոյն գոյացան և *յառաջածան*», էջ 27), *վէջ* (փիւ. *վէճ*, էջ 76), *յառաջել* (փիւ. *հառաջել*. «*Յառաջելով* աղաչէր և ողբայր», ն.տ.) և այլն:

Ավելացնենք, որ *վաթսուն* բառը բազմիցս գրվում է *թ-ի* փոխարեն *ց-ի* գործածությամբ (*վացսուն*, փիւ. *վաթսուն*, էջ 78 և այլն):

6. Բառային նորակազմություններն առհասարակ, ինչպես նաև այս դեպքում քննության առարկա են դառնում մի կողմից արտահայտության և բովանդակության պլանների (ձևի և իմաստի), իսկ մյուս կողմից՝ գործառական բաշխվածության (ֆունկցիայի) նկատառումով: Եվ յուրաքանչյուր նոր բառ խոսքային կիրառություն է գտնում հիմքում ընկած իմաստի, ավելի լայն առնված՝ հասկացության արտահայտման նպատակով:

Սիմեոն Կաթողիկոս Երևանցու լեզվում նույնպես հեղինակային գործածությունը բառին հաղորդում է իմաստային այնպիսի հատկանիշներ, որոնք խոսքի մեջ գործառապէս բաշխված են, այսինքն՝ ի հայտ են գալիս որպէս որոշակի գործածության կրող: Քարոզներն, իբրև հեղինակային, ինչ-որ իմաստով ճարտասանական խոսքի յուրահատուկ դրսևորում, հագեցած են ոչ միայն բովանդակությամբ, այլև ճարտասանական արվեստին բնորոշ բազմազան դրսևորումներով, ուստի բնական է, որ այդպիսի խոսքում պիտի հանդես գային թե՛ ընդհանուր գործածության և թե՛ հեղինակային-անհատական բնույթ ունեցող բառեր ու կապակցություններ:

Հայերենին ըստ ամենայնի տիրապետող Հայոց Հայրապետի անհատական խոսքն իմաստավորված է նաև նոր բառերի հաշվին, որոնք իրենց հիմքում ունեն իրադրական բնույթ, իսկ հայերենի բառապաշարի տեսակետից՝ ճանաչելի, հասկանալի և գործածելի:

Նորակազմ բառերն իրենց բաղադրության բնույթով խորթ չեն հայերենի բառապաշարին, ստեղծված են վերջինիս բառակազմական ընդհանուր սկզբունքներով: Դրանց կաղապարային դրսևորումը համեմատաբար նոր է, առավել բնորոշ նոր գրական հայերենի բառակազմությանը. չկան թեք (հոլովված) հիմքերով բաղադրություններ, որպիսին առկա էր հին գրական հայերենում⁶:

«Քարոզգրքից» առանձնացված նորակազմ բառերի մի որոշակի մասը բարդ բառեր են, իսկ մյուսները՝ ածանցավոր, այլև բարդ ածանցավոր և այլն:

8. Բարդ բառերը բաղադրված են համեմատաբար միօրինակ կաղապարներով, որոնք լայն տարածում ունեն նոր գրական հայերենի բառապաշարի մեջ՝ կապված հիմնականում բաղադրական հիմքերի ոչ այնքան ընդգծված առանձնահատկությունների հետ: Նկատի ունենք հնչյունափոխված կամ անհնչյունափոխ հիմքերով

⁶ Տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի գործառությունը որպէս գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., էջ 128-214:

կազմվելը, դրանցից մեկի կամ մյուսի նորակազմություն լինելը և այլն:

ա) Գոյական - գոյական կաղապարով բաղադրությունների բաղադրվող հիմքը ներկայանում է կա՛մ անհնչյունափոխ, կա՛մ հնչյունափոխված ձևով, ընդ որում դրանք հիմնականում միացած են *ա* հոդակապով: Օրինակ՝ «Մա է *տիեզերածագ* և *աշխարհածառալ* արեգակն, որ եղև հաստատեալ ի սէր Աստուծոյ» (էջ 55): «Եւ երկոտասան աստեղօք *երանգափայլ* պայծառացեալ ըստ երկոտասան չարչարանաց» (էջ 669): «Կալցեն *զերկնադիտակ* ոտս սորին ցանկացողքն երկնից» (էջ 57):

Այսպէս ունենք նաև հետևյալ բարդ բառերը. *դիմայլակ*, *ծոցամէջ* (էջ 25), *ծովասարաս* (էջ 25), *ջրհող* (էջ 30) և այլն:

բ) Առանձին խմբով ներկայացնում ենք գոյական բաղադրվող և այլ խոսքի մասերի պատկանող բաղադրող հիմքերով կազմությունները:

Օրինակ՝ «Որ զհնգետասան ամս բոլոր տնեաց ի յանտանելի չարչարանաց և ի մէջ *գազանայի* (իմա «գազաններով լի՝ լեցուն» - Վ. Հ.) գբին, չունելով բնաւին զմխիթարութիւն ի մարդկան» (էջ 48): «Այս երանելիս, որ ոչ եթէ զաղեղն ընկալաւ ի հաշտութիւն, այլ զնոյն *աղեղնատուրն* Աստուած ետես յայտնապէս աչօք մարմնաւոր...» (էջ 490): «Վասն որոյ *աստուածապատկանն* Յիսուս զգալի նշանօք հաստատեաց» (էջ 297):

Այսպէս ունենք նաև հետևյալ կազմությունները. *զլիսակոր* (էջ 23), *ձեռնաստեղծն* (էջ 34), *մարմնաբոյծ* (էջ 52), *քրիստոսաշէն*, *սանձարկ*, *տգրկաբարու* (ն.տ.) և այլն:

Թվարկված բառերից մեկ-երկուսի վերաբերյալ կարելի է մասնավորապէս նշել հետևյալը. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում (իմա ՆՀԲ-ում) չկա *զլիսակոր*, թեև նշվում է *զլիսակորիմ* բայը, միակ վկայությամբ նշվում է *ձեռնաստեղծական* բառը, թեև չկա *ձեռնաստեղն* բառն առանձին, բառարանագրված է *սանձարկու* ձևը, բայց ոչ՝ *սանձարկ* և այլն: Եվ եթե իրոք գոյություն չունեն երկրորդաբար կազմված բառերի նախավոր կամ բաղադրվող հիմքերը, ապա գործ ունենք, այսպէս կոչված, բացթողումային (էլիպտիկ) բառակազմության հետ:

գ) Մեկ այլ խումբ են կազմում այն բարդ բառերը, որոնք բաղադրված են ածական բաղադրվող և այլ խոսքի մասի պատկանող ածական կամ բայարմատ բաղադրող հիմքերով: Օրինակ՝ «Գրկեսցեն *զամիաչարչար* գլուխս սորին, որ կորացեալք են ի դժոխս» (էջ 57): «Մա է *զեղեցկաբողբոջ* ուռն, որ ընծայեցաւ ի յամենաճշմարիտ յորբոյն Քրիստոսէ» (էջ 54): «Թոչունքն ... թնատարած փետրազարդեալք, երփնաւորեալք և *նորաստաց* եղանելօք երգակցեալք սկսան պարիլ, թռչիլ և խաղալ» (էջ 25):

Այսպէս նաև հետևյալ բառերը. *բազմամիջոց*, *բարեգուրկ*, *թշուառալի*, *խոնարհակերպ*, *հարստակերպ*, *յարմարաձայն* (էջ 56), *տառնաղի* (փիս. դ-ով. էջ 56) և այլն:

դ) Մակբայ - գոյական բաղադրությամբ ընդամենը մեկ նոր բառ ենք գտնում՝ քաղված և ՆՀԲ-ում չարձանագրված բառերի մէջ, այն է՝ «Մեծագունտ երկիրս այս *ընդհանրածառալ*» (էջ 29):

9. Մեկ-երկու նախածանցավոր կազմությունների կողքին հանդիպում են համեմատաբար մեծ թվով վերջածանցավոր բառեր, որոնք հիմնականում հստակ կերպով ի ցույց են դնում իրենց բաղադրական հիմքերի ինչպիսին լինելը: Նման կազմությամբ բառերը բաժանվում են մի քանի խմբի.

ա) Ունենք հետևյալ նախածանցավոր բառերը՝ կազմված *համ-*, *պար-* նախածանցներով . «Ամենին համաձայն և *համեղանակ* ձայնիս հանգուցանէ զկամս Աստուծոյ» (էջ 56): «Քանզի բոլորակն, յորմէ սկսանի և ի նոյն հանգի, անեզրաբար *պարառնելով*» (էջ 23) և այլն:

բ) Վերջածանցավոր կազմությամբ բառեր, որոնք հիմնականում բաղադրված են *-աբար, -ական, -ապէս, -արան, -աւոր, -ութիւն, -որդ* և *-ուտ* վերջածանցներով: Օրինակ՝ «Ունեցաւ և զՅօսէփ գեղեցիկ *զգեղեցական* Հռիփսիմէ, որ իւրով իմաստութեամբ և պատուականաւ արեամբ սիրեցաւ յերկնաւոր թագաւորէն» (էջ 50): «Ապա որքանի՞ ցս ցնծայ և ուրախանայ *անվերջապէս* Գրիգորիոս, որ աստէն ընկալեալ ունի զանմահութիւն» (էջ 47): «Աշխարհս ամենայն իբրև զամենաբարի *ընթրիսարան* և իբրև զամենագուարճ խրախճանարան կերտեաց Աստուած» (էջ 28): «Ոչ ամենայն ոսկի, որ արտաքուստ ունի զպատկեր թագաւորին, մտցէ ի զանձարանս նորա, այլ որ ընդ արտաքուստ պատկերին ունի և ի ներքս զուտ *ոսկիութիւն*» (տե՛ս Քարոզ ԼԲ) և այլն:

Այսպէս ունենք նաև հետևյալ նորակազմ վերջածանցավոր բառերը. *անեղբար* (էջ 23), *երփնաւորեալք* (էջ 941), *խորհարական* (էջ 328), *նախապատրաստական* (ն. տ.), *այլիմնապէս* (էջ 24), *խոտորնակապէս* (էջ 22), *զարթնապէս* (ն. տ.), *հողմնապէս* (ն. տ.), *ներկայապէս* (ն.տ.), *զրութիւն* (էջ 220), *ուղեւորդ* (տե՛ս Քարոզ Ի), *մառախլուտ* (էջ 33) և այլն:

10. Համեմատաբար քիչ են հանդիպում բարդ ածանցավոր բառերը, որոնք բառակազմական վերջին փուլում մեծ մասամբ գոյանում են իբրև բայեր, մասամբ՝ ուրիշ խոսքի մասերի պատկանող բառեր: Օրինակ՝ «Եւ ի մէջ այսորիկ մեծի հիմնարկութեան և *առաստաղաձգութեան* էր վիհն այն անդունդն առաջնաստեղծ ջրոյն» (էջ 49): «Քանզի եթէ հասարակ գրկողութիւնս յերկինս բողոքէ և զԱստուած ի վրէժխնդրութիւն յարուցանէ, որքա՞ն ևս *ծնողազրկութիւնս*»: «Եւ *կարգադրաբար* ազդմունք երկնայնոցն, եթէ չիցէր մարդն» (էջ 29-30):

Այսպէս ունենք նաև հետևյալ բառերը. *հանդիսափառութիւն* (էջ 56), *չքնադաբանել* (էջ 28), *փետրագարդեալք* (էջ 941), *փորձառեալք* (ն. տ.) և այլն:

10. «Քարոզգրքում» տեղ-տեղ հանդիպում են բառի իմաստային այնպիսի կիրառություններ, որոնք առավելապէս բնորոշ են գրական աշխարհաբարին:

Օրինակ, *սպրիլ* բայն այստեղ սովորաբար գործածվում է ոչ թե «ազատվել, փրկվել, զերծ մնալ, ճողոպրել, գրաբարյան իմաստներով, այլ այն իմաստով, որ առավել բնորոշ է նոր հայերենին, այն է՝ «կենդանի լինել, կյանք ունենալ, ապրել», թեև այս իմաստը նույնպէս կար գրաբարում, սակայն ոչ առաջնային նշանակությամբ, ինչպիսին որ է հետագայում:

Հանդիպում է *ուղևորել* բայը, որն այստեղ գործածված է «հուղարկավորել, վերջին ճանապարհի դնել», ոչ թե գրաբարյան «ուղարկել, առաջնորդել, ճիշտ ճանապարհով տանել, հղել» իմաստներով. «Աղքատին ոչ ուղևորող և թաղող, զի ի կենդանութեանն ոչ ոք ունէր հոգացող»:

Այնուհետև, գրաբարյան *արթնանալ, զարթնում* բայերի դիմաց առկա է *արթնուլ* բայաձևի գործածություն. «Զի և հայրն ձեր *ի յարթնուլն* օրհնեսցէ զձեզ և ասիցէ՝ ահա ես և մանկունք իմ»⁷:

Այստեղ մասնակիորեն նկատելի է նաև բայի խոնարհման տիպի փոփոխություն, հատկապէս *ա*-ի փոխարեն միայն *ու*, ինչպէս *զարթնում* ձևում, որն ունի ձևաբանական արժեք՝ հեղինակային լեզվի առումով:

Սիմեոն Կաթողիկոս Երևանցին երբեմն թարգմանաբար մեկնաբանում է այս

⁷ Այստեղ *յարթնուլ* կամ *ի յարթնուլ* ձևը պետք չէ շփոթել գրաբարի *յարթնում* «խրտնել, վախեցած հետքաշվել, ընկրկել» բայի հետ:

կամ այն օտար բառը, որն անհրաժեշտ է դիտվում հատկապես քարոզի բանավոր հաղորդման դեպքում:

Նշենք մեկ-երկեու օրինակ. «*Ի Կափառնայումայ* ելեալ ի Գալիլեայ գնաց: Զի՞նչ լսի *կափառնայում*, եթէ ոչ *ազարակ ստրջանաց*»: Իսկ թե ինչ է նշանակում *ազարակ ստրջանաց* արտահայտությունը, բացատրվում է քարոզի շարունակության մեջ հետևյալ կերպ. «Որ է մարդկայինս բնութիւն, զոր Աստուած իբրև զայգի և իբրև զազարակ ընտրեաց ինքեան և սերմանեաց ի սմա զսերմն բանին իւրոյ՝ սպասելով, զի բերցէ խաղող քաղցր և զպտուղ բարութեան»:

Այնուհետև, մեկնաբանվում է նաև *Գալիլիա* բառը՝ հետևյալ կերպ. «Եւ մտանի *ի Գալիլեայ*, որ թարգմանի *զեղզեղ* և *զեղեցիկ*, որք են երկինքն և զօրքն հրեշտակաց ի հանգչիլ»: Այս վերջին մեկնաբանության մեջ, ինչ խոսք, առկա է բառի արտահայտության պլանի՝ ձևի նմանության հիման վրա տրված բացատրություն:

Ուշագրավ է նաև այն, որ «Քարոզգրքում» հեղինակը երբեմն որոշ արտահայտություններ գործածում է ոչ այլ կերպ, քան իբրև բառային մեկ միավոր: Օրինակ՝ «Քանզի ըստ սրբոց վարդապետաց՝ կերպիւ իւիք տրտմութեամբ առնէր Աստուած զստեղծումն երկրորդի աւուրս, որպէս զիտէր նախապէս *զոչելեալսն* և *զյապայսն*»: Օրինակում ընդգծված ձևով բերված բառերը, որոնք դրված են հոգնակի հայցական հոլովով, հավանաբար ունեն տերմինային իմաստով կիրառություն:

12. «Քարոզգրքի» լեզուն պարունակում է նաև լատինաբան հայերենին բնորոշ բառային և քերականական ձևեր ու կազմություններ: Այս առումով նախ նկատենք, որ բանասիրության մեջ կարծիք է հայտնվել, որ Միմեոն Կաթողիկոս Երևանցին իր այս աշխատությունը գրել է Կոստանդնուպոլսում եղած տարիներին: Դա միանգամայն հավանական է, մանավանդ նաև այն նկատառումով, որ այս երկի լեզուն զգալապես ազդված է այդ ժամանակներում պոլսահայ միջավայրում ևս (հատկապես գրավոր խոսքում) գործածվող լատինաբանությունից:

Այնուհետև, նշենք, որ վերջինս առհասարակ եղել է արհեստական միջամտություն բուն հայերենի նկատմամբ՝ սկսած 14-րդ դ. 10-ական թթ., ընդ որում լատին քարոզիչների և նրանց հարող հայ մշակութային որոշ գործիչների ջանքերի հետևանքով: Ավելին, դա եղել է ոչ միայն բուն միաբարական, այլև դավանանքի մեջ նրանց այս կան այն չափով հարողների միջավայրում: Եվ երբ հաղթահարվում են նման խորթությունները հատկապես Միաբարայան միաբանության ներհուն գործիչների տևական ջանքերով, 18-րդ դ. 70-80-ական թթ. հետո ևս շարունակվում էր լեզվական այդ կարգի խորթություններից օգտվելը, այս անգամ արդեն ինքնաբերաբար, ոչ զիտակցական ու միտումնավոր մոտեցումով, որովհետև նման ձևերը բավականին չափով ամրակայվել էին հայոց կրթական և մշակութային, նաև հոգևոր միջավայրում, բնականաբար՝ գրավոր խոսքի մակարդակում:

Այդ ազդեցությունը ժամանակին կրել է նաև Կոստանդնուպոլսի լեզվական միջավայրը և շարունակվում էր այն ժամանակներում նաև, երբ Միմեոն Կաթողիկոս Երևանցին գտնվում էր այնտեղ և կրթվում ապագա հոգևոր սպասավորության անցնելու նպատակով:

«Քարոզգրքի» լեզվում նման բառային և քերականական խորթությունների առկայությունը լավագույնս այդ է ապացուցում:

Դրանցից այստեղ անդրադառնում ենք հատկապես հետևյալներին.

ա) Լատինաբան հայերենում անեզական բառերի համար արհեստական միջամտությամբ ստեղծվել էր եզակի թվի ձև: «Քարոզգրքում» ունենք *կեսնք* բառի եզակի թվի

կեանձներ:

Օրինակ՝ «Զի նա ունի ի յինքն զշունչ և զկեան ամենայն կենդանեաց» (էջ 25): «Նոյնպէս և ի գնալն մեր աստի յայն կեանն, սուրբ Գրիգոր ընծայէ Աստուծոյ» (էջ 206):

բ) Անուն խոսքիմասային միավորների համար ստեղծված արհեստական ներգոյականի ձևը՝ կազմված *նի, ըն* (կամ *ն*) մասնիկով, հանդիպում է նաև «Քարոզգրքում»:

Օրինակ՝ Ասասցուք, զոր ինչ *նարդենիս* պիտոյ է մեզ ի բանիս» (Քարոզ Շաբաթու մեծի պահոց): «Այսպէս իմա և *զնարդենիս* եղեալն և մի տարակուսեր» (Քարոզ ՃԵ):

գ) Որոշ դեպքերում գրաբարաձև *ի* նախդրով և եզակի տրական հոլովով կազմվելիք ներգոյական հոլովի դեպքում տրական հոլովի ձևը վերցվում է *-ոջ* մասնիկով. «Քանզի *ի* յերրորդումնս *դարոջ*» (էջ 79): «*Ի* խաւարատարած *զիշերոջն*» (ն. տ.) և այլն:

դ) Լատինաբան հայերենում արհեստական միջամտությամբ ստեղծված էին ածականի համեմատության աստիճաններից բաղդատականի համար օգտագործել *-գոյն*, իսկ գերադրականի համար *-գունեղ* մասնիկները, որպիսի կազմություններ հանդիպում են նաև այս երկում:

Օրինակ՝ «Արդեօք որքա՞ն իցէ *մաճագունեղ, պայծառագունեղ* և գերազանց *գեղեցկագունեղ*» (էջ 22): «Որ է ևս *մեճագունեղ* հրաշ» (էջ 62): «Ի ներհակն փոփոխումն *մեճագունեղի* զօրութեան կարօտանայ (էջ 62): «Որպէս ի միոյ *յատկագունի*» (էջ 80) և այլն:

Այսպէս ունենք նաև հետևյալ ձևերը. *հաւաստագունեղ* (էջ 55), *նեղագունեղ* (ն.տ.), *նուաստագունեղ* (էջ 61), *պայծառագունեղ* (էջ 75) և այլն:

ե) Գրաբարյան *սոյն, դոյն, նոյն* դերանունների եզակի թվի սեռական հոլովի ձևերն էին *սորին, դորին, նորին*, որոնց դիմաց լատինաբան հայերենում ներմուծված են խորթ ձևեր՝ *սոյնոյ, դոյնոյ, նոյնոյ*. նման ձևեր հանդիպում են նաև «Քարոզգրքում»:

Օրինակ՝ «նոյնպէս և այս կիրակէս զդարձն *նոյնոյ* բաժանեցեալսն և զգիտն նոյնոյ կորուսանելոյ յիշէ»: «Որք սպասաւորէին ի վիրապին *նոյնոյ* նահատակին Գրիգորի» (էջ 72): «Բաց *ի նոյնոյ* անբաւազօրէն Աստուծոյ» (էջ 62) և այլն:

զ) Բայական ձևերի մեջ կատարված փոփոխություններից կարելի է նշել հատկապէս խոնարհման տիպերի նկատմամբ հանդես բերված խորթությունը:

Օրինակ՝ *ու* խոնարհման որոշ բայերի մեջ ներմուծված արհեստական կազմությունը. «Որպէս և խորհրդաբոր *ընթեռնանի* (փխ. *ընեռնու*) նոյն աւետարանն ի տօնի Սրբոյ Լուսաւորչին մերոյ» (էջ 205): «Նոյնպէս և ի *լնանիլ* (փխ. *լնուլ*) ժամանակին տեսանելով ետես զխեղճութիւն բոլոր մարդկային ազգի»: «Այս ամենայն հրաշալի պարգևք և խորհրդական տուրք ի յերկինս հայոց *հեղանի* (փխ. *հեղու*) և ի սմա տրի (փխ. *տուեալ լիցի*) որպէս ցուցանի» և այլն:

է) «Քարոզգրքում» բավականին շատ են բայի, այսպէս կոչված, ապառնի անցյալ անկատարի ձևերի գործածությունը *-իցէի, -իցէիր, -իցէր* և այլն տիպի մասնիկների օգնությամբ, և դա ևս լատինաբան հայերենի համակարգում կատարված արհեստական միջամտության արդյունք է եղել, որն էլ շարունակաբար երևան է գալիս հետագա շրջանի որոշ գործերում, նույնիսկ լատինաբանության հաղթահարումից հետո ընկած ժամանակներում (1780-ական թթ. հետո):

Նշենք հետևյալ օրինակները. «Եթե *չիցէր* մարդն, յորմէ՞ առնուցոյր որդին Աստուծոյ զմարմին և *կատարիցէր*»: «Զբարիսն յաւելուցոյր և զչարս *մերժիցէր*» (էջ 30): «Քանզի ոչինչ էր ի մարմին և յանդամս նորա, որ ընդդէմ կամացն Աստուծոյ *շարժիցէր*, և *ոչ իցէր* ախորժելիօ և հաճելի Աստուծոյ» (էջ 56): «Որք *վայելիցէին* զբոյսս» (էջ 26) և այլն:

Հանդիպում են նաև հետևյալ օրինակները. *իցէր* (էջ 32, 68, 75, 81), *ասիցէր*, *դիմիցէր*, *ելանիցէր*, *զետեղիցէր* (էջ 23), *լինիցէր* (էջ 30), *կարիցէր* (էջ 30), *հնազանդեցուցանիցէր*, *հրամայիցէր* (Քարոզ ԼԳ), *շարժիցէր* (էջ 30), *նկատիցէր*, *լինիցէին*, *հնազանդիցէին* (էջ 31), *ոչ իցէին* (էջ 25) և այլն:

13. Խիստ սակավադեպ, այնուամենայնիվ գործածվում են նաև այնպիսի հոլովական և եղանակաժամանակային ձևեր, որոնք բացահայտ շեղումներ են գրաբարի համապատասխան համակարգից. դա համեմատաբար ակնհայտ է հատկապես հոլովման տիպերի դեպքում:

Այսպես, *աքաղաղ* բառը գրաբարում պատկանում էր *ի-ա* կամ *ո* հոլովման, այնինչ այս երկում գործածված է *ու* հոլովմամբ. «Յաքաղաղու (իմա՝ առ.- Վ. Հ.) զըստ ժամանակին պաշտօնատարութիւնն» (էջ 26):

Այդպես նաև *թռչուն* բառը, որը գրաբարում, հայտնի է, ենթարկվում էր *ո* հոլովման, այստեղ հանդիպում է հոգնակի գործիական հոլովում *–ոք* վերջավորությամբ ձևով (եթե բացառենք *ո-* ի փոխարեն *օ* գրչագրությունը). «Զարդարեաց զյօղն *թռչնօք*» (էջ 26):

Այնուհետև, *ունիմ* բայն այստեղ գործածված է սահմանական ներկա ժամանակի հոգնակի առաջին դեմքում *–ինք* վերջավորությամբ (փխ. *–իմք*) . «*Ունինք* և ի կռապաշտից, որք առանց գրոց ի բնութենէ ունին՝ ըստ Պօղոսի» (ն.տ.) և այլն⁸:

⁸ Վերջում ավելացնենք, որ «հալած կուպր» հասկացության համար Միմեոն Կաթողիկոս Երևանցին գործածել է *յեղեղուկ նաւթ* կապակցական անվանումը՝ առաջին բաղադրիչն առանց երկրորդ *յ* -ի. «Տապանն Նոյի ի ծախելի փայտից կազմեցաւ և *ի յեղեղուկ նաւթի* ծեփեցաւ» (էջ 68):

ԱՐՄԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ԱՐՑԱԽ-ՈՒՏԻՔԻ ԿԱԶՄԱՐԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ (ԺԸ դ. երկրորդ կես)

ԺԸ դարում ձեռագրերի կաշվե կազմերի զարդարման յուրօրինակ ձևով, պատրաստմամբ և արձանագրությունների կիրառմամբ աչքի է ընկնում Արցախ-Ուտիքի կազմարարական դպրոցը: Նրա կազմարարները հիմնականում ուշադրություն են դարձրել կազմերի արտաքին հարդարանքին, գեղարվեստական ձևավորմանը, սակայն չեն մոռացել կազմերի՝ եզրագծով արված զարդանախշերի միջև թողնել կազմող-արհեստավորների անունները: Նրանք եղել են հոգևորականներ: Արձանագրությունները դրոշմված են այնպես, որ չեն նկատվում, մեծ մասամբ համառոտագրված են կամ կապգիր դրոշմատիպերի տեսքով են: Այստեղ կազմարարները հիմնականում նոր կազմեր են պատրաստել ավելի վաղ գրված ձեռագրերի համար, այսինքն՝ այս կազմերը ձեռագրերին են միացել հետագայում, հավանաբար ձեռագրերի երկրորդ կամ երրորդ կազմերն են: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք վերանորոգություններ չեն, այլ նորովի են պատրաստվել և փոխարինել հին կազմերին, չնայած ձեռագրերի հիշատակարաններում վերակազմելու մասին ո՛չ մի տեղեկություն չի թողնվել (բացառություն է կազմում միայն No 6427 Ավետարանի տեր, նորոգել տվող Տեր Պողոսի 1762 թ. հիշատակարանը, որի մասին կխոսենք ստորև): Ըստ հիշատակարանների, ձեռագրերի գրչության վայրեր են նշվում Գանձասարի (NNo 38, 3971), Երից մանկանց (No 1078), Պտկի Ս. Գևորգ վանքերը (Խաչեն, No 8508), Չարեք անապատը (No 8678), Ջալեթ գյուղը (Շաքի երկիր, No 4422), Գանձակը (NNo 9398, 10660): Հնարավոր է նաև, որ այս ձեռագրերի կազմերը նույնպես պատրաստված լինեն նշված վայրերում:

Մեծ Հայքի Արցախ նահանգը հյուսիսից և հյուսիս արևելքից սահմանակից է Ուտիքին: «Ե դարում և ՆԾԵ թուականից ցարդ,- գրում է Մակար եպիսկոպոսը, - Արցախի սահմանագիծն եղած է Երասխ, Կուր, Խրամ և Ձորագետ (միացած) և Հակարի գետերի և Կայենի, Դիլիջանի, Գեղամեան ամենաբարձր լեռների գագաթնագծի մեջ եղած տարածությունն...: Քսան և չորս գաւառը ամբողջացնում է այսպէս. 13 Արցախի, 6 Ուտի գաւառի, 4 վերնի գաւառներն, որք են Շիկաշէն և այլն: Վարդանակերտ գաւառ, որ գտնւում է Կուր և Երասխ գետերի խառնուրդի մեջ, որով ամբողջանում են Արցախեան նահանգի 24 գաւառներն»¹:

Արցախ նահանգի Մեծ Առանք գավառում, Խաչեն գետի ձախ ափին, Մարտակերտի Վանք գյուղի դիմացի բլրի վրա է գտնվում ԺԳ դարում կառուցված միջնադարյան հոգևոր ու մշակութային կենտրոն Գանձասարի վանքը: Այն եղել է նաև հայ գրչության կենտրոն: ԺԸ դ. երկրորդ կեսին, համեմատաբար խաղաղ ժամանակներում, 1760 և 1766 թթ., գրվում, իսկ այնուհետև կազմվում են երկու ձեռագրեր՝ NNo 38, 3971, որոնցից առաջինը բովանդակությամբ Ժողովածու է, երկրորդը՝ Ձեռնադ-

¹ Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, Երևան, 1999, էջ 159:

րության Մաշտոց:

ԺԷ դ. կեսերից մինչև ԺԹ դ. Աղվանից Եկեղեցու կաթողիկոսներն ունեին իրենց հակաթոռը Խաչենի Երից մանկանց վանքում: Այն պատմական Արցախի հայտնի վանքերից էր: Կառուցել են Սիմեոն (Աղվանից Սիմեոն հակաթոռ կաթողիկոսը) և Իգնատ եղբայրները 1664 թ. Սարգիս ճարտարապետի միջոցով: Վանքը գտնվում է Մարտակերտի շրջանում, Թարթառի վտակ Թրդին գետի ափին, Մոավ լեռան հարավային ստորոտներում, Ներքին շեն գյուղի մոտ, անտառապատ գեղատեսիլ վայրում: Վանքն ուներ գեղեցիկ կաթողիկե, բազմաթիվ քարաշեն բնակարաններ²: Մակար եպիսկոպոսը գրում է. «Վանքս շինուած է Մոաւ սարից դէպի արևելք խոնարհուած մի լեռնաբազկի հարաւահայեաց լանջի հարթակին վրայ, որի ստորոտով սրընթաց խոխոջում է Թրդին գետակն, որ է օժանդակ Թարթառի: Կառուցեալ է չորս սիւների վրայ փոքր դիրքով, անճաշակ ոճով, բայց հպարտ արձանագրութեամբ... Վանքս ունի երկու քարուկիր և թաղակապ խուցեր, մին՝ մեծ և միւսն՝ փոքր»³: Երից մանկանց վանքը ևս եղել է հայ գրչության կենտրոն, որտեղ ԺԸ դարի 60-ական թվականներին գրվել և կազմվել է մի Մաշտոց (No 1078):

Պոկի Ս. Գևորգ կամ Պոգեսբերք վանքը, որտեղ ԺԸ դարի 60-ական թվականներին գրվել և կազմվել է մի Ժողովածու (No 8508), գտնվում է Խաչեն գավառի Ուլու-Պապշեն գյուղի արևելյան կողմի բարձրագույն սարի գագաթին (մոտ 4900 ոտք): Վանքը նման է Գոա վանքին⁴. տարբերվում է միայն Ս. Գևորգ եկեղեցու կաթողիկեն, որը ցածր է, և չունի գավիթ: Վանքն ունի մի փոքր գերեզման, որտեղ, ըստ ավանդության, ամփոփված է մահմեդականի որդի: Գերեզմանը ուխտատեղի է, մանավանդ, ամուլ մարդկանց և կանանց համար և ո՛չ միայն քրիստոնյաների, այլև՝ մահմեդականների համար⁵:

Շաքե գավառի Զալեթ գյուղում 1783-1785 թթ. գրվել և կազմվել է մի Ձեռագ Մաշտոց (No 4422): Ուտի գավառը տարածվում էր Թարթառ գետի ստորին հոսանքի և Կուր գետի ու Գանձակի լեռների ջրբաժան գագաթների միջև ընկած շրջանում, գտնվում էր Գուգարք և Սյունիք աշխարհների և Կուր գետի միջև⁶: «Գաւառս,- գրում է Մակար եպիսկոպոսը,- որ ընկած է Օրաբան, Արջկան և Կախաւան գետակների, Կովկասեան լեռնաշղթայի հարաւահայեաց լանջերի և Զարդունի դաշտակի շարունակութեան հարաւային բերանի մէջ, ստացած է Շաքէ, Շաքէ-Ոստան, Շաքի, այժմ, ըստ ռուսական հնչման՝ Նուխի անունները: Բայց հարկ է յայտնել, որ Ուտի գաւառ էր կոչում Շաքէ անունը ստանալուց շատ առաջ (Մով. Կաղ. եր. 171): Ըստ Կիր. Գանձակեցոյ ի շարս յանուն Շաթայ հիմնուած քաղաքներից մին էր Շաքի քաղաքն (Կիր. եր. 114), որի անուամբ այնուհետև կոչւում է և իւր գաւառն»⁷:

Գանձակի (Ելիզավետպոլի) գավառը սահմանակից էր հյուսիսից՝ Սղնախի գա-

² Մանրամասն տե՛ս **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բաքսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 234 (այսուհետև՝ Տեղանունների բառարան):

³ **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 280:

⁴ Գոա վանքը «շինուած է համակ սրբատաշ տորոնագոյն քարով (որի հանքն շատ հեռի չէ վանքիցս), խաչաձև, քառակուսի, չորս կամարներով, որոց վրայ բարձրացած է գեղեցկաձև կաթողիկէն». տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 201:

⁵ Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 244-245:

⁶ Մանրամասն տե՛ս Տեղանունների բառարան, հ. 5, Երևան, 2001, էջ 207:

⁷ **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 133:

վառին և Ջաքաթալայի օկրուգին, արևելքից՝ Արեշի, իսկ հարավից՝ Ջևանշիրի գավառներին⁸: «Գանձակի գաւառը իւր այժմեան սահմաններով,- գրում է Ե. Լալայանը, - բռնում է հին Ուտեաց աշխարհի Շակաշեն, Գարդման և Արցախի Փառխոս գաւառները: Սրա մէջ է մտնում նաև Ջրաբերդի Գիւլիստան կամ Իգիրմիդորդ մահալը, բացի Թալիշ գիւղից, Գիւլիստան բերդից և Հոռեկայ վանքից»⁹:

Շակաշեն կամ Սակաշեն գավառում է գտնվում Գանձակ քաղաքը, որի անունով էլ կոչվում է գավառը: Այն գտնվում է Կուրի Գանձակ վտակի ափին և հաճախ անվանվել է Գանձակ Հայոց կամ Գանձակ Առանի (Աղվանի)՝ Ատրպատականի Գանձակ քաղաքից տարբերելու համար: Գանձակը եղել է միջնադարյան հայկական գրչության կենտրոններից, որտեղ ծնվել, կրթվել կամ գործել են Հովհ. Սարկավագը, Ալավկա որդի Դավիթը, Թոքակերի որդի Գրիգորը, Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Գոշը և այլ նշանավոր մարդիկ¹⁰: Այստեղ 1793 թ. կամ նրա շուրջ լրացվում և կազմվում է ԺԵ և ԺԷ դդ. գրված մի Ժողովածու (No 9398):

Չարեքա անապատը (կամ Չարեքավանքը) գտնվում է Ուտիքի Գարդմանաձոր գավառում, Շամխորի վերին շրջանում: Վանքը հիմնել է Դավիթ եպիսկոպոսը 1610 թ.: Ըստ ավանդության՝ վանքի վանահայր Սարգիս վարդապետի քարոզից հարություն է առել Ստամբուլի ամիրայի միակ որդին, և ամիրան վանքին է նվիրաբերել իր հարստության մեկ չորրորդ մասը՝ «չարեքը», որից և առաջացել է վանքի անունը: Եկեղեցին կառուցված է չորս սյուների վրա և կոչվում է Ս. Աստվածածին, որի թաղածածկ գավիթը եռանավ բազիլիկ է՝ շարված սրբատաշ և հասարակ քարերից¹¹: Ե. Լալայանը գրում է. «Վանքը... մի հասարակ շինություն է, չորս քառանկյունի սիւնների վրայ հաստատուած: Ունի երկու աւանդատուն, եօթը փոքրիկ պատուհան և երկու դուռն արևմտեան կողմում, որոնցից աջակողմեանը վերաշինուած է տաշած քարերով և վերին մասում մի սեղան պատրաստած: Վանքից փոքր-ինչ հիւսիս, բլրակի վրայ կանգնած է զանգակատունը, իսկ փոքր-ինչ արևմուտք՝ սեղանատունը: Վանքը պատած է պարսպով, որին կից կան այժմ քսանհինգից աւելի, քարէ, թաղակապ փոքր խցեր»¹²: Մակար եպիսկոպոսն ավելացնում է. «Գրեթէ սագաշեն և փոքր եկեղեցի է, կառուցեալ չորս սիւների վրայ, ունի գաւիթ, որ շինուած է տաշուած քարով...: Անապատս ունի և փոքր զանգակատուն...: Փոքր-ինչ դէպի արևելք՝ Հարանց մատուռ...: Մատրանս մէջ ամփոփուած են Դաւիթ եպիսկոպոսի և Կիրակոս, Սահակ և Սարգիս վարդապետների մարմիններն: Վանքս ունի վանահայր և մի քանի ծառաներ»¹³: Վանքից քիչ հեռու գտնվում է Մամոռտ ամրոցը: Չարեքավանքը եղել է հայ գրչության կենտրոն, որտեղ 1715 թ. լրացվել և հետագայում նաև կազմվել է 1662 թ. գրված մի Ժողովածու (No 8678):

Այս նույն՝ Գարդմանաձոր գավառի Քարահատ գյուղում էլ (որն այժմ կոչվում է Դաշքեսան քաղաք) 1691 թ. գրվել է մի Ավետարան (No 10660), որը կրկին կազմվել է ԺԸ դարի երկրորդ կեսին: Քարահատ գյուղը գտնվում է Բանանց գետի ձախ ափին, խոր ձորի մեջ, երեք կողմից շրջապատված է լեռներով: Գյուղում կար Ս. Աստվա-

⁸ Մանրամասն տե՛ս Տեղանունների բառարան, հ. 2, էջ 173 (Ելիզավետպոլի գավառ):

⁹ Լալայեան Ե., Գանձակի գաւառ, հ. Ա, Թիֆլիս, 1901, էջ 5:

¹⁰ Մանրամասն տե՛ս Տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 785-786:

¹¹ Մանրամասն տե՛ս Տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 222:

¹² Լալայեան Ե., նշվ. աշխ., էջ 128-129:

¹³ Քարխոտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 320-321:

ծածին անունով եկեղեցի¹⁴:

Այսպիսով, քիչ չեն ժԸ դարում Արցախ-Ուտիքում գրված և կազմված արձանագրությամբ ձեռագրերը: Ինչպես արդեն նշել ենք, այդ արձանագրություններում հիշատակվում են հիմնականում կազմարարների անուններ՝ «Տ(Է)Ր ՂԱԶԱՐ», «Տ(Է)Ր ՄԽԻԹԱՐ¹⁵», «Տ(Է)Ր ՄԵՍՐՈՊ»: Ստորև ներկայացնենք այս դպրոցի երեք կազմարարներին՝ իրենց պատրաստած արձանագիր կազմերի խմբերով: Քանի որ թե՛ կազմերի արձանագրություններում և թե՛ բուն հիշատակարաններում տեղեկություններ չկան կազմի պատրաստման ժամանակի, վայրի և վարպետի մասին, ապա կազմերի խմբերը ներկայացնում ենք ըստ ձեռագրերի գույքահամարների հաջորդականության՝ նշելով ձեռագրի բովանդակությունը, ապա՝ գրչության ժամանակը, վայրը:

1. *Կազմող՝ Տեր Ղազար*

No 38 - Ժողովածու, 1760 թ., Գանձասար,

No 330 - Ավետարան, ԺԷ դ. (1693-ից առաջ),

No 1078 - Մաշտոց, 1760 թ., Երից մանկանց վանք,

No 2546 - Ժողովածու, ԺԴ դ.,

No 3685 - Սիմեոն Զուղայեցու Քերականություն, ԺԷ դ.,

No 4932 - Ավետարան, 1567 թ., Գետո՞ւզ գյուղ (Հակարու երկիր)

No 6611 - Ավետարան, ԺԷ դ.,

No 6683 - Ավետարան, 1455 թ., Հաղբատ,

No 7773 - Գանձարան, ԺԵ դ.,

No 8508 _ Ժողովածու, 1760 թ., ԺԸ դ., Պոկի Ս. Գեորգ (Խաչեն, Ա),

No 8678 - Ժողովածու, 1662, 1715 թթ., Չարեք անապատ (Բ),

No 9431 - Ավետարան, 1473 թ., Հերմոնի վանք (Վայոց ձոր),

No 10526 - Շարակնոց, ԺԸ դ.:

2. *Կազմող՝ Տեր Մխիթար*

No 2389 - Ժողովածու, 1643 թ., Էջմիածին,

No 3971 - Մաշտոց Ձեռնադրության, 1766 թ., Գանձասար,

No 4422 - Մաշտոց Ձեռագ, 1783-1785 թթ., Զալեթ գյուղ (Շաքի երկիր),

No 6427 - Ավետարան, ԺԶ դ., կազմ՝ 1762 թ.,

No 7633 - Ավետարան, 1629 թ. Սրկղուն գյուղ (Վայոց ձոր),

No 7737 - Ավետարան, ԺԱ դ.,

No 8168 - Ժողովածու, ԺԸ դ.,

No 8370 - Ժողովածու, 1666 թ.:

3. *Կազմող՝ Տեր Մեսրոպ*

No 4088 - Ժամագիրք, Սաղմոսարան, Տոնացույց, 1673 թ., Շինհերու անապատ,

No 6560 - Ավետարան, 1660 թ.,

No 9056 - Աղոթագիրք, ԺԷ դ.,

No 9398 - Ժողովածու, ԺԵ, ԺԷ, ԺԸ դդ. (1793-ից առաջ), Գանձակ (Գ),

No 9721 - Ավետարան, 1315 թ., Եղեգիս,

No 10660 - Ավետարան, 1691 թ., Քարահատ գյուղ (Գանձակ):

¹⁴ Մանրամասն տե՛ս Տեղանունների բառարան, հ. 2, էջ 34-35:

¹⁵ Արձանագրություններում ընդգծված տառերը կապգրություններ են:

Ինչպես երևում է, նշված ձեռագրերը գրչության ժամանակով ու բովանդակությամբ տարբեր են: Բայց քանի որ նրանց կազմերը պատրաստվել են ԺԸ դարում, ուստի առանձնացնելով այդ դարում գրված ձեռագրերի խմբերը՝ կստանանք հետևյալ պատկերը.

- No 38 - Ժողովածու, 1760 թ., Գանձասար,
- No 1078 - Մաշտոց, 1760 թ., Երից մանկանց վանք,
- No 8508 - Ժողովածու, 1760 թ., ԺԸ դ., Պոկի Ս. Գևորգ (Խաչեն, Ա),
- No 8678 - Ժողովածու, 1662, 1715 թթ., Չարեք անապատ (Բ),
- No 3971 - Մաշտոց Ձեռնադրության, 1766 թ., Գանձասար,
- No 4422 - Մաշտոց Ձեռագ, 1783-1785 թթ., Ջալեթ գյուղ (Շաքի երկիր),
- No 6427 - Ավետարան, ԺԶ դ., կազմ՝ 1762 թ.,
- No 9398 - Ժողովածու, ԺԵ, ԺԷ, ԺԸ դդ. (1793-ից առաջ), Գանձակ (Գ),
- No 10660 - Ավետարան, 1691 թ., Քարահատ գյուղ (Գանձակ):

Ինչպես տեսնում ենք, այս ձեռագրերը գրվել են Գանձասարում, Երից մանկանց վանքում, Պոկի Ս. Գևորգ վանքում, Չարեք անապատում, Ջալեթ գյուղում, Գանձակում: Կարելի է ենթադրել, որ նրանց կազմերը ևս պատրաստվել են նույն վայրերում: Սակայն կազմերի ձևավորման կերպը, զարդանախշերի և զարդապատկերների համադրումը ցույց են տալիս, որ կազմարարները միևնույն դպրոց-արհեստանոցից են, օգտագործել են կազմի զարդարման նույն սկզբունքները, զարդապատկերների ընդհանուր կառուցվածքը: Նշված ձեռագրերից 13-ի կազմերին արձանագրված է Տեր Ղազար անունը, 8-ին՝ Տեր Մխիթար, 6-ին՝ Տեր Մեսրոպ: Ժամանակով հնագույնը Գանձասարում գրված No 38 ձեռագիրն է (1760 թ.), որի կազմը պատրաստել է Տեր Ղազարը, հավանաբար, նույն թվականին և նույն վայրում: Նրա ստեղծած 13 ձեռագրի զարդապատկերների և զարդանախշերի համադրումը մյուս երկու վարպետների կիրառած նմանատիպ դրոշմազարդերով 14 ձեռագրերի կազմերի հետ ցույց է տալիս, որ վերջին երկու կազմարարներն անխտիր ընդօրինակել են Տեր Ղազարի կիրառած զարդանախշերը: Մնում է ենթադրել, որ Տեր Ղազարը Գանձասարում ստեղծել է ձեռագրերի կազմեր պատրաստելու արհեստանոց, որտեղ էլ սովորել են մյուս երկու կազմարարները, ինչպես նաև այն, որ մի շարք ձեռագրեր կա՛մ տարվել են Գանձասար կազմելու համար, կա՛մ էլ վարպետներն իրենք են գնացել վերոնշյալ վայրերում կազմեր պատրաստելու:

Տեր Ղազարի պատրաստած No 38¹⁶ ժողովածուի կազմը դրոշմազարդ, բաց շագանակագույն կաշի է, միջուկը՝ տախտակ, աստառը՝ թուղթ, լուսանցակողերը՝ կապույտ: Վերևի և ներքևի լուսանցակողերին պատկերված են գծանկարներ: Ա փեղկին ունի 5, իսկ Բ փեղկին 4 կապգիր դրոշմատիպ արձանագրություն. «Տ(Է)Ր ՂԱԶԱՐ»:

Տեր և Ղազար բառերի միջև դրոշմված է փոքրիկ խաչ: Ա և Բ փեղկերին, եզրագծով, ուղղանկյուն շրջանակի մեջ պատկերված են իրար միահյուսված ծաղկադրոշմներ: Փեղկերի կենտրոններում, սուր մասերն իրար միացած ձվաձև, սլաքանման չորս շրջանակներ են, որոնց ներսում պատկերված են գեղեցիկ ծաղկադրոշմներ: Ուղղանկյուն շրջանակի անկյուններում նմանատիպ մեկական դրոշմատիպեր

¹⁶ Մատենադարանի «Ցուցակ ձեռագրաց»-ում (հ. Ա, էջ 233) ձեռագրի կազմողը հարցականով նշված է՝ Ազարիա, իսկ «Մայր ցուցակ»-ում (հ. Ա, էջ 131) ճշտված և նշված է՝ Տեր Ղազար:

են՝ սուր մասերն ուղղված դեպի ներսի անկյունները: Փեղկերի ազատ տարածություններում պատկերված են չորսական սլաքանման դրոշմատիպեր: Տեր Ղազար կազմարարի, ինչպես նաև մյուս բոլոր կազմողների պատրաստած կազմերը զարդարված են վերոնշյալ զարդադրոշմներով: Կազմի մեծության հետ կապված փեղկերի կենտրոններում կամ փեղկերի մեջքի մոտ հանդիպում են նաև զարդադրոշմների կրկնություններ: No 38 ձեռագրի կազմի նման են զարդարված NNo 2546, 8508 և 8678 ձեռագրերի կազմերը, որոնցում բացակայում են միայն փեղկերի մեջտեղի ուղղանկյուն շրջանակի անկյունների ձվաձև, սուրանկյուն շրջանակներով դրոշմատիպերի կրկնությունները: No 1078 ձեռագրի կազմի զարդապատկերների չափն ու ձևը նույնն են No 38-ի հետ, միայն մեջքի հիմքի մոտ ավելացված են չորսական սլաքանման դրոշմատիպեր: No 7773-ի փեղկի չափերն ավելի մեծ են, այստեղ մեջտեղի ուղղանկյուն շրջանակի մեջ ավելացված են ձվաձև, սուրանկյուն շրջանակով դրոշմատիպեր: No 3685-ի կազմն ավելի փոքր է, փեղկերի մեջտեղում պատկերված են երկու ձվաձև, սուրանկյուն շրջանակով դրոշմատիպեր: Իսկ NNo 330, 4932, 6611, 6683, 9431 ձեռագրերի կազմերին, մեջքի մոտ, եզրագծի ուղղանկյուն շրջանակից դուրս, ավելացված են ձվաձև շրջանակով ծաղկազարդ դրոշմատիպեր:

Տեր Ղազարի կազմած NNo 4932 և 6683 Ավետարանների Բ փեղկերին, մեջտեղում, կլոր շրջանակի մեջ պատկերված է Մարիամ Աստվածածինը՝ թագանման լուսապսակով, ոտքերի տակ դեպի վեր նայող կիսալուսնով: Այս երկու ձեռագրերն էլ հետագայում կոստղապատվել են՝ կոստղերի տակ թողնելով զարդապատկերները: Ա փեղկերին ավելացված են մետաղե խաչեր: No 4932 ձեռագրի Ա փեղկի խաչի տակ երևում է ձվաձև շրջանակի մեջ պատկերված Խաչելություն, իսկ No 6683 ձեռագրի Ա փեղկի գամերն ու մեջտեղի ականակուտ խաչն այնքան ամուր են միացված կազմին, որոնց տակից նկատվում են միայն ձվաձև շրջանակի վնասված հետքերը: Այդուամենայնիվ, վստահ ենք, որ այս ձեռագրի Ա փեղկին պատկերված է No 4932-ի Խաչելության պատկերը: Կոստղապատ է նաև No 6611 ձեռագրի Ա փեղկը, որի մեջտեղում ամրացված է ակն ընկած մետաղե խաչ, որի թևերից դեպի անկյուններն ամրացված են սուրանկյուն գլխիկներով մետաղե գամեր: Տեր Ղազարի պատրաստած կազմից պահպանվել է միայն Բ փեղկը: Ա փեղկի կաշին փոխարինված է: Փեղկի մեջքի հիմքի մոտ երևում են փոխարինված կաշվի կարի թելերը, տարբեր են նաև կաշվի գույնն ու հաստությունը: Կոստղերի ավելացման ժամանակ, հավանաբար, վնասվել է նախկին կաշին և փոխարինվել նորով: Նորոգված փեղկի տակ է մնացել նաև հին աստառը, որի վրա սոսնձված է սպիտակ թուղթ, իսկ Բ փեղկի հին աստառին՝ ոսկեգույն ծաղկազարդ թուղթ:

Արցախ-Ուտիքի կազմարարության դպրոցի հաջորդ ներկայացուցիչը Տեր Մխիթարն է: Նրա կազմած No 3971 ձեռագիրը գրվել է 1766 թվականին Գանձասարում: Ձեռագիրը բովանդակությամբ Ձեռնադրության Մաշտոց է, գրիչը՝ Աբրահամ Շաքեցին: Կազմը դրոշմազարդ մուգ շագանակագույն կաշի է, միջուկը՝ բարակ տախտակ, աստառը՝ կարմիր մետաքս, լուսանցակողերը կապույտ գույնի են: Կազմի զարդարումն արված է Տեր Ղազարի պատրաստած կազմերի ձևավորմամբ: Ա և Բ փեղկերը զարդարված են նույնությամբ: Եզրագծով, ուղղանկյուն շրջանակի մեջ, պատկերված են իրար միահյուսվող ծաղկադրոշմներ՝ նման Տեր Ղազարի օգտագործած զարդադրոշմներին, միայն «Տեր Ղազար» կապգիր դրոշմատիպի փոխարեն

արձանագրված է «Տ(Է)Ր ՄԽԻԹԱՐ»¹⁷: Այս կազմի նմանությամբ են զարդարված NNo 4422, 8168, 8370 ձեռագրերի կազմերը: Տեր Մխիթարի կազմած արձանագրությամբ ձեռագրերի մեջ չափով ամենափոքր ձեռագիրը No 2389 ժողովածուն է՝ գրված 1643 թ. Էջմիածնում, որի կազմի մեջտեղում պատկերված են միայն չորսական սլաքանման զարդադրոշմներ: Հավանաբար կազմողը կարևորություն է տվել եզրագծով արված արձանագրությամբ զարդապատկերներին և չի օգտագործել ձվաձև սուրանկյուն շրջանակով ծաղկադրոշմներ, որի համար կազմի վրա տեղ չի նախատեսել: Մյուս երկու՝ NNo 7633, 7737 ձեռագրերի կազմերի ուղղանկյուն շրջանակի անկյուններում կրկնված են ձվաձև, սուրանկյուն շրջանակներով ծաղկադրոշմները՝ սուր մասերն ուղղված դեպի ուղղանկյուն շրջանակի ներսի անկյունները: No 7633 ձեռագրի Ա փեղկին հետագայում ավելացվել է ականակոտ, դրվագված արծաթե կրկնակազմ:

Տեր Մխիթարի պատրաստած կազմերի մեջ առանձնանում է No 6427 Ավետարանի կազմը¹⁸: Ջարդարումն արված է մեզ ծանոթ ընդհանուր սկզբունքներով, սակայն ունի զարդադրոշմների կրկնությունների տարբերություններ: Ա փեղկին, ուղղանկյուն շրջանակի մեջտեղում, երևում է ձվաձև մեծ շրջանակ, հավանաբար Խաչելության պատկերով¹⁹, որը ծածկված է հետագայում ավելացված ականակոտ մետաղե խաչով: Խաչելության շրջանակի շուրջ և ուղղանկյուն շրջանակի անկյուններում պատկերված են ձվաձև, սուրանկյուն շրջանակներով ծաղկադրոշմներ: Ա փեղկին հետագայում ավելացվել են նաև կլոր գլխիկներով մետաղե գամեր: Բ փեղկը ձևավորված է Ա փեղկի նման, միայն կենտրոնում, մի քիչ թեքված դիրքով, ձվաձև շրջանակի մեջ, պատկերված է Մարիամ Աստվածածինը՝ թագանման լուսապսակով, ոտքերի տակ դեպի վեր նայող կիսալուսնով²⁰: Ձեռագրի 203բ թերթում կազմել տվող Տեր Պողոսի 1762 թ. հետևյալ հիշատակարանն է. «Փառք... Գրեցաւ թվին ՌՄԺԱ. (1762), ի բառնալն թագաւորութեանն յԱրևելեան յերկրիս Յելեմացուցն այլազգաց: Եւ բարկութիւն Աստուծոյ յաւելլոր օր ըստ օրէ վասն ծովացեալ մեղացն մերոց, զի բազումք քաղաքս և գիւղս քայքայեցին և աւար արարին յԱղուանս հայրս ի զօրքն ելեալ Ալանաց և Յելեմաց, ի Շօշ քաղաքէ մինչ ի քաղաքն Գանձակ, որ է Շահասան: Եւ ընդ այնմ մնացեալ հեծելազօրքն Պարսից անօրինաց՝ ո՛չ ուրեք հնազանդեալ և ո՛չ միաբանեալ կամացն իրերաց, այլ բարկութեամբն Աստուծոյ սուր հասեալ ընդ ամենայն տեղիս ի Տեառնէ վասն կրկնայպատկեալ զայից մեղացն իմոց: Իսկ դատաւորն Քրիստոս դատ արասցէ ընդ ամենայն յերկիւղածս քրիստոնէից իւրոց ի ձեռն օտարոտի անօրինաց: Թերևս լիցի յօգնութիւն ի Տեառնէ գփոքրեկի յօդս մերում զլուսաւորչայդաւան յազգս Աղուանից, զմնացեալ սակաւիկ հայրս ի լեռնաձերպս վիմաց սառնացի հաւատոյ՝ զոմանս թերութեամբ յամառեալ վասն հոլով հարկապահանջութեան դառնաստղ ժամանակիս այս: Ընդ նմին զվերջին ըստացուածս և նորոգող սրբոյ յԱւետարանիս մեղապարտ և յանարժան ըզտեր Պօ-

¹⁷ Փեղկերի կենտրոնում պատկերված են չորսական ձվաձև, սուրանկյուն շրջանակներով գեղեցիկ ծաղկադրոշմներ, որոնց սուր մասերը միացված են իրար: Ձևով կրկնում են Տեր Ղազարի նույնատիպ պատկերները, սակայն տարբեր են ձվաձև շրջանակի ներսի ծաղկադրոշմները:

¹⁸ Այն տախտակե միջուկով մուգ շագանակագույն կաշի է, աստառը՝ շագանակագույն ծաղկազարդ կտավ, լուսանցակողերը կապույտ գույնի են:

¹⁹ Հմմտ. Տեր Ղազարի պատրաստած ձեռ. No 4932 Ա փեղկը:

²⁰ Հմմտ. Տեր Ղազարի պատրաստած ձեռ. NNo 4932, 6683 Բ փեղկը:

դոսս ըստացա հալալ ընչից իմոց, ձեռամբ իմով ետու նորոգել և կազմել յիշատակ ինձ և ծնողաց և եխբարցն իմոց...»: Մեջբերվածը Արցախ-Ուտիքի դպրոցի միակ հիշատակագրությունն է, որտեղ նշվում է ձեռագրի վերակազմության մասին: Կազմի վրա հստակ արձանագրված է Տեր Մխիթարի անունը, որը ձեռագրի երկրորդ կազմողն է: Նա ամբողջությամբ նորոգել է ձեռագիրը և հին կազմը փոխարինել նորով:

Արցախ-Ուտիքի դպրոցի աչքի ընկնող կազմարարներից է նաև Տեր Մեսրոպը, որի կազմած ձեռագրերից երկուսը գրվել են Գանձակում 1691 թ. (No 10660) և ԺԸ դարում (1793-ից առաջ, No 9398): 1691 թ. գրված No 10660 Ավետարանի կազմի երկու փեղկերը ձևավորված և զարդարված են նույնությամբ: Կազմը շագանակագույն կաշի է, միջուկը՝ տախտակ, աստառը՝ շագանակագույն դրոշմազարդ կտավ, լուսանցակողերը կապույտ գույնի են: Եզրագծով իրար միահյուսված ծաղկադրոշմներ են՝ «Տ(Է)Ր ՄԵՍՐՈՊ» մակագրությամբ: Փեղկերի մեջտեղում պատկերված են չորսական իրար միացված ձվաձև սուրանկյուն շրջանակներ, որոնց ներսում դրոշմված է Տեր Մխիթար կազմարարի օգտագործած ծաղկադրոշմը: Մեջտեղի դրոշմապատկերներից վեր ու վար, աջ ու ձախ չորսական սլաքանման պատկերներ են, որոնք ավելի խոշոր են, կոպիտ և տարբերվում են հիշատակված նախորդ երկու կազմարարների նմանատիպ դրոշմազարդերից: Փեղկերին թույլ երևում են եռանկյուն կետագիծ պատկերներ: Այս ձևով է պատկերազարդված նաև No 6560 ձեռագրի կազմը: No 9398 ձեռագրի կազմը ձևով և պատկերազարդությամբ նման է No 10660 ձեռագրի կազմին: Տեր Մեսրոպի պատրաստած երկու ձեռագրերի կազմերի ձևավորումը պարզունակ է արված: No 9056 ձեռագրի չափն ավելի փոքր է, եզրագծով զարդանախշերը կրկնված են, այսինքն՝ եզրագծի զարդանախշերով պատկերված են կրկնակ ուղղանկյուն շրջանակներ: Մեջտեղի ուղղանկյուն շրջանակի անկյուններից տարված են իրար հասվող եռաշարք գծեր, որոնց վերևում և ներքևում, եռանկյունաձև ստացած մասերում, պատկերված են թեք փոքրիկ գծեր: No 9721 ձեռագրի՝ ավելի մեծ չափի կազմը նույն պարզությամբ է ձևավորված: Ա փեղկի մեջտեղից անցկացված ուղիղ գծերի, որոնք X տեսք են ստացել, չորս մասերում պատկերված են մեկական ձվաձև սուրանկյուն ծաղկադրոշմներ: Ձեռագրի հին կազմից պահպանված է միայն Ա փեղկի կաշին²¹:

Այսպիսով, Արցախ-Ուտիքի կազմարարության դպրոցը ԺԸ դարի երկրորդ կեսին դարձել էր կազմերի պատրաստման յուրօրինակ կենտրոն, մշակել կաշեկազմ ձեռագրերի ձևավորման և զարդարման, ինչպես նաև արձանագրությունների ինքնատիպ սկզբունքներ: Այս դպրոցի կազմերին բնորոշ են ձվաձև սուրանկյուն շրջանակներով ծաղկադրոշմները, չորսական սլաքանման զարդապատկերները, համարյա չնկատվող արձանագրությունները, ինչպես նաև ձեռագրերի լուսանցակողերի կապույտ գույնը:

²¹ Ձեռագրի Բ փեղկը, տախտակներն ու աստառը նորոգված են Մատենադարանում և փոխարինված են նորով:

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՌԱՆՈՒՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄԸ

Հանճարեղ գյուտից հետո Մեսրոպ Մաշտոցն իր ստեղծած տառերին անուններ տվեց՝ **այբ, բեն, գիմ, դա, եչ, զայ, է** ...: Դրանք 5-րդ դարից սկսած մինչև այսօր գործածության մեջ են: Տառանունները հնչյունական որոշակի ձևավորում և անվանողական դեր ունեն, իսկ եզակի դեպքերում նաև բառային նշանակություն են ձեռք բերել:

Դարեր շարունակ հայերենի այբուբենը հայ դպրոցում տառանուններով են սովորեցրել, նույնիսկ ընթերցանության ուսուցումը նրանց միջոցով է իրականացվել: Հայերեն այբուբենի յուրաքանչյուր շարքի առաջին միավորի անունով կազմվել և մանկավարժության մեջ գործածվել է **գրուսուցման այբ-ժե-ճե-ռա-ի** (կամ **գրկապության) մեթոդ** բաղադրյալ անվանումը, որն այժմ հնացած է: Օրինակ՝ *Հայերեն կարդալ-գրելը սովորել էր մի կույսի մոտ, որ ամենայն ճշտապահությամբ պահպանում էր տերթոդիկյան հռչակավոր դասավանդության եղանակը՝ այբ-ժե-ճե-ռա-ի մեթոդը* (Վ. Տերյան)¹:

Մեր օրերում տառանունների գործածությունը Հայաստանում խիստ սահմանափակ է, իսկ Սփյուռքում տառային հապավումներն ավանդաբար կարդում են տառանուններով, ինչպես՝ **ԿԿ - Կենկեն, ՀՄՄ - Հոմենմեն** և այլն: Այժմ տառանունները (ավելի ճիշտ՝ նրանց մի մասը) մեզանում ավելի շատ մեկ այլ՝ խորհրդանշի արժեքով են գործածվում: Հմմտ.

Ուր էլ գնամ, իմ խոհերում

Նարեկատաղ ակն է ճառագ,

Սուրբ Մեսրոպի այբ-ն է ճառագ: (Է. Եսայան)²

Հստակ է, որ նրանք գործածվել (և գործածվում են) են գեղարվեստական ստեղծագործություններում և լեզվաբանական աշխատություններում:

Հետաքրքրական է պարզել, թե հայկական տառանուններն արդյոք դարձե՞լ են բառարանային միավորներ, և եթե այո, ապա ինչպիսի՞ ընթացք է ունեցել նրանց բառարանային մշակումը:

Հայկական տառանուններից բառարանային առաջին միավորը, ինչպես և սպասելի էր, դարձել է **այբ**-ը: Այն նախ ներկայացվել է միջնադարյան ձեռագիր բառարաններում, որը խիստ հետաքրքրական է: Բանն այն է, որ այդ բառարաններում յուրաքանչյուր տառով բացատրանքների սկզբում, որպես կանոն, տրվում է նախ տառը, ապա՝ բացատրությունը, ինչպես՝ **Բ - բեն, գիր բաղաձայն եւ միջակ ի մէջ փիւրի եւ պէի** և այլն: Այդպես բոլոր տառանունները ներկայացվում են համապատաս-

¹ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1975, էջ 36: Հմմտ. Այս արվեստի մեջ չկար մեր հեգարանի **այբ, ժե, ճե, ռա** ...կարդալը սկսում են այսպես, **քը-ա-րը - քար**, և ոչ՝ **քե, այբ, բե - քար** (Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963, էջ 257):

² Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1988, հ.1, էջ 39:

խան տառերից հետո: Բացառություն է **այբ**-ը, որը Մաշտոցյան Մատենադարանի հ. 3199 ձեռագրում զետեղված է **այգ**-ից առաջ, **ամրի**-ից հետո. «**Այբ - տառ ձայնաւոր, եւ երկամանակ, սկիզբն գրոց**»³: «Բառգիրք հայոց»-ի երևանյան հրատարակության մեջ **այբ** բառահոդվածն աշխատասիրողի կողմից տեղափոխվել է **Ա**-ի բացանկի սկիզբը «այբբենական կարգի պահպանման, ինչպես նաև միօրինակության համար»⁴: Միօրինակությունն ապահովելու խնդիրը միանգամայն արդարացված է: Սակայն այստեղ, թվում է, խնդիրը միայն դա չէ: Ձեռագիր բառարաններում **այբ**-ն առանձին ներկայացնելը հայկական առաջին տառանունը որպես բառ (բառույթ) ընկալելու նշան է: Այն, որ **այբ**-ը նաև առանձին բառ կարող էր դիտվել, բոլորովին էլ զարմանալի չէր լինի: Սուրբ Գրքից հայտնի արտահայտությունը առաջին տառանվան՝ բառային արժեք ունենալու լավագույն և հիմնավոր վկայությունն է: Հմմտ. *Ես եմ Այբ եւ ես եմ Քէ, ասէ Տէր Աստուած, որ էն եւ որ է՝ եւ որ գալոցն է, Ամենակալ* (Յայտ. Ա 8)⁵:

Վստահաբար կարելի է ասել, որ հունարենի **ալֆա**-ի նման **այբ**-ը ձեռք է բերել «սկիզբ» նշանակությունը (հետագայում նաև այլ իմաստներ) և իբրև իմաստակիր միավոր՝ բառույթ, բառարանային միավոր դարձել:

Թերևս ճիշտ կլիներ փոփոխությունը կատարել հետևյալ ձևով. բառգիրքն սկսել **Ա** տառով՝ կցելով միննույն՝ «*տառ ձայնաւոր, եւ երկամանակ, սկիզբն գրոց*» բացատրությունը միաժամանակ իր տեղում պահպանելով **այբ**-ը: Ձեռագիր բառարան կազմողը փաստորեն այբբենական կարգը պահպանել և **այբ**-ը ճիշտ տեղում էլ դրել է՝ **ամրի**-ից հետո, **այգ**-ից առաջ: Վրիպումն ըստ էության սուսկ **Ա**-ի բացակայությունն է:

Այբ բառահոդված չունեն հին հայերենի բառապաշարն ամփոփող տպագիր բառարանները, այդ թվում՝ ամենաընդարձակները: Դրանցում տառանունները տրվում են յուրաքանչյուր տառից հետո՝ իբրև գրային նշանի անուն. պահպանվում է միջնադարյան ձեռագիր բառարանների ավանդույթը:

Այդպես է նաև Ալ. Խուդաբաշյանի գրաբար-ռուսերեն բառարանում: Այսպես, «Ա (ՌոռՕ) Ը. կպԸՉՈՅ ոցՄՉՈ ՈջոցՄՈ ԸԸՎՅՎրՄՏո, չսՈրվՈՅ. Ես եմ Այբ և Քէ, ՈջՕ պրՎՖ ՌոռՕ Ռ Սպ (ԸսԻՈ Ռ ԿՎպչՈ)»⁶:

Բայց ահա այդպես չէ այբուբենի երրորդ տառի դեպքում. ուղղակի գրված է՝ «*Գիւ, (ՄՌՎՕ)*», և բացատրված, որ այն երրորդ տառն է, բաղաձայն: Սա պատահականության կամ վրիպումի արդյունք է, որովհետև բոլոր մյուս դեպքերում մոտեցումը նույնն է. տրվում է նախ տառը, ապա՝ նրա անվանումը, ինչպես ներկայացրինք վերևում: Տառանուններն այստեղ ևս փաստորեն գլխաբառ չեն դարձել:

Առանձին բառահոդվածով **այբ**-ը ներկայացված է Առձեռն բառարանում. «*Այբ, հայոց առջի գիրը*»⁷, այնուհետև հղում է տրվում **ալֆ**-ին, որից էլ, ի դեպ, ծագել է

³ Տե՛ս **Մաշտոցի անվան Մատենադարան**, ձեռ. հ. 3199, էջ 8, ձեռ. 1495, էջ 24:

⁴ Տե՛ս **Բառգիրք հայոց**, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի, Երևան, 1975, էջք ԺԸ, 3, 16, 343:

⁵ Ուշագրավ է նաև հետևյալ իրողությունը. ձեռագրերից մեկում **այբ** բառահոդվածից բացի լուսանցքում կա **Ա** տառը մեկնող ևս մի բառահոդված՝ «*Այբ. գիր առաջին եւ ձայնաւոր երկար, ըստ հայոց, որ եւ լատիներէն ասի Ա եւ յունարէն ալֆայ, եւ եբրայեցերէն ալէֆ*» (տե՛ս **Բառգիրք հայոց**, էջ 343, Հ. Մ. Ամալյանի ծանոթագրությունը): Հստակ է, որ **այբ**-ի նկատմամբ այլ՝ մյուսներից տարբեր մոտեցում է դրսևորվել:

⁶ Աղ. Խուդաբաշեանց, Բառարան ի հայկական լեզուի ի ռուսաց բարբառ, հ. Ա, Մոսկվա, 1813, էջ 255:

⁷ Առձեռն բառարան հայկագնեան լեզուի, Բ տպագրութիւն, Վենետիկ, 1865, էջ 32:

հայկական այբուբենի առաջին տառի անունը:

Թերևս Առձեռն բառարանի հետևողությամբ միայն **այբ** տառանունն է ընդգրկվել գրաբարի մերօրյա երկհատոր բառարանում⁸. այն տարբերությամբ, որ նշվել է նաև **այբ**-ի փոխաբերական «սկիզբ» նշանակությունը (ի դեպ, այդ իմաստը նշված է Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում», որից էլ ամենայն հավանականությամբ ազդվել է բառարանագիրը):

Տառանուններից միայն **այբ**-ն է ստուգաբանվել Հր. Աճառյանի հիշյալ բառարանում⁹: Ըստ Աճառյանի ստուգաբանության՝ **այբ**-ը ծագել է հունարեն առաջին տառի (*αλφά*) անունից, որն իր հերթին փոխառյալ է սեմականից: Հայերենում նախկին ձևն էր **ալփ**, որ հետագայում դարձել է ***այփ**, ապա հաջորդ՝ **բեն** տառի ազդեցությամբ՝ **այբ**¹⁰:

Հայկական տառանունների առավել ամբողջական և համակարգված բառարանային մշակումը կատարել է Ստեփանոս Մալխասյանցը¹¹:

Բառարանագիրը տառանունները ներկայացնում է գրեթե նույն կադապարով՝ տառանուն, ձևաբանական արժեքը, ստուգաբանությունը (եզակի դեպքերում), իմաստ(ներ)ը, տառանունով դարձվածքները, եթե, իհարկե, այդպիսիք կան: Օրինակ՝ **ԳԻՄ** (եբր. gimel), գ.[ոյական], **Գ**, **գ** գրի անունը¹²:

Հայտնի լեզվաբանը, սակայն, հետևողական չի եղել: Օրինակ, ըստ կարգի ներկայացնում է **այբ**, **բեն**, **գիմ**, **եչ**, **զայ**, **է** տառանունները՝ զարմանալիորեն բաց թողնելով **դա**-ն: Այնինչ այն կարևոր էր, հատկապես որ համանուն է ցուցական դերանվանը:

Ուրիշ տառանունների պարագայում Ստ. Մալխասյանցը հանգամանորեն անդրադառնում է համանուն ձևերին: Այսպես, օրինակ, 5 միավորից բաղկացած համանունական մի շարք է տալիս **Է**-ի համար՝ «7-րդ գիրը և 3-րդ ձայնավորը», «**եմ** բայի ներկայի 3-րդ դեմքը», «1. ինչ որ կա, եղող, գոյություն ունեցող. 2. Աստծու մակդիր՝ իբրև միշտ եղողի», «միջարկություն», «էկորձ խազանունը»¹³: Ընդ որում, եթե հիշյալ համանունները (վերջինիս բացատրությամբ) գործածական բառեր են նաև արդի հայերենում, ապա այդպես չէ, օրինակ, **հոյ** (**հո**) տառանվան դեպքում: Տրվում են համանուն երկու բառեր, որոնք ունեն «ահ, երկյուղ» և «հին ժամանակների պատերազմական գործիք՝ խոյի գլխի նման, որով հարվածում էին բերդի կամ քաղաքի պարիսպներին ու կործանում» նշանակությունները¹⁴: Ակներև է, որ հնաբանությունների հետ գործ ունենք:

Համանուններով են ներկայացված նաև **զայ**, **ինի**, **մեն**, **նու**, **շայ**, **ռ** (տառանունից զատ տրված է ևս 5 **ռ**), **լին**, **փիւր** տառանունները:

Ստ. Մալխասյանցի բառարանի առաջին երեք հատորներում ներկայացված չեն սպասելի 24 տառանուններից երեքը: Բացակայում են, ինչպես ասվեց, **դա**, նաև **ըթ** և **ձայ** տառանունները: Կարելի է կարծել, որ դա ցավալի վրիպման արդյունք է:

Բայց ահա չորրորդ հատորում մնացած 12 տառանուններից տրվել են միայն

⁸ Ռ. Ս. Ղազարյան, Գրաբարի բառարան, հ. Ա, Երևան, 2000, էջ 52:

⁹ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 164-165:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ.հ. 1-4, Երևան, 1944-1945:

¹² Նույն տեղում, հ. 1, էջ 435:

¹³ Նույն տեղում, հ. 2, էջ 44:

¹⁴ Նույն տեղում, հ. 3, էջ 130:

ւիւն, փիւր, քէ տառանունները: Եթէ Մալխասյանցը որոշել էր բառարանի վերջին հատորում տառանուններն այլևս գլխաբառ չդարձնել (դրանք թերևս բառեր չհամարելով), ապա, բնականաբար, հիշյալ երեք տառանուններն էլ պիտի բաց թողներ: **Իւն, փիւր, քէ** տառանունների առկայության պարագայում, ենթադրվում է, բառարանում տեղ պիտի գտնեին հավանաբար նաև **ցոյ** և **վէւ** տառանունները, որոնք բառակազմական հիմք են դարձել մի քանի բառերի համար (հմմտ. **ցոյական, վէւագրություն** և այլն):

Հմուտ բառարանագրի այս անհետևողականությունը պատճառաբանել ուղղակի հնարավոր չէ: Մյուս կողմից էլ, իհարկե, չի կարելի բացառել խմբագրական միջամտությունը: Հայտնի է, օրինակ, որ այս բառարանի խմբագիրները շուրջ 2000 բառ են ավելացրել բառարանում: Նման միջամտությունների հետևանքով արդյոք որոշ տառանուններ դուրս չեն թողնվել, դժվար է ասել:

Այսպիսով, Ստ. Մալխասյանցն առաջինն է, որ հայկական տառանուններն իբրև գլխաբառ զգալի չափով ներկայացրել է հայերենի բացատրական բառարանում. 36 տառանուններից 24-ը: Այսպիսով՝ Ստ. Մալխասյանցը գլխաբառ է դարձրել հայկական հետևյալ տառանունները՝ **այբ, բեն, գիւ, էչ, գայ, է, թոյ, ժէ, ինի, լիւն, խէ, ծայ, կեն, հոյ, դատ, ճէ, մեն, յի, նու, շայ, ո, ւիւն, փիւր, քէ**: Բառացանկից դուրս են մնացել **դա, ըթ, ձայ, չայ, պէ, ջէ, տայ, սէ, վէւ, տիւն, րէ, ցոյ** տառանունները:

Համեմատությունները ցույց են տալիս, որ Ստ. Մալխասյանցի օրինակին են հետևել արևելահայերենի հետագա ընդարձակ բառարաններ կազմողները:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի կազմած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը»¹⁵ հայկական այբուբենի 36 տառանուններից ներկայացնում է կրկին 24-ը, բայց, իհարկե, փոքր-ինչ այլ կազմով: Լրացվել են **դա** և **տյուն** տառանունները, սակայն բաց են թողնվել Մալխասյանցի ընդգրկած **շա** և **ո** տառանունները: Նշված հավելումներն ու բացթողումները սկզբունքային չեն: Մալխասյանցի բառարանի հետ նմանություններն ակնհայտ են, բայց դժվար է բացատրել, թե ինչու է հենց այդպիսի լուծում տրվել: Բառարանի տարբեր հատորներ կազմել և խմբագրել են տարբեր մարդիկ, ովքեր ուղղակի հետևողական չեն եղել հայկական տառանուններն ամբողջական ներկայացնելու հարցում:

Տառանունները բացատրվում են Մալխասյանցի նման, սակայն նշելի է մեկ կարևոր առավելություն. մի քանի դեպքերում տրվում են բնագրային օրինակներ հայ դասական գրականությունից: Այսպես՝ *Շե որ այբն ասել է, բենն էլ պետք է ասի* (Հովհ. Թումանյան)¹⁶: *[Աշակերտները] հետևելով ուսուցչին, սկսեցին միասին բարձր և եղանակավոր ձայնով երգել Այբ, բեն, գիւ, դա ...* (Ավ. Բաախալյան)¹⁷: *Փոքրանալով «թո»-ին հպատակ դարձավ, Ջրկվեցավ բառարանից «հո» տառը* (Զիվանի)¹⁸:

Ակադեմիական բառարանում **այբ** տառանունը հստակորեն բառային արժեքով է ընկալվել. առաջին՝ «հայերեն այբուբենի առաջին տառի անունը» իմաստին հաջորդում է երկրորդ՝ փոխաբերական իմաստը՝ «սկիզբ»: Ներկայացվել են նաև եր-

¹⁵ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ.հ. 1-4, Երևան, 1969-1980:

¹⁶ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ.1, Երևան, 1969, էջ 61 (այբ բառահոդվածը):

¹⁷ Նույն տեղում, էջ 312 (բեն բառահոդվածը):

¹⁸ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1972, էջ 219 (թո բառահոդվածը):

կու կայուն բառակապակցություններ՝ **այբ և թե** - սկիզբ և վերջ, **այբբ բենից ջոկել** - մի քիչ գրել կարդալ իմանալ: **Քե** տառանվան դեպքում էլ ներկայացվում է **ես եմ այբ ու թե** - ես եմ առաջինն ու վերջինը բանաձևումը:

Այսպիսով՝ ակադեմիական բառարանում գլխաբառ են դարձել հայկական հետևյալ տառանունները՝ **այբ, բեն, գիմ, դա, էչ, գա, է, թո, ժե, ինի, լյուն, խե, ծա, կեն, հո, դատ, ճե, մեն, հի, նու, տյուն, վյուն, փյուր, քե**: Դուրս են մնացել **ըթ, ձա, շա, ո, չա, պե, ջե, ոա, սե, վեվ, բե, ցո** տառանունները:

Հայկական տառանունների բառարանային մշակման հարցում ակադեմիական բացատրական բառարանը փաստորեն առաջընթաց քայլ չի արել:

Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում»¹⁹ հայկական այբուբենի 36 տառանուններից տրված են 30-ը: Էդ. Աղայանը, Ստ. Մալխասյանցի բառարանի հետ համեմատած, իր կազմած բառարանի բառացանկում ավելացրել է **դա, ձա, ջե, ոա, սե, վեվ, տյուն, ցո** տառանունները: Թերևս Մալխասյանցի հետևողությամբ բաց է թողել **ըթ, չա, պե, բե** տառանունները: Իր բառացանկում չի ընդգրկել նաև **դատ** և **ո** տառանունները, որոնք, սակայն, Մալխասյանցը ներկայացրել է:

Հետաքրքրական է, որ Էդ. Աղայանի բառարանում կան **դատասել, դատասաց, դատահունչ, դատասում** լեզվաբանական տերմինները, ընդ որում **դատասել**-ը՝ «Ը և Լ հնչյունների փոխարեն Դ (դատ) արտասանել» բացատրությամբ²⁰, սակայն տառանունը, այդուամենայնիվ, բացակայում է:

Մի շարք տերմինների բառակազմական հիմք դարձած այս տառանվան առկայությունը բառացանկում ավելի հավանական էր, քան, ասենք, **ջե, սե, տյուն** տառանուններինը, որոնք գուրկ են բառակազմական և դարձվածակազմիչ արժեքից²¹: Էդ. Աղայանը բաց է թողել **թե** տառանունն այն դեպքում, երբ նրանով բաղադրված **թեական** լեզվաբանական տերմինը հենց ինքն է առաջարկել պատճառական բայերի անցյալ կատարյալի հիմքն անվանելու համար:

Տառանունները ներկայացվում են նախորդ բառարանների հետևողությամբ: **Այբ** բառահոդվածում ավելացել է երրորդ՝ փոխաբերական իմաստը՝ «տարրական գիտելիք», կան նաև կայուն բառակապակցություններ՝ **այբից (մինչև) թե** - սկզբից մինչև վերջ, **այբբ բենից ջոկել** - գրաձանաչ լինել, **այբ-բեն-գիմեն սկսիլ** (արևմտ.) – սկզբից սկսել: Բացակայում են բնագրային օրինակները (սա ընդհանուր իրողություն է այս բառարանի համար):

Այսպիսով՝ Էդ. Աղայանի բառարանում ընդգրկվել են **այբ, բեն, գիմ, դա, էչ, գա, է, թո, ժե, ինի, լյուն, խե, ծա, կեն, հո, ձա, ճե, մեն, հի, նու, շա, ջե, ոա, սե, վեվ, տյուն, ցո, վյուն, փյուր, քե** տառանունները: Դուրս են մնացել **ըթ, դատ, ո, չա, պե, բե** տառանունները:

Կարելի է արձանագրել, որ ակադեմիական բացատրական բառարանի համեմատությամբ Էդ. Աղայանի բառարանն ընդամենը մեկ քայլ էր առաջ, այն էլ՝ հայկական տառանունների ընդգրկման առումով: Սակայն դա էլ, ինչպես տեսանք, ամբողջական և գոհացուցիչ չէ:

Ստ. Մալխասյանցի, ակադեմիական բացատրական բառարանի և Էդ. Աղայանի

¹⁹ Է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, գիրք 1-2, Երևան, 1976:

²⁰ Նույն տեղում, էջ 931:

²¹ Հայկական տառանուններով կազմված բառերի և դարձվածքների մասին մանրամասն տե՛ս Դ. Գյուրջինյան, Հայկական տառանունների բառակազմական արժեքը, «Էջմիածին», 2004, Ա, էջ 59-76: Հայկական տառանունների դարձվածակազմիչ արժեքը, «Էջմիածին», 2004, Զ, էջ 89-96:

բառարանների ընդգրկած տառանունների նյութը համեմատելով՝ կարող ենք ասել, որ հիշյալ բառարաններում առհասարակ գլխաբառ չեն դարձել **ըթ**, **չա**, **պե** և **րե** տառանունները:

Սփյուռքյան բառարանները երկու մոտեցում ունեն. կա՛մ առանձին գլխաբառով առհասարակ չեն ներկայացնում տառանունները, կա՛մ էլ ներկայացնում են մասնակիորեն՝ տարբեր նկատառումներից ելնելով: Այսպես, Գնել արքեպս. Ճերեճյանի և Փարամազ Կ. Տոնիկյանի բառարանն առանձին գլխաբառով ներկայացնում է ընդամենը չորս տառանուն²²: **Այբ**-ը հայերեն այբուբենի և առաջին ձայնավորի անունն է, **եջ**-ը բազմիմաստություն ունի (հետևել են Հր. Աճառյանին). **մեն**-ը Մ տառի անունից գատ բացատրվում է իբրև «միայն մեկ», «առանձին, միևնույն», այլև որպես բառակազմական բաղադրիչի համանուն, օրինակ՝ **մենակատար**²³, իսկ **նու**-ն համանուն է «հարս» բառին (չնայած տրվում են մեկ բառահոդվածով): Կարելի է ասել, որ բառարանագիրները բառարան են ներմուծել միայն այն տառանունները, որոնց մեջ բառային արժեք են տեսել:

Սփյուռքի բառարանագիրները սովորաբար հետևում են ավանդական սկզբունքին. տառանունը ներկայացնում են յուրաքանչյուր տառին զուգահեռ, ինչպես՝ «Բ, երկրորդ տառը մեր այբուբենի և առաջին բաղաձայնը. անունը՝ **բեն**. լծորդ է **պ**-ի (օր. *ամբարիշտ* = *ամպարիշտ*) եւ **վ**-ի (*Վասիլ* = *Բասիլիկոս* = *Բարսեղ*)»²⁴:

Բառացանկում հայկական տառանուններ ունեցող բառարանների մյուս խումբը հայերենի ուղղագրական բառարաններն են: Բառաքանակով ամենամեծը (ավելի քան 152 000 բառ) Հովհ. Բարսեղյանի կազմած բառարանն է²⁵: Հայերեն այբուբենի 36 տառանուններից այս բառարանը ներկայացնում է ընդամենը 21-ը: Այստեղ ևս հստակորեն առկա է Ստ. Մալխասյանցի բառարանի ազդեցությունը: Այսպես, Մալխասյանցի բառարանի չորրորդ հատորում, ինչպես ասվեց, սպասելի 12 տառանուններից ներկայացվել են միայն երեքը. այդ նույն երեքը կան Բարսեղյանի բառարանում, իսկ մնացածը բացակայում են: Մալխասյանցի բառարանում եղածներից Բարսեղյանի կազմած բառարանում բացակայում են **է**, **յուն**, **մեն**, **հի**, **ո** տառանունները, ավելացվել են **դա**-ն և **ձա**-ն:

Հեղինակը տառանուններն ընտրելիս անհետևողականություն է դրսևորել: Այսպես, ուղղագրական նույն արժեքն ունեն **կեն** և **մեն** տառանունները, սակայն վերջինս բացակայում է: Այդպես էլ կան **ծա**-ն և **ձա**-ն, չկան **չա**-ն և **ռա**-ն, կան **խե**-ն և **ճե**-ն, չկան **ջե**-ն և **սե**-ն: Թվում է, թե որոշակի ուղղագրական դժվարություն կարող են ունենալ բառարանից բացակայող **ըթ**-ը և **րե**-ն քան թե, ասենք, **նու**-ն կամ **զա**-ն: Բառարանում չկա **վեվ**-ը, երբ **վեվագրություն** և **վեվամոլություն** բառերը կան: Մյուս կողմից էլ, հայտնի է, որ դասական **վեւ**-ին զուգահեռ **վն** տարբերակն էլ է հազվադեպ հանդիպում: Բառարանում կա **հո**-ն, բայց բացակայում է **հի**-ն (**յի**-ն), որի գրությունը վստահաբար երկրնորանք կարող է առաջացնել: Բառարանագիրը բաց է թողել **է**-ն այն դեպքում, երբ համանուն 3 **է** ներկայացնում է (եակ, **էական** բայը և ձայնարկությունը): Մյուս կողմից, սակայն, **դա** ցուցական դերանունից գատ տալիս է նաև **դա** համանունը՝ «Դ տառի անունը», որ ուղղագրական արժեք չունի:

²² Հայոց լեզուի նոր բառարան, հհ. 1-2, Պեյրուք, 1992:

²³ Նույն տեղում, հ. Բ, էջ 151:

²⁴ Նույն տեղում, հ. Ա, էջ 263:

²⁵ Հովհ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Երևան, 1973:

Կարծում ենք, որ ուղղագրական բառարանում պիտի ընդգրկվեին բոլոր տառանունները, որովհետև նրանց այժմյան գրությունը դասականից էապես տարբերվում է. բառավերջի *է*-ն այսօր *ե* ենք գրում (*պէ - պե*), բառավերջի *յ*-ն չենք գրում (*ռայ - ռա*), փակ վանկի *իւ*-ը *յու* է գրվում (*փիւր - փյուր*): Այս բառարանի միջոցով հնարավոր չէ կռահել՝ տառանունները մեծատառ, թե՞ փոքրատառ պիտի գրվեն. բառարանի բոլոր բառերը սկսվում են մեծատառով, որ ինքնին մեծ սխալ է:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ հայկական տառանունների բառարանային մշակման ասպարեզում Հովհ. Բարսեղյանի բառարանը որևէ նորություն չի բերել:

Սկզբունքային է հայերենի դպրոցական ուղղագրական բառարանի մոտեցումը. ընդգրկվել է միայն *այբ*-ը²⁶: Կարելի է կարծել, որ Ա. Ղարիբյանը բառային արժեք վերագրել է միայն *այբ*-ին, մի բան, որ միանգամայն հասկանալի է: Հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ դպրոցական բառարանը սովորաբար ավելի նեղ ընդգրկում է ունենում: Հետագա ուղղագրական դպրոցական (կամ ուսումնական) բառարանները²⁷ տառանունների հարցում հիմնականում այս մոտեցումն են որդեգրել:

Հատուկ և հասարակ անունների գրությանը նվիրված ուղղագրական բառարանում *այբ*-ը ներկայացվել է երկու գրությամբ՝ փոքրատառ, որ ընդունված է արդի արևելահայերենում (*այբ* - հայերենի այբուբենի առաջին տառի անունը), և մեծատառ (*Այբ* - «Ես եմ Այբ եւ Քե» = *Ես եմ Սկիզբն ու Վախճանը*), որտեղ *Այբ*-ը շրջասաբար Հիսուս Քրիստոս է նշանակում²⁸: Հայտնի է, որ մեծատառ են գրվում Հիսուս Քրիստոսին անվանող բառերն ու շրջասությունները, ինչպես՝ *Լույս, Օծյալ, Ճշմարիտ որթատունկ* և այլն:

Հատուկենտ տառանունների հանդիպում ենք հայերենի բարբառային բառազանձը ներկայացնող բառարաններում:

Հր. Աճառյանն *այբ*-ի կապակցությամբ «Արմատական բառարանում» նշում է նրա գավառական արտասանական ձևերը՝ *այփ* և *այիփ*: «Գավառական բառարանում» մեծ հայագետը տալիս է *այբ* գլխաբառը, այնուհետև՝ տառանուն բաղադրիչն ունեցող երեք դարձվածքներ՝ «անգրագետ, տգետ է» նշանակությամբ՝ *այբը տեսնայ նե՝ բենը մեքկեմէն կը փախցունէ* (Պոլիս), *այբը տեսնայ՝ պապուն սանտրը կը գիտնայ / այբը տեսնէ նը պապայիս միրութին սանտրն է կասէ* (Նոր Նախիջևան), *գլուխը այբ մը չկայ* (Ակն)²⁹: Ե՛ւ տառանունը Աճառյանը ներկայացնում է երկու իմաստով՝ 1. հայերեն *ե* գրի անունը և 2. Ղարաբաղի բարբառում՝ «հետույք» (*ետն* բառի առաջին տառի անունից. քաղաքավարությունից ելնելով, որպեսզի ամբողջ բառը չասվի)³⁰:

Հայոց լեզվի բարբառային նոր բառարանը ներկայացնում է *այբ* գլխաբառը, նշում բարբառային ընդհանրական *այիփ* տարբերակը, այնուհետև *այֆ*՝ Ղարաբաղի բարբառում, ինչպես նաև *այբ* բաղադրիչով երեք դարձվածքներ՝ *այբը (այիփը) փախսով՝ չանգալով բռնել* «շատ տգետ լինել, գրագիտություն չունենալ», *այբ ու*

²⁶ Ա. Ղարիբյան, Գ. Պարիս, Դպրոցական ուղղագրական բառարան, Երևան, 1959, այլև Ա. Ս. Ղարիբյան, Գ. Ս. Շեկյան, Դպրոցական ուղղագրական բառարան, Երևան, 1981:

²⁷ Ա. Ս. Սուքիասյան, Բ. Ա. Սուքիասյան, Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Երևան, 2002, Ռ. Նազարյան, Ա. Գյոդակյան, Հայերեն ուղղագրական դպրոցական բառարան, Երևան, 2004:

²⁸ Դ. Գյուրջինյան, Մեծատառ, թե՞ փոքրատառ. հայերեն բառարան-տեղեկատու, Երևան, 2005, էջ 33:

²⁹ Հր. Աճառյան, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 89-90:

³⁰ Նույն տեղում, էջ 296:

բենի հոտն առնել «մի քիչ գրագետ լինել՝ դառնալ», գլխումը (փորումը) այբի կտոր չկա «չափազանց տգետ է, ոչ մի բան չի հասկանում»³¹։ Կասկածելի է թվում այՖ բարբառային տարբերակը. հայտնի է, որ Ղարաբաղի բարբառը Ֆ հնչյուն չունի³²։ Եջ տառանվանը նվիրված բառահոդվածը գրեթե կրկնում է «Գավառական բառարանում» Հր. Աճառյանի գրածը. ավելացվել է Մալխասյանցի բառարանի օրինակը՝ Եջո բաց է³³։

Մի շարք հայկական տառանուններ կան Ե. Գևորգյանի կազմած համանունների բառարանում³⁴։

Համանունական գույգերում հանդես են գալիս **գիւ**-ը (այբուբենի 3-րդ տառի անունը և քաղցրահամ կոճդեզ), **դա**-ն (4-րդ տառի անունը և այդ), **եջ**-ը (5-րդ տառի անունը և «հագուստի երեսակոդմը»), **հի**-ն (21-րդ տառի անվանումը և բնաձայնություն՝ ծիծաղի ձայն), **նու**-ն (հնացած «հարս» և 23-րդ տառի անվանումը), **շա** (24-րդ տառի անվանումը և իտալերենից՝ հնդկական վայրի ոչխար), **ռ** (25-րդ տառի անվանումը և զարմանքի ու վշտի ձայնարկություն), **պե** (26-րդ տառի անվանումը և զարմանքի արտահայտություն արևմտահայերենում)³⁵, **վյու**-ն (34-րդ տառի անվանումը և հազվադեպ «դեպի առաջ») և **փյուր**-ը (35-րդ տառի անվանումը և բարբառային «խիլվ, մացառ»)։

Համանունների եռանդամ շարքի մեջ են հանդես գալիս **թռ**-ն (այբուբենի 9-րդ տառի անվանումը, բարբառային **թռ** «գինը բարձր», որ ծագել է **թանկ** բառի առաջին տառի անունից, և զարմանքի ձայնարկություն), **կեն**-ը (15-րդ տառի անվանումը, բարբառային «խոպան, անմշակ» և «երկարության չափ ճապոնիայում»), **մեն**-ը (21-րդ տառի անվանումը, «հունական չափի միավոր՝ մնաս» և «մեկ հատիկ, յուրաքանչյուր, միայն»)։

Համանունների քառանդամ շարքի մեջ է հանդես գալիս **հռ**-ն (այբուբենի 16-րդ տառի անվանումը, «չէ՞ որ», գրաբարյան «դեպի ուր» (< **յռ**) և ձայնարկություն)։

Համանունների վեցանդամ շարքի միավոր է **է** տառանունը (1. հնչյունը և 7-րդ նշանակությամբ թվականը, 2. հայերենի **է** տառի անվանումը, 3. էական բայի ներկայի եզակի 3-րդ դեմքը, 4. գոյություն ունեցողը. Աստված. էակ, 5. եկեղեցական երաժշտության ձայնանիշ (< **էկորա**), 6. կոչական ձայնարկություն)։

Բառաբերականական համանունություն է ստեղծվում **քե** տառանվան որոշյալ առման (**քեն**) և **քեն** «ոխ, վրեժ», բարբառային **քեն** «թարախ» և **քեն** «վախ» բառերի միջև։

Համանունների բառարանում, այսպիսով, իրենց համանուններով ներկայացվել են հայկական 16 տառանուններ։ Անշուշտ, եթե համեմատելու լինենք համանունների տեսանկյունից, ապա սա ավելին է, քան կա Մտ. Մալխասյանցի բառարանում։

Իհարկե, կարելի է նկատել բառարանագրի ճիգը՝ ընդարձակելու համանունների ոլորտը. որոշ բառերի ընդգրկումը համոզիչ չէ, օրինակ՝ **վյու**ն «օն, դեպի առաջ» և այլն։

Հայերենի դարձվածաբանական բառարաններում դարձվածքները սովորաբար

³¹ Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, 2001, հ. Ա, էջ 52։

³² Հմմտ. Ար. Ղարիբջան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 236, Հ. Զ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 446։

³³ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, էջ 370։

³⁴ Ե. Գևորգյան, Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարան, Երևան, 1978։

³⁵ Ի դեպ, մինչ այդ **պե** տառանունը որևէ բառարանում գլխաբառ չի դարձել։

ներկայացված են այբբենական կարգով, ուստի տառանունները գլխաբառ չեն դարձել: Բառարաններից միայն մեկն է կազմված փնջային սկզբունքով, որի հետևանքով էլ **այբ**-ը գլխաբառ է դարձել³⁶:

Հայկական տառանունները որոշ չափով ներկայացվել են նաև թարգմանական բառարաններում:

Թարգմանական բառարանները սովորաբար բառացանկից դուրս են թողնում հայկական տառանունները, անգամ **այբ**-ը: Մակայն կան բացառություններ: Այսպես, **այբ**, **բեն** և **դա** գլխաբառեր ունի ակադեմիական «Հայ-ռուսերեն բառարանը»: **Այբ**-ը բացատրվում է իբրև հայկական այբուբենի առաջին տառի անուն, երկրորդ՝ փոխաբերական իմաստով՝ «նախնական՝ տարրական գիտելիք», բերվում են դարձվածքներ՝ իրենց ռուսերեն համարժեքներով՝ *այբ-ից բե* от аза до ижицы, *փորումը այբի կտոր չկա* ни бе ни ме не знает, ни бельмеса не знает³⁷: **Բեն**-ը բացատրվում է որպես երկրորդ տառի անուն և բառացանկում հայտնվել է թերևս **այբուբեն** բառի բացատրությունն «ավելի տեսանելի» դարձնելու նպատակով. **դա**-ն ներկայացվել է որպես **դա** ցուցական դերանվան համանուն³⁸:

Հետաքրքրական է ակադեմիական «Ռուս-հայերեն բառարանի» հետևյալ օրինակը: Ռուսական այբուբենի առաջին տառի հին անունը (аз) բացատրվում է **ազ**, **այբ**, երկրորդ իմաստով՝ միայն հոգնակի (ընդ որում՝ խոսակցական). **այբեր** (азы) «նախնական՝ տարրական տեղեկություններ», *начать изучение с азов* - *նստումնա-սիրությունն սկսել այբից*, ապա տրվում է դարձվածքը՝ *он ни аза не знает* - *նա ոչինչ չգիտե, փորումն այբ չկա*³⁹: Հարկ է նշել, որ ո՛չ անցյալ դարի 50-ականներին, ո՛չ էլ հետագայում **այբեր** բառային միավորի գործածություն մեզանում չի արձանագրվել. այդ ձևն անմիջական պատճենում է ռուսերենից:

Ար. Ղարիբյանի բառարանում Աз բառահոդվածը ներկայանում է վերամշակված տեսքով. *азы* նշանակում է «այբբեն, նախնական տեղեկություններ» և այլևս խոսակցական չի նկատվում, *начинать с азов* բառակապակցությունը բացատրվում է «այբբենից սկսել», իսկ *ни аза не знает* դարձվածքը՝ «ոչինչ չգիտենալ, փորում այբի կտոր չունենալ»⁴⁰:

Այսպիսով՝ կարելի է հետևյալ եզրակացություններն անել.

ա) հայկական տառանունների մշակումը սկզբնավորվել է հայերեն միջնադարյան ձեռագիր բառարաններում,

բ) բառարանային մշակումն իրականացվել է ինչպես միալեզվյան (բացատրական, ստուգաբանական, ուղղագրական, բարբառային և այլն), այնպես էլ թարգմանական (հայ-ռուսերեն, ռուս-հայերեն) բառարաններում,

գ) առաջինը գրանցվել, ինչպես նաև բառարանային լիարժեք մշակման է ենթարկվել հայկական առաջին տառանունը՝ **այբ**-ը,

դ) հայկական տառանունները գլխաբառ են դարձել կամ էլ ներկայացվել են համապատասխան տառերին կից (օրինակ՝ **բ**, անունը՝ **բեն** և այլն),

ե) որևէ բառարանում գլխաբառ չեն դարձել **ըթ**, **չա** և **բե** տառանունները,

զ) առ այսօր հայերենի ոչ մի բառարան հայկական տառանուններն ամբողջա-

³⁶ Պ. Ս. Բեդիրյան, Դարձվածաբանական բացատրական բառարան, Երևան, 1971, էջ 9:

³⁷ Հայ-ռուսերեն բառարան, Երևան, 1984, էջ 22:

³⁸ Նույն տեղում, էջք 123, 175:

³⁹ Ռուս-հայերեն բառարան, հ.1, Երևան, 1954, էջ 12:

⁴⁰ Ա.Ս. Ղարիբյան, Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1968, էջ 6:

կան չի ներկայացրել:

Հարկ է հաշվի առնել տառանունների բառարանային մշակման առկա փորձը և հայերենի հետագա ընդարձակ բառարաններում (օրինակ՝ ակադեմիական բացատրական) լիարժեք ներկայացնել հայկական տառանունները:

ՀՐԱՆՈՒՇ ԲԱՂՈՒՄՅԱՆ

ՀՈԳԵՎԱՐՔԻ ԵՎ ՀՈՒՅՍԻ ՁԱՀԵՐ

*Փոթորիկի պես քալել կուզեմ: Արդարությամբ բեռնավոր
Արշալույսին հուրերուն տակ՝ հողը մերկ է ու ծարավ...*

(Սիամանթո, «Ասպետին երգը»)

Հողի վերքը բազմադարյան է և շարունակվում է դեռ լսվել նրա տնքոցը... Հողը հառաչում է ցավից: Շատ-շատերին է իր գիրկն առել, և հոգին լցված է ցավով: Դարեր շարունակ հողը ներկվել է արյամբ, բայց դարձյալ կանաչ ոստ է ծլարձակել մոխիրներից սևացած ու արյունով սնուցված ու ջնարակված հողից:

Հոգնած է հողը հայրենի, բայց մեծերի ծնունդը միշտ էլ լինում է անսպասելի ու անասելի հրճվանք պատճառում նրան: Արգասաբեր է այն հողը, որից ծնվում են գավակները՝ մաքառման երգը շուրթերին: Նրանցից էր Ատոմ Յարճանյանը, որը պիտի երգեր երգը Հույսի ու Սպասման, վրեժի և մաքառման... Սիամանթո... մի մեծություն, որը ճիշտ ժամանակին հայտնվեց արևմտահայ գրականության երկնակամարում ու բերեց իր երգը, երգը նորօրյա և թողեց հայ գինվորին երգելով մեռնելու պատգամը:

Բանաստեղծ լինելը ամենադժվար կոչումն է: Դանիել Վարուժանը մոր և բանաստեղծի դերը ներկայացնում է այսպես. «Մայր ըլլալ և բանաստեղծ ըլլալ միննույն բանն է. երկուքն ալ արյունով կբաժանվին և կ'անմահանան ուրիշ էակներուն մեջ. մին կ'ապրի տասի մեջ, իսկ մյուսը՝ միլիոններուն»¹: Սիամանթոյի երգը ապրեց հայի երակներում: Նրա բանաստեղծական աշխարհը բազմազան է և ներքին հզորություն ունի: Այդ հզորությունը նկատել է անգամ Թալեաթը՝ ասելով, որ Յարճանյանի յուրաքանչյուր բանաստեղծություն մի բանակ կշարժի: Նրա ստեղծագործության հզորության մեջ թաքնված էր հայրենիքի ցավը, հայի արյունը, բայց այդքանի հետ մեկտեղ հույսի արթնացումը, նաև պայքարի կոչը: Նրա առաջին գիրքը՝ «Դյուցազնորենը» լույս է տեսել 1901 թ., որտեղ պատկերված էր դյուցազունների ծնունդը և պայքարը: Սիամանթոն, յուրացնելով ժամանակի համաշխարհային պոեզիայի ստեղծագործական հայտնությունները, սիմվոլիզմի շրջագծում օգտագործեց Նարեկացու պատկերային համակարգի տեսիլային- սիմվոլիկ կառուցվածքը:

«Դյուցազնորենով» մեր առջև բացվում է յուրօրինակ և հետաքրքիր բանաստեղծական մի աշխարհ: Բռնակալության ներքո ճնշված ժողովրդին ծանր օրերի հույսն ու սպասումն է բերում Սիամանթոն: Այս շարքը, որը պարունակում է վեց բանաստեղծություն, իր ամբողջության մեջ ներկայանում է որպես պոեմ: Յուրաքանչյուր բանաստեղծություն մյուսի շարունակությունն է: Այս շարքի համար որպես բնաբան ընտրված է Ռիգ Վեգայի. «Որքան արշալույսներ կան, որ տակավին դեռ չեն ծագած ...» խոսքերը: Այո՛, արշալույսները նոր պիտի ծագեն և դրա համար առաջնահերթ էր հույսի հայտնությունը Սիամանթոյի կողմից և Հույսը գրվեց մեծատառով:

¹ Դ. Վարուժան, Յարճանյանի քերթություն, Երկեր, 3-րդ հ., 1987 թ., էջ 161:

Հայ քնարերգության մեջ ասպարեզ է իջնում ռոմանտիկ գրողի և ռազմերգողի կերպարը: Ճիշտ է, «Դյուցազնորենում» Միամանթոն դիմել է չափազանցությանը, նա տիտանական մեծություն է հաղորդել նահատակներին և հերոսներին, բայց բերել է նաև հաղթանակի ճանապարհը ցույց տվող ժողովրդական կամքի պատգամը:

Թեև շատ է տառապել հայ ժողովուրդը, բայց վիշտը չի հյուծել հայ մայրերին, և նրանց արգասաբեր արգանդից ծնունդ պիտի առնեն քաջերը հրաձին: Մաքառումի այդ օրերին, թեկուզ ցավը մնա հայի երակներում և տառապանքը փոխանցվի դարերին, դարձյալ չպետք է մոռանալ պարտքը:

Եթե կուգես, Տառապանքը, դարերուն համար, քանդակե.

Բայց մի՛ մոռանար, Անոր աչվըներն ու բերանը ու հոգին տարփորեն,

Ընդվզումի ստինքներուն կարկառելու ...:

Սերունդների առջև իր պարտքն ուներ կատարելու «ողջակիզներու սպիտակ տղան»: Թեկուզ լինի այդ մահվան ճանապարհ, բայց հայոց զավակները միայն պիտի «հաղթանակի կամարներուն վրա արձանանան»: Միամանթոյի ասելիքը աստիճանաբար բացահայտվում է.

Ու դեռ մայրեր կան, արգասաբեր ու հերարձակ,

Որ վերը, վրաններուն մեջը դաշտավայրին,

Իրենց հուռթի ու լայն ու լուսավոր կողերուն տակ,

Մեր վաղորդայնները նորեն փառավորելու համար

Մոլեգին դյուցազուններու կարմիր երկունքը կապրին...

Ուրեմն, մոտ է արշալույսը ու պիտի քայլենք նոր ճանապարհով: Բայց մի՞թե հեշտությամբ է տրվում պայծառ առավոտը, չէ՞ որ դրան հասնելու համար պայքարել է պետք:

Հույսը դառնում է գործի սկիզբը: Ինչպես նկատել է Ռուբեն Սևակը. «Ով որ կյանքին հավատքն ունի՝ երկնքեն բռնվելու չվան մ'ունի: Ով որ Հաղթության հույսն ու երջանկության սերն ունի. ան իր ուսերուն վրա երկու թևեր ունի, ան հողեն չի վախենար»²: Իրոք, հույսն ու հավատն են դարեր շարունակ փրկել հայ ժողովրդին օրհասական վտանգից. հույսով ապրելը հաղթանակի կեսն է և պայքարը՝ հաղթանակ: Իր ռոմանտիկական շնչով և լավատեսական հոգով Հայաստանի ապագան է ներկայացնում բանաստեղծը: Նախ աստվածացնում է հսկաներին, առաքյալներին, որոնք անմահացել են հեռավոր դարերում, ովքեր իրենց արյունն են տվել, որպեսզի փրկվի մի բուռ մնացած հայոց աշխարհը.

Ու երբ, գիշեր մը, անձնագոհումներու եղերական ժամը վրանիդ ինկավ,

Դուք ազատության ճանապարհները մեզի համար հարթելե հետո,

Ձեր ձեռվրներով, ավաղ, մեր անկարեկիռ նայվածքներուն դիմաց՝

Ձեր վաղվան խարույկները պատրաստեցին...

Ուրեմն փառք և օրհնություն՝ ն ձեզի...

Եկող սերունդները պիտի շարունակեն նահատակների անցած ճանապարհը, թեկուզ այն լինի տատասկոտ.

Ձեր աստվածացումը օրհներգելով պիտի երիվարեն, ահավասի՛կ

Ով գիտե, դեպի ո՞ր հաղթանակները կամ դեպի ո՞ր պարտությունները

² Ռ. Սևակ, Բժիշկին գիրքեն փրցված էջեր, Երևան, 1985 թ., էջ 318:

փառավոր...
(«Աստվածացում»)

Հայ մայրերի կերպարը միակ ոգևորող խթանն է հանդիսանում. միակ ոգևորիչ ուժն ու հավատը տառապանքի մեծ օվկիանում: Ինչպես Հիսուսը կրեց տառապանքի խաչը, այնպես էլ հայ մայրերը շարունակում են լուռ կրել մեծ տառապանքն ու վիշտը: Շարունակ իրենց ուսերին տարել են հայոց ցավը, սակայն միշտ հայացքն ուղղել են Աստծուն, աղոթել լուռ և հույսով ապրել՝ սպասելով նոր բացվող արշալույսին...

Ցավից ու տառապանքից է ծնվում ըմբոստացումը և հայոցորդիները պիտի առաջ գնան՝ տանելով հաղթանակի դրոշմը:

Մա դրոշմ՝ եղավ ձեր հայրերու Հաղթանակին,
Ու ձեր քայլերն շտապելու և հոգինիդ դեռ փոթորկելու համար
Ոսկեշեփորիս ունկնդրեցեք, որ շունչիս մեջեն մեր վրեժը պիտի հանեն...

Առաջ են մղվում «ըմբոստացումի զավակները»՝ հաղթանակի հույսով արբած: Այս կռիվը սրբազան է, որովհետև ժողովրդի լինելիության խնդիրն էր դրված: Մահանում են վիրավոր մարտիկները՝ հաղթանակ բառը շուրթերին:

Ճակատամարտը տեղի է ունենում գիշերը, որը ներկայացվում է որպես չարագույժ գիշեր, որի ընթացքում կատարվում է արյունահեղություն, բայց այդ արյունը պիտի բերի «արծաթյա առավոտը»: Արծաթյա սիմվոլը մաքրության, լույսի, պայծառ ապագայի խորհրդանիշն է, որն էլ պայմանավորված է դյուցազունների հավաքական ուժով և ձայնը՝ հայության ոգին, շարունակում է նրանց զգուշացնել.

... ինձի հետևեցեք, դեպի քավությունը աս մրրկոտ ջուրին՝
Որ մեր հայրերուն դիակներովը բեռնավորված
Իր արհավիրքեն զանոնք անչափ ատեն աս ապառաժներուն

դիմացը կփշրեր...

Ու պիտի շարունակվի այս ձայնը հնչել դարերի խորքից, որպեսզի արևը միշտ պայծառ լինի Հայոց երկնակամարում:

Իսկ մայրերը ... ու սպասում են մայրերն իրենց զավակներին, սպասում են հերոսներին դափնեպսակներով պսակելու և օրհնելու համար:

Զավակնե՛ր, նախ մեզի մոտեցեք, վասնզի չի գիտենք որ
Ձեր հոգնած ու խռովյալ ու հաղթական
Ճակատներն ազատաբեր հերոսի,
Այլևս հիմա մեր մայրական լուսեղեն ծոցերուն,
Հանգչեցնող քաղցրությանը պետք ունին...

(«Հանգրվանը և վաղորդայնը»)

Միամանթոյի ստեղծագործական նվաճումների բարձրագույն արգասիքը հանդիսացավ նրա նոր հատորյակը՝ «Հոգեվարքի և հույսի ջահեր», որը, ինչպես նշում էր Արշակ Չոպանյանը, «ամենեն շքեղ, ամենեն տոհմիկ, ամենեն ուժեղ էջերեն մեկն էր»: Այս հատորում ավելի ցայտուն է ուրվագծվում հայկական, ազգային ողբերգությունը: Այստեղ առաջնահերթը ցավի նոր որակն է, որը ոչ միայն ազգային է, այլ ավելի շատ՝ համամարդկային: Այս անցումը հոգեբանորեն ճիշտ է ներկայացրել Դ. Վարուժանը: Նա ներկայացրել է ոչ միայն Միամանթո բանաստեղծին, այլև՝ կովող մարտիկին:

«Քերթողը նման է այն մարտիկին, որ բոցավառ թափով մը կ'սկսի կռվիլ և նախ խառնուրդին մեջ չի զգար այրուցքն իր ստացած հարվածին՝ մինչև որ ան հանգչի վիրավորին խանդի հետ՝ զգացնելով սուր ցավը և կորուստը: «Հոգեվարքի և հույսի ջահերը» հետո միայն երևան եկող այդ ցավն էր՝ խառնված զարհուրանքով»³: Թեև գիրքը լույս է տեսել 1907թ., սակայն արմատները տանում են մեզ դեպի 1897թ.: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ «Հոգեվարքի և հույսի ջահերը» թեմատիկորեն կապված է առաջին գրքի՝ ձեռագիր տետրակի «Ցավերուն ցավեն» հետ: Այդ գիրքը մնաց ձեռագիր և չտպագրվեց, իսկ այդ տետրում տեղ գտած բանաստեղծությունների մի մասը ներառվեցին նոր գրքի մեջ: Կային մի շարք բանաստեղծությունների վերնագրեր, սակայն չկային տեքստերը /»Աքորված խաղաղություն», «Թաղում»:

«Ցավերուն ցավեն» տետրում առաջին բանաստեղծությունների տրամադրությունը շատ մոայլ էր: Չարագույժ գույների մեջ զգացվում էր մահվան սառնությունը: Հոգեվարքի պահն էր, իսկ հոգեվարքը ամենադաժան պահերից է, որն ավելի է խորացնում ցավը. ցավը դառնում է գերագույն:

- Հոգեվարք, ճշմարիտ ապրած պահ,- այսպես կարելի է բացատրել, որը շատ հարազատ է Սիամանթոյին: Նա ապրել է այդ դաժան մղձավանջը հիվանդության ժամանակ: Սիամանթոն ոչ միայն զրկանքների մեջ է ապրել և տառապել, այլ նրան այցելել է հյուծախտը, որը հայ գրողների անբաժան ընկերն էր: Այդ մասին վկայում է Ռ. Սևակը, որն ակնատեսն է եղել այդ դաժան մղձավանջի.

Անկյուն վտիտ երիտասարդ մը կտենդեր, կողոպար, կհագար...⁴

Նա զգացել է այդ տառապանքը, որից ծնվել է տառապանքի գիրքը.

Վերջալույսի և մահաջերմի այս ժամուն

Ագռավներու եղերավոր երամներ մեռելաձայն,

Մտածամքս և վաղորդայնքս գերեզմանները

Տառապող մարդու վերջին խոսքը կողբերգեն ... ցավով:

Տենդի մեջ գտնվող հիվանդը հիշում է իր մանկությունը, հեռվում գտնվող հայրենի աղբյուրները, երկինքը և ցավը կեղեքում է հոգին.

Ըսե՛ք, ըսե՛ք, ո՞վ պիտի բերե հիշատակներուս

Այն բաժակ աստվածային աղբյուրներեն մը ջուրը կենսաբար:

Հայրենիքի սառը ջուրն է ուզում, թեև մահը, կանգնած ուսերին, ցանկանում է լռեցնել սրտի ձայնը: Սակայն վտանգի մեջ գտնվող հայրենիքի ցավը ավելի զորեղ է գտնվում. այն ստիպում է մաքառել և դուրս գալ ճգնաժամից: Ու հոգեվարքի պահին ծնվում են հույսի ջահերը, որը մահվան մեջ նշմարում է կյանքի և արթնացնում է վերադարձի հույսը:

Ինչպես Դ. Վարուժանի, Մ. Մեծարենցի, այնպես էլ Սիամանթոյի մոտ մահվան տագնապը արագացնում է ստեղծագործությունների ծնունդը, մեծ լարումների պահերին տաղանդն ավելի է բոցավառվում:

Այս շարքի վրա մեծ է նաև սիմվոլիզմի ազդեցությունը:

Սիամանթոն սիմվոլիզմի միջոցով ավելի է ընդգծում հայրենիքի տառապանքը, ավելի տեսանելի դարձնում անդունդի եզրին հայտնված հայրենիքի կերպարը: Ամբողջ

³ Դ. Վարուժան, Յարճանյանի քերթությունը, երկեր, 3-րդ հ., էջ 157:

⁴ Ռ. Սևակ, Բժշկական գրքեն փրցված էջեր, Չմեռնելու համար:

պոեզիան լցվում է մարդու, կյանքի և բնության հանդեպ ունեցած մեծ սիրով:

Միամանթոն Սորբոնի համալսարանում ուսանելու տարիներին ուսումնասիրել է արևմտանվորոպական գրականությունը, հատկապես Մորիս Մետեռլինկին, որը շատ հոգեհարազատ էր երիտասարդ բանաստեղծին: Նա քաջածանոթ էր նաև Պոլ Վեռլենի, Էմիլ Վերհարնի, Ստեֆան Մալամեի գրականությանը: Ճիշտ է, ազդեցություններ կան, այդ չենք կարող ժխտել, բայց նաև այդքան սրտամոտ խորհրդապաշտ Մետեռլինկը չէր կարող Միամանթոյի գրական ուղենիշը լինել, քանի որ կար դժբախտ Հայաստանը, հայրենիքի մեծ սերը:

Միմվոլիզմի ազդեցությունը կրել է նաև Մեծարենցը, թեև հպանցիկ, բայց իր հոդվածներից մեկում հայտնում է, որ այս մեթոդը անբնական է, և որ այն հակում ունի անտեսելու մարդկային կյանքի հարաբերությունները, նաև բնության երևույթները: Այդ մասին գրում է նաև ռուս բանաստեղծ և սիմվոլիստ Կ. Բալմոնտը: Ըստ նրա՝ ռեալիստները տարված են իրական կյանքով, որից բացի ոչինչ չեն տեսնում, իսկ սիմվոլիստներն էլ տարված են լոկ իրենց երազանքով՝ կտրված իրականությունից: Իսկ Օսկար Ուայլդը այսպես է բնութագրում. «Իրականում արվեստը մի հայելի է, որն արտացոլում է բնավ ոչ իրական կյանքը, այլ նրան, ով նայում է հայելուն»:

Միմվոլիստներին հատուկ է մենության և փախուստի տրամադրությունները, որը արտահայտվել է Վ. Տերյանի պոեզիայում: Իսկ Միամանթոյի պոեզիայում բոլորովին այլ ձևով է արտահայտվում սիմվոլիզմը: Ճիշտ է, առկա են սիմվոլիզմի պոետիկայի որոշ ձևեր, բայց Միամանթոն հիմնականում խորացավ պատկերի մեջ՝ ընթերցողին տանելով հայոց վշտի մեծ ծովը՝ դեպի սարսուռների աշխարհը:

Հոգեվարքի մորմոքումները և հույսի ջահերը

*Գիտե՞ք թե ինչ ստեղծում և արյունի
հեղեղներ են, ով բարեկամ հոգիներ,
Որ այսօր իմ հայրենիքը որբի և ցավերի
սգավորի աչքներուս մեջը կարտահոսվին...
(«Մեռելոցի օր»)*

Միամանթոյի երգերը ծնվել են արյունով ոռոգված դաշտերից, մոխրացած շենքերից և յուրաքանչյուր տողում պատկերված է մահ, արյուն, կոտորած, կոտորած...

«Հոգեվարքի և հույսի ջահեր» ... այս գիրքը ամբողջովին տոգորված է անսահման ցավով: Թեև սկզբից մինչև վերջ պատկերված է պայքարը ու մահվան ճիրաններում կեղեքվող ժողովուրդը, թեև նույն թեման է շոշափվում առաջին գրքից սկսած մինչև վերջ, սակայն, կա միօրինակությունը, որը Միամանթոյի համար ոչ թե թերություն է դառնում, այլ՝ առավելություն. յուրօրինակ պատկերումը տեսանելի է դարձնում հայրենացավը: Հենց պատկերման եղանակով ցասման և վրեժի շունչն է արթնանում ընթերցողի հոգում. «Եվ հոգին յուրահատուկ տառապանքներով գալարուն, փոխնիփոխ երերուն հոգեվարքի և հույսի ջահերու մեջ, կը հնչեցնե մահվան տեսիլք, ավերումի գիշեր, թաղում, արյուն, անդրշիրիմյան աղաղակներ»⁵:

⁵ Վ. Փափազյան, Պատմություն հայ գրականության, գիրք 2-րդ, Կ. Պոլիս, 1914, էջ 144:

«Հոգեվարքի և հույսի ջահերում» պատկերված է ժողովրդի հուսախաբությունը, ողջակեզը և իրադարձությունների կտրուկ շրջադարձը: Կյանքը ահավոր գեհեն էր դարձել, ամենուրեք դիակներ, սարսափներ և մահվան անձայրածիր թագավորություն:

Այս շարքը սկսվում է «Մահվան տեսիլք» բանաստեղծությամբ, որը նրա առաջին քերթվածքն է եղել՝ գրված 1898 թ. «Կոտորած» վերնագրով: Այն ասես որպես ահագանգ է հնչում.

Կոտորած, կոտորած, կոտորած...

Քաղաքներուն մեջ և քաղաքներեն դուրս...

Մահվան սարսափների մեջ ալեկոծվում է բանաստեղծի հոգին: «Ավերում, գիշեր, արյուն» են սպառնում Հայոց աշխարհին: Տագնապ, մահ առաջացնող ուժգնությամբ անընդհատ կրկնվող այս երկու տողերը ստեղծում են արհավիրքի պատկերը.

Գիշերուն մեջ արյուններուն ալիքը կրարձրանա

Ծառերուն հետ շատրվանները ուրվագծելով...

Ահավոր դժոխքի մի պատկեր է, դանթեական անդառնալի ուղի և թվում է՝ դժոխքն ու դրախտը փոխել են իրենց տեղերը: Չար ոգին սավառնում է Հայոց աշխարհով՝ թողնելով մարդկային զոհեր, և ավելի սարսափազդու է դառնում տագնապը: Այդքան արյուն տեսնելով՝ թվում է՝ հոգիները ևս խելագարվել են ու ճնշում են ահասարսուռ ձայներով.

Օ, մի մոտենաք, մի մոտենաք, մի մոտենաք

Չրլլա որ մոտենաք գերեզմաններուն և ծովուն,

Կարմիր ջուրերուն վրա նավեր կնշմարեն հեռուն,

Մեռելներու կուտակումներ անոնց մեջ կան,

Ու ցավեն գալարվող ալիքներուն վրա

Գանգեր ու սրունքներ ինձի կերևան...

Մահվան տեսիլքների է վերածվում ճանապարհը և Սիամանթոն հուսահատվում է: Հուսահատվում է, որովհետև ծանրանում է հոգեվարքը և աստիճանաբար վերածվում է մահվան.

Մտիկ ըրեք, մտիկ ըրեք, մտիկ ըրեք,

Մահաձայն ոռնումը զարհուրյալ շուններուն,

Հովիտներեն ու գերեզմաններեն ինձի հասնող.

Օ, պատուհանները փակեցեք և աչքներնիդ ալ,

Կոտորած, կոտորած, կոտորած...

Այս տողերում նաև զգացվում է անխոս մեղադրանքը լուռ մնացած աշխարհի հանդեպ և պատկերների նման կրկնումը, ներկայացնում է կատարվող ոճրագործությունը:

Կոտորած, կոտորած... այս կրկնությունները ավելի են ահագնացնում սարսափազդու պատկերները: Չարագործությունները կատարվում են գիշերով: Մեծարենցի մոտ գիշերվա պահին ծնվում էին գեղեցիկ պահեր, ինչպես.

Գիշերն անուշ է, գիշերն հեշտագին...

Սիամանթոյի մոտ, սակայն, գիշերը չարագույժ է: Ամեն անգամ գիշեր բառի հետ մեկտեղ նշմարվում է աճյունների պաղ ֆոսֆորային փայլը, որի արտացոլքը անընդհատ հիշեցնում է բարբարոսի կատարած ոճրագործությունները:

Հուսահատ է բանաստեղծը՝ լեցուն անհուն վշտով, և ասես ամբողջ աշխարհն է բռնած անծայրածիր վշտով, և անամոք է վերքը: Եվ մրսում են մարդիկ, ոչ թե ցավից, այլ հոգեկան սառը տենդն է պատել նրանց... Կործանվում է գեղեցիկը...

Հուսահատ բանաստեղծը սեր էր ցանկանում երգել, գերվել բնության հրաշալիքներով, բայց ինչպե՞ս, երբ իրական կյանքը միայն արյունով է ողողված, երբ Արարատի գույնն անգամ բոսորագույն է դարձել.

*Բայց այսօր, բայց այսօր, ես այս ամենուն առջևեն,
Մարսափահար և աչվրներս փակած կփախչիմ...
Վասնզի գիտեմ որ բոլոր արշալույսները նվիրական հողին,
Տարիներե ի վեր մեր արյունեն են կարմիր...*

(«Արյուն»)

Բանաստեղծի դերը ամենածանրն է. բանաստեղծի երգը ժողովրդի հոգուց է, իսկ ժողովրդի ցավը՝ բանաստեղծինը:

Հոգեվարքի իրիկուն... ծանր իրիկուն... Տառապանքը խորացնում է հոգեվարքը և հնչում է կարապի երգը.

*Հոգիիս մեջ այրի կարապ մը կտանջվի,
Ու հոն նոր թաղված մեռելներուն վրա.
Աչվներես վար՝ արյուն- անձրև կտեղա...*

(«Աղոթք»)

Կարապի մահը ամենահուղիչն է. այն էլ՝ գիշերվա խավարի մեջ: Կարապը հրաժեշտ է տալիս կյանքին և վերջին անգամ, այո՛, վերջին անգամ երգում է իր հրաժեշտի երգը.

*Հոգեվարքի ճիչերով վար ինկան.
Եվ խավարչտին գիշերն անհունորեն ամայացավ.
Ու մենավոր ու արյունոտ լուսնկային հետ,
Մարմարյա անշարժ ու բյուրավոր արձաններու պես՝
Մեր հողին բոլոր մեռելներն իրարու համար աղոթքի ելան:*

(«Աղոթք»)

Միամանթոյի ստեղծագործություններում միասին են հանդես գալիս հուսալքումն ու հույսը, թախիծն ու ցավը, տառապանքն ու տագնապը: Միշտ նույն տագնապով է տրոփում բանաստեղծի սիրտը: Ռուբեն Զարդարյանն ասել է. «Նույն ինքն ցեղին երազն է, որ կը բոցավառի, ցեղին կարմիր հոգին է, որ կը սավառնի, ցեղին հառաչն է, որ կթավալի այս քրմական բանաստեղծին քերթվածքներուն մեջ...»⁶:

Միամանթոն գիշերուգոր մտածում է կեղեքվող հայրենիքի մասին և ելք է փնտրում՝ անելանելի վիճակից դուրս գալու համար:

«Գրական ասուլիսների» բանախոսներից մեկը գրում է. «Միամանթոն բանաստեղծ ըլլալէ առաջ մարդ է, բառին ամբողջ առումով... մարդ է Ատոմ, ուրեմն և իր օր-

⁶ Ա. Յարճ. «Հոգեվարքի և հույսի ջահեր» Ռ. Զ-ի առաջաբանը, էջ 143:

բանը, իր հայրենիքը սիրող: Օ, ան կատաղորեն հայրենասեր է»⁷:

Անվերջ կրկնվող սարսափներից ուժասպառ բանաստեղծը սպասում էր դարձյալ հույսին. անհուն բերկությանը լցված հարցնում է ինքնիրեն՝ ե՞րբ պիտի գա հույսը, ե՞րբ պիտի լուսավորվի հայի ուղին, ո՞ր ծովերով և վերջապես ե՞րբ պիտի ժպիտ ցուլա հայի դեմքին, ե՞րբ պիտի մաքրվեն հայի արցունքները... Բանաստեղծը հույսով սպասում է մոխիրներից բարձրացող անթառամ ծաղիկներին.

*Ժպիտե այրի ցեղը վերջապես կանաչ պիտի հագնի և դառնասիրտ
թշնամին՝ սև:*

Ու հետո «ցնծության և հույսերու կարմիր ջահերը» պիտի վառվեն: Ու ողջ ժողովուրդը գթություն է հայցում, բայց ու՞մից...

Հարց, որը մնում է անպատասխան: Գթություն են հայցում Աստծուց, մեծ պետություններից, բայց բոլորն էլ լուռ են: Անհուսության շունչ կա, հոգնություն՝ պատերազմից և արյուններից: Բանաստեղծը Բարձրյալից հայցում է, որպեսզի հեռացնի ոճրագործի սուրբ հիվանդների գլխից, և խնդրում է խաղաղ հոգեվարք՝ աքսորներում տառապողներին: Ու սպասում են, սպասում հավատով, սպասում «սպիտակ ու երբեք չի հասնող» ողորմությունը, որին կարոտ է մնացել հայը տարաբախտ... Հուսալքման պահին երևան է գալիս «հերոսակերպ ուրվականը», որը վրեժ է գոչում, ուրեմն ցավը տառապանքի մեջ գեղեցկանում է, այո՛, ցավը գեղեցկանում է. թեև հնչում է տարօրինակ, բայց ծնվում է պայքարը և հաղթանակը.

*Ընկե՛ր, խորտակե խաչդ սա քու հոգնած և ապաժամ քնարիդ հետ
Եվ գլուխդ հողաթմբիս՝ մտիկ ըրե շիրիմներեն հասնող աղաղակին.
Գիտցի՛ր, ոչ մեկ հույս կմեռնի և ո՛չ մեկ գարուն կթառամի այստեղ
Ապագայի ամեն արև մեր ընդերքներուն մեջեն է, որ թավալելով կանցնի,
Եվ կյանքի ամեն գաղափար մեր արահետներեն է, որ դեպի ձեզ կհառնե...
Մեր կոպերը արտասուքի տեղ զարհուրանք է, որ կարտահոսեն...*

(«Անդրշիրիմյան աղաղակ»)

Յուրաքանչյուր հերոս ծնվում է թափված արյան գինը առնելու համար: Հայաստանը փորձում է ապացուցել համայն աշխարհին, որ մշտական վշտերի մեջ թաղված չի մնալու, այլ վրեժից ծնվելու է նոր մանուկ Վահագնը, որը բերելու է փրկությունը.

*Ու սուրա, սիրելի՛ս, պերճորեն, զվարթորեն, կտրիճորեն սուրա
Հոն, ուր ես գաղափարիս և գաղափարիդ համար առավոտ մը, արյունիս
մեջեն ինկա...*

Բանաստեղծի հոգում ծնվում է երգելով մեռնելու գաղափարը: Դեմ հանդիման են կանգնում հայրենիքի զինվորն ու բանաստեղծը: Նրանց երկուսի ցավն էլ նույնն էր. նրանք երկուսն էլ նույն մտքերով էին տարված, որովհետև նրանք «ճակատին վրա ցավի և բարության ծաղիկներ ունեին»:

Բանաստեղծ ու զինվոր... Ի՞նչու է Սիամանթոն հատկապես ընտրել բանաստեղծին և կողքին էլ՝ զինվորին:

Դարեր շարունակ բանաստեղծությունը եղել է հայ ժողովրդի հոգու արտացոլքը, բանաստեղծների երգերում է հավերժացել ժողովուրդը՝ իր լավ ու վատ գործերով:

⁷ «Գրական ասուլիսներ», Կ. Պոլիս, 9, էջ 12:

Բանաստեղծը իր կրակե խոսքերով տարել է հաղթանակներ, արքաներ է գերել ու զինվորներին ուղարկել մարտի դաշտ: Հավերժ անբաժան են երգն ու զինվորը: Զինվորը վերջին հրաժեշտն է տալիս ազգի տառապյալ բանաստեղծին, ստանալով իր հոգու երգը՝ սլանում է դեպի մարտ: Նրանք կոչված են ծառայել հայրենիքին, բայց տարբեր է նրանց դերը: Մեկը կոչված է՝ «ցեղին ցավը» թղթին հանձնելու և դարերին փոխանցելու, իսկ մյուսը՝ «ցեղին երգը» շուրթերին՝ զոհվելու:

*Եվ դուն սա մաքրափայլ թերթերուդ վրան ցեղին ցավը և ցեղին ուժը
բանաստեղծե*

Ապագա սերունդներուն և մեր անցյալին տխրությանն ի նվեր.

*Ես որք մըն եմ և ըմբոստ մը մնաս բարյավ, կորուստյալներս փնտրելու
կ'երթամ...*

Քո երգերեդ երգ մը տուր ինձ, ես երգելով կուզիմ մենիկ...

Ցեղին ցավը սուր է դնում կտրիճի ձեռքին, այն սուրը, որ միայն մերկ վիճակում է ցույց տալիս իր գործությունը: Այն ինչքան պատյանում մնա, այնքան ժանգը կպատի, իսկ ժանգը միայն ամոթ ու նախատիք է, և սուրը «մերկության մեջ միայն կրնա աստվածորեն գեղեցկանալ»: Վախկոտին ատում է սուրը, իսկ կտրիճի ձեռքին հաղթանակի երգ է ցայտում կայծերի հետ մեկտեղ: Մի պահ մարտիկը կարկամում է.

Արդյո՞ք ստրուկի, թե՞ հաղթողի արյունս է, որ քու վրադ պիտի ցուլա...

Երկմտանքը միայն մի պահ է տևում, իսկ հետո անմիջապես փոխվում է տրամադրությունը.

Մերկացիր, մերկացիր, մերկացիր, օրերուն օրն է, ով իմ սուրս ավետավոր...

(«Սուրիս կայծերուն առջև»)

Զինվոր, սուր, երիվար... հայրենիքի պաշտպաններն են նրանք: Ասպետի երազանքն է հրաբաշ նժույգ ունենալը, որը միայն հաղթանակներ է բերում.

Ես քայլերուդ գերին եմ, ով դուն որդիդ մորիկներու,

Արագաթո՞ճի չ երիվար, քինախնդիր պիտի սուրաս,

Ես ապարդյուն դադարը ցատումներովս կատիմ,

Կատարները մեզի են և հաղթանակը քուկդ է...

(«Ասպետի երգը»)

Ոչ մեկը չի կարող հետ պահել երիվարին ու հեծյալին, որոնք միասին նոր արշավայիններ պիտի բերեն հեռվից: Ծննդավայրի կարոտն է խեղդում նրան, բայց կանգ չեն առնում.

Ծննդավայրիս դրախտային ծմակներեն պիտի անցնիս,

Բլբուլին խոսքը, բլբուլին խոսքը կուզեի խմել...

Վարդին բուրմունքը տարիներ պանդխտորեն երազեցի...

Կարոտ ունիմ, կարոտ, բայց մի՛ կենար, կանգ մի առնեք...

Միամանթոն իր ժողովրդի ցավի հետ մեկտեղ շոշափում է նաև չարագործ մարդու խնդիրը: Մարդու խնդիրը միշտ էլ մտահոգել է բոլոր բանաստեղծներին: Մարդը բանական էակ է, բայց որտեղի՞ց է այդքան չարություն կուտակվել նրա մեջ:

Ինչու են անընդհատ պատերազմներ մղվում, արյունահեղություններ լինում և այս ինչուների շարքին վերջ չկա: Հովհաննես Թումանյանը իր քառյակներում ևս այս

հարցն է արծարծում, բայց մարդու էությունը չի փոխվելու, որովհետև «Հազար դարում հազիվ դարձավ մարդասպան», և քանի որ աշխարհում ամեն բան նույնն է, քանի դեռ մարդը մարդուն հոշոտող է և օրենքները՝ լուծ ու խարազան, ապա փոքր ժողովուրդների կեղեքումը դեռ կշարունակվի.

«Մարդակեր գազան մարդը դեռ եկար էսպես կմնա...»

(«Հոգեհանգիստ»)

Սակայն, առաքելությունը հային բնորոշ է. ինչքան էլ տառապանք ու ցավ ենք տեսել, մեր ճանապարհները լուսավորվել են հույսով, և պիտի պահպանենք լույսը:

ՌՈՒԲԵՆ ՄԻՐՉԱԽԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

1956-1990 թթ. ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1956-1990 թթ. հայ մշակութային կյանքին վերաբերվող պատմագիտական ամբողջական աշխատություն ցայսօր չի ստեղծվել: Նախկինում հրապարակված աշխատություններից շատերը լուսաբանում են ոչ թե այդ ժամանակաշրջանի մշակույթի զարգացման ընդհանուր խնդիրները, արտացոլում այդ կյանքն ամբողջությամբ՝ իր զարգացման խորքային գործընթացներով, այլ ներկայացնում են մշակութային կյանքի այս կամ այն ոլորտը: Այնուհանդերձ, այդ աշխատությունների ուսումնասիրությունն ու գնահատումն անհրաժեշտ է, քանզի դրանք օգնելու են հայեցակարգային մոտեցումներ մշակելու հիշյալ ժամանակահատվածի մշակութային կյանքի պատմության վերաբերյալ: 1956-1990 թթ. մշակութային կյանքը լուսաբանող ուսումնասիրությունները մեծաթիվ չեն, գնահատականների հիմքում ունեն մարքսլենինյան տեսությունը, բայց գտնում ենք, որ պատմագիտական տեսակետից որոշակի արժեք են ներկայացնում: Ակնհայտ է, որ 1956-1990 թթ. հայ մշակույթը զարգացում ու վերելք է ապրել: Հետևաբար, մշակույթի այս կամ այն ոլորտը ներկայացնող աշխատությունները չեն կարող դիտարկվել որպես անարժեք գործեր, քանզի արտացոլում են զարգացման ընթացքը: Քննադատական խոսքը վերաբերվում է որոշ հեղինակների հայեցակարգային մոտեցումների առավել կամ պակաս ընդունելի լինելուն:

Փորձենք գնահատել այդ աշխատությունները: Հաշվի առնելով այն ժամանակաշրջանը, երբ հրապարակվել են ուսումնասիրությունները, վերապահությամբ ենք մոտենալու նրանց արդիականությանը: Մեր ուսումնասիրած ժամանակաշրջանի հետ առնչվում է Գուրգեն Խաչատրյանի աշխատությունը¹, ուր հեղինակը ներկայացնում է, այսպես կոչված, «կուլտուրական հեղափոխության» ժամանակի արդիական խնդիրներից մեկի՝ Հայաստանում խորհրդահայ կամ սոցիալիստական մտավորականության ձևավորման ամբողջ գործընթացը:

Անկախ աշխատության մեջ տեղ գտած ժամանակաշրջանի գաղափարախոսական պարտադրանքներով պայմանավորված դրույթներից՝ Գուրգեն Խաչատրյանը կարողացել է ցույց տալ, որ խորհրդահայ մտավորականությունը իսկապես որոշակի վերելք է ապրել:

Հայեցակարգային մոտեցումները այսօր արդեն հնացել են, բայց Գուրգեն Խաչատրյանի մենագրության մեջ փաստացի հարուստ նյութերի հիման վրա ցույց են տրվում մշակույթի և գիտության գրեթե բոլոր բնագավառներում հայ ժողովրդի ունեցած նվաճումները: Նա, բնականաբար, անդրադարձել է նաև մեր ուսումնասիրած ժամանակաշրջանի, մասնավորապես 1950-60-ական թթ. մշակութային և գիտական նվաճումներին: Հեղինակն անդրադառնում է գիտության, լուսավորության, ճարտարապետության, գեղարվեստական գրականության, կերպարվեստի և մշակույթի ցանկացած բնագավառի խնդիրներին. այդ բնագավառների մտավորակա-

¹ Տե՛ս Գ. Մ. Խաչատրյան, Հայաստանի սոցիալիստական ինտելիգենցիայի կազմավորումն ու զարգացումը, Երևան, 1968:

նությանը, նրանցում առկա նվաճումներին, որոնք ներկայացնում է փաստերով: Այս ամենը դրվատելի է:

Խորհրդային Հայաստանի մշակութային կապերին է նվիրված պրոֆեսոր Կոնստանտին Խուդավերդյանի աշխատությունը², որտեղ անդրադարձներ կան նաև 1950-70-ական թթ. մշակութային կյանքի տարբեր ոլորտներին, որոնք մասնակիորեն առնչվում են մեր հետազոտության նյութի հետ (մշակութային կյանքը 1956-1990 թթ): Կոնստանտին Խուդավերդյանը փաստացի հարուստ տվյալների հիման վրա Խորհրդային Հայաստանի օրինակով ցույց է տալիս, թե ինչպես է տեղի ունենում խորհրդային բոլոր ժողովուրդների մշակութային մերձեցումը, ինչպես նաև այդ մերձեցմամբ փոխադարձ հարստացումը: Այս առումով նա չի սխալվում: Խորհրդային Միության գոյության հատկապես հետպատերազմյան շրջանում այդ մշակութային մերձեցումն, անշուշտ, կար: Եվ հայ ժողովուրդն էլ այդ ժամանակաշրջանում խորհրդային մշակույթի և գիտության ձևավորման մեջ որոշակի ավանդ է ունեցել:

Կոնստանտին Խուդավերդյանը, բացի հայ ժողովրդի՝ խորհրդային այլ ժողովուրդների հետ մշակութային կապերից, իր աշխատության մեջ ցույց է տալիս Խորհրդային Հայաստանի մշակութային միջազգային կապերը, այդ թվում՝ կապերը արտերկրի մշակութային կենտրոնների հետ: Կոնստանտին Խուդավերդյանը խորհրդահայ մշակույթը դիտում է որպես խորհրդային մշակույթի անբաժանելի մաս՝ հանգելով այն եզրակացության, որ Խորհրդային Հայաստանը իր ավանդն է ունեցել Խորհրդային Միության մշակութային և գիտատեխնիկական կապերի ընդլայնման գործում: Հեղինակը գոհունակությամբ է շեշտում, որ մշակութային կապերի զարգացումը տանում է դեպի սոցիալիստական ազգերի մերձեցում և միասնություն: Սակայն նրա այդ գոհունակությունն անհնար է երկրորդել:

Խորհրդահայ մտավորականության միայն մի շերտի՝ արտադրական-տեխնիկական մտավորականության կազմավորման և զարգացման պատմությունն է ներկայացնում իր աշխատության մեջ³ պրոֆեսոր Ալեքսանդր Գրիգորյանը:

Մենագրության հեղինակը ներկայացնում է այն աշխատանքը, որը իրականացվել է սկսած 1920-ական թթ. նախկին տեխնիկական մտավորականությանը հանրապետությունում, այսպես կոչված, սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու և ազգային ինժեներատեխնիկական նոր կադրերի պատրաստման ուղղությամբ: Այս ամբողջ աշխատանքը նա ներկայացրել է Խորհրդային Միությունում տեխնիկական մտավորականության ձևավորման համար տարված աշխատանքների ենթախորքի վրա: Ալեքսանդր Գրիգորյանը ձգտել է բացահայտել խորհրդային տեխնիկական մտավորականության և ԽՍՀՄ տեխնիկական ուսումնական հաստատությունների բարերար ազդեցությունը՝ Հայաստանում ինժեներատեխնիկական մտքի զարգացման տեսանկյունից:

Գնահատելի է Հովիկ Մելիքսեթյանի մենագրությունը⁴: Նախ, որ այնտեղ հանգամանորեն ներկայացվում են Հայրենիք-Սփյուռք մշակութային կապերը, և երկրորդ՝ հնարավորություն է ընձեռում որոշակի պատկերացում ստանալ Հայաստանում մշակույթի զարգացման ուղղվածությունների վերաբերյալ: Հովիկ Մելիքսեթյանը հանգամանորեն է անդրադառնում Սփյուռքահայության հետ մշակութային

² Տե՛ս Խուդավերդյան Կ., Культурные связи Советской Армении, Ереван, 1977.

³ Григорянц А., Формирование и развитие технической интеллигенции Армении (1920-1965), Ереван, 1966.

⁴ Տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Երևան, 1968:

կապի կոմիտեի ծավալած ընդգրկուն գործունեությանը, որն ուղղված էր Սփյուռքը և Հայրենիքը միակամ դարձնելու, մշակութային նվաճումները մեկը մյուսին հաղորդակից դարձնելու, հայրենիքի ծաղկման ու զարգացմանը համատեղ նպաստելու աշխատանքներին: Իր ստեղծման պահից ի վեր (1964 թ. հունիսի 25) այդ կոմիտեն մեծ ծավալի աշխատանք է կատարել սփյուռքահայ տարբեր երկրներում հայապահպանման, հայությանը դեպի Մայր Հայրենիք կողմնորոշելու առումով:

Սփյուռք-Հայրենիք փոխադարձ մշակութային կապերի զարգացմանը նվիրված աշխատանքներն ու միջոցառումները փաստացի հարուստ նյութի հիման վրա է ներկայացրել Հովիկ Մելիքսեթյանը: Աշխատության մեջ մեծաթիվ տեղեկություններ կան նաև մշակութային կյանքի այնպիսի իրադարձությունների մասին, ինչպիսիք կապված են սփյուռքահայ գրողների, արվեստագետների և գիտության ներկայացուցիչների հոգևոր ժառանգության Հայրենիքում քարոզելու անհրաժեշտության հետ: Բավական է նշել, որ առանձին ժողովածուներով հրատարակվում են նրանց ստեղծագործությունները, 1967 թ. բացվում է «Սփյուռքահայ գրողներ» մատենաշարը, Երևանում կազմակերպվում են հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումներ: Աշխատության մեջ մանրամասնորեն ներառված են այն մշակութային իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Հայրենիք-Սփյուռք համատեղ ջանքերով:

Անշուշտ, Հովիկ Մելիքսեթյանի աշխատությունն էլ գերծ չէ թերություններից: Սակայն այդ թերությունները հիմնականում հետևանք են այն ժամանակաշրջանի, որում ստեղծվել է աշխատությունը: Աշխատության մեջ դրվատանքի խոսքեր են հնչում միայն սփյուռքահայ այն գործիչների և կազմակերպությունների նկատմամբ, որոնք կողմնորոշված են դեպի Խորհրդային Հայաստանը, չեն նշվում այն ողբերգական իրադարձությունները, որոնք հետևեցին 1940-ական թթ. երկրորդ կեսի ներգաղթին:

Խորհրդային Հայաստանի գիտական կյանքի մի ոլորտի՝ պատմագիտության զարգացմանն է նվիրված Շավոն Հարությունյանի աշխատությունը⁵: Գրքում ի մի են բերվում, 1960-ական թթ. սկսած, խորհրդահայ պատմության նվաճումները, վերլուծության են ենթարկվում հայ ժողովրդի նոր և խորհրդային ժամանակաշրջանի պատմությանը վերաբերվող աշխատությունները և մատնանշվում թերությունները: Աշխատության երրորդ գլխի չորրորդ ենթագլուխը նվիրված է խորհրդահայ մշակույթի պատմությանը վերաբերվող աշխատությունների լուսաբանմանը («Խորհրդահայ մշակույթի պատմությունը, պատմագրությունը»): Այնտեղ, բնականաբար, ներկայացված են նաև աշխատություններ, որոնք վերաբերվում են 1956-1990 թթ. հայ մշակութային կյանքի որևէ ասպարեզի: Հեղինակը վերլուծության է ենթարկում Կոնստանտին Խուդավերդյանի, Գուրգեն Խաչատրյանի, Ալեքսանդր Գրիգորյանցի և այլոց աշխատությունները, որոնք չենք թվարկում, քանզի մեր ուսումնասիրության ոլորտի հետ չեն առնչվում: Հեղինակը մանրամասնորեն քննելով նշված ուսումնասիրությունները՝ դրականորեն է գնահատում վերջիններս: Գնահատականի հիմքում դրված է, թե որքանով են դրանք գրված պատմագիտության զարգացման համար մարքս-լենինյան դրույթների չափանիշներից: Այնուամենայնիվ, աշխատությունը այն համոզմունքն է ներշնչում, որ, անկախ մատնանշված թերությունից, խորհրդահայ մշակութային կյանքի պատմագրությունը նույնպես որոշակի վերելք

⁵ Տե՛ս **Հարությունյան Շ. Ռ.**, Պատմագրության զարգացումը Խորհրդային Հայաստանում, Երևան, 1990:

էր ապրում, և օգնում է պատկերացում կազմելու 1960-80-ական թթ. խորհրդահայ պատմագրության զարգացման միտումների մասին: Քանի որ աշխատության ենթագլուխը նվիրված է ոչ թե մշակութային կյանքին, այլ դրա պատմագրությանը, ապա այնտեղ առկա տեղեկությունները այդ կյանքի զարգացման մասին, բնականաբար, մենք քաղում ենք այդ ոլորտի աշխատություններից որոշ տեսակետների և փաստերի մեջբերումներից: Սակայն այդ տեսակետների վերաբերյալ հեղինակի որոշ դիտողություններն ու առարկությունները (որոնք կարելի է ճիշտ համարել) օգնում են առավել ամբողջական պատկերացում կազմելու մշակութային կյանքի զարգացման վերաբերյալ:

Թեև մշակութային կյանքի ոլորտին անմիջականորեն չի անդրադառնում, բայց դրա զարգացման միտումները, մասնավորապես XX համագումարից հետո, որոշակիորեն մատնանաշում է Ամատունի Վիրաբյանը իր աշխատության մեջ⁶: Հատկապես մեր ուսումնասիրության ոլորտի հետ առնչվում է աշխատության չորրորդ գլուխը («Ստալինիզմի հետևանքների վերացումը և խրուշչովյան բարեփոխումների սկիզբը»): Այստեղ նա բավականին հետաքրքիր ձևով է ներկայացնում XX համագումարից հետո Հայաստանում ստեղծված քաղաքական իրավիճակը: Ամենուրեք, և հատկապես մտավորականության շրջանում, արագորեն թևածում է այն համոզմունքը, որ երկիրը թոթափում է բռնապետության շունչը: Ամատունի Վիրաբյանը անդրադառնում է հայ գրողների և գիտնականների՝ համագումարից հետո որդեգրած դիրքորոշմանը Ստալինի անձի պաշտամունքի քննադատությունից հետո և, որը գնահատելի է, անդրադառնում է նաև ստալինիզմի էության բացահայտման նրանց ձգտումներին: Ամատունի Վիրաբյանը նաև անդրադառնում է Գրողների միության, Պետական համալսարանի և այլ մշակութային հիմնարկների ու կազմակերպությունների կուսակցական կազմակերպությունների ժողովներին, որոնք, դատապարտելով ստալինիզմը, որոշում են վերադառնալ Խրուշչովի մատնանշած «կոլեկտիվ ղեկավարման լենինյան սկզբունքներին»: Արագորեն դրվում են լեզվի, մշակույթի, գիտության նորովի զարգացման հարցեր, նույնիսկ շոշափվում է հայկական պատմական կորցրած տարածքների վերամիավորման հարցը: Ամատունի Վիրաբյանի գիրքը կարևոր նշանակություն ունի նաև հայ մշակութային կյանքի XX համագումարից հետո նորովի զարգացում ապրելու դրդապատճառները ճիշտ ընկալելու տեսանկյունից:

Մեր ուսումնասիրած շրջանի մշակութային կյանքին առնչվող բաժին կա ԳԱ հրատարակած Հայոց պատմության VIII հատորում⁷: Բաժինն ընդգրկում է 1946-1965 թթ. մշակութային կյանքի պատմությունը: Այնտեղ ներկայացված են ժողովրդական կրթության համակարգի զարգացման ընթացքը և այդ առումով ձեռք բերված նվաճումները: Առանձին-առանձին ներկայացված են նաև գիտության, գրականության, արվեստի (թատրոն, կինո, երաժշտություն), կերպարվեստի և ճարտարապետության բնագավառներում ձեռք բերված հաջողությունները: Դրա հետ մեկտեղ «Հայ ժողովրդի պատմության» VIII հատորում բոլորովին չի ներկայացված մշակութա-լուսավորական աշխատանքը, ոչ մի խոսք չկա պարբերական մամուլի մասին: Հատորում տեղ են գտել նաև փաստական որոշ անճշտություններ: Այս մասին հիշատակում է Շմավոն Հարությունյանը իր ուսումնասիրության մեջ⁸:

⁶ Տե՛ս Վիրաբյան Ամատունի, Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Երևան, 2001:

⁷ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատարակություն, հ. VIII, Երևան, 1970:

⁸ Հարությունյան Շ., նշվ. աշխ., էջ 404:

Հայ ժողովրդի 1985-91 թթ. բարդ և հակասական պատմությունը ընդգրկող հիմնական կամ ընդհանուր գծերով ներկայացնելու տեսանկյունից գնահատելի է Ռուբեն Ազիզբեկյանի աշխատությունը⁹:


Հեղինակը փաստացի նյութի հիման վրա ցույց է տալիս գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունից հետո Հայաստանում ծավալված իրադարձությունների զարգացման ընթացքը, որոնք, ի վերջո, հանգեցին Հայոց նորանկախ պետականության արարմանը:

1980-ական թթ. վերջերից Հայաստանում սկսած տնտեսական ճգնաժամը իր խորը հետևանքներն ունեցավ նաև մշակութային կյանքի վրա: Այս աշխատությունը գնահատելի է մշակութային կյանքի վայրընթացի պատճառների ճիշտ ընկալման տեսանկյունից, մասնավորապես 1988-1991 թվականներն ընդգրկող շրջանի համար:

Վերոհիշյալ ուսումնասիրություններն են այն հիմնական պատմագիտական աշխատությունները, որոնք կա՛մ անդրադառնում են 1956-90 թթ. հայ մշակութային կյանքի որևէ ոլորտին, կա՛մ այդ ընթացքում ունեցած զարգացման որոշակի փուլին:

Այնպես որ ցայսօր չկա մի այնպիսի պատմագիտական աշխատություն, որը կընդգրկի հիշյալ ժամանակահատվածի մշակութային կյանքի զարգացման պատմությունը՝ գրված քննական-վերլուծաբանական մեթոդաբանությամբ: Թեկուզ հայ անցյալի պատմական դասերի ճիշտ ընկալման տեսանկյունից և հատկապես այդ դասերի այն էջերի, թե ինչպես էր բռնատիրական համակարգի առկայության պայմաններում հայ մշակույթը զարգանում վերընթացային գծով, նման աշխատության ստեղծումը դառնում է անհրաժեշտ:

⁹ Տե՛ս **Ազիզբեկյան Ռ.**, Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Երևան, 1992:



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՀԱՆՐԻՍԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ
ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՍՐԲՈՑ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ
ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ**

Մեպտեմբերի 10-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հարևանությամբ կառուցվող Սրբոց Հրեշտակապետաց Եկեղեցու հիմնարկերը: Ձեռամբ Նորին Սրբության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Բարձրաստիճան հոգևորականների օծվեցին եկեղեցու 16 հիմնաքարերը, որոնք դրվեցին եկեղեցու հիմքերում:

Հիմքերի օրհնությունից հետո Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքն ուղղեց ներկաներին: «...Աստվածահաճո և օրհնյալ այս ձեռնարկով հայրենի մեր հողի վրա մի նոր օրհնություն է երկնքից հեղվում, որ գորացնում է մեր հավատքը, պայծառացնում մեր ժողովրդի հոգևոր կյանքը: ... Եկեղեցին ծառայելու է մեր ժողովրդին, նրա Հոգևոր կարիքների սպասավորությանը: Եկեղեցում արարողություններ պիտի կատարեն Հոգևոր Ճեմարանի սաները, նրանց շուրթերով աղոթք, փառաբանություն պիտի երկինք վերառաքվի՝ մեր հայրենական կյանքի շենության, մեր Եկեղեցու գործության և պայծառացման համար: Եկեք, սիրելիներ, միաբան սրտով մեր աղոթքը երկինք Բարձրացնենք, հայցենք, որ Աստված խաղաղ պահի Հայոց աշխարհին, անսասան և հաստատուն Հայաստանյայց Եկեղեցին՝ ժրաջան իր սպասավորներով, հաստատուն կրթական իր հաստատություններով և օրհնյալ այն բոլոր ձեռնարկներով, որ իրականացնում է Հայաստանյայց Եկեղեցին ի հոգևոր շինություն մեր ժողովրդի», - ասաց Վեհափառ Հայրապետը:

Աղոթատունը կառուցվում է վաստակաշատ ճարտարապետ պրն Զիմ Թորոսյանի նախագծով: Ճարտարապետական հորինվածքից ելնելով՝ եկեղեցին կկրի Սրբոց Հրեշտակապետաց անունը, որի կառուցումը նախատեսվում է ավարտել 2009 թ. գարնանը:

Հիմնօրհնների արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչական կազմն ու ուսանողությունը, հյուրեր և հավատացյալներ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սկսվեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր Սեղանի բարեգործական միջեկեղեցական հիմնադրամի տարեկան հերթական ժողովը՝ մասնակցությամբ հիմնադրամի միջազգային և Հայաստանյան գործընկեր կազմակերպությունների և եկեղեցիների ներկայացուցիչների: Ժողովը նախագահում էր հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Ժողովն սկսվեց Տերունական աղոթքով, ապա Սրբազան Հայրը ողջունեց ներկաներին և հաջողություն ու բարի ընթացք մաղթեց ժողովի աշխատանքներին:

Ապա ժողովի վերաբերյալ ներկաների հետ իր մտորումները կիսեց ՀԿՄ-ի գործադիր տնօրեն պրն Կարեն Նազարյանը: Նա շնորհակալություն հայտնեց բոլորին՝ հերթական տարեկան այդ ժողովին ներկա գտնվելու համար, ապա ներկայացրեց հիմնադրամի 2006-2007 թթ. գործունեության հաշվետվությունը: Նա հույս հայտնեց, որ երկօրյա ժողովի ընթացքում համագործակցությունն ավելի կուռ, հստակ և օգտավետ արդյունք կունենա: Նմանատիպ հանդիպումները ՀԿՄ-ի գործադիր տնօրենը հարմար առիթ նկատեց, որպեսզի քննարկվեն կատարված և կատարվելիք աշխատանքներին վերաբերող կարևոր հարցեր, ինչպես նաև գործընկեր կազմակերպությունները միմյանց ավելի լավ ճանաչեն, ինչը կարող է նպաստել հետագա աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպմանը:

Այնուհետ տարեկան հաշվետվության ներկայացումը շարունակեցին ՀԿՄ-ի գլուղատնտեսական ծրագրերի պատասխանատու Կարինե Բաղդասարյանը և կրթական ծրագրերի պատասխանատու Ծովինար Ղազարյանը: Ժողովականների ուշադրությանը հանձնվեց նաև հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունը:

Կեսօրին, հաշվետվության հանգամանալի քննարկումից հետո, Կլոր Սեղանի պաշտոնեությունը, գլխավորությամբ պրն Նազարյանի, ներկայացրեց 2008 թ. կատարվելիք աշխատանքների ուրվագիծը:

Ժողովն իր աշխատանքները կշարունակի նաև սեպտեմբեր 20-ին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՕԾՎԵՑԻՆ ՍԱՐԱՀԱՐԹԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ԽԱՉՆ ՈՒ ԶԱՆԳԸ

Մեպտեմբերի 29-ին, ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Մեպուհ եպս. Չուլջանի և մասնակցությամբ թեմի հոգևոր դասի, օծվեցին Սպիտակի շրջանի Սարահարթ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու զանգակատան խաչը և զանգը:

Արարողությանը ներկա էին գյուղի դպրոցի ուսուցչական կազմը, աշակերտներն ու հավատացյալները: Զանգակատան խաչի խաչքավորության պատիվը տրվեց դպրոցի տնօրեն Ռ. Խումարյանին: Սրբազան Հայրը ներկաներին մանրամասն մեկնաբանեց օրվա խորհուրդը և հատկապես աշակերտներին հորդորեց լավ սովորել Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի պատմությունը, հավատարիմ մնալ ազգային ակունքներին:

Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 19-րդ դարում: Այն 1988 թ. մեծ երկրաշարժից ավերվել և կիսաքանդ վիճակում հասել է մինչև մեր օրերը: Հուրախություն սարահարթիցիների՝ կիսաքանդ եկեղեցին այժմ վերակառուցվում է՝ բարերարությամբ ամերիկահայ մեր հայրենակցի՝ արմատներով սարահարթի բարեհիշատակ Աշոտ Մարտիրոսյանի:

Շինարարությունն այժմ ընթանում է, և վերականգնողական աշխատանքները կավարտվեն սույն թվականի դեկտեմբերին:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻ

ՕԾՎԵՑ ՆՈՐԱՏՈՒՄԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

Մեպտեմբերի 30-ին տեղի ունեցավ Գեղարքունիքի Նորատուս համայնքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծման արարողությունը՝ ձեռամբ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի:

Եկեղեցին գտնվում է գյուղի հարավային եզրին: Համայնքի բնակիչների համատեղ ջանքերով այս տարի կատարվել են մասնակի նորոգություններ: Եկեղեցին կառուցվել է IX դարում: Հետագայում եկեղեցու հյուսիսային և հարավային կողմերում ավելացվել են երկու խորաններ: Համաձայն Սիմեոն Կաթողիկոսի, այն կոչվել է Դավիթ վանք և եղել է կուսանոց:

Օծման արարողությանը ներկա էին Գեղարքունիքի մարզպետը, ՀՀ դատախազության ներկայացուցիչներ, ԱԺ պատգամավորներ և այլ հյուրեր:

Օծման արարողությանը հետևեց ժողովրդական տոնախմբությունը ժողովրդական և հոգևոր երգերի, ազգային-ավանդական պարերի կատարմամբ և ներկայացումներով:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԹԵՄԻ ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ

ՎԱՐԱԳԱ Ս. ԽԱՉԻ ՏՈՆԸ ՎՈԼԳՈԳՐԱԴԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սեպտեմբերի 30-ին Վոլգոգրադ քաղաքի Սուրբ Գևորգ եկեղեցին լի էր մարդկանց հոծ բազմությամբ, ովքեր եկել էին տոնելու Վարագա Սուրբ Խաչի տոնը: Վոլգոգրադի հայերի համար այդ տոնը նշանավորվեց նաև քաղաքի Սուրբ Գևորգ հայկական եկեղեցու օծման չորրորդ տարեդարձի արարողությամբ: Չորս տարի առաջ, ձեռամբ Ռուսահայոց թեմի առաջնորդ Ս. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, օծվել էր Սուրբ Գևորգ եկեղեցին:

Տոնական հանդիսությանը իրենց մասնակցությունը բերեցին նաև Աստրախանի Ս. Հռիփսիմե եկեղեցու երիտասարդաց միությունը՝ իրենց հոգևոր առաջնորդ Ս. Սեբեոս քին. Ղալաչյանի գլխավորությամբ, ովքեր այդ օրերին ուխտավորաբար գտնվում էին Վոլգոգրադում:

Վարագա Ս. Խաչի տոնին հանդիսավոր Պատարագ մատուցեց Ս. Սեբեոս քահանա Ղալաչյանը, որին իրենց մասնակցությունը բերեցին նաև Վոլգոգրադի մարզի Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչները, ովքեր եկել էին կիսելու հավատակից եղբայր ժողովրդի ազգային-եկեղեցական նվիրական այս տոնի ուրախությունը, ինչպես նաև իրենց շնորհավորանքի խոսքն ուղղելու Ս. Գևորգ եկեղեցու հավատացյալներին:

Հընթացս Ս. Պատարագի Վոլգոգրադի հայության հոգևոր հովիվ Ս. Մաղաքիա քին. Օհանյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով օրվա խորհրդին, Սուրբ Գևորգ եկեղեցու կառուցման պատմությանը, կարևորելով նաև Հայ Առաքելական Եկեղեցու դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում, ի մասնավորի՝ Վոլգոգրադի հայ համայնքի կյանքում: Տեղի Հայրը եկեղեցու ողջ հավատացյալներին փոխանցեց առաջնորդ Սրբազան Հոր օրհնությունն ու շնորհավորանքը: Օրհնության և գնահատանքի խոսք ուղղվեց նաև Սուրբ Գևորգ եկեղեցու բոլոր բարերարներին և շինարարներին, որոնց նվիրատվությամբ և ջանքերով վեր է խոյացել այս հրաշակերտ եկեղեցին:

Պատարագի ավարտին Աստրախանի Սուրբ Հռիփսիմե եկեղեցու հոգևոր հովիվ Տեղի Սեբեոսը կարևորեց նման ուխտագնացությունները, որոնք ամրացնում են հավատը հայի մեջ և նվիրումը դեպի Մայր Եկեղեցին:

Այնուհետև եկեղեցուն կից սեղանատանը տարվա խաչքավորի կողմից բոլոր ներկաների համար տրվեց մատաղաճաշ:

ՌՈՒՄԱՀԱՅՈՅ ԹԵՄԻ ՄԱՍԼՈ ՂԻՎԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Սեպտեմբերի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվիրակությունը, գլխավորությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանի, մեկնեց Ռումինիա՝ մասնակցելու Սիբիու քաղաքում գումարվող Համաեվրոպական երրորդ եկումենիկ համագումարին:

Հայ Եկեղեցու պատվիրակության կազմում են՝ Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու և Ամերիկայի Քրիստոսի Եկեղեցիների Ազգային Խորհրդի նախագահ Գերաշնորհ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը, Մեծ Բրիտանիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր տեսուչ և ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Գերաշնորհ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը, Ֆրանսիայի հայոց թեմից՝ Տ. Զատիկ վարդապետ Ավետիքյանը, Գերմանիայի հայոց թեմից՝ Հոգեշնորհ Տ. Սերովբե վարդապետ Իսախանյանը, Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տ. Արշեն վարդապետ Սանոսյանը, Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Հոգեշնորհ Տ. Առեն վարդապետ Շահինյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Հոգեշնորհ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը, «Գարեգին Ա» հայագիտական և աստվածաբանական կենտրոնի փոխտնօրեն Հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Սարոյանը, Մայր Աթոռի Տեղեկատվական բաժնի տնօրեն Արծանապատիվ Տ. Վահրամ քահանա Մելիքյանը, Ռումինիայի հայոց թեմի հոգևոր սպասավոր Արծանապատիվ Տ. Գրիգոր քահանա Հովքան, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր Սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն դոկտոր Կարեն Նազարյանը, Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակից օր. Գայանե Ալեքսանյանը, Ինտերնետային բաժնի աշխատակից օր. Ալինա Թոփչյանը, Կլոր Սեղանի աշխատակից օր. Ծովինար Ղազարյանը, տիկին Նահրա Մարտիրոսյանը և Մեսրոպ Ավետիսյանը (օպերատոր):

Համագումարին իրենց մասնակցությունը բերեցին 2100 պատվիրակներ եվրոպական 126 եկեղեցիներից և Եվրոպայում Կաթոլիկ Եկեղեցու եպիսկոպոսների կոնֆերանսից:

Համաեվրոպական Էկումենիկ երրորդ համագումարի օրակարգում առաջադրված խնդիրները վերաբերում են Եկեղեցիների փոխհարաբերություններին, հասա-

րակությունների կյանքում առկա խնդիրների շուրջ Եկեղեցիների համընդհանուր դիրքորոշումներին, մարդկանց և ընտանիքների կյանքում հոգևոր արժեքների հիմնավորման խնդրին, կրոնների երկխոսությանը, Եվրոպական երկրների մերձեցմանն ու միավորմանը մշակութային և հոգևոր հարուստ ժառանգություն ունեցող Եվրոպական աշխարհամասում:

Սեպտեմբերի 4-ին Ռումինիայի Սիբիու քաղաքում, Մարե հրապարակում, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու 21 անդամներից կազմված պատվիրակությունը ներկա գտնվեց Համաեվրոպական Էկումենիկ երրորդ համագումարի ողջույնի և բարիգալստյան արարողությանը:

Արարողությունը բացվեց «Քրիստոսի Լույսը ծագում է ամենքի վրա» շարականի երգեցողությամբ, ապա Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի փոխնախագահ Մարգարեթ Իգբերգը (Շվեդիա) և Եվրոպայի կաթոլիկ եպիսկոպոսների խորհրդի փոխնախագահ կարդինալ Իոսիֆ Բոզանիկը (Խորվաթիա) ողջունեցին հրապարակում հավաքված Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի անդամ հարյուր քսանհինգ եկեղեցիների և Կաթոլիկ Եկեղեցու՝ Եվրոպայի երեսունչորս երկրների կոնֆերանսների պատվիրակություններին:

Ողջույնի խոսքով հանդես եկան նաև Ռումինիայի տեղական Եկեղեցիների առաջնորդները՝ Սիբիուի արքեպիսկոպոս և Տրանսիլվանիայի միտրոպոլիտ Լավրենտիու Սթեզան, Աուսբուրգի հարանվանության Բողոքական Եկեղեցու եպիսկոպոս Քրիստոֆ Քլայնը և Ալբա Դուլյայի կաթոլիկ արքեպիսկոպոս Գիորգի Յակուբինյին:

Համագումարի մասնակիցներին բարի գալուստ մաղթեց Սիբիուի քաղաքապետ Կլաուս Յոաննիսը:

Արարողության ավարտին քաղաքի գեղարվեստական խմբերը հանդես եկան ազգային երգ ու պարով:

Սեպտեմբերի 5-ին Ռումինիայի Սիբիու քաղաքում տեղի ունեցավ Համաեվրոպական Էկումենիկ երրորդ համագումարի պաշտոնական բացումը:

Մասնակիցները նախ լուրջամբ հարգեցին Ռումին Ուղղափառ Եկեղեցու հովվապետ երջանկահիշատակ Թեոկտիստ Պատրիարքի հիշատակը: Ապա կատարվեց աղոթքի Էկումենիկ արարողություն, որի ընթացքում տարբեր լեզուներով հնչեցին աղոթքներ, Սուրբգրային ընթերցվածքներ և հոգևոր օրհներգեր:

Աղոթասացության ընթացքին Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա-ն իր խորհրդածությունները փոխանցեց համագումարի հսկայական վրանի ներքո հավաքված 2500 պատվիրակներին ու բազմաթիվ դիտորդներին: Տիեզերական Պատրիարքն իր խոսքում անդրադարձավ Եկեղեցիների առաքելությանը Եվրոպայի ապագայի կերտման, մարդ արարածի առջև ծառացած մարտահրավերների և ընկերային կյանքում առաջ եկած խնդիրների հաղթահարման գործում, ինչպես նաև Եկեղեցիների միջև հաղորդության և քրիստոնեական միության վերականգնման անհրաժեշտությանը: Պատրիարքն ասաց, որ ակնկալում է, որ Էկումենիկ այս համագումարն իր դրական եզրահանգումներով և քայլերով կնպաս-

տի նշյալ նպատակների իրագործմանը և իր նպաստը կրերի էկոմենիկ շարժման նպատակայնության խնդրում Եկեղեցիների տարաձայնությունների հարթմանը, ինչպես նաև Եկեղեցիները, լուսավորված Քրիստոսի լույսով, համաձայնության կզան քրիստոնեական միության ընդունելի սահմանման և կերպի շուրջ:

Բացման արարողությունն սկսվեց Ռումինիայի նախագահ տիար Տրայան Բասեսկուի ողջույնի խոսքով: Համաեվրոպական էկոմենիկ առաջին և երկրորդ համագումարների (Բազիլ, Շվեյցարիա - 1987 թ. և Գրաց, Ավստրիա - 1997 թ.) մասին «Բազիլից մինչև Սիբիու» ֆիլմի ցուցադրումից հետո համագումարին իրենց ուղերձները հղեցին Եվրոպայի կաթոլիկ եպիսկոպոսների խորհրդի նախագահ կարդինալ Պիտեր Էրդյոն և Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի նախագահ Վեր. Ժան Արնոլդ դե Կլերմոնտը:

Համագումարին ողջունեցին Ռումինիայի տեղական Եկեղեցիների ներկայացուցիչները՝ Ռումին Եկեղեցու պատրիարքական տեղապահ, Մոլդովայի և Բուկովինայի միտրոպոլիտ Դանիելը, Բուխարեստի կաթոլիկ արքեպիսկոպոս Իոան Ռոբուն և Ռումինիայի Բարենորոգչական Եկեղեցու եպիսկոպոս Լացլո Տյոկեզը:

Համագումարի առաջին օրը նվիրված էր «Քրիստոսի Լույսը և Եկեղեցին» թեմային: Օրվա թեմայի շուրջ բանախոսությամբ հանդես եկան Քրիստոնեական միության խրախուսման պապական խորհրդի նախագահ կարդինալ Վալտեր Կասպերը, Մոսկվայի Պատրիարքության Արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ, Մոլդենսկի և Կալինինգրադի միտրոպոլիտ Կիրիլը և Գերմանիայի Բողոքական Եկեղեցիների միության նախագահ եպիսկոպոս Վոլֆգանգ Հյուբերը: Կեսօրից հետո տեղի ունեցան խմբային քննարկումներ «Միություն», «Ոգեղենություն» և «Վկայություն» թեմաներով:

Սեպտեմբերի 6-ին Համաեվրոպական էկոմենիկ երրորդ համագումարը շարունակեց իր աշխատանքը: Առավոտյան աղոթքի էկոմենիկ արարողության ավարտին Մուրբերգային ընթերցվածքի շուրջ քարոզեց Միլանի արքեպիսկոպոս, կարդինալ Դիոնիջի Տետտամանցին:

Համագումարի երկրորդ օրվա թեման էր «Քրիստոսի Լույսը և Եվրոպան»: Ռումինիայի Մշակույթի և կրոնից գործոց նախարարը համագումարի մասնակիցներին ներկայացրեց Ռումինիայի վարչապետ Կալին Պոպեսկու-Տարիչանի ողջույնի խոսքը: Օրվա հիմնական բանախոսն էր Եվրահանձնաժողովի ղեկավար Մանուել Բարոզոն: Եվրոպայի և եվրոպական տարբեր գործընթացների շուրջ իր մտորումները ներկայացրեց Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի նախագահ Ռենե վան դեր Լինդենը:

Թեմայի շուրջ բանախոսեցին նաև Տիրանայի և Համայն Ալբանիայի Արքեպիսկոպոս Անաստասիոսը և Անգլիկան Եկեղեցուց՝ Լոնդոնի եպիսկոպոս Ռիչարդ Չարտենսը:

Լիագումար նիստից հետո Հայ Եկեղեցու պատվիրակները մասնակցեցին խմբային քննարկումներին, որոնք ընթացան «Եվրոպա. մասնակցություն Եվրոպայի կառուցմանը», «Կրոններ. լինելով Եվրոպայի քաղաքացի և հավատացյալ» և «Արտա-

գաղթ. արտագաղթը և Եկեղեցիները՝ առիթ և մարտահրավեր Եվրոպայի միության և վերանորոգման» թեմաներով:

Սեպտեմբերի 7-ին Համաեվրոպական Էկումենիկ երրորդ համագումարը իր աշխատանքները շարունակեց «Քրիստոսի Լույսը և աշխարհը. Արարչագործություն, արդարություն և խաղաղություն» նյութի շուրջ: Օրվա խորհրդի շուրջ հիմնական բանախոսն էր պրոֆ. Անդրեա Ռիկարդին (Սուրբ Էդիջիոյի համայնք, Իտալիա):

Առավոտյան աղոթքից հետո համագումարի մասնակիցներին իր հոգևոր փորձառության և համագումարի կարևորության մասին խոսեց Հայ Եկեղեցու պատվիրակներից Տ. Գևորգ աբեղա Սարոյանը:

Կեսօրից հետո խմբային քննարկումներն ընթացան «Արարչագործություն. Աստծո արարչագործության խնամք», «Արդարություն. արդարության մարգարեությունը Քրիստոսի Լույսի ներքո՝ Եվրոպան և աշխարհը» և «Խաղաղություն» թեմաներով:

Ռումինիայի Սիբիու քաղաքում ընթացող Համաեվրոպական Էկումենիկ երրորդ համագումարին տարբեր Եկեղեցիների հովվապետեր հղել էին իրենց պատգամները: Հռոմի Սրբազան Քահանայապետ Բենեդիկտոս ԺԶ Պապի և Քենթերբերիի Արքեպիսկոպոս Ռոուան Վիլյամսի ուղերձների հետ մեկտեղ մասնակիցներին ներկայացվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը, որն ընթերցեց ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու և ԱՄՆ-ի Եկեղեցիների Խորհրդի նախագահ Գերաշնորհ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը:

Հայրապետական պատգամում մասնավորաբար ասվում է. *«Համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր քրիստոնեական սիրո ողջույններն ենք բերում Սիբիու քաղաքում հավաքված ժողովականներիդ՝ աղոթելով, որ Եվրոպական Եկեղեցիների և Եվրոպայում Կաթոլիկ Եկեղեցու եպիսկոպոսների կոնֆերանսների կողմից նախաձեռնված Համաեվրոպական Էկումենիկ երրորդ հավաքը Տիրոջ զորակցությամբ արդյունավորվի նորանոր հաջողություններով Քրիստոսի Եկեղեցու միության ճանապարհին: Աղոթում ենք, որպեսզի Ամենակալ Տերն օրհնի և Իր բարի հայացքի ներքո պահի ու պահպանի համագումարը հյուրընկալող երկրի՝ Ռումինիայի ժողովրդին, եկեղեցիներին ու իշխանություններին՝ բարօր և պայծառ օրեր պարգևելով նրանց:*

Արդիական են Համաեվրոպական Էկումենիկ երրորդ համագումարի օրակարգում առաջադրված խնդիրները, որոնք վերաբերում են մեր Եկեղեցիների փոխհարաբերություններին, հասարակությունների կյանքում առկա խնդիրների շուրջ Եկեղեցիների համընդհանուր ձայնին, մարդկանց և ընտանիքների կյանքում հոգևոր արժեքների հիմնավորմանը, կրոնների երկխոսությանը, Եվրոպական երկրների մերձեցմանն ու միավորմանը մշակութային և հոգևոր հարուստ ժառանգություն ունեցող Եվրոպական աշխարհամասում:

Արդի մեր կյանքում սակավ չեն Եկեղեցիների առջև ծառացած մարտահրավերները: Ականատես ենք մարդկային խաղաղ փոխհարաբերությունների և սիրո պակասին հասարակական կյանքում, քաղաքական նպատակներով հոգևոր-բարոյական

արժեքների ոտնահարման ու չարաշահման երևույթների: Անտեսված են մարդու իրավունքները, և վտանգված է կրոնական ազատությունը Եվրոպական առանձին երկրներում: Բնապահպանական խնդիրներով և երկրագնդի կլիմայի փոփոխության աճող ահագանգով պատված է ամենքիս հոգին:

Գիտակցելով պատմությունից ժառանգած մեր տարբերություններն ու յուրահատկությունները, խնդրամատույց Տիրոջ շնորհներին շարունակելու երկխոսությունը աստվածաբանական հարցերի շուրջ, ուժ գտնենք հաշտությամբ և համատեղ ջանքերով դիմագրավելու Եկեղեցուն և ժողովուրդներին նետված մարտահրավերները, այն հավատով ու վստահությամբ, որ Մեր հասարակությունների փոխակերպման ու վերանորոգման գործում անհերքելի է Քրիստոսի լույս հավատքից ու Նրա սկզբունքներից բխող Եկեղեցիների համատեղ ձայնն ու վկայությունը:

Բարի ընթացք «Քրիստոսի Լույսը շողում է բոլորի վրա» խորագիրը կրող Համաեվրոպական էկումենիկ երրորդ համագումարին: Մաղթում ենք, որպեսզի փոխըմբռնման և փոխադարձ հարգանքի հիմքի վրա դրված համագործակցության շնորհիվ ու Քրիստոսառաք ողջախոհությամբ լցված, լուծումներ փնտրեք Ձեր առջև դրված խնդիրներին: Թող Տերը օրհնի և պտղաբեր դարձնի Ձեր բարի գործը»:

Սեպտեմբերի 8-ին Սիբիու քաղաքի Սուրբ Հովհաննես Եկեղեցում, հանդիսապետությամբ Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի բարեջան առաջնորդ Ս. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիրոսյանի և մասնակցությամբ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պաշտոնական պատվիրակության, մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Գերաշնորհ Ս. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:

Սուրբ Պատարագի ընթացքին ներկա հավատացյալներին, համագումարի մասնակիցներին ողջունեց Տիրայր Սրբազանը՝ ներկայացնելով Հայ Եկեղեցու առաքելությունը հայոց կյանքում և Ռումինիայի հայոց թեմի պատմությունը: Սրբազան Հայրն իր խոսքում անդրադարձավ քրիստոնյայի կյանքում Լույսի խորհրդին:

Սուրբ Պատարագի ավարտին հայոց պատվիրակությունը մասնակցեց լիագումար նիստին, որին ներկայացվեցին երեք օրերի ընթացքում տարբեր թեմաների շուրջ ծավալված քննարկումների արդյունքները:

Համագումարն ընդունեց ուղերձ՝ «Քրիստոսի Լույսը շողում է ամենքի վրա» նշանաբանով:

Համաժողովը եզրափակվեց Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի նախագահ Վեր. Ժան Արնոլդ դե Կլերմոնտի և Եվրոպայի կաթոլիկ եպիսկոպոսների խորհրդի նախագահ կարդինալ Պիտեր Էրդյոյի ամփոփիչ խոսքով:

ՄԱՅՐ ԱԹՐԱՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՌՈՒՄԻՆ
ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ**


Սեպտեմբերի 30-ին Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիել Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը և ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը մասնակցեցին Ռումին Ուղղափառ Եկեղեցու նորընտիր Դանիել Պատրիարքի գահակալության արարողությանը:

Պատվիրակությունը Ռումինիայի նորընտիր Պատրիարքին փոխանցեց Գաբրիել Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնն ու բարեմաղթանքները: Այս առիթով Ամենայն Հայոց Հայրապետը նաև շնորհավորական գիր էր հղել Ռումին Ուղղափառ Եկեղեցու նորընտիր գահակալին:

«Որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս և աշխարհասփյուռ Հայ Եկեղեցու Առաջնորդ՝ շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը և համայն Ռումին Ուղղափառ Եկեղեցուն:

...Այս դժվարին և փորձություններով լի ժամանակներում աշխարհը ծարավն ունի Քրիստոսի Ավետարանի և մեր Փրկչի հույսի և խաղաղության աստվածային պատգամի: Ավանդական Քրիստոնեական Եկեղեցիների ընտանիքն իր սուրբ առաքելությունը կարող է ամբողջականորեն իրականացնել մարդկության կյանքում միայն մեր միացյալ ջանքերի և փոխադարձ համագործակցության միջոցով: Մենք արտահայտում ենք Մեր սերն ու զորակցությունը Ձերդ Սրբությանը, որ ստանձնեցիք Ձեր Եկեղեցու Առաջնորդի ծանր պատասխանատվությունը՝ շարունակելով երկարամյա նվիրյալ ծառայությունը ձեր ժողովրդին», - ասվում է Նորին Սրբության շնորհավորական ուղերձում:

*ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՐ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՈՂ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Սեպտեմբերի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Հունաստանի Հանրապետության դեսպան տիկին Փանայոթա Մավրոմիխայիին:

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց դեսպանի երկամյա աշխատանքը Հայաստանում, նրա բերած ավանդը երկու երկրների ու ժողովուրդների միջև հարաբերությունների զարգացման գործում:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց Մայր Աթոռի և Հունաստանի դեսպանատան միջև առկա սերտ համագործակցության համար:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետն իր բարեմաղթանքը հայտնեց դեսպանին՝ հաջողություն ցանկանալով դիվանագիտական իր հետագա ծառայության մեջ:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՇՈՏՈԿԱՆ ԿԱՐԱՏԵԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Շոտլանդ կարատեի ֆեդերացիայի ազգային հավաքականին՝ առաջնորդությամբ ֆեդերացիայի պատվո նախագահ, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի և ֆեդերացիայի նախագահ Գրիգոր Միքայելյանի:

Ներկայացնելով հավաքականը Հայոց Հայրապետին՝ Պարզև Սրբազանը տեղեկացրեց, որ Հայաստանի ազգային հավաքականն օրեր առաջ է վերադարձել Արգենտինայից՝ չորրորդ անգամ անընդմեջ շահելով աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Այս հաղթանակի արդյունքում 2009 թ. աշխարհի գավաթի մրցումներն անցկացվելու են Հայաստանում: Հավաքականի ձեռքբերումներին և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ հանդիպման կարևորությանն անդրադարձավ նաև պրն Միքայելյանը՝ պատմելով, թե ինչպիսի ջերմ ընդունելության են արժանացրել ազգային հավաքականին Արգենտինայի հայ համայնքն ու հայոց թեմը:

Վերջում հաղթանակի առիթով Հայրապետական իր շնորհավորանքներն ու օրհնությունը մարզիկներին բերեց Նորին Սրբությունը: *«Հաղթանակները մեր ազգային կյանքում երբեք պատահական չեն: Դա արիության ոգին, հաղթական կամքն է, որ մեր ժողովուրդը դրսևորել է իր պատմության ընթացքին: Այդ հաղթական ոգին այսօր վերակենդանացել է Ձեր մեջ և առաջնորդել նման մեծ հաղթանակի»*, - ասաց Վեհափառ Հայրապետը՝ մաղթելով երիտասարդներին նորանոր հաջողություններ իրենց մարզարվեստում:

Նորին Սրբությունը նաև իր գնահատանքը հայտնեց Պարզև Սրբազանին՝ խմբի նկատմամբ մշտապես ցուցաբերվող իր հովանավորության և ուշադրության համար:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԻՑՑԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Սեպտեմբերի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Նիցցայի քաղաքապետ, սենատոր Ժակ Պեյրային և իր տիկնոջը՝ ուղեկցությամբ Նիցցայի հայ համայնքի ներկայացուցիչների և Նիցցայի հոգևոր հովիվ Տ. Վաչե քահանա Հայրապետյանի:

Ողջունելով քաղաքապետի անդրանիկ այցը Մայր Աթոռ՝ Վեհափառ Հայրապետը վերհիշեց իր հանդիպումը պրն Պեյրայի հետ Նիցցայում Ֆրանսիա կատարած Հովվապետական իր առաջին այցելության ժամանակ, 2000 թ.: *«Ուրախ ենք, որ մեր ժողովրդի զավակները Ցեղասպանությունից հետո կարողացել են իրենց ազգային-եկեղեցական կյանքը կազմակերպել հյուրընկալ Ֆրանսիայում և դարձել են նաև արժանավոր քաղաքացիները ձեր երկրի»*, - ասաց Նորին Սրբությունը՝ ի դեմս քաղաքապետի շնորհակալություն հայտնելով Ֆրանսիայի իշխանություններին ու ժողովրդին՝ հանդեպ հայ ժողովուրդը մշտապես ցուցաբերվող հարգանքի և սիրո համար:

Իր հերթին Նիցցայի քաղաքապետն իր ուրախությունը հայտնեց այցի առիթով և Հայոց Հայրապետին ներկայացրեց Հայաստան կատարած իր առաջին այցի տպավորությունները: *«Հայաստանը մեր սրտում է»*, - ասաց պրն Պեյրան: Խոսելով Նիցցայի հայ համայնքի մասին՝ նա այն բնութագրեց որպես աշխատասեր, հավատարիմ և օրինապահ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ նաև խորհրդային տարիներին Եկեղեցու առջև ծառացած դժվարություններին, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայիս գործունեությանը և հոգևոր կյանքի վերագարթոնքին: Խոսվեց 21-րդ դարում Եկեղեցու առաքելության մասին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Սեպտեմբերի 27-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Անդրեա Վիկտորինին:

Վեհափառ Հայրապետը շնորհավորեց դեսպանին նշանակման առիթով և արդյունավոր գործունեություն մաղթեց իր առաքելության մեջ:

Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ երկու երկրների միջև առկա սերտ հարաբերություններին ու գործակցությանը՝ նշելով նաև այն ջերմ կապերի մասին, որ ձևավորվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Գերմանիայի դեսպանատան միջև:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 2-ին, կիրակի.- Դ կիր. զկնի Վերափոխման:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Դավիթ աբեղա Քարամյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 38):

Սեպտեմբերի 9-ին, կիրակի.- Ե կիր. զկնի Վերափոխման:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եփիաթա, որ է՝ բացուի՛ր» (Մարկ. է 34) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 40):

Սեպտեմբերի 16-ին, կիրակի.- ԽԱՉՎԵՐԱՑ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Ձի ոչ առաքեաց Աստուած զՈրդի Իւր յաշխարհ՝ թէ դատեսցի աշխարհ, այլ զի փրկեսցէ աշխարհ Նովաւ» (Յովհ. Գ 17) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 43):

Սեպտեմբերի 17-ին, երկուշաբթի.- Տօն է Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եղիշե վարդապետ Ավետիքյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Սեպտեմբերի 23-ին, կիրակի.- Բ կիր. զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սուշեղ վարդապետ Բաբայանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Սեպտեմբերի 30-ին, կիրակի.- Գ կիր. զկնի Ս. Խաչի: Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արիս արքեպիսկոպոս Շիրվանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**“ЭЧМИАДЗИН”
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ
ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Сентябрь 2007 г.)**

1. Визит Его Высокопреосвященства Архиепископа Кентрберийского доктора Роуана Вильямса в Первопрестольный Святой Эчмиадзин, 22-25 сентября 2007 г. (с. 3-9).
2. Совместная декларация Верховного Патриарха и Католикоса всех армян и Архиепископа Кентрберийского, 25 сентября 2007 г. (с. 10-11).
3. Визит Генерального секретаря и членов Исполнительного комитета ВСЦ в Первопрестольный Святой Эчмиадзин, 23-28 сентября 2007 г. (с. 12-15).
4. Праздник Независимости РА в Первопрестольном Святом Эчмиадзине, 21 сентября 2007 г. (с. 16).
5. Поздравительное послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян по случаю Нового учебного года, 1 сентября 2007 г. (с. 17).
6. Поздравительное послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян по случаю Дня Независимости РА, 21 сентября 2007 г. (с. 18).

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

7. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, об оказании содействия фонду “Друзья Святого Эчмиадзина”, 28 сентября 2007 г., № 435 (с. 19-20).
8. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Крекори Экизяну по случаю его награждения орденом “Святой Григорий Просветитель”, 26 сентября 2007 г., № 427 (с. 21-22).
9. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Джеральду Гафесчану по случаю его награждения орденом “Святой Григорий Просветитель”, 26 сентября 2007 г., № 430 (с. 23-24).
10. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Врежу Маркосяну по случаю его награждения орденом “Святой Григорий Просветитель”, 29 сентября 2007 г., № 433 (с. 25-26).
11. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-же Арпине Маргарян по случаю её награждения орденом “Святой Саак – Святой Месроп”, 18 сентября 2007 г., № 426 (с. 27-28).

12. Послание благословения Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю 60-летия Культурного Общества Текеян, 24 сентября 2007 г., № 783 (с. 29-30).
13. Послание благословения Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян коллективу армянской газеты “Время” Стамбула, 28 сентября 2007 г., № 786 (с. 31-32).
14. Патриаршие награды (пожалование в течение сентября 2007 г. энциклик, орденов “Святой Саак – Святой Месроп”, “Святой Нерсес Шнорали”, благословений, права ношения Нагрудного Креста и Цветастой фелони, Почетного звания Старшинства Его Святейшеством Гарегиним II, Католикосом всех армян, группе духовных и светских лиц, оказавших большие услуги Армянской Церкви)-(с. 33-34).
15. Патриаршее распоряжение (объявлены расстриженными иеромонах Епрем Саркисян и архимандрит Аршен Саносян)-(с. 34).
16. Новые назначения в епархиях Армянской Церкви (с. 35).
17. Духовным надзирателем Домов Молодежи Первопрестольного Святого Эчмиадзина назначен иеромонах Григор Хачатрян (помещена также краткая биография Преподобного отца)-(с. 36).
18. Вручение ордена “Святой Григорий Просветитель” г-ну Врежу Маркосяну, 29 сентября 2007 г. (с. 37).

ПРОПОВЕДИ

19. Проповедь иеромонаха Давида Карамяна в Кафедральном Соборе Святого Эчмиадзина, 2 сентября 2007 г. (с. 38-39).
20. Проповедь иеромонаха Месропа Парсамяна в Кафедральном Соборе Святого Эчмиадзина, 9 сентября 2007 г. (с. 40-42).
21. Проповедь Его Преосвященства епископа Аршака Хачатряна в Кафедральном Соборе Святого Эчмиадзина на праздник Воздвижения Св. Креста, 16 сентября 2007 г. (с. 43-45).

РЕЛИГИОЗНЫЕ ИССЛЕДОВАНИЯ

22. **АРХИМАНДРИТ ОВАННЕС КОЗЕРН** - Душеполезное наставление и ответ архимандрита Ованнеса (текст, подготовленный Акопом Кеосеяном)-(с. 46-50).
23. **МИТРОПОЛИТ МОСКОВСКИЙ И КОЛОМЕНСКИЙ МАКАР** – О таинстве крещения (перевод с русского Чинар Давтян)-(с. 51-69).
24. **ДЬЯКОН АРМЕН ХАЧАТРЯН** – Схоластическое мышление и мировоззрение Святого Григора Татеваци (исследование)-(с. 70-75).

ИСТОРИКО - ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

25. **ЖОРЕС ХАЧАТРЯН, НУНЕ АКОПЯН** – Местоположение “Царского города” Заришата (историковедческое исследование)-(с. 76-84).
26. **ПАРУЙР МУРАДЯН** – Кто он? – тысяцкий Манан из лапидарной надписи Текора (историковедческое исследование)-(с. 85-88).
27. **А. АКОПЯН, А. ГНУНИ** – О единстве операционных и символических функций понятий “путь” и “улица” (историковедческое исследование)-(с. 89-97).
28. **АНДРАНИК АЙВАЗЯН** – Лингвистико-философская концепция седьмой буквы армянского алфавита - буквы “Ե” (лингвистическое исследование)-(с. 98-99).
29. **ВАЗГЕН Г. АМБАРЦУМЯН** – Некоторые соображения о языке “Книги проповедей” Католикоса Симеона Ереванци (лингвистическое исследование)-(с. 100-109).
30. **АРМЕН МАЛХАСЯН** – Переплетная школа Арцах-Утика (вторая половина 18-го века)-(историковедческое исследование)-(с. 110-117).
31. **ДАВИД ГЮРДЖИНЯН** – Словарное выражение названий армянских букв (лингвистическое исследование)-(с. 118-127).
32. **ГРАНУШ БАГУМЯН** – Факелы агонии и надежды (литературоведческое исследование)-(с. 128-137).
33. **РУБЕН МИРЗАХАНИЯН** – Историография армянской культурной жизни 1956-1990 гг. (культурологическое исследование)-(с. 138-142).

В СВЯТОМ ПЕРВОПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

34. Под высоким председательством Католикоса всех армян Гарегина II прошла церемония закладки церкви Святых Архангелов Первопрестольного Святого Эчмиадзина, 10 сентября 2007 г. (с. 143).
35. Ежегодное собрание Армянского Круглого Стола в Первопрестольном Святом Эчмиадзине, 19 сентября 2007 г. (с. 144).
36. Освящены крест и колокол церкви Св. Богородицы села Сараарт, 29 сентября 2007 г. (с. 145).
37. Освящена церковь Св. Григорий Просветитель в Норатусе, 30 сентября 2007 г. (с. 145).
38. Праздник Святого Креста Варага в церкви Св. Геворка в Волгограде, 30 сентября 2007 г. (с. 146).
39. Участие делегации Армянской Церкви на Общеевропейском Экуменическом съезде, 3-9 сентября 2007 г. (с. 147-151).

-
40. Делегация Католикосата Всех армян приняла участие в церемонии инногурации Патриарха Румынского, 30 сентября 2007 г. (с. 152).

АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

41. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, завершающего свою миссию в Армении посла Греции, г-жы Панайоты Мавромихалии, 17 сентября 2007 г. (с. 153).
42. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, членов национальной сборной команды Федерации шотокан карате, 19 сентября 2007 г. (с. 153-154).
43. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, мэра Ниццы, сенатора Жака Пейрайра, 22 сентября 2007 г. (с. 154).
44. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, новоназначенного посла Германии г-жы Андреа Викторин, 27 сентября 2007 г. (с. 155).
45. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном соборе и в Первопрестольном Святом Эчмиадзине в течение сентября 2007 г. (с. 156).

“ETCHMIADZIN”
OFFICIAL MONTHLY REVIEW OF
HOLY ETCHMIADZIN
(September 2007)

1. Rt. Rev. Rowan Williams, Archbishop of Canterbury in the Mother See of Holy Etchmiadzin, 22-25 September, 2007 (p. 3-9).
2. The joint statement of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians and Rt. Rev. Rowan Williams, Archbishop of Canterbury, 25 September, 2007 (p. 10-11).
3. Rev. Dr. Samuel Kobia, General Secretary of the World Council of Churches and members of the WCC Executive Committee in the Mother See of Holy Etchmiadzin, September 23-28, 2007 (p. 12-15).
4. The Independence Day of the Republic of Armenia in the Mother See of Holy Etchmiadzin, 21 September, 2007 (p. 16).
5. Message of Congratulation of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians on the occasion of the new academic year, 1 September, 2007 (p. 17).
6. Message of Congratulation of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians on the occasion of the Independence Day of the Republic of Armenia, 21 September, 2007 (p. 18).

PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

7. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on supporting the Foundation “Friends of Holy Etchmiadzin”, 28 September, 2007, no. 435 (p. 19-20).
8. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Gregory Ekizian, on the occasion of his decoration with the Medal of “Saint Gregory the Illuminator”, 26 September, 2007, no. 427 (p. 21-22).
9. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Gerard Cafesjian, on the occasion of his decoration with the Medal of “Saint Gregory the Illuminator”, 26 September, 2007, no. 430 (p. 23-24).
10. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Vrezh Markossian, on the occasion of his decoration with the Medal of “Saint Gregory the Illuminator”, 29 September, 2007, no. 433 (p. 25-26).
11. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mrs. Arpine Margarian, on the occasion of her decoration with the Medal of “St. Sahak – St. Mesrop”, 18 September, 2007, no. 426 (p. 27-28).
12. Letter of Blessing of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the 60th anniversary of Tekeyan Cultural Association, 24 September, 2007, no. 789 (p. 29-30).
13. Letter of Blessing of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to “Zhamanak” (Time) daily, 28 September, 2007, no. 786 (p. 31-32).
14. Pontifical Awards (Order of “St. Sahak – St. Mesrop”, “St. Nerses the Graceful” and Letters of Blessing, right of wearing pectoral crosses and floral brocade chasubles and titles of archpriest granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during September 2007 to clergymen and laymen having been of great service to the

Armenian Church,) (p. 33-34).

15. Rev. Fr. Ephrem Sarkissian and Rev. Fr. Arshen Sanossian were defrocked by the order of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians (p. 34).
16. New appointments in the Dioceses of the Armenian Church (p. 35).
17. Rev. Fr. Grigor Khachatryan was appointed the Director of the Youth Centers of the Mother See of Holy Etchmiadzin (biography of Rev. Fr. Grigor Khachatryan) – (p. 36).
18. Medal of “Saint Gregory the Illuminator” to Mr. Vrezh Markossian, 29 September, 2007 (p. 37).

SERMONS

19. Sermon delivered by Rev. Fr. David Karamian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, 2 September, 2007 (p. 38-39).
20. Sermon delivered by Rev. Fr. Mesrop Parsamian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, 9 September, 2007 (p. 40-42).
21. Sermon delivered by His Grace Arshak Khachatryan in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the occasion of the Feast of Exaltation of the Cross, 16 September, 2007 (p. 43-45).

RELIGIOUS AND ECCLESIOLOGICAL STUDY

22. **ARCHIMANDRITE HOVHANNES KOZERN**– Spiritual exhortation and the answer of Archimandrite Hovhanness (the original, prepared for publication by Hakob Kyoseyan) – (p. 46-50).
23. **METROPOLITAN MAKAR OF MOSCOW AND KOLOMENSK** – On the Sacrament of Baptism (translation from Russian by Chinar Davtian) – (p. 51-69).
24. **DEACON ARMEN KHACHATRIAN** – Scholastic Mentality and the Position of Gregory of Tathev (research) – (p. 70-75).

HISTORICAL AND PEDAGOGICAL REVIEW

25. **ZHORES KHACHATRIAN, NUNE HAKOBIAN** – The location of “Royal City” Zarishat (historical research) – (p. 76-84).
26. **PARUIR MOURADIAN** – “Who is the Chief Captain Manan in the inscription of Tecor (historical research) – (p. 85-88).
27. **H. HAKOBIAN, A. GNOUNI** – Arguments on the combination of functional and symbolic application of “road” and “street” (historical research) – (p. 89-97).
28. **ANDRANIK AYVAZIAN** – Philosophical-linguistic aspect of the Armenian letter “i” (pedagogical research) – (p. 98-99).
29. **VASKEN G. HAMBARDZOUMIAN** – Remarks on the language of “Book of Sermons” by Catholicos Simeon of Yerevan (linguistic research) – (p. 100-109).
30. **ARMEN MALKHASSIAN** – The Bookbinding School of Artsakh-Utik /second half of the 18th century/ (historical research) - (p. 110-117).
31. **DAVID GYURJINIAN** – Dictionary Expressions of the Armenian Alphabetic Letters (p. 118-127).
32. **HRANUSH BAGHUMIAN** – Lights of Agony and Hope (literary review) – (p. 128-137).

-
33. **ROUBEN MIRZAKHANIAN** – Historiography of the Armenian cultural life during 1956-1990 (cultural review) – (p. 138-142).

IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

34. His Holiness Karekin II, Catholicos of All Armenians presided over the ceremony of foundation blessing of St. Archangels Church, 10 September, 2007 (p. 143).
35. Annual meeting of the WCC Armenian Round Table Inter-Church Charitable Foundation in the Mother See of Holy Etchmiadzin, 19 September, 2007 (p. 144).
36. Consecration of the cross and bell of the belfry of Holy Mother of God Church of Sarahart, 29 September, 2007 (p. 145).
37. Consecration of St. Gregory the Illuminator Church of Noratus, 30 September, 2007 (p. 145).
38. The Feast of Holy Cross of Varag in St. Gevorg Church of Volgograd, 30 September, 2007 (p. 146).
39. The delegation of the Armenian Church participated in the Third European Ecumenical Assembly, 4-9 September, 2007 (p. 147-151).
40. The delegation of the Catholicos of All Armenians participated in the enthronement of the Patriarch of the Romanian Orthodox Church, 30 September, 2007 (p. 152).

AUDIENCES AT THE MOTHER SEE

41. Audience granted by His Holiness Karekin II to H.E. Panayota Mavromichali, Ambassador of Greece finishing her mission in Armenia, 17 September, 2007 (p. 153).
42. Audience granted by His Holiness Karekin II to the members of national combined team of Shotokan Karate Federation, 19 September, 2007 (p. 153-154).
43. Audience granted by His Holiness Karekin II to Mr. Jacques Peira, Senator and Mayor of Nice, 22 September, 2007 (p. 154).
44. Audience granted by His Holiness Karekin II to H.E. Andrea Victorin, the newly appointed ambassador of Germany to Armenia, 27 September, 2007 (p. 155).
45. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during September 2007 (p. 156).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քենթրբերիի Արքեպիսկոպոս դոկտոր Ռոուան Վիլյամսը Մայր Աթոռում	3
Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Քենթրբերիի Արքեպիսկոպոսի համատեղ Հայտարարությունը	10
ԵՀԽ Գլխավոր քարտուղարը և ԵՀԽ Գործադիր կոմիտեի անդամները Մայր Աթոռում	12
Հայաստանի Հանրապետության Անկախության տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	16
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական մաղթանքը նոր ուսումնական տարվա առիթով	16
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա առիթով	18

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Սրբատառ Կոնդակը «Ս. Էջմիածնի բարեկամներ» հիմնադրամին աջակցելու մասին	19
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը Կրեկրի Էքիզյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	21
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը Ճերըլտ Գաֆեաճյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	23
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը Վրեժ Մարկոսյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	25
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը Արփինե Մարգարյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին	27
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Թեքեյան Մշակութային Միության վաթսունամյակի առիթով	29
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը «Ժամանակ» օրաթերթին	31
Հայրապետական գնահատություն	33
Հայրապետական տնօրինություն	34

Նոր Նշանակումներ Հայ Եկեղեցու թեմերում	35
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հայորդյաց Տների հոգևոր տեսուչ Է նշանակվել	
Տ. Գրիգոր աբեղա Խաչատրյանը	36
«Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան Վրեժ Մարկոսյանին	37

ՔԱՐՈՋԽՈՍԱԿԱՆ

Տ. Դավիթ աբեղա Քարամյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	38
Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	40
Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Խաչվերացի տոնին մատուցված Ս. Պատարագին ...	43

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԿՈՋԵՌՆ - Խրատ հոգեշահ եւ պատասխանի Յովհաննէս Կոզեռն վարդապետին	46
ՍՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿՈԼՈՄԵՆՍԿԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՄԱԿԱՐ - Սկրտության խորհրդի մասին	51
ԱՐՄԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ - Դպրական /scholastic/ մտածողությունը և Սուրբ Գրիգոր Տաթևացու աշխարհայացքը	70

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՆՈՒՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ - «Արքունի քաղաք» Ջարիշատի տեղադրությունը	76
ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ - Ո՞վ է Տեկորի արձանագրության հազարապետ Մանանը	85
Հ. ՀԱԿՈԲՅԱՆ, Ա. ԳՆՈՒՆԻ - Դիտարկումներ ճանապարհի և փողոցի գործառնական և խորհրդանշական գործառույթների միասնականության վերաբերյալ	89
ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ - Է-ի լեզվափիլիսոփայական հայեցակերպը աստվածաշնչյան համատեքստում	98
ՎԱԶԳԵՆ Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ - Նկատառումներ Սիմեոն Կաթողիկոս Երևանցու «Քարոզգրքի» լեզվի վերաբերյալ	100
ԱՐՄԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ - Արցախ-Ուտիքի կազմարարական դպրոցը (ԺԸ դ. երկրորդ կես)	110
ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ - Հայկական տառանունների բառարանային	

մշակումը	118
ՀՐԱՆՈՒՇ ԲԱՂՈՒՄՅԱՆ - Հոգեվարքի և հոյսի ջահեր	128
ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ - 1956-1990 թթ. հայ մշակութային կյանքի պատմությունը	138

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցու հիմնարկեքը	143
Հայաստանյան Կլոր Սեղանի տարեկան ժողովը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	144
Օծվեցին Սարահարթի Ս. Աստվածածին եկեղեցու զանգակատան խաչն ու զանգը	145
Օծվեց Նորատուսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին	145
Վարազա Ս. Խաչի տունը Վոլգոգրադի Սուրբ Գևորգ եկեղեցում	146
Հայ Եկեղեցու պատվիրակության մասնակցությունը Համաեվրոպական Էկումենիկ երրորդ համագումարին	147
Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատվիրակությունը մասնակցեց Ռումին Պատրիարքի գահակալության արարողությանը	152

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում իր պաշտոնավարությունն ավարտող Հունաստանի դեսպանին	153
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Շոտլանդ կարատեի ֆեդերացիայի ազգային հավաքականի անդամներին	153
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Նիցցայի քաղաքապետին	154
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի նորանշանակ դեսպանին	155
Եկեղեցական բեմ. լուրեր	156
“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата.....	157
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin	161